Պ. Ճարերնին հանելով եւան գնացին որոնց գլանաւորներն էին Վասակ և Վարդան:

Հ. Երբոր նախարարներն Պարսկաստան հասն, Յաղկերտ հետերնին ի՞նչպէս վարուեցաւ.

Պ. Մէկէն բանտ գնել տուաւ ու սկսաւ ստիպէլոր կամ հաւատգնին ուրանան ու իրենց առջեւ պատուցն համնին, և կամ մեռնին:

Հ. Նախարարներն աս երկուքէն ո՞ր յանձն առին.

Պ. Տեսնելով որ եթէ իրենք մեռնին Հայաստան ուաքի տակ կ'երթայ, դրսուանց յանձն առին, ու արեւու երկրպատութիւնն ըլլին, և շատ մոգերով Հայաստան դարձան:

Հ. Հայերն երբոր իմացան մոգերուն գալը ի՞նչ ըրին.

Պ. Սուրբ Ղեոնդ և ուրիշ աստուածընտիր քահանաներ ժողովրդեան հետ միացած՝ վրանին վաղեցին ու լաւ մը ջարդ տալով լեզապատաստ փախուցին մոգպեալ իրեն մոգերուն:

Հ. Ի՞նչ կերպով հանդարանեցաւ ժողովուրդն։

Պ. Սուրբ Վարդանն Յովնէփի կաթուղիկոսին սաքը ինկնալով իրեն մեղացը թողութիւն խընդրեց. իսկ Վասակ ստութեամբ համոզեց քահանաները որ առ ժամն գէմ զննեն մոգերուն՝ որպէս զի Յաղիկերոտի առջև յանցաւոր չսեպուին, ու վերջը կամաց կամաց արաւասահման ընեն։

Հ. Վասակայ աս խորհուրդն ի՞նչ հետեւանք ունեցաւ։

Պ. Նախարարներն տեսնելով որ կամաց կամաց կրակասալաշտութիւն կը հաստատուի Հայաստանի մէջ ու Վասակ Պարսից հետ միացած չուրիներ կը հասցնէ Հայոց, վրան վաղեցին փախուցին պարագիները ու զինքն ալբանեցին. բայց աւետարանին վայ երդում ընելուն համար նորէն աշատ ժողուցին։

Հ. Հայերն իրենց աս նեղութիւններուն մէջ ուրիներէ օդնութիւն չուզեցի՞ն.

Պ. Յունաց Թէոդոս Փոքր կայսերէն օդնութիւն դրեցին. բայց երբոր անիկայ մեռաւ, իր յաջորդն Մարկիանոս չօգնեց։

Հ. Երբոր Հայերն յոյսերնին կարեցին Յայներէն, ի՞նչ ըրին։

Պ. Հարիւր հաղարի չափ մարդիկ Շահապիվան քաղաքն ժողովուելով, երեք գունդ բաժնեցին բոլոր զբաք։

Հ. Աս գունդերուն զօրավար որո՞նք դրուեցան։

Պ. Պարսից գէմ կենալու գնդին զօրավար դըրուեցաւ Ներշապուհ Արծրունի. Երկրորդին Վարդան, որ Աղուանից օդնութեան գնաց. ու

Երբորդ գունդը տուեն Վասակայ՝ Հայաստանը պահելու համար։

Հ. Վարդան Աղուանից Երկիրն ի՞նչ քաջութիւն ըրաւ։

Պ. Պարսից զօրքերը փախուց, մոգերը ջարդեց, ու համարձակ քրիստոնէութիւնը պաշտել աւաւ։

Հ. Այն միջոցին որ Վարդան Աղուանից կողմէն էր, Վասակ ի՞նչ կ'ընէր Հայաստան։

Պ. Հաւատքը ուրաքածնորէն սկսաւ եկեղեցիներն աւրել ու կրակապաշտութիւն մացընել Հայաստանի մէջ։

Հ. Յաղիկերտ տեսնելով Հայոց պատրաստութիւնները ի՞նչ ըրաւ։

Պ. Միհրներսէ անունով պարսիկ հաղարապէտը զրկեց, որ երթայ պատերազմը լինցընէ, ուրուն կողմն անցաւ համարձակ Վասակ, ու ինքը վրան առած պատերազմին հոդը ամեն չարիք կ'ընէր։

Հ. Հայերն վերջի պատերազմին ի՞նչ պէս պատրաստուեցան։

Պ. Վարդանայ հրամանաւն վաթսուն հաղար հոգի ժողովուեցան, և պատերազմի պատրաստուեցան Աւարայր գեղին քովերն։

Հ. Ի՞նչպէս լմացաւ առ վերջի պատերազմին։

Պ. Մեծն Վարդան և իրեն ընկերներն շատ քաջութիւններ ընկելն ետքը, Վարդան քաջութեամբ զարնուելով մեռաւ, և երկու հարիւր իննուուն հոգի ալիր ընկերներէն մեռան նոյն օրը. բայց աստիճան ույսն օրերը բոլոր հաւատքի և հայ-

բնեաց վրայ մեսանոլներուն թիւն եղաւ հաղար երեսունըլքց հոգի (451):

Հ. Վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց չայց .
Պ. Զեռքն ինկածն կամ կը սպաններ և կամ հաւատքը ուրացընել կու տար . նյոնակս բանեց ան պատւաւոր քահանաները որոնք սուրբ Դւռնդի անունով Դւռնդեանք ըսուեցան , ու շղթայակամ կը պահէր , որ վերջը Պարսկաստան տարուելով հսն նահատակուեցան :

Հ. Վասակ իրեն չարութան պատիժը ի՞նչպէս դաւ .

Պ. Յանցաւոր գանուելով Յազկերախ առջև , որ աս ամեն չարիքէն ետքը չկրցաւ Հայերը արեա պաշտ ընել , բանտ գրուեցաւ , ուր որ որդնաւելով մեռաւ ու կորսուեցաւ անյիշատակ :

Գ Ա Ս Ժ Դ Ի .

Ատրումիզդ և Ատրվճասայ և Վահանայ լրած պատերազմները :

Հ. Վասակին տեղն մվ գրուեցաւ մարդան .
Պ. Ատրումիզդ , ու շատ մը քահանաներ բռնեց ու շղթայի զարկաւ :

Հ. Ատրումիզդայ ատենը քրիստոնէութիւնն իման միճակի մէջ էր .

Պ. Առ արտաքս հրաման տուաւ որ ամենքն իւրեց հաւատքը պաշտին , թէպէտ և կրակատուն ներն ալ պակաս չէին : Աս ընելով սկսաւ նախարարները սահմակ որ Յազկերախն երթան առանց վախի երդուընալով որ իրենց վասնդ մը ըըլար :

Հ. Նախարարներն երբօր Պարսկաստան հասան՝ Յազկերա ի՞նչէր պատվը նդունեցաւ զերենք .

Պ. Մէկէն բանտ դնել տուաւ ու սկսաւ զերենք սահմակ որ հաւատքմին ուրանան . բայց և ոչ մէկն թուցաւ հաւատքէն :

Հ. Նախարարներն ո՞չափ ատեն բանտը կեցան .

Պ. Երկար ատեն բանտը կենալէն և շատ տան ջանքներ քաշելէն , ետեւ Շզոմշապուհ անունով իշխանին աղաւանիքովն աղաւեցան բանտէն ու Պարսկաստան կը կենային :

Հ. Գեռ ո՞չափ ատեն ալ Պարսկաստան կեցան նախարարներն :

Պ. Ութ տարի ալ կենալէն ետեւ երբօր Ատրումիզդնասս մարդզան կու գար Հայաստան , իրենք ալ մէկաւ եկամ (464) :

Հ. Ովկէր մեծն Վահան .

Պ. Մէծն Վարդանայ Հմայեակ եղբօրը մեծ որդին էր :

Հ. Խնչու համար Վահան հաւատքը ուրացաւ .

Պ. Վասն զի իրեն անթիւ կատարելութիւններովն ամենուն սիրելի էր . ուստի Պարսկաստան գանձ առնուող ուրացեալ նախարարներն վասն նախանձելով զիքը ամբաստանէցին Պերզի . Վահան ալ անոր աչքէն չինկնալու . համար հաւատքը ուրացաւ :

Հ. Վահան ի՞նչպէս նորէն քրիստոնէութեան հաւատքը գարձաւ .

Պ. Լաելով որ Վախմանի Վրաց թագաւորն Պարսիկներէն աղասամիքէր է , իրեն հետ եղած Հայերն ալ յորդուեց որ իրենք ալ աղասամիքին , ու նորէն քրիստոնէութե համար պատերազմին :

Հ. Վահանայ ըրած առաջարկութիւնը յանձն առլին.

Պ. Շատերն յանձն առլին. Վահանը սպարաւ պէտ դրին՝ և Սահակ Բագրատունին ալ մարդպան Աստրվանապայ տեղը՝ զոր սպատերագմի մէջ սպաննեցին (481) :

Հ. Վահան երբոր ուրիշ նախարարներու ալ իմացուց իրեն ապաստմբիլը բնչը ըրին անոնք.

Պ. Փոխանակ օգնելու՝ ուրիշ դացողներու ալ արդելք եղան, ու եսենին վաղելով խափանեցին. բայց քանի մը հոգի իրեն հետ միաբան կեցան :

Հ. Պերող երբոր լսեց Վահանայ ապստամբիլը բնչը ըրաւ.

Պ. Ատրներսեհին ձեռքովին շատ դօքք զրկեց, ապստրելով որ Վահանը ողջ բռնեն:

Հ. Վահան Ատրներսեհին դէմ քանի՞ հոգւով դնաց.

Պ. Շատ քիչ հոգւով, Յովհան Մանդակունին ալ հետն առած. անոր համար քաջութեան հէտ աստուածային զրութիւնը և հաւատքը օգնական առած մէծ ջարդ մը տուաւ թշնամեաց բանակին:

Հ. Ո՞վ զրկուեցաւ նորէն Վահանայ դէմ:

Պ. Միհրանը, Հայոց և Վախթանկ Վրաց թագաւորին դէմ:

Հ. Վահան ինչու համոր Վրաստան գնաց.

Պ. Վասն զի Վախթանկ օգնութիւն ուղեր էր Հայերէն՝ Պարսից դէմ գնելու. Վահան ալ գնաց իրեն խոստման դէմ չընելու համար:

Հ. Վախթանկ ի՞նչ խարդախութիւն ըրաւ Վահանայ.

Պ. Միհրանայ հէտ խօսքը մէկ ընելով, Վահանը անարդնացուց ան տեղուանքը, ինչւան որ Միհրան իր անթիւ զօքքերովին հասաւ, ու Վահան յանկարծակիի գալով չկրցաւ պատրաստուել որովկ յաղթուեցաւ:

Հ. Ի՞նչ երևելի մարդիկ մեռան աս պատերազմիս մէջ.

Պ. Սահակ Բագրատունին ու Վասակ՝ Վահանայ եղայլն. իսկ մնացածներէն շասն Միհրանայ կողմն անցան ու մնաց հարթւը հոգի, որոնք Տայոց կողմէրն փախան:

Հ. Միհրանին տեղ ո՞վ սպարասպէտ դրուեցաւ.

Պ. Հաղարաւուիստ, որ նոյնպէս չկրցաւ Վահանայ անպարտելի արութեանն յաղթէլ:

Հ. Վահան Հաղարաւուխտին ձեռքէն ի՞նչպէս աղատեցաւ.

Պ. Հաղարաւուխտ իմանալով որ Վահան Դութին փախերէ է, գնաց Դութինը պաշարեց, Վահանը ուղելով որ նր պատճառաւ քաղքին վնաս մը հասնի, իրեն քիչ մարդիկներովին ելաւ քաղքէն ու Պալսիկները ճկվելով գնաց Հաղագոյն դաւան:

Հ. Հաղարաւուխտին տեղն ո՞վ զրկուեցաւ.

Պ. Շասուու Միհրանեան պարսիկն, որ իմանալով Վահանայ ուր տեղ ըլլալն եկաւ պաշարեց:

Հ. Վահան ի՞նչ կերպով աղատեցաւ Շասու հին ձեռքէն.

Պ. Շատ մը գեղացոց ձեռքն վահաններ ու բաներ տալով իր կեցած տեղը շարեց, ու ինքն ուրիշ:

Համբով Պարսից վրայ վաղեց գիշերանց, ու խոռովութիւն ձգելով Պարսից բանակին մէջ վեց հարիւր հօգուոյ չափ մեռուց ու մնացածներն ալ փախան:

Հ. Վահան ուրիշ ի՞նչ քաջութիւններ ըրած ունի:

Պ. Անդամ մը երեսուն հոգւով Շասուհին դէմ ուրիշ մեծ յաղթութիւն մ'ալըրաւ նոյն պէտ յանկարծակի վրանին վաղելով երբոր անոնք անփոյթ կէցէր էին տեսնելով Վահանին զրաց քիչուրութիւնը:

Հ. Պարսիկ ի՞նչ կէրպով Վահանայ հետ հաշտուեցան.

Պ. Երբոր Պերող մեռաւ ու Վաղարշ իր եղայրն թագաւորեց, ասիկայ լսած ըլլալով Վահանայ քաջութիւնները ու իրեն արդար պահանջ մոռնքը, ուղեց հաշտուիլ հետն. ուստի Նիխոր անունով խաղաղասէր մարդը զվկեց, որ երթայ առ բանս կատարէ:

Հ. Ի՞նչ կէրպով կատարուեցաւ առ հաշտութիւնն.

Պ. Վահան դաշնիք դրաւ Նիխորայ հետ, որոնց գլխաւորն էր թէ քրիստոնէութիւնը ազատապաշտուի Հայաստանի մէջ ու Պարսիկ բնաւ չխառնուին. Նիխոր յանձն առաւ, ան առեն Վահան գնաց Պարսից գուռաը ու նորէն երգում առաւ թագաւորէն, և ընդհանուր սպարապէտ դրուելով գարձաւ Հայաստան:

Հ. Ի՞նչպէս մարզպան եղաւ Վահան.

Պ. Երբոր Անդեկան մարզպանն Պարսկաստան դարձաւ, այնչափ գովեց զՎահան, որ Վաղարշ

ալ զինքը մարզպան դրաւ, ու Վահանին Վարդեղայլն ալ սպարապէտ:

Հ. Ինչո՞ւ համար վերջը նորէն Վահանին տեղը Պարսիկ մարզպան դրուեցաւ.

Պ. Երբոր Վաղարշ մեռաւ, Պէրողին որդին կաւարը թագաւորեց, ասիկայ մոգերէն յորդուած Վահանայ աեղ պարսիկ մարզպան մը զըրկեց և հետան ալ շատ քուրմբը, ասով նորէն խորվութիւն ինկաւ Հայաստան:

Հ. Հայերը ընդունեցան նոր մարզպանն ու քուրմբը.

Պ. Վահան ուրիշ նախարարաց հետ միաբանելով վաղեց նոր մարզպանին վրայ ու հալածեց Հայաստանէն:

Հ. Վահան մրչափ ատեն մարզպանութիւն ըրաւ.

Պ. Քանի ովեց արթի ամեն գովելի հանդամանքներով (491):

ԴԱԱ ԺԴ.

Վարդին մինչեւ Սմբատին Կիշրապաղասուրիւնը:

Հ. Վահանին աեղն ով դրուեցաւ մարզպան.

Պ. Վարդ՝ Վահանին պղոխ եղբայրն, որ չօրս տարիին մարզպանութենէն ինկաւ, վրան սուտ ամբաստանութիւններ ընելնուն համար:

Հ. Վարդին աեղն ով դրուեցաւ.

Պ. Բուրղան անունով անպիտան պարսիկն, որ
երեք տարի Հայերը շատ նեղեց:

Հ. Ի՞նչ մարդ է Մժեժ Գնունի.

Պ. Կարիճ մարդ մ' էր, որ երբոր Հոհք Հայաս-
տանի վրայ վաղելով աւելի բնակ կ' ընէին, գէմեր-
նին ելելով յաղթեց անոնց ու հալածեց Հայաս-
տանէն:

Հ. Մժեժ իրեն աս արդեանց համար ի՞նչ փո-
խարէն ընդունեցաւ կաւատէն.

Պ. Բուրղանին տեղն մարզպան դրուեցաւ՝ որ
երեսուն տարի մարզպանութիւն ըրաւ:

Հ. Մժեժին տեղն որո՞նք մարզպան դրուեցան.

Պ. Դենշապուհ պարսիկն, որ Հայերը շատ կը
նեղէր հաւատքի համար, ու Մովսէս կաթուղի-
կոմին աղաքանքովն փոխուեցաւ ու տեղն ուրիշ
մը եկաւ. վերջը զրկուեցաւ Սուրէն Ճիհը որ
Հայերը շատ նեղեց:

Հ. Աս միջոցներուն ի՞նչ նշանաւոր փոփոխու-
թեան բան եղաւ Հայաստանի մէջ.

Պ. Մովսէս կաթուղիկոմն Հայոց տօմարը նորո-
գելով նոր թուական հաստատեց. ուսկից սկը-
սեալ ինչուան հիմա 1329 տարի է:

Հ. Սուրէն մարզպանն ի՞նչպէս սուաննուեցաւ.

Պ. Սուրէն՝ Վարդան Մամիկոննեանին Մանուկ-
ելզայրը սուաննեց. Վարդան աս բանիս վրայ բար-
կացած՝ զօրք ժողվեց վաղեց Դութին քաղքին
վրայ, ու քաղաքը առնելով Սուրէնը սուաննեց ու
զօրքն ալ ջարդեց ու ցրուեց (564):

Հ. Երբոր Վարդանայ աս ըրած դործը հասաւ

Խոսրով Պարսից (թագաւորին ականջն, ի՞նչ ըրաւ-
խոսրով).

Պ. Շատ զօրք զրկեց Վարդանայ վրայ. բայց
Վարդան վարպետութեամբ պատերազմելով՝
յաղթեց անոնց ու ցրուեց:

Հ. Երբոր Խոսրով աւելի մեծ բանակ մը զօր-
կեց, Վարդան ի՞նչ ըրաւ.

Պ. Տեմնելով իր քովիններէն շատն փախան
զատուեցան, ինքն ալ Կ.Պոլս գնաց և Յուստի-
նիանոս կայէսրէն օգնութիւն ուղեց. Յուստի-
նիանոս ալ տուաւ:

Հ. Վարդան Յունաց օգնութեամբն կրցաւ
Պարսից յաղթել.

Պ. Խոսրով ինքը անձամբ հարիւր քառասուն
հազար զօրքով Վարդանայ և Յունաց վրայ եկաւ.
և երկու կողմէն ալ շատ ջարդ ըլլալէն ետե,
նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստան:

Հ. Երբոր նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաս-
տան, ո՞լ եղաւ մարզպան.

Պ. Ճիհը Վզոն խաղաղասէր պարսիկն՝ տամնը-
հինդ տարի: Ասիկայ վերջի Պարսիկ մարզպանն
էղաւ (578):

Հ. Ճիհը Վզոնին տեղն ո՞լ եղաւ մարզպան.

Պ. Սմբատ Բաղմացաղթ՝ իրեն քաջութիւննե-
րուն համար, որ ութ տարի մարզպանութիւնն
ըրաւ.

Հ. Իրեն ո՞լ յաջորդեց.

Պ. Դաւիթ Սահակունի, որ քսանը ըսորս տարի
մարզպանութիւն ընելէն ետքն, վախնալով Պար-
սիկներէն թողուց կը անութիւնը և կոստան-
դնուազլս փախաւ:

Հ. Դաւիթ Սահառունին ատենա ի՞նչ յիշաւակի արժանի գործողութիւն Եղաւ Հայաստանի մէջ:

Պ. Մուշեղ Ամիկոնեան իշխանին և Գայլ Վահանին Պարսից հետ ըրած պատերազմներն:

Հ. Ի՞նչ պատճառաւ եղան աս պատերազմներն.
Պ. Խոսրով պատճառաւ մը թշնամնայով Մուշեղայ հետ, վրան պատերազմի եղաւ. Մուշեղ աւ իրեն օգնութեան կանչեց Վահան իր աղականը, որ իր վարսեառութիւններուն համար Գայլ ըստեցաւ:

Հ. Գայլ Վահանին քաջութեանցն ու վարսեառութեանցն ովլ հետեւող եղաւ.

Պ. Իր որդին Սմբատ, որ Պարսից շատ անդամ յաղթեց ու չորս երեւելի զօրավարներ սպաննեց:

Հ. Դաւիթ Սահառունին աեղ ովլ մարզպան դրուեցաւ.

Պ. Վարազմիրոյ Սմբատ Բաղմայալթին որդին, որ Եօթը տարի մարզպանութիւն ընելէն ետքը իր ընտանիքովն Կ.Պօլս փախաւ:

Հ. Ո՞վ եղաւ առջի կիւրապաղատն.

Պ. Դաւիթ Սահառունին:

Հ. Ի՞նչպէս Եղաւ որ Դաւիթ կիւրապաղատ դրկուեցաւ.

Պ. Աս միջոցներսն Պարսից մէջ խուլութիւն ինկնարով, Հայերն Յոյներուն ապաւինեցան ու իրենցմէ իշխան մը ուղեցին. անոնք աւ Դաւիթը զրկեցն կիւրապաղատ անուանելով, որ իշխանութեան անուն մ'է, բայց չորս տարիէն նորին Հայերն մերժեցին զԴաւիթը:

Պ. Պարսիկներէն զատուրիւ ի՞նչ թշնամի ակը-սաւ վազել Հայաստանի վրայ աս միջոցներուն.

Պ. Հագարացիք՝ որ Պարսիկներէն աւելին շատ չասուցին Հայոց:

Հ. Հագարացւոց արշաւանացը Էղմ՞ն նախա-րարներ որ գէմ գիեն.

Պ. Թէոդորոս Ուստունի և Վահան Կամսարա-կան ութիւն հազար զօրքով (676):

Հ. Վահանին այսպիսի աղքամիրական գործութեանն որպ՞ոք արգելվ եղան.

Պ. Երբոր Հագարացւոց գէմ պատերազմի ելեր էր, Սահուռ Անձնացին և ուրիշներն՝ Հա-գարացւոց կողմն անցնելով սկսան Տաճիկներուն հետ մէկտեղ Հայերը Հարգել և այսպէս ցրուեցին Վահանայ զօրքերը:

Հ. Հագարացիք Վահանայ զօրքը Հարգելէն ետեւ ի՞նչ ըրին.

Պ. Հատ մարդ թրէ անցնելէն ետեւ, Երևանը-հինգ հազար հոգի աւ գերի տարին:

Հ. Հագարացւոց աս ըրած ջարդէն ետեւ ովլ դրկուեցաւ կիւրապաղատ Յունաց կողմանէ.

Պ. Վարազմիրոյ, որ տարիէ մը մեռաւ և իրէն յաջորդեց իր աղան Սմբատ:

ԳՈՍ ԺԵ.

Ամրատ կիշրապաղատեն մինչեւ Բագրատուն
ևսաց բագաւորուրեան կանգնուիլլ:

Հ. Ամբատին կիւրապաղատութեան ատեն
Հայերն հանդիսան անցուցին.

Պ. Ամբատին կիւրապաղատութեան երրորդ
տարին Հագարացիք վազեցին Հայաստանի վրայ,
ու շատ կոտրածներ ըրին. նախարարներն միա-
բան հնազանդեցան Հագարացոց, և Յունաց իշ-
խանութենէն Ելան, որուն Յոյները շատ նեղա-
ցան (683):

Հ. Ամբատին տեղն ո՞լ Եղաւ իշխան.

Պ. Համազասպ Ամիկնեան, որ քիչ մ' ատե-
նէն նորէն Յունաց հնազանդելով աննոնմէ Պատ-
րիկ ըսոււծ իշխանութիւնը ատեւ: Ամբատին
ըսոր իրեն քովի եղած Հայ պատանդները թրէ
անցընել տոււաւ, անոր յաջորդիննորէն հնազան-
դեցան Հայերն, ու քիչ ատենէն Համազասպն
ալ մեռնելով իրեն աեղը պատրիկ գրուեցաւ իր
Եղայրն Գրիգոր:

Հ. Գրիգոր ո՞բչափ ատեն պատրիկ Եղաւ, ու
իրեն ո՞լ յաջորդեց.

Պ. Քասանը ըսորս տարի, ու վերջը պատերազմի
մէջ մեռաւ: Երկու տարի տակն ու վրայ Եղաւ
Հայաստան, մինչեւ որ Աշու Բագրատունին զօ-
րանալով (Եշամեաց գէմ դրաւ, Հագարացոց
հարկ տալով:

Հ. Աշու ո՞բչափ ատեն պատրիկութիւն ըրաւ.
Պ. Յոյներն իմանալով որ Հայերն Հագարա-
ցոց հարկատու եղեր են, շատ զօրք զիկելով
մեծամեծ աւերմունքներ ըրին Հայաստան. Հա-
գարացիք ալ ընդհակառակին կարծելով որ Հայե-
րը Յունաց հնազանդեր են, իրենք ալ նոյնպէս
շատ վասաներ հասուցին Հայոց. Աշու ասանց գէմ
դրաւ քաղլութեամբ, բայց ինքն ալ զարմուելով
մեռաւ իրեք տարի իշխելն եաբը (692):

Հ. Աշուին մեռնելէն ետե ովլիշխեց Հայոց.

Պ. Հագարացիք, որոնք Վրիսատոսի 693 թուա-
կանին սկսան Հագարացի իշխան մը զրկել Ոստի-
կան անունով, որոնց առջինը Եղաւ Աբդըլլա:

Հ. Աբդըլլային առջի գործողութիւր ո՞րն եղաւ.

Պ. Նախարարները և Ասհակ կաթուղիկոսը
ըովնեց ու Թամանսկոս զրկեց: Քիչ մ' ատենէն
Ամբատ Բիւրատեանն հալածեց զինիքը Հայաս-
տանէն Յունաց օգնութեամբ:

Հ. Հագարացիք Ամբատայ աս ըրած գործողու-
թեան վրէժը լինչպէս հանեցին.

Պ. Մոհմատ անունով զրավարը զրկեցին, որ
շատ վեաս հասուց, ու վերջը Ասհակ կաթուղի-
կոսին աղաջանաց (թղթովն իսազաղութիւն ըրաւ
ու գերիները աղատեց:

Հ. Նախարարաց աղատելէն ետե Կաչմ սստի-
կանն ինչ չըրիք հասուց Հայոց.

Պ. Նախարարները և ուրիշ ազգին մեծ Երը
Նախաղուանի եկեղեցւոյն մէջն այրել ստուաւ (704):

Հ. Կաշմին տեղն որո՞նք գրուեցան սստիկան.

Պ. Վիլթ ու Ասհմէտ, որոնք շատ չարիք հա-

սուցին. և Աբգրը լողից որ քաջը ըստ թեամբ խնաւ մեց աղքը:

Հ. Ասոնցմէ ետքը որո՞նք դրուեցան սսամիկան. Պ. Սըռուան՝ որ երկու տարիէն Աշոտը իշխան գնելով՝ ինքը գնաց ամիրապետեղու. բայց երբոք Մըրուան մեռաւ, Աշոտին տեղն Եղիս անունով չար մարդն սսամիկան դրուեցաւ, որ Հայերը շատ նեղէց (758):

Հ. Եղիսանին տեղն ովլիշխեց Հայոց.

Պ. Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը պատրիկ դրուեցաւ, որուն վեցերորդ տարին Աիւլյամնը սսամիկան զրկուեցաւ. քիչ մ' ատենէն եկաւ Պէքիր անողորմ մարդն. ու վերջն աւ Հասան՝ որ ամենէն աւելի նեղէց Հայերը:

Հ. Հասանին ատեն Հայերն ի՞նչ գործողութիւն ըրին,

Պ. Մուշեղ Մամիկոնեան իշխանն Հասանին տրեքը լաւ մը ջարդեց ու զինքն ալ Դուբինէն փախուց. նոյնպէս նաև Աշոտ Մասկէր իշխանն քանի մը անդամ յաղթեց Հագարացոց, մինչեւ որ Եղիս Բ. շատ զօրքալնորդն նուաճեց Հայերը, ու շատ չարիք հասուց, որուն նմանը չէր եղած Հայաստանի մէջ (787):

Հ. Եղիսէն ետքը Հայերն ի՞նչ վիճակ ունեցան.

Պ. Քիչ մը հանգստացան, որովհետեւ Խուզիման և Հոլ սսամիկանները որ եաւէ ետեւ նսաեցան այնչափ չնեղէցին զՀայերը:

Հ. Հոլին տեղն ովլիշխեց Հայոց.

Պ. Ասխարաբաց աղաճանքով պատրիկ դրուեցաւ Բագարատ Բագրատունին, որ վերջէն տե-

րութեան առջև յանցաւոր գանուելով աչքէ ընկաւ:

Հ. Բագարատին տեղն ովլզիկուեցաւ սստիկան. Պ. Ապուսէթ, որ Բագարատը բանեց ու Դամասկոս զրկեց: Ասք բանիս բարկացած Սաստնցիք՝ Ապուսէթին վրայ վաղեցին ու սպաննեցին (849):

Հ. Ամիրապետն երբորլսեց Ապուսէթին սպանն նուելլը լինչը ըրաւ.

Պ. Բուղա սստիկանը զրկեց հրաման տալով որ ձեռքէն եկած չարիքը հասցընէ Հայոց. որ բոլոր Հայաստան արիւնլուայ ըրաւ:

Հ. Նախարարներէն չեղան մարդ մը որ Բուգյին ընդդիմանայ.

Պ. Աշոտ Արծրունին կ'ուզէր ընդդիմանալ. բայց տեսնելով որ ուրիշնախարարներն չեն օգներ, ինքն ալ շատ ընծաներով զնաց Բուղային սիրալ առնելու. բայց փոխանակ պատիւ ընդունելու տնու տեղով գերի զնաց:

Հ. Նախարարներէն ովլեղաւ որ Բուղային առանցնորդէց, որպէս զի ինքը պատուայ համնի.

Պ. Արքան սպառապետն. բայց Բուղա ամեն չարութիւն ընելէն ետքը փոխանակ պատուայ հասցընելու շղթայի զարկաւ ու Պաղտատ գերի տարաւ, իր տեղը Ենիսի անունով պարսիկը ոստիկան գնելով:

Հ. Նախարարներէն և ուրիշ գերիներն հոն լինչ եղան.

Պ. Ամիրապետին բանութիւններէն ոմանք հաւատքնին ուրացան ուշան ալնահատիկուեցան.

Ամբատ աւմեղացը վրայ զվալով բանախն մէջը մեռաւ ու Խոստովանողըսուեցաւ (856):

Հ. Հայոց այսակի թշուառութեանց պատճառը
որո՞նք եղան.

Պ. Ոչ այնչափ Յոյներն և Պարսիկներն կամ
Հագարացիք, որչափ նոյն միջոցուան մեր ազգին
նախանձու, ատելութեան, անմիաբանութեան,
և որ մեծն է՝ անկրթութեան և անձնասիրու-
թեան զօրացած ախաերն։ Ասոնցմէ ամեն կըր-
թեալ ազգերը խորշեր են, ինչպէս նաև մեր
ազգն աւելի կրթութեան ատենը։

Թ. Ա. Գ. Ռ. Ս. Ո. Ի. Ն. Ե. Ա. Ց.

Բ Ա. Գ Ր Ս Ո Ի Ն Ե Ա. Ց

ԴԱԱ Ժ. Զ.

Աշուա Ա. և Ամբատ Ա.

Հ. Բագրատունեաց իշխանութեան առջեթա-
գաւորն ովկեղաւ։

Պ. Աշուա՝ Ամբատ Խոստովանողին որդին։

Հ. Ի՞նչ կերպով Աշուա աս իշխանութեան հա-
սաւ։

Պ. Շեխին ոստիկանութեան ատենն Հայաս-
տանի վրայ հոգ ատնելով և Հագարացւոց հաւա-
տարմութիւն ցուցընելով, Շեխին տեղը վերա-
կացու եղաւ Հայաստանի (859)։

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Աշուա։

Պ. Նախարարներն Գէորգ կաթուղիկոսին
հետ միաբանած ամիրապետէն ինդրեցին որի իրենց
թագաւոր դնէ Աշուաը, խոստանալով որ հաւա-
տարիմ կը կենան. ամիրապետը Աշուանին լաւու-
թիւնները լսած ըլլալով կատարեց ինդիքսին։

Հ. Աշուա ի՞նչ պատիւ դտաւ Աւոն կայսերէն,
ու ի՞նչպէս մեռաւ։

Պ. Հայաստանի ամեն կողմերը խաղաղընելէն

Էտքը Կոստանդնուպօլիս գնաց կեզն կայսեր յարբութեան համար, ուր որ մեծամեծ պատիւներ դառաւ, վերջը Հայաստան դառնալու ատենն Շիրակ համսներով ծանր հիւանդացաւ, ու ամեն հոգեսրական պատրաստութիւնները ընելով մեռաւ 71 տարեկան, 26 տարի իշխելէն ու հինգ տարի թագաւորելէն ետքը:

Հ. Ամբատ երբոր հօրը տեղը անցաւ, ալ եղաւ որ ժագաւորութեան աչք ձգէ.

Պ. Աբաս իր հօրեղբայրն շատ զօրք ժողված կ'ուղէր ինքը թագաւորել. բայց երկու անդամ յաղթուեցաւ. Սմբատ Աբասին տեղը սպարապետ դրաւ իր Շապուհ եղայրը:

Հ. Սմբատ Աբասը նուաճելէն ետև ուրիշ թնչ թշնամի ունեցաւ.

Պ. Ափշին Պարսիկ ոստիկանն նախանձելով Սմբատայ մեծանութեան վրայ երեսուն հազար զօրքով վրան պատերազմի ելաւ. Սմբատ քաղցրութեամբ Ափշինին սիրտը իջեցուց ու հաշտուեցաւ հետն:

Հ. Ափշին ո՞քափ ատեն հաստատուն մնաց իր դաշինքին վրայ.

Պ. Շատ քիչ, վասն զի զղջալով ըրած հաշտութեան վրայ, խարէութեամբ Սմբատայ վրայ վազեց ու առջի բերան շատ չարիք հասուց. Սմբատ շատ զօրք ժողվեց ու փախուց Ափշինը:

Հ. Սմբատ Ափշինին յաղթելէն ետքը ուրիշ թնչ թշնամի ունեցաւ.

Պ. Ահմատ Միջագետաց ոստիկանը, որուն հետ միացաւ նաև Գագիկ Արծրունին՝ Սմբատայ ազգականներէն մէկն, ու Ահմատին առաջնորդ եղաւ:

Սմբատ թէպէտ և յանկարծակի եկաւ, բայց քաղցրութեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին ու փախուց իր տեղը:

Հ. Սմբատ Ահմատին ալ յաղթելէն ետքը հանդիսան մնաց.

Պ. Զէ. վասն զի Ափշին նորէն պատերազմի եւ լաւ վրան, ու Սմբատ ալ անօդնական մնալով պատանդ տուաւ իր որդին. բայց Ափշին երբոր, ուրիշ չարիք ալ կ'ուղէր հասցընել, ինքը սոսկալի մահուամբ մեռաւ, ուրիեն տեղը յաջորդեց Յուռուուկի վրայը իր եղբայրը:

Հ. Սմբատ ոստիկաններուն բռնութենէն ազաւելու համար ինչ ձար գտաւ.

Պ. Ամիրապետէն ննդրեց որ փոխանակ տուրքուր ոստիկաններուն ձեռքովին տալու, ուղղակի ամիրապետին զրկէ ինքը:

Հ. Ինչո՞ւ համար Ատրներսէհ Վրաց թագաւորն ու նախարարներն Սմբատայ դէմ ելան.

Պ. Եղերացւոց Կոստանդին թագաւորին ապլստամբէր էր Սմբատուն. Սմբատ Ատրներսէհն հետ մէկակ վրան պատերազմի ելաւ, ու զինքը Ատրներսէհին ձեռքովին բանել տալով Անիի ամրոցը դրաւ, չորս ամէէն վրան դթալով բանտէն հանեց ու արձըկէց իր տերութիւնը: Ասքանս նախարարներն իրենց նախատինք սեպելով ապստամբէցան:

Հ. Նախարարներուն ապստամբութիւնն ինչ վերջ ունեցաւ.

Պ. Գործած գարաննին չյաղողելով չարաչար յաղթուեցան. Սմբատ նախարարներուն շատին աչքը կուրցուց, ու Ատրներսէհն վրայ գլթալով աղատեց:

Հ. Ամբատ նախարարներուն յաղթելէն ետքը,
ի՞նչ նոր խոտվութիւն ընկաւ Հայաստանի մէջ.

Պ. Գագիկ Արծրունի Ամբատայ քեռորդին
ապատամբելով իրմէ, գնաց Յուսուփին քով.
Յուսուփ ալորակս զի Հայաստանի մէջ խոտվու-
թիւն ձգէ՝ զինքը թագաւոր ըրաւ (908):

Հ. Գագիկ թագաւորութենէն ի՞նչ չար հե-
տեսնելու ելան.

Պ. Գագիկ և Յուսուփ միսցած՝ վաղեցին Ամբա-
տայ վրայ, որոնց կողմն անցան նաև նախարարնե-
րէն շատն. Ամբատ ալ տեսնելով որ մինակ գէմ
չէլնար գնել, Գուգարացւոց երկիրը փախաւ:

Հ. Ամբատ Գուգարացւոց քովէն՝ ո՞ւր գնաց
քաշուեցաւ.

Պ. Երբոր աեսաւ որ իր Աշոտ ու Մուշեղ տը-
ղաքն ալ յաղթուեցան Աւորդիներուն մատնու-
թեամբն, ինքն ալ յօւսահատած Կապոյա ը-
սուած ամուր բերդը գնաց քաշուեցաւ:

Հ. Յուսուփի ի՞նչպէս առաւ Կապոյա բերդը.

Պ. Ամբատ տեսնելով որ իր պատճառաւաւն սաս-
տիկ ջարդ՝ կ'ըլլայ, անձնատուր եղաւ Յուսուփին՝
երդումն առնելով որ իր անձին վլաս չհասցնէ:

Հ. Յուսուփ Ամբատայ ի՞նչըրաւ.

Պ. Նախ դրսուանց պատիւ ցըցուց ունաւ ա-
զատ ալ թողուց, բայց վերջնորդէն խարդախու-
թեամբ կանչելով սկսաւ տանջել ու չարչարել որ
կամ հաւատքը ուրանայ և կամ մեռնի. սոսկալի
տանջանելու տալէն վերջը մորթել ու գլուխն ալ
կորել տուաւ՝ տամնը չորս տարի թշուառու-
թեամբ (թագաւորելէն ետքը) (913):

ԴԱՅ ԺԷ.

Աշոտ Բ. Երկար և Արաւ:

Հ. Ամբատին մեռնելէն ետքը Հայոց վիճակն
ի՞նչպէս եղաւ.

Պ. Յուսուփի Երջնջակ ամուր բերդը ամնելով,
ընակիներուն մէծ մասը ջարդեց ու շատն ալ
գէրի տարաւ. ու բոլոր Հայաստանի տիրելով՝
պահապաններ թողուց ու ինքը Պարսկաստան
դիաց :

Հ. Երբոր լսեց Աշոտ՝ Ամբատայ տղան՝ իր հօրը
մեռնիը ի՞նչ ըրաւ.

Պ. Վեցհարիւր հոգւոց չափ մարդիկի ժողվելով,
վաղեց Յուսուփին (թողուցած պահապաններուն
լիայ ու սաստիկ ջարդ տալով զամենքն ալ փա-
խուց:

Հ. Հայերը Աշոտ Երկաթին քաջութիւնները
տեսնելով ի՞նչըրին.

Պ. Միաբանեցան ու զինքը թագաւոր դրին.
բայց քիչ մ' ատենէն նախարարներէն ոմանք վր-
քան նախանձելով, ապստամբեցան իրմէ ունորէն
խուլեցին աշխարհը: Աս բաներէս զօրացած
Յուսուփ՝ շատ չարիք հասուց Հայոց:

Հ. Հայոց աս (թշուառութիւններուն մէջ, չե-
զան մէկն որ ողորմի ու խաղաղեցընել ջանայ).

Պ. Կոստանդին Պերիկեռութէն Յուսունաց կայսրն
լսելով Հայոց խեղձութիւնները. Աշոտը կոս-
տանդնուալուս կանչեց, ու շատ պատուելէն ետ-

Քըլ Յունաց զօրբով զի՞նքը իր թագաւորութեանը դարձուց (921):

Հ. Աշոտ ասանկ փառքով Հայաստան դաւնաւէն վերջը կրցան խաղաղ թագաւորել:

Պ. Զէ. վասն զի Յունուուփ Աշոտ Երկաթին հօր Եղբօրք տղան Սըոտը թագաւորեցաւ որ Բոնաւոր ըսուեցաւ, ասով նորէն խոռվութիւն ընկաւ Հայոց մէջ, ու սաստիկ ջարդէր եղան երկու կողմէն ալ, ինչուան որ Յոթէաննէս կաթուղիկոսն հաշոտեցուց զիրէնք:

Հ. Աշոտ Երկաթ՝ Աշոտ ըռնաւորէն զատ ուրիշ ինչ թշնամինք ունեցաւ.

Պ. Անկրթութեան և անկարգութեան հոգի մասծ ըլլալով, ամենքը Կ'ուզէնն ինքնիշխան թագաւոր ըլլալ, ինչուան նաև Աքաս Աշոտի Եղայրն ալ պաստամբեցաւ, ու պատերազմեր ըրաւեցորդ հետ. Աշոտ ալ յուսահատած դնաց Աւան կղզին քաշուեցաւ հարիւր հոգւով:

Հ. Աշոտ Աւան կղզին քաշուելէն առաջ ինչ քաջութիւնը ըրաւ Ցիկ Ամրամին գէմ:

Պ. Երբոր օր մը Աշոտ զուարձութեան համար Ուսէացւոց կողմն գնացէր էր, լսէլով անոնց իշխանին Ցիկ Ամրամին պաստամբութիւնը, Եղերացւոց թագաւորէն քիչ մը զօրք օկնութիւն առաւ ու գնաց ամուսը բերդի մը մէջ պահուը առաւ Ամրամ Եկաւ պաշարեց վինքը, Աշոտին քովի մարդիկը աւենինը որ ազատում չկայ, մէջէնին որոշեցին որ Սըոտը ըռնեն Ամրամին մատնեն ու իրենք աղասին. Աշոտ իմանալով անոնց չարութիւնը գիշերանց ձի հեծաւ ու թշնամեց մէջէն քաջութեամբ անցնելով փախաւ Աւան կղզին գնաց. ասոր նման շատ քաջութիւններ ըրտ Աշոտ:

Հ. Երբոր Աշոտ Աւան կղզին քաշուելը էր, Հայաստանի ինչ վիճակի մէջ էր.

Պ. Յուսուուփ Նըսր անունով վերակացու մը զիեց որ շատ չարիք հասուց Հայոց. իրենց անմիաբանութեաննցաւալի և արժանաւոր պատիմ:

Հ. Աշոտ Երկաթ ինչպէս յաղթեց նըշը ոստի կամին.

Պ. Նըրէին տեղը Բըշը զրկուեցաւ, ասիկայ եմնեալով որ Աշոտ Աւան կղզին քաշուեր է, ուղեց բանէլ. բայց Աշոտ իրեն քիչուոր մարդիկը այլ այլ նաւակիներու մէջ բաժնելով նետաձութեց շատ մարդ սպաննեց, որով թշնամիններն սկսան փախչիլ. ինքն ալ ետևին ինկնալով հալածեց, ու դարձաւ իր տեղը:

Հ. Աշոտ ինչուան Ե՞րբ Աւան կղզին քաշուած մասց.

Պ. Տեսնելով որ կամաց կամաց խաղաղացաւ Հայաստան, ինքն եկաւ իր թագաւորութիւնը ձեռք առաւ ու հաշտութիւնը ըրաւ Աքաս Եղօրը հէտ. և քամինը ըրաւ տարի ընդհատ ու անհանդիսա կերպով թագաւորելէն ետքը՝ մեռաւ: Ասիկայ Շահընշահ (թագաւորներու թագաւոր) ալ ըստեցաւ:

Հ. Աքաս Եղօրը տեղ յաղթորդելով ինչ կերպով կառավարեց աղքը.

Պ. Աթուը կարս գրաւ. իր զգօնութեամբն թշնամիններուն յաղթեց ու խաղաղութիւնը ըրաւ, որով Հայաստան սկսաւ ծաղկիլ:

Հ. Աքաս ինչ Երևելի պատերազմը ըրած ունի.

Պ. Բեր՝ Վրաց և Աթիսաղաց թագաւորն պատերազմի ելաւ Աքասին գէմ, ու ծաղրելով պատ-

Ա*

Դամ՝ զրկեց որ Կարսին մայր Եկեղեցին ինքը պիտի գայ օրհնէ Վրաց ծխով. Աբաս դէմի Ելաւ յաղթեց ու բռնեց և Կարս բերելով ցըցուց ան Եկեղեցին որ կ'ուզէր օրհնէլ, ու վերջը աչքերը կուրցուց :

Հ. Աբաս ո՞չչափ ատեն թագաւորեց.

Պ. Քանիշը տարի խելքով ու խաղաղութեամբ (953):

ԴԱՍ Ճ.Բ.

Արծրունեաց կամ Վասպորակամ աշխարհին բագաւորուրիւնը: Անու Ռորմած ու Արմատ Բ.

Հ. Ովկեղաւ Արծրունեաց առաջնին թագաւորը.
Պ. Գագիկ, Աբաս առաջնոյն քեռողջին, ինչ ուր որ վերը ըսկիք:

Հ. Գագիկ որո՞նք յաջորդեցին.

Պ. Իր որդին Աշոտ Դերենիկ ասանիը վայ տարի. Երբը Դերենիկին պղտի Եղբայրն Համազասպ Աբուսահ, որուն յաջորդեցին իր իրեք տղաքն Աշոտ, Գուրգէն, Սենեքերիմ. աս Սենեքերիմը Սկիւթացը բռնութիւններէն աղատելու համար՝ ինքը Սեբստոնյ գաւառով առաւ Յունացմէ ու Վասպորականը անոնց տուաւ 1021 ին: Հռն իրն յաջորդեց իր որդին Դաւիթ, անոր ալ յաջորդեցին Ասովմէ Աբուսահ, որոնք երբոր մեռաւ 1080ին, բոլորովին վերցուեցաւ ան թագաւորութիւնն ալ:

Հ. Աշոտ Դերենիկին թագաւորութեան ատենը ի՞նչ յիշատակի արժանի դործ պատահեցաւ.

Պ. Ապլիսարիս Համունիկին Դերենիկը մատնեւ ու վերջն ըրած քաջութիւնը:

Հ. Ապլիսարիս ինչու համար Դերենիկը մատնեց թշնամեաց ձեռքը.

Պ. Վասն զի Դերենիկ ուրիշներուն գրբոռւթեամբը Ապլիսարիսը սպարապետութեան պաշտօնին ձգեր էր. Ապլիսարիս ալ աս բանիս վրէժը առնելու համար Հեր ու Զարեւանդ գաւառուներուն իշխանները պատերազմի յորդորելով անոնց ձեռքը մատնեց զինքը:

Հ. Ապլիսարիս իր ըրածին վրայ ի՞նչպէս զղաց.

Պ. Վասնահայրներն ու եպիկոսպաններն լսելով առ բանանզովլեցին Ապլիսարիսը. ինքն ալ զղաց եր յանցանաց վրայ. օր մը երբոր իշխաններն գաշախ մը մէջ Դերենիկը կը չարչարէին հետեւ խաղալով. Ապլիսարիս իմացաւ ու հոն տեղուանքը գարան մատն իշխաններէն ո՛րը սպաննեց ո՛րը փախուց Հեր քաղաքը, որոնք մէկէն քաղքին գոռները գոցեցին. Ապլիսարիս այնպէս կատաղութեազրկաւ որ սուրն երկըթէ գրան մէջը նրեցաւ մընաց. և ասանկով աղատեց Դերենիկը (940):

Հ. Աբասին մէաննելէն ետև Հայոց վիճակին ի՞նչպէս եղաւ.

Պ. Կախարաբաններն միմարաններուն համար տասութիւն առանց թագաւորի մնաց Հայաստան, թէպէտ և Աշոտ Աբասին որդին շատ զօրք ժողված ինելքուազքը կը կառավարէր ու թշնամիններուն սիրտը վախ ձգեց իրն քաջութիւններովը (952):

Հ. Աշոտ Պ. ի՞նչպէս թագաւորեց.

Պ. Տեսնելով նախարարներն Աշոտին կատարե-

լութիւնները՝ թագաւոր օծեցին զինքը. ասիկայ իր սղորմածութեան համար Աշոտ Ողորմած ըստեցաւ:

Հ. Աշոտին ատենն ուրիշ ի՞նչ թագաւոր ալ կար չայսաստան.

Պ. Մուշեղ Աշոտին եղայլն դլուխ քաշելով կարսի մէջ թագաւորեց. Աշոտ խռովութիւնը ըստ համար ձայն չհանեց. ուստի թագաւորական ան ան ճիւղն ալ քիչ մը ատեն դնաց ու վերջը Ցունաց անցաւ:

Հ. Աշոտին յիշատակի արժանի կատարելու թիւններն որպինք են.

Պ. Իրեն խաղաղասէր խելայինութիւնն ու բարեպաշտութիւնն, որուն նմանը չեղաւ Բագրատուննեաց մէջ. Ասիկայ Անին մայրաքաղաք ընկելով զարդարեց:

Հ. Աշոտ ի՞նչ արդիւնք ըրաւ որ ամիրաւուեան սպասիւններ ընդունեցաւ.

Պ. Համառուն Տաճիկներուն սպարապեան ապրասամբելով ամիրաւուեան, Հայաստանի վրայ վաղեց. Աշոտ գէմ ելլելով զինքը սպաննեց:

Հ. Աշոտին միշտակեց.

Պ. Փասնը արքի պանչելի կերպով կառավարելն եաքը, սրբութեամբ մեռաւ. իրեն յաջորդեց Ամբատ իր անդրանիկը:

Հ. Ամբատ Ա. ի՞նչ տէսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Իր հօրը պէս խաղաղասէր ու շմութեանց ետէ եղաւ, ու Տրգատ ճարտարապեանի ձեռքովն շնուրուաւ Անիի մայր եկեղեցին և ուրիշ շատ չէրեր:

Հ. Խնչուան եաքը իր բարեպաշտութեանը մէջ մնաց.

Պ. Զէ, սկսաւ վերջերը եկեղեցական օրինաց դէմբաներընեւ որովանելի եղաւ. տասուերկու տարի թագաւորելէն եաքը մեռաւ (988):

ԴԱՅ ԺԹ.

Գաղիկ Ա. և Յովհաննես Ամրատ:

Հ. Գաղիկ Ա. ի՞նչ կողմանէ անուանի եղաւ.

Պ. Թէ բարեպաշտութեամբ և թէ քաղաքաշենութեամբ Բագրատուննեաց երեւելի ու գովելի թագաւորներէն մէկն եղաւ. Երեսուն տարի թագաւորելէն եաքը մեռաւ. ասիկայ լըննցուց Անիին շնուրերը:

Հ. Ո՞վ յաջորդեց Գաղիկ Ա.ն.

Պ. Յովհաննէս Ամբատ, որ թէպէտ, և խելայի եր, բայց գործունեայ և աշխոյժ քըլալուն՝ շատ չարիկներ հետեւեցաւ Հայաստանի մէջ. նաև Աշոտ եղայրն ալ ապաստամբեցաւ իրմէ, որ քաջ ու տաք գլուխ երիտասարդ մ'էր:

Հ. Յովհաննէս՝ Աշոտին հետ ի՞նչպէս հաշտուեցաւ.

Պ. Աշոտ Անեկերիմ Վասպուրականի թագաւորն օգնութիւն առնելով եկաւ Անին պաշարեց. Պէտքոս կաթողիկոս ու Գորդի Վարագ թագաւորն մէջ մանելով հաշտեցուցին զերենք:

Հ. Աշոտ իր խռաման մէջ հաստատուն մնաց.

¶ . Աղջալով ըրած խոստմանը վրայ , հիւանդացաւ . Երբոր Սմբատ զինքը տեսնելու եկաւ , հոն որոգայթի մշղբանուեցաւ ու սկսաւ աղջալով Աշոտին որ իր կէնացը ինայէ . Սմբրատ իշխանն բռնեց զԱմբատն ու ձեւացուց թէ մեռցնելու կը տանի . բայց գնաց Անի՛ ու նորէն Սմբատը թագաւորեցուց և ինքը փախաւ գնաց :

Հ . Ի՞նչ պատճառաւ Յովհաննէս Սմբատ Անին Յունաց Վասիլ կայսեր խոստացաւ տալ .

¶ . Վասն զի իր թէրաւորութեան չորրորդ տարին Ակիւթացիք Հայաստանի վրայ վաղելով շատ վիսաներ հաստցին . ինքն աւ չկընալով դէմ՝ Վասիլ կայսեր թղթով խոստացաւ որ իր մեռնելին ետքը Անին Յունաց անցնի , միայն թէ Վասիլ օգնէ իրեն Սկիւթացուց դէմ (1024) :

Հ . Սմբատին թղթով ըրած աս խոստմունքը ի՞նչ հետևանքներ ունեցաւ .

¶ . Կոստանդին Վասիլ կայսեր եղբայրը՝ մեռնելու ատենը , կիրակոս անունով հայ քահանայ մը կանչեց ու ետ տուաւ Անիին համար եղած դաշնիքնամակը : Աս անդգամ քահանան աւ պահեց թուղթը քովին , ու Երբոր 1034ին Սկիւթացիլ կայսրնատաւ , տարաւնորէն անոր տուաւ թուղթը . ու ինքը անոր գոխարէն շատ ստակ տուաւ . աս բանս պատճառ եղաւ որ Բագրատունեաց թագաւորութիւնը կործանեցաւ :

Հ . Սմբատ ո՞չչափ տատէն թագաւորեց .

¶ . Քառն տարի ու անորդի մեռաւ : Սորոր թագաւորութեան վերջին տարիները Տուղթիլ Սկիւթացուց իշխանը շատ մեծ վիսաս ու աւերտունքներ ըրաւ Հայաստանի մէջ , որուն դէմ դրաւ քահութեամբ քիչ մը ատեն Վասակ Պահանունի ,

թէպէտ և վերջը ինքն ալ սպանուեցաւ առանձնացած աղօթք ընելու առենն :

Հ . Վասպուրական գաւառին մէջ աս միջոցներս ի՞նչ անդթութեան գործք եղաւ .

¶ . Խարիկ անունով Պարսիկն որ Բերկրիկն քաղաքակեան էր , Նայերէն հալածուելով ոին պահեց . ու քանի մը ամբաներու օգնութեամբն յաղթելով Հայոց , մարդաքանի խորութեամբ փառ մը փորել տուաւ , ու ձեռքը ինկած մարդիկը մորթել առլով արիւնով լէցուց փոսը , ու ինքը արիւնաբոյծ գաղանի պէս մէջը մանելով լուացուեցաւ :

ԴԱԱ Ի .

Գագիկ Բ . և Բագրատունեաց բագաւորութեան կործանիլլ :

Հ . Յովհաննէս Սմբատին մեռնելին Ետքը ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան .

¶ . Երկու տարի անտէր մնալով Վէստ Սարգիս Սիւնեաց իշխանն զօրացաւ ամենուն վրայ և կ'ուցէր թագաւորել :

Հ . Ի՞նչ հնարք բանեցուց Վէստ Սարգիս որպէս զի խոսվասէր ու ամբարտաւան խորհուրդը առաջ տանի .

¶ . Երբոր լսեց Մկրայէլ կայսրն որ Սմբատ մեռէր է , իրէք անդամ զօրք զրկեց Հայոց վրայ որ Երթան Անին առնեն . Վէստ Սարգիս ամենայն կերպով անոնց օգնեց , որպէս զի Մկրայէլ կայսր առջևն արդիւնք մը ըրած ըլլայ :

Հ. Կախարաբներն Հայաստանի աւերմունքը
տեսնելով ի՞նչ ըրին.

Պ. Վահարամ Պահանջառներն յարդորամբով ին
միաբանեցան ու Գագիկ իր թագաւոր օճեցին.
որ Յոլհաննէս Սմբատին Աշոս եղբօրը տղան
էր՝ իմաստուն և շատ ջնաշխարհիկ կատարելու-
թիւններով զարդարուած (1042):

Հ. Գագիկ Բին առջի գործողութին որին եղաւ.
Պ. Վեստ Սարգիսը բանեց ու կապած Անի բե-
րաւ. բայց վերջը ուրիշներու միջորդելովն ազատ
թողուց զի՞նքը:

Հ. Գագիկ Բ. ուրիշ ի՞նչ քաջութեան գործք
ըրաւ.

Պ. Սկիւթացիք Հայաստանի վրայ վաղեն էին.
Գագիկ ասմանը հաջար զրբով անոնց դէմ եւ-
լաւ ու վարպետութեամբ և քաջութեամբ պա-
տերազմելով զամենքն ալ փախուց:

Հ. Ուրիշ որո՞ւ հետ պատերազմ ըրաւ.

Պ. Մոնոմախոս Միքայէլ կայսեր յաջորդը նո-
րէն սկսաւ Անին ուղիւ, երբոր Գագիկ յանձն
չառաւ, Մոնոմախոս երկու անդամ վրան պատե-
րազմի ելաւ, բայց յաղթուեցաւ. աս ամեն չա-
ռութեանց պատման էր Վեստ Սարգիս:

Հ. Վեստ Սարգիս երբոր աեսաւ որ Մոնոմա-
խոս յաղթուելով իր խորհուրդն ըյաջողեցաւ,
ի՞նչ չարիք մասձեց.

Պ. իրեն մէս քանի մը ազդատեաց փառամը լ
ու չարիքաբարաններու հետ միացած, խորհուրդ
առաւ Մոնոմախոս կայսեր որ բարեկամու-
թեամբ կոստանդնուպոլիս կանչէ Գագիկը, ու
վերջը իրենք մասնեն Անին:

Հ. Գագիկ յանձն առաջ կայսեր հրաւելքը.
Պ. Իմանալով կայսեր ու իր թշնամեաց չար-
միաբը ամենեւին յանձ չառաւ. բայց նախարար-
ները առաւ երգում ընկելով թէ իրենք Անին կը
պաշտպանէն՝ յորդորեցին զի՞նքը որ կայսեր եր-
թայ. ինքն ալ ելաւ գնաց, աւելի ձարբ հատնե-
լով քան թէ համազուելով:

Հ. Կայսրն ի՞նչ կերպով ընդունեցաւ զի՞նքը.
Պ. Կախ մէջ պատիւ ու սէր ըցուց, բայց
վերջը սկսաւ Անին ուղիւ. Գագիկ ամենեւին կեր-
պով մ' ալ յանձն չառաւ, անտաեն Վեստ Սար-
գիս ու իր կուսակիցներն Անին բանալիները
կայսեր զիկեցին:

Հ. Գագիկ երբոր տեսաւ Անին բանալիները
ի՞նչ ըրաւ.

Պ. Կըքէն ու յուսահատութենէն թագաւո-
րութենն ալ ձեց իրեք տարի իշխալէն ետքն.
կայսրը աս բանին վրայ ուրախացած՝ Գագիկյ
քանի մը քաղաքներ տուաւ ու ինքը Հայաստանի
տիրեց (1043):

Հ. Բագրատունեաց թագաւորութեան կոր-
ծանելէն ետքը, ի՞նչ խեղճութիւններու հասաւ
Հայաստան.

Պ. Ամեն աեսաւ թշնամի Հայաստանի վրայ վա-
զելով մտքէ չանցած չարիքը հասուցին Հայոց, ո-
րոնց մէջ Կախանարոր եղան Տուղրիւ, Ալֆալան ու
իր աղջն Մէլիք շահ:

Հ. Աս միջոցներուն մէջ ի՞նչ քաջութեան գործ
կը պատմաւ թագաւու սպարապետին վրայ.

Պ. Ասիկայ Տուղրիւն զօրաց գէմ ելլելով, շատ
չարիք հասցընելէն վլրջն, անոր իշխաններէն մէ-

կուն աղան վիրաւորեց : Երբոր Թաթուլ բոնուելով Տուղ Տուղիլին դիմացն ելաւ, ըստաւ Տուղիլ . « Թէ որ ապրի աղան զքեզ ալ կ'աղատեմ » : Պատասխան տուաւ Թաթուլ . « Թէ որ զարնուածքը իմն է՝ չապրիր » . մեռաւ աղան, անոր համար զինքն ալ սպաննեցին :

Հ . Ալփասլան Տուղիլին յաջորդելով ի՞նչ չա-
րեց հասուց Հայոց .

Պ . Երկար տաեն Անին պաշարելին եաբը
տուաւ ու սոսկալի ջարդեր ըրաւ Անւոյ մէջ :

Հ . Գագիկ Արասեան ի՞նչ համբով աղատե-
ցաւ Ալփասլանին հարուածէն :

Պ . Սուգի լաթեր հագած Ալփասլանին դիմացը
ելաւ, ըսեղով որ « Տուղիլին մահուանը համար
սուգի մուշեր եմ » . Ալփասլան վան խօճալով սի-
րով պադտուեցաւ հետը ու չարիք մը չհասուց :

Հ . Գագիկ Բ . ինչո՞ւ համար թշնամացաւ Յու-
նաց հետ .

Պ . Կապագովվելոյ Յոյներն չարաչար կը նախա-
տէին զՀայերը . ու կեսարից մետրաստօվիսն ալ
եր շան անունը Արմէն դրեր էր, ինչպէս նաև ու-
րեշշատերն :

Հ . Գագիկ Բ . աս նախաստանաց վրէժն ի՞նչպէս
հանեց .

Պ . Երբոր մետրաստօլովին քովին կերակուրի գա-
ցեր էր, ևնդքրեց Գագիկ որ շունը կանչէ . մետրա-
ստօլիսն ալ Արմէն ըսեղով կանչեց . ան ատեն Գագ-
կայ ծառաներն բանեցին շունն ու մետրաստօլիսը՝
ու պարկի մը մէջ դնելով սկսան շունը չարաչար
ծեծել . ան ալ կատաղութեամբ այնչափ խածաւ
զմետրաստօլիտը որ Երկուքն ալ ստարկին մէջ մէ-

Հ . Յոյնք Երենց վրէժը ի՞նչպէս հանեցին Գա-
գիկէն .

Պ . Երբօր անգամ մը կիղիստոա բերդը դա-
ցած պարախիզին մէջ կը հանդչէր, բերդին տէրերն,
որոնք յոյն էին, գարան մանելով բանեցին զինքը
ու սոսկալի տանջանիքներով սպաննեցին . վերջը
մարմինն ալ բերդին վրայ կախեցին : Յշուառու-
թեամբ (թագաւորեց ու ապրեցաւ, խեղձու-
թեամբ ալ մեռաւ (1079)) :

Հ . Յոյներն ո՞րչափ ատեն տիրեցին Հայաստանի .

Պ . Քիչ միջոց . վասն զի Մելիք շահ Յոյները
հալածէց ու նիքը ալիրեց Հայաստանի :

Հ . Բագրատունեաց տէրութիւնն կործանե-
լին ետև, մէկալ ապստամբ կամ բռնաւոր թա-
գաւորներն ի՞նչ եղան .

Պ . Աս միջոցներուն վերցուեցան անոնք ալ, որ
էին Արծրունեաց ու Կարսի թագաւորութիւնն ,
որ իրեք թագաւոր ունեցաւ Մուշել, Աբս ու
Գագիկ, որ իր տէրութիւնը Յունաց տուաւ և
ինքը Մամնդաւ բերդը քաշուեցաւ (1066) :

յւոց՝ որ սուրբ Երկիրը ազատելու կ'Երթային
օդնեց, որոնցմէ վերջն շատ ընծաներ ու պատիւ-
ներ առաւ:

ԽՇԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Ո Ւ Բ Ի Ն Ե Ա Ն Ց

ԴԱՍ ԻԱ.

Ուորեն Ա. Կոստանիին Ա. Թուրոս Ա. Լևոն Ա.
Թուրոս Բ. Մշհն և Ռուրեն Բ:

Հ. Ուուրինեանց թագաւորութիւնը ի՞նչպէս
սկսաւ:

Պ. Բագրատունեաց աէրութեան կործանե-
լուն երևանը ըստ ատրի վերը, Ուուրեն անու-
նով իշխան մը Գագկայ աղքականութենէն, կի-
լիկիոյ կողմելոն երթալըզ հնա աեղի Հայոց սիր-
ու վաստելեցաւ, ու խել մը կտրիճ գլուխն
ժողվելով քանի մը պատի քաղաքներու սիրեց
ու սկսաւ կառավարել զանոնք (1080):

Հ. Ուուրեն ո՞չքափ ատեն իշխաց.

Պ. Գող Վասիլը ըսուած իշխանին օդնութեամբն
ուրիշ քաջութիւններ ալ ընելէն վերջն Յունաց
դէմ, աամըլեց տարի իշխելէն ետքը մեռաւ:

Հ. Ո՞վ յաջորդեց իրեն.

Պ. Իր որդին Կոստանդին Ա. որ խելքով հինգ
տարի կառավարեց տերութիւնը, ու Ղաաինա-

Հ. Թուրոս Ա. իր հօրը աեղը յաջորդելով ի՞նչ
քաջութիւններ ըրաւ:

Պ. Յոյներէն պատերազմով Անարզաբա քաղա-
քը առաւ. Սիկիթայինները ու Պարսիկները որ
Հայաստանի վայ կը վազէնն ցրուեց ու փախուց.
Կիզիստուա բերդն ալ վարսկետութեամբանելով
Գագիկը մեռցնունները սպաննեց: Թուրոս քսան-
ուիրեք տարի իշխաց ու մեռաւ:

Հ. Թուրոս Ա. ո՞վ յաջորդեց.

Պ. Իր եղբայրն Լևոն Ա. որ Մամեսախա և ու-
րեւ շատ քաղաքներ առնելով ամենուն սիրաը
վախ ձգեց՝ ինչուան նաև Յունաց ալ:

Հ. Լևոն Ա. ի՞նչպէս բռնուեցաւ Կետեին Ան-
տիքի կոմսէն.

Պ. Կետեին Լևոնին վրայ նախանձելով զինքը
սեղանի կանչեց ու բռնելով բանտ դրաւ. Լևոն
քանի մը քաղաքներ ու իր որդին պատանդ տա-
լով ազատեցաւ:

Հ. Լևոն աս նախատանաց վրէժը ի՞նչպէս հա-
նեց.

Պ. Մէկին զօրք ժողովեց ու տօւած քաղաքները
ետ առնելէն զատ, այնչափ նեղը ձգեց Պետեի-
նը, որ ինքը Լևոնին պատանդներ տալով հաղիւ
ազատեցաւ ձեռքէն:

Հ. Լևոն ինչուան վերջը կըցա՞ւ խաղաղու-
թեամբ իշխել.

Պ. Զէ. վասն զի Յովհաննէս Պերփիեռուժին ան-

Համար զօրքով վրան պատերազմի ելաւ՝ նախանց ձեւով ըրած քաջութիւններուն վրայ. Առն իշխաններուն անմիաբանութեամբն անօդնական մասով յաղթուեցաւ, ու բանուելով կոստանդնոպոլիս բանտ գրուեցաւ (1137):

Հ. Առն ո՞րչափ ատեն բանտ կեցաւ.

Պ. Տարի մը բանտը մնալէն լերջը՝ կայսրը վրան խղճալով բանտէն հանեց ու իր պալատը կը պահէր: Քանի մը տարիին նորէն բանտը գրուեցաւ իր Թորոս որդւոյն հետ մէկ տեղ, ուր որ սրախն ցաւէն մեռաւ:

Հ. Թորոս Բ. Ի՞նչ կերպով իշխանութիւնը ձեռք ձեռց.

Պ. Երբոր կիո. Մանուել կայսր եղաւ՝ Թորոս որ արդէն բանտէն ելած էր՝ փախաւ, ու կիլիկիա քաջով յայտնեց իշխաններուն իրեն ովքալը, անոնք ալմիաբանեցան ու զինքը իշխան գրին իրենց վրայ, որ սկսաւ մէկէն քաջութիւններ ընել:

Հ. Կիո. Մանուել երբոր լսեց Թորոսին քաջութիւնները ի՞նչ ըրաւ.

Պ. Անդրոնիկոս զօրավարը զրկեց շատ զօրբով՝ որ Երժայ Թորոսը շղթայի զարկած կոստանդնուպոլիս ըերէ:

Հ. Անդրոնիկոս կրցաւ կայսեր պատուերքը կատարել.

Պ. Զէ. վասն զի Երբոր լսեց Թորոս աս բանաւաստիկ բարկանալով, անանի քաջութեամբ պատերազմեցաւ, որ մէծ ջարդ տալէն ետքը Յունաց, շատ իշխաններ ալ գերի բանեց անոնցմէ:

Հ. Թորոս ի՞նչ ըրաւ աս իշխանները.

Պ. Կայսրը խիստ շատ ստակով գնեց իրմէ. Թորոս բոլոր առաջ առաջ ստակը զօրաց բաժնեց գեսպաններուն առջին. Երբոր անոնք զարմացան. ըստ Թորոս. « Կամաւ ըրի որպէս զինորէն ըրանէն ձեր իշխանները »:

Հ. Ինչո՞ւ համար նորէն պատերազմ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ.

Պ. Սաեփանէ Թորոսին եղբայրն ասպատամբեւ լուիրմէ՝ շատ չարիք հասուց Յունաց անոնք ալ հնարքով մը զինքը բանելով եռացեալ ջուրի մէջ սպաննեցին. ասով պատերազմ բացուեցաւ Յունաց ու Թորոսին մէջ:

Հ. Թորոս աս պատերազմներուն մէջն ալ յաղթեց Յունաց.

Պ. Առջի բերանները միշտ յաղթեց բայց երբոր աեսաւ որ կիո. Մանուել մեծ պատրաստութեամբ վրան կութայ, հաշտութիւն ըրաւ կայսեր հետ, ու քանի մը տարիին մեռաւ քսանը որս տարի իշխաններ ետքը:

Հ. Ինչո՞ւ համար Թորոսին մեռնելէն ետքը խռովութիւն ինկաւ Հայոց մէջ.

Պ. Վասն զի Թորոսին աղան պղակի ըլլալով երեն ինամակալ դրուեցաւ Թովկման Պայլ որ աղակաւ Լատին էր: Մլէհ՝ Թորոսին եղբայրը, որ արդէն ապստամբած էր՝ բերիսյի ամբայէն օգնութիւն առնելով եկաւ ու ինքը սկսաւ իշխան, շատ իուովութիւններ ըլլալով:

Հ. Մլէհ ո՞րչափ ատեն իշխան.

Պ. Հինգ տարի իշխաններ ետքը սպաննեցին զինքը՝ իրեն անկարգութիւններուն համար, ու իունէն Բա իշխան գրին (1174):

Հ. Ոտուբէն Բ. ի՞նչպէս կառավարեց իր պղտի տէրութիւնը.

Պ. Ետա մեծ խնամք ունեցաւ իր Երկրին բարելաւութեան վրայ. բայց ափսոս որ Հեթում Լամբրոնի իշխանն հետը թշնամացաւ, պատճառաւ որ Ոտուբէն՝ Տարսունը Յունաց ձեռքէն առերէր:

Հ. Ի՞նչ հետևանք ունեցաւ ասերկու իշխանաց թշնամութիւնը.

Պ. Պատերազմի ելան իրարու գէմ, ու Հեթում յաղթուելով օդուութիւն կանչեց Պեմունդ անունով Անտիոքի լատին կոմու. Պեմունդ ալ բարեկամութիւն ձեւացնելով Ոտուբէնի հետ, բռնեց ջնիքը ու շղթայի զարկաւ:

Հ. Ի՞նչ կերպով աղասեցաւ Ոտուբէն բանաէն.

Պ. Լւոն՝ Ոտուբէնին եղբայրն լսելով աս բան՝ շատ զօրքավ սաստիկ նեղը ձգեց Հեթումն ու Պեմունդը, ու իր եղբայրը աղասելով բերաւ աթուը նստեցուց:

Հ. Ոտուբէն Բ. ո՞րչափ ատեն իշխեց.

Պ. Տասնըմեկ տարի իշխելէն եղբը վահք մը քաշուելով կրօնաւոր եղաւ, ու Լւոնը իր սեղը իշխեցուց:

ԴԱԱ ի՞ն.

Լևոն Բ. Փիլիսոփոս ու Հերում Ա. Լևոն Գ.

Հ. Լւոն Բ. ի՞նչ բանէրով Երևելի եղաւ.

Պ. Իրեն իմաստութեամբ, քաջութեամբն ու ամեն կատարելութենիներով որ թագաւորի մը հարկաւոր են. որովնաև իր տէրութիւնը ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց:

Հ. Ի՞նչպէս թագաւոր եղաւ Լւոն Բ.

Պ. Երուսաղէմի վրայ գայող խաչակիր զօրաց օգնելով՝ անունը Եւրոպա հռչակուեցաւ, ու Փրեգերիկոս Գերմանացաւոց կայսրն ալ թագ խոստացաւ. բայց ինքը մեռնելով իրեն յաջորդն Հենրիկոս և Կեղեսափանոս Պատլ կատարեցին Փրեգերիկոսի խոստմանքը թագ ու գրած զրկելով. Լւոն ալ Սայ մէջ թագաւոր օժուեցաւ Գրիգոր կաթողիկոսէն (1198):

Հ. Լւոն թագաւոր օժուելէն ետքը ի՞նչ պատերազմեր ըրաւ.

Պ. Քայլառող իկոնից ամիբային յաղթեց, թէպէտ և սկզբան յաղթուեցաւ իշխաններուն յանդկնութեանը պատճառաւ. նոյնպէս նաև Բելից ամիբային ալ յաղթեց, ուսկից շատ աւար առաւ ու անոր իրմէ պահանջած հարկը՝ ինքը անկէ առաւ:

Հ. Լւոն Բ. ո՞րչափ ատեն թագաւորեց.

Պ. Երեսունըորս տարի, ու բարի անուամբ մռաւ:

Հ. Առն ԲԻ աեղը ովլ անցաւ.

Պ. Արու աղջայ չունենալով Զատէլ անունով աղջիկը տեղն անցաւ: Խշաննելոն միացան ու Զատէլ Փիլիպպոս անունով լատինի մը հետ կարգեցին որ մօր կողմանէ միայն հայ էր, ասիկայ երկու տարի իշխանէն ետքը սկսաւ Սոյց հարըստութիւնները Անտիոք կրել, աս բանիս բարկանալով իշխաններն բանսը դրին զինքը՝ ուր որ մեռաւ քիչ տաենէն:

Հ. Փիլիպպոսին տեղը ովլ յաջորդեց.

Պ. Հեթում Ա., որ Զատէլին հետ կարգուելով ինքը թագաւոր եղաւ ու շատ զարդարեց Հայաստանը:

Հ. Խնչու համար Հեթում Թաթարաց Մանդոյ խանին գնաց.

Պ. Տեմնելով որ Թաթարներն շատ չարիք կը հասցնեն Հայաստանի, ու կրնաննաև իր երկրին վրայ ար գալ, ելաւ Թաթարստան գնաց որպէս զի խանին ապահէ որ վասա չընեն Հայոց: Մանդոյ խանը սիրով ընդունեցաւ զինքը և խնդիրը կատարեց:

Հ. Հեթում Թաթարստանէն գառնալէն ետքը ինչ պատերազմներ ըրաւ.

Պ. Խոնիսյ ամիրան վրաննախանձելով պատերազմի ելաւ, բայց յաղթուեցաւ: Եսյնպէս նաև կոստանդին Լամբրոնի իշխանը ապստամբելով իշխնիսյ ամիրային հետ միաբանած վրան պատերազմի ելաւ, բայց երկուքն ալ յաղթուեցան:

Հ. Հեթում վերի ըստած թշնամիներէն զատ ուրիշ ինչ նոր թշնամի ունեցաւ.

Պ. Փնտուխատր Եգիպտոսի ամիրան, որ Սկիւ-

թացւոց և ուրիշ շատերուն յաղթելէն ետքը, գեսպան իսրկեց Հեթումին որ Եգիպտացւոցմէ առած քաղաքները ետ ապա. Հեթումը յանձն չառաւ աս բանս ու իր երկու որդիքը Առնն և Թորոսը թողլով անոր դէմ ինքը գնաց որ Թաթարներէն օդնութիւն առնէ:

Հ. Թորոս և Առն կրցան Փնտուխարին յաղթել.

Պ. Թորոս պատերազմի մէջ մեռաւ: Առնն ալ գերի ինկաւ, սասով բոլոր երկերը թշնամիներէն կոխկռտուեցաւ:

Հ. Հեթում ետ գառնալով ինչպէս գտաւ Կիլիկիան.

Պ. Ամեն բան տակն ու վրայ ու աւերակ գարձած. և տեսնելով որ գարման չկայ ետ ձամենց վարձուոր զօրբերը, ու աղաւանքով և շատ ստակ աղալով Առնը գերութենէ աղաւեց:

Հ. Առնին գառնալէն ետքը, գեռ որչափ ալ թագաւորեց Հեթում:

Պ. Վիչ մը ատենէն Առն որդւոյն յանձնեց թագաւորութիւնը ու ինքը Դիրազարկ վանքը քաշուելով բարի մահուամբ մեռաւ, քառասունը հինգ տարի թագաւորելէն ետքը:

Հ. Առն Գ. ինչպիսի՞ մարդ էր.

Պ. Խոհեմ, Երարեպաշտ և ուսումնասէր, որով մէկէն սկսաւ գպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցնել, որպէս զի տղիտութեան, նախանձու, ատելութեան և փառամոլութեան անիծեալ շառաւելուները չորրյնէ. բայց ափսն ինչպէս որ կ'ուզէր վախճանին չհասաւ (1269):

Հ. Ի՞նչ արդեւք եղաւ որ Աւոն միտքը դրածը
չկրցաւ առաջ տանիւլ:

Պ. Եշևաններէն ոմանք հետոը թշնամանալով՝
դային Փնտուխսարը կանին զէմ գրգռէցին. ան
աւ անթիւ բազմութեամբ կիլիկիոյ վրայ եկաւ.
Աւոն անօդնական մալով վախաւ պահուըտե-
ցաւ, որով թշնամիք ամեն չարիք հասուցին:

Հ. Աւոն անոնելով կիլիկիոյ աւերմուհիքը ի՞նչ
ըրաւ.

Պ. Ելաւ պահուըտած աեղին ու քիչ մը զօրք
ժողվելով Սմբատ ելլորը հետ միացած հալածեց
Եղիպատացիները, ու յաղթեց նաև Խկոնիոյ ամի-
րային: Տամնընը տարի թագաւորելէն ետքը մե-
ռաւ:

ԴԱԱ ԻԳ.

Հերում ԲԻՒ. Մինչև Ռուրինեանց բագաւորու-
թեան կործանիլլ:

Հ. Հեթում Բ. Ինձն թագաւոր չօծուեցաւ.
Պ. Վասն զի սաստիկ կրօնասէր ու բարեպաշտ
ըլլալով, չէր ուզեր արագին բաներու խառ-
նութիւ, անոր համար աւչորս տարի իշխելէն ետքը
վանք մը քաղուեցաւ ու Թորոս եղբայրը թագա-
ւորեցուց (1293):

Հ. Թորոս Պ. ո՞չչափ ատեն թագաւորեց.

Պ. Երեք տարիէն թագաւորութիւնը ձգեց ու
ինքն աւ վանք մը քաղուեցաւ, ստիպելով որ նո-
րէն Հեթում դայ թագաւորեց:

Հ. Աս միջոցներուն ի՞նչ խռովութիւն եղաւ
կիլիկիոյ մէջ.

Պ. Սարիամկայսրուհիին աղածանիքովն (որ Ե-
րենց քոյրն էր) Հեթում ու Թորոս Կ. Պօլս
դային, ան միջոցին Սմբատ մէկալ եղբայրինին Եշ-
ևանները համոզելով ինքը թագաւոր օծուեցաւ.
ու երբոր անոնք կը դառնային՝ գէմերնին ելլելով
երկուքն աւ բանեց, Հեթումը կուրցուց ու Թո-
րոսը սպաննեց:

Հ. Սմբատ կրցաւ հանգիստ թագաւորեց.

Պ. Զէ. վասն զի կոստանդին մէկալ եղբայրինին
աս բանիս վրայ բարկանալով, շատ զօրքով Սմբա-
տին վրայ ելաւ ու յաղթելով անոր՝ բանեց զանի-
կայ ու բանա դրաւ, և ինքը անոր տեղը թագա-
ւորեց: Հեթումն աւ բանաէն հանած հանգիստ
կը պահէր:

Հ. Կոստանդին Բ. ո՞չչափ ատեն թագաւորեց.

Պ. Երկու տարիի չափ. վասն զի երբոր հրաշ-
քով մը Հեթումին աչքերը բացուեցան, ամենքը
սկսան ուզել որ նորէն Հեթում թագաւորեց.
սկսան Հեթում կոստանդին աս բանիս վրայ սկսաւ
բառութիւն հանել, Հեթում աւ բանեց զինքը
և Սմբատն աւ մէկալ Կ. Պօլս զրկեց:

Հ. Հեթում Բ. Երբորդ անգամ թագաւորեց-
լով ի՞նչ ըրաւ.

Պ. Ս. Ա. և այլ անգամ Եղիպատացոց ու Ա-
կայսոնացոց յաղթելէն վերջը, իր Թորոս եղբա-
ւութիւն կանոնիր տեղը թագաւորեցուց, ու ին-
քը նորէն առանձնացաւ վանքը. բայց միշտ խոր-
հըրդով կ'օգնէր Աւոն ԴԻ, որ խելացի ու բա-
րեպաշտ էր:

Հ. Լւսն Դիմատենը ի՞նչ նոր խռովութիւն
ինկաւ կիլիկից մէջ.

Պ. Լւսով Դ. Գրիգոր Անաւարզեցի կաթուղիւ
կոսին յորդորելով Սոյց մէջ Եկեղեցական ժու-
ղովք մը ընել տուաւ, որուն մէջը շատ բան փո-
խեցին ծէսերու վերաբերեալ. շատ մը խռով-
արար ու անկարդ մարդիկ աս բանիս վրայ բար-
կացած մեծամեծ խռովութիւններ հանեցին կի-
լիկից մէջ, ու ասոնք ալ բաւական չսէպէլով,
անդամութեամբ գնացին Թաթարաց Պիլզար
իշխանը, որ Անարզաբա կը նստէր, Լւսնին գէմ
գրգռեցին:

Հ. Պիլզար ի՞նչ չարիք հասուց Լւսնին.

Պ. Խարդախուութեամբ Լւսնը իրեն կանէց,
իբրև թէ խորհուրդ հարցնելու համար. ան ալ
շատ իշխաններով ու Հեթումն ալ մէկտէղ առած
ելաւ գնաց. Պիլզար նախ սիրով ընդունեցաւ ու
մէրջը զամենքն ալ թրէ անցուց (1308):

Հ. Լւսն Դիմա ո՞լ յաջորդեց.

Պ. Ոչին Հեթումին եղբայրը շատ զօրք ժողված՝
Պիլզարին զօրքերը ցրուեց փախուց ու ինքը
թարգաւոր եղաւ, սոնիկելով որ Սոյց ժողովքին
կանոնները պահուին: Ոչին գրեթէ աստուա-
ծային հրաշքով Նորը Եղիպատոսի ամիրային ալ
յաջորդեց որ շատ զօրքով վրան Եկեր էր. տա-
սուերկու տարի Թագաւորեց ու լաւ մահուամբ
մէռաւ:

Հ. Լւսն Ե. իր հօրը տեղը յաջորդելով ի՞նչ
տեսակ կառավարութիւն ունեցաւ.

Պ. Ուուրինեանց թագաւորներուն մէջ գրեթէ
ամենէն աւելի անդութեանկարդ կեանք անցնո-
րը ինքն եղաւ, որով իր կինը, Եղբայրը ու Ոչին
Պայլ գիւսան սպաննել տուաւ անիրաւութեամբ:

Հ. Լւսն Են ատենը օստրը թշնամիներն ի՞նչ
չարիք հասուցին կիլիկից.

Պ. Եղիպատոսի Սուլդանն, Թաթարներն ու
Թուրքերն շատ անդամ կիլիկից վրայ վազելով
շատ իւսաներ հասուցին, միշտ պատճառ բերե-
լով որ հայերն լատինացւոց հետ Թղթակցու-
թիւն ու վերաբերութիւն ունին ու զանոնք կը
դրգուն նրուսաղեմ վրայ գալու:

Հ. Լւսն Ե. ո՞րչափ ատեն թագաւորեց.

Պ. Քահնը մէկ տարի. շատ անհանդիսա ու
խեղձ կերպով:

Հ. Ո՞լ յաջորդեց Լւսն Են.

Պ. Յովհաննէս Պայլ ազգաւ լատին. ասիկայ
տարիէ մը սպաննուեցաւ իշխաններէն իր հայ-
տաեցութեանը համար:

Հ. Յովհաննէսին ո՞լ յաջորդեց.

Պ. Եղբայրը Գուեխան, որ երկու տարիէն
սպաննուեցաւ, լատինի ծէս ազգին մէջ մայցնել
ուղելուն համար:

Հ. Կոստանդին Գուեխանին տեղը յաջորդելով
ի՞նչ ձամբայ բռնեց.

Պ. Թէպէտ և ազգաւ լատին էր, բայց խելքով
կառավարեց ազգը տամնըութը տարի: Նոյնպէս
ասոր տեսնն ալ Եղիպատոսի ամիրան շատ զօրքով
կիլիկից վրայ եկաւ. բայց չարաչար յաղթուե-
ցաւ Կոստանդինէն:

Հ. Լւսն Զ. ի՞նչ տեսակ կառավարութիւն ու-
նեցաւ.

Պ. Երկու տարի աթոռը առանց թագաւորի
մնալէն վերջը, իշխաններուն փառամըլութեանն

համար, ընտրուեցաւ թագաւոր Ակոն Զ. որուն
մայրը միայն հայ էր. խելացի ու բարեպաշտ ըլ-
ալով շատ լաւ պիտի կառավարէր ազգը, բայց
(1365):

Հ. Ուուբինեանց թագաւորութիւնը ի՞նչպէս
կործանեցաւ.

Պ. Ակոն տասնըմէկ տարուան թագաւորու-
թեանը մէջ շատ անդամ՝ Եդիպտացիներէն յալ-
թուելէն վերջը, Եդիպտասոի Սուլդանը Էջմէջ
Շապան անհամար զօրքով վրան Եկաւ ու Էրկար
ատեն պատերազմէլն ետքը բռնեց Ակոնը ու
շղթայի զարմէլով Եդիպտասո տարաւ, որով վեր-
ջացաւ Հայոց թագաւորութիւնը Քրիստոսի
1375 թուականին:

Հ. Ակոն Զ. ի՞նչ եղաւ Եդիպտասոի մէջ.

Պ. Եօթը տարի բանտը կեցաւ հաւատքը ըու-
րանալուն համար. վերջը Սպանիացւոց Յովհան-
նէսը թագաւորին աղաքանքովն՝ դերութենէ աղա-
տեցաւ:

Հ. Ակոն դերութենէ աղատելէն ետքը ո՞ւր դը-
նաց.

Պ. Նախ Երուսաղէմ, ուր իր ընտանիքը թո-
ղուց և ինքը անցաւ Հռոմ. վերջը Յովհաննէս
Սպանիոյ թագաւորին իրեն բնակութեան տեղ
տուաւ:

Հ. Ո՞ւր մեռաւ.

Պ. Փարիզ, երբոր գացէր էր Հոն Շահնշարու-
թեան համար մեռաւ 1393ին, նոյեմբերի 19ին
վաթսուն տարուան, ու թաղեցաւ Կեղեսափ-
դէրէղմանը:

Դ.Ա. Ի.Դ.

Ուուբինեանց տերուրեան կործանելեն մինչեւ
մեր առևելի եղած յիսուսածները.

Հ. Աննկթիմուր ի՞նչ չասուց Հայաս-
տանի.

Պ. Ուուբինեանց թագաւորութեան կործանե-
լէն տասուերկու տարիի չափ ետքը, Լանկթի-
մուր Խօզպէք Թալթարաց թագաւորին շատ տե-
ղաբու տերելով Հայաստանի վրայ Եկաւ, շատ
տեղ այրեց աւրուտկեց ու շատ ալ արիւնէ հզու-
թիւններ ըրաւ, մասնաւորապէս Սէբաստիոյ
մէջ (1387):

Հ. Ի՞նչ մարդ էր Պէլդինէ Ուուպէլէան.

Պ. Փաջ և խոհեմ մարդ մըն էր որ Սիւնեաց
գաւաւանին մէջ (Խափանի կողմէրը) հինգ վեց հա-
զարի չափ Հայերու վրայ Կ'իշնէր հայրաբար, ու
զամենքը կը խնամէր:

Հ. Ո՞չքափ աւեց ասոր իշխանութիւնն.

Պ. Վարաց թագաւորին վրան նախանձելով Ամ-
նադին անունով անզգամ և շահասէր Հայու մը
ձեռքով թոյն խմբնել տուաւ ու մեռուց. թէ-
պէտ և վերջը Ամադինն ալ չարաչար մահուամբ
ապանուեցաւ (1438):

Հ. Ի՞նչ չարիք հասուց Հայոց Շահաբաս Պար-
սից թագաւորին.

Պ. Սոսկալի արիւնէ հզութիւններ ընելին Ետ-
քը, հաղարաւոր ընտանիք Պարսկաստան տանե-
ց*

Հովնոր Ջուղան շինել տուաւ ու հոն բնակեցուց.
բայց աս ճամբորդութեան մէջը անհամար մար-
դիկ խեղճաբար մեռան, ու մնացածներն հասան
տասուերկու հազար տուն (1604):

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Դաւելթ Սիւնի իշխանին
վրայ.

Պ. Խելացի ու կարիք մարդ ըլլալով Սիւնեաց
աշխարհքին կողմերն շատ զօրացաւ ասկէ 140
տարի մը առաջ իր քանի մը կարիքներովին, ու
չորս տարի Տաճիկներուն գէմ պատերազմեցաւ
քաջութեամբ: Իրեն հետն էին Սիւնիթար, Տէր
Աւետիք և Մելիք Բարսաղան կարիք հայերը
(1724):

Հ. Դաւելթ ո՞չչափ ատեն իշխեց.

Պ. Վեց տարի, շատ յաղթութիւններ ընելին
ետքը մեռաւ յիսունըչորս տարուան ու իրեն
յաջորդեց Սիւնիթար:

Հ. Մինիթարին իշխանութիւնը ո՞չչափ ատեն
տեղեց.

Պ. Շատ քիչ, վասն զի քովի մարդիկն զինքը
անօդնական ձգելով փախան ցրուեցան, ու վերջը
զինքն ալ սպաննեցին: Ասնցմէ վերջը Հայոց
վրայ իրենց ազգէն իշխող մը չեղաւ, բայ ՚ի գե-
ղերու վերակացուներէն. Հայաստան ալ Պարսից
և Օսմաննեանց և վերջը Ոտուսաց իշխանութեան
տակն անցաւ: Շատ թշուառութիւններէ ու ինը-
ճութիւններէ վերջը հիմոյ կրթութեամբ, գի-
տութեամբ և հայրենասէր անձանց ջանքով՝ ազ-
գերնիս յառաջադիմութեան մէջ է:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ



ԵՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ա Զ Ա Ն Ց

ԴԱՍ Ա.

1. Մեր Ազգին սկզբը : Հայկ . — 2. Իր Հայաստան դառնալը .
— 3. Բելայ հետ ըրած պատերազմն և Բելայ մահն . —
4. Իր հոգւցին կառարելութիւնըն . — 5. Արտաքին
անպէն : Իր մահը :

1. Մեր ազգը Նոյ նահապետին Յաբեթ որ-
դիէն կ'սկսի ջրհեղեղէն քիչ վերջը : Երբոր Նոյայ
որդիքն ան աստիճան բազմացան Հայաստանի
կողմէրն որ տեղերնին քիչ գալով սկսան ասդին
անդին երթաւ , աս գնացողներուն հետ մէկտեղ
դնայ նաև Հայկ անունով մէկն որ Յաբեթին եր-
րորդ սերունդն էր , այսինքն Յաբեթին աղուն

2. Մեր ազգը ո՞ր ատենէն կ'սկսի , և ո՞լ է մեր
ազգին նախահայրը .

Ի գերառութիւն ուստանողաց և ըստ ինդրայ սմանց 'ի բա-
րեկամաց այս երկրորդ մասիս մէջն աշ հարկ սեպեցինք
Հարցմանքներ դնել :

Գամերին, Գամերին տղուն թորգոմին տղան էր : Աս գաղթականքն երթալու տաեն մէկ մեծ գաշտի մը հանդիպեցան Սենաարը ըսուած տեղը, հոն ամբարտաւանութեամբ ուղեցին բարձր աշտարակ մը շնել, ինչպէս որ սուրբ գիրքը կը պատմէ, բայց Աստուած բարկանալով լեզունին խառնակեց ու զիրենք ալ ցիր ու ցան ըրաւ :

2. Սենաարայ գատին աշտարակը շնել ուղող հսկաներուն մէջ ինչ անունով մէկն ուրիշներէն աւելի զօրաւոր գտնուելով, կէս մը բանութեամբ հէս մ'ալ խոստունքով անոնցմէ շատն իրեն հնազանդեցուց և կ'ուղէր Աստուծոյ պէս պաշտուիլ ամենէն և անոնց թագաւոր եղաւ : Աս բանն երբոր իմացաւ Հայկ' չուղեց ինելայ հնազանդիլ* . ուստի ժողվեց տղաքն ու թոռներն որ իրեք հարիրի չափ կային, և իրեն ուրիշ ծառաները ու եւսն նորէն Հայաստան դարձաւ . հոն իրեն առջի բնակութեան տեղին անունը Հարք գրաւ և շնանձ քաղըին անունն ալ Հայկաշէն . և բոլոր ան կողմի բնակիշներն սիրոլ հնազանդեցան աս կարիք և վէհանձն հսկային (2107) :

3. Բէկ երբոր լսեց Հայկայ ապատամբութիւնը՝ իսկոյն պատգամնուր զօիքց ետեւէն որ գայ նորէն իրեն հնազանդի, թէ չէ անով տեղով կը ջնջէ զինքք . բայց Հայկ' աներիկալ վատահութեամբ մերժեց ինելայ անիրաւ սպասնալիքն ու զիկած պատգամաւորները ետ դարձուց . ասով

2. Հայկ' ինչո՞ւ համար ապստամբեցաւ ինելէն .
3. Հայկ' ինչպէս սպասնեց ինելը .

* Այս Վարդան պատմիք կը զուցէ թէ Հայկ ճշմարիտ աստուածպաշտութեամբ ինելայ արձանը չպաշտելու . համար ապստամբեցաւ ինելն :

Բէկ մեծ ու ահեղ պատրաստութեամբ Հայկայ վրայ պատերազմի ելաւ :

Հայկ փոխանակ վսինսալու ժողվաց իրեն թռուներն ու տղաքը և ուրիշ հաւատարիմ մարդիկիը, ու զանոնք յորդորելով Վանայ ծովուն քովերն պատերազմի պատրաստուեցաւ : Բէկ իրեն ուժին վրայ վսահացած ու ամբարտաւանութեամբ լցուած, առանձին խումբով մը գտուած եկաւ Հայկայ բանակը գիտելու : Քաջը աղեղն Հայկ ասիկայ յարմար ատեն սեպերով զօրքերը շարեց ու պատերազմիլ սկսաւ, և այն պէս քաջութեամբ պատերազմեցաւ իրեններովն որ ինչ զարհուրած ուղեց ետ դառնալ, մինչեւ որ իրեն մէկալ զօրքերը օդնութեան հասնին . բայց Հայկ ինելայ յանդգնութենէն իրեն օդուտ քաղերով, քանեց աղեղը ու այնպէս թափ անուացաւ ինետը ինելայ կուրքին, որ երկաթն չերտաւը բարձր զօրակեռուն մէջէն անցնելով թիկունիքն գուր եւստ ելաւ ու ան ահագին և վիթխարիք հսկան գետին պատկեցուց : Հայկ վաեմ խորհրդով դով ինելայ մարմինը առաւ ու զմուսել տալով բարձր աեղ մը թաղեց . որպէս զի ամենուն ցուցնէն Աստուծոյ գէմ ապստամբովն ու հսկար ցուցիւթեամբ լցուած մարդուն վիճակը . և յաւետնական յիշտակ թողու ապագայից որ զիրենք այսպիսի բռնաւորէ մը ազատեց . իսկ պատերազմին տեղւոյն անունը Գերեզմանք դրաւ :

4. Աս բաներուս մէջ աղեկ կը աեսնուրի Հայկ հոգւոյն կատարելութիւններն : Ինչ հանկայ հոգւոյն կատարելութիւններն : Ինչ անհամար ձնութիւնը կը տեմուսւ, որ երբոր ինչ անհամար բաղմութեամբ վրայ ապատերազմի ելաւ, Հայկ բաղմութեամբ վրան պատերազմի մեռնիւ քան թէ համարեցաւ պատերազմով մեռնիւ քան թէ

4. Ի՞նչ հոգւոյ կատարելութիւններ ունենէր Հայկ .

բանաւորի մը տակ գերի ըլլալ։ Խոհեմութիւնն
ու խելացիութիւնը կը տեսնուի անով որ այն-
չափ քիչ մարդով անթիւ բազմութեան յաղթեց
յարմար ժամանակը, դիրքը և տեղը ընտրելով:
Քաջութիւնը նոյն իսկ իրեն ըրած պատերազմը
կը քարոզէ, իսկ անհպարտ կամ անախարհակալ
հոգին անիէ կ'իմացուի, որ եթէ ինքն ալ ուղե-
նարի կրնար թելայ պէս բանութեամբ ուրիշնե-
րուն վրայ տիրել որուն ամենեին բան մը չէր
պակսէր, մահանանդ ան ատեն որ ինչլայ յաղ-
թեց կրնար զանոնք հալածել ու իրեն թագա-
ւորութիւնը մեծցնել, ինչպէս ըրած են բորոր
աշխարհականերն ։ իսկ ընդհակառակն ինքը
թշնամին հալածելն վերջը դարձաւ իրեն տու-
նը՝ ա բանիս վրայ ուրախացած, որ աշխարհքիս
վայէն ջնջեց Ասաուծյ, և մարդկան և իրեն
անձին թշնամին։

5. Տարակոյս չկայ որ Հայկայ արտաքին տես-
քըն ու գեղեցկութիւնն ալ համեմատ էր հո-
գոցն կատարելութիւններուն, որով և մեր Մոլ-
սէս խորենացին Մարիբեասայ գրուածքին հանե-
լով կ'լսէ. « Այս Հայկ գեղապատշաճ և ան-
ձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբա-
զուկ! ». աս բառերով յայանի կը ցուցընէ Հայ-
կայ մարմնոյն արտաքին գեղեցկութիւնը ու
պատշաճ հասակը. և ինչպէս որ Խորենացին կը
ցուցէ, նոյն տեսնուան հսկայեց և դիւցաղանց
մէջն քան զամենը աւելի երկելի էր. ուրեմն
պէտք է աղէկ ճանչնանք այսպիսի նահապետի
մը յարդը ու մեղի պարծանք սեպենք իրեն ա-
նոնք մէր վրայ կը լը:

6. Հայկ հայրաբար կառավարեց իր տէրու-
թ. Հայկ ինչպէս կառավարեց իր տէրութիւնը
ու ողջափ ապրեցաւ:

Եթիւնը ու շատ կարգեր կանոններ գրաւ և շե-
նութիւններ ըրաւ։ Պատմութիւնը որոշ բան
չի զուրցեր Հայկայ մահուանը վրայ. բայց հաւա-
նական է որ չորսհարիւր տարւոյ չափ ապրած
ըլլայ. որովհետեւ Սուրեր Գրոց խօսքերուն նայե-
լով նոյն միջոցներուն մարդիկն ինչուան 400
տարի կ'ապրէին. խաղաղութեամբ մեռաւ Հայկ
իր ազգին իշխանութիւնը յանձնելով Արմենակ
որդւոյն (2027)։

Հայկայ իշխանութեան ատենները նոյ և իրեն
Նեմղար կամ Նյշեմղարա կինը մեռան. նոյ նը-
պատ լերան վրայ թարուեցաւ կ'ըսեն, ու Նո-
յեմղարա ան լերան մօտիկները Մարանդ ը-
սուած տեղն։

ԴԱԱ Բ.

4. Արմենակ: Խոռ, Մանաւազ և Բագ. — 2. Արամայիս:
Շարա. — 3. Ամասիս. Գեղամ. Հարմա :

1. Արմենակայ վրայ պատմութիւնը երկայն
յիշատակութիւն ընկեր: Միայն կ'աւանդէ թէ
որովհետեւ կ'ուղէր որ Հայաստանի ամեն կողմը
մարդաբնակ ըլլայ, ուստի իր Մանաւազ ու Խոռ
եղբայրներով Հայք գաւառը թողուց ու ինքը
Հայաստանի հիւսիսային կողմը գնաց, ուր որ եր
բնակութեան տեղին անունը Արագած գրաւ։
իսկ Խոռ, Մանաւազ և Բագ եղբարքն իրենց
բնակութեան տեղերնին բազմանալով. ցեղերնին
ալ իրենց անուամբն Խոռխոռունիք, Մանաւա-
զւանք ու Բնիունիք ըստուեցան։ Արմենակ քառա-

5. Արմենակայ և իր եղբարց վրայ պատմու-
թիւնը ի՞նչ յիշատակութիւն կ'ընէ.

սունըլեց տարի իշխելէն վերջը խաղաղութեամբ
մեռաւ, իր Արամայիս որդւոյն յանձելով ազգին
իշխանութիւնը:

2. Նշնպէս Արամայիսի վրայ ալ մամնաւոր
բան մըչի պատմուիր, բայց միայն թէ իր անունովն
Արմաւիր քաղաքը շնուց (1975), որ վերջէն թա-
գաւորանիսաւ քաղաք եղաւ, և քառասուն տարի
իշխելէն վերջը մեռաւ հանգստեամբ: Կ'ըսեն թէ
Արամայիս շատ տղաք ունի եղեր՝ որոնց մէջէն
Շարա անունով մէկը սաստիկ շատակեր ըլլալով
Արամայիս Երասխ գետին քովի դաշտերը կը զեր-
կէ զինքն որ բերրի ըլլալով հանգստեամբ ապրի
հնու ուստի իրեն անունովն այն տեղերն ալ Շե-
րակ ըսուեցան: Ասկէ ելած է այն առածը որ
մինչև Խորենացւոյն առանց կ'ըսեն եղեր շատա-
կեր մարգգանց. «Թէ քո Շարայի որկորն է, մեր
Նիրակայ ամբարըն չէն»:

3. Ամսակա Արամայիսին որդին իշխեց իր տե-
ղը ազգին վրայ երեսունուերկու տարի. ետքը
Գեղամ Ամսակային անդրանիկ որդին՝ որ յի-
սուն տարի իշխեց ու իրեն անուամբն կոչուեցաւ
Գեղաքըունի գաւառը ու Գեղամաց ծովը: Ետքը
Հարմա Գեղամաց որդին երեսունըմէկ տարի իշ-
խանութիւն ունեցաւ, իր Արամ որդւոյն յան-
ձնելով ազգին կառավարութիւնը (1827):

2. Արամայիսի վրայ ի՞նչ կը պատմուի.
3. Արամայիսի ո՞լ յաջորդեց.

ՊԱՍ Գ.

4. Արամ. — 2. Կիբարայ դէմ պատերազմը. — 3. Բար-
ձամ Բաբելացւոյ գէմ յաղթութիւնը. — 4. Պայմակիսի
յաղթութիւն. — 5. Արամայ համբաւն. — 6. Նինս Ասո-
րեասանի թագաւորն. — 7. Խորենացւոյն Արամայ տը-
ւած գովիսան. — 8. Իր բնաւորութիւնն և մահը:

1. Որովհետեւ ատեն անցնելով Հայկայ քաջու-
թիւններն մոռցուեր էին, ուստի Հարմային վեր-
ջի տարիններն այլ և այլ թշնամիններ Հայաստանի
վրայ վազել սկսան ու զանազան մասերուն տի-
սեր էին, ասով պէտք էր որ մէկ ուրիշ Հայկայ
պէս քաջ մ' ալ ելլելովնորէն թշնամինները վախ-
ցընէր. և աչա ասիկայ եղաւ Արամոր հօրը տեղ
նատելուն ուս հարկ եղաւ որ աս թշնամինները
Հայաստաննեն գուրս հանե. շուտ մը զօրք ժող-
վեց, քաջութիւնն ու իրեն բնական ինելացիու-
թիւնն և պատերազմի յարմարութիւնն սկսաւ
բանի բերել. որով չէ թէ միայն թշնամիններն իր
երկրէն հանեց, հասպանաւ հեռաւոր աշխարհք-
ներ հաշմածեց, և կամ բանելով սպաննեց:

2. Այ թշնամիններուն առջինն ու աւելի զօրա-
ւորն էր Կիւքար անունով Մարաց իշխանն որ
հապատ մարդ մ' էր, ու Հարմային վերջի տարի-
ները Հայաստանի մէկ կտորին վրայ վազելով հար-
կատու ըրեր էր. և որովհետեւ Հարմանցոյն տա-
րիները մեռաւ, ուստի ասիկայ երկու տարւոյ

1. Ո՞վ է Արամ և իր ատենն ի՞նչ վիճակի մէջ
էր Հայաստան:
2. Արամայ առաջին թշնամին ո՞վ էր.

չափ տիրեց ան մասին : Արամ հօրը տեղն անցնելուն պէս յիսուն հազար զըբք ժողվեց կայծակի պէս վրայ հասաւ . ջարդեց անոր զօրաց բազմութիւնը, զինքն ալ բանեց Արամակը բէր բէրաւ, և նոյն ժամանակին քաղաքականութեանը համեմատ, հրաման տուաւ որ բարձր աշտարակի մը ծայրն հանելով երկաթէ ցըրով ճակտէն գամեն ազգին անիրաւ թշնամին . և նէւքարին ըրած առջի անիրաւութեան վիտսարէն անոր երկրին մէկ մասը հարկատու ըրաւ :

3. Արամայ երկրորդ թշնամին էր Բարշամ Բաւելացւոց իշխանն որ քատասուն հազար հէտեակով և հնագ հազար ձիաւոր զըբքով Հայաստանի վրայ վաղեց, Նիւքարին պէս ուղելով որս մը ձեռք ձգել . բայց Արամ աս բանս իմանալուն պէս մէկէն զօրբէրը ժողվեց և շուտով մը վասն հասաւ, թշնամւցն զօրբէրուն կէսը կոտրեց, կէսն աշցրուեց ու զինքն ալ բանելով սպաննեց. աս էղաւ Արամին երկրորդ յաղթուութիւնը :

4. Արամայ քաջուութիւններուն համբաւն մերձակայ ազգերուն սիրոտ վախ ձգած ըլլալով, երբոր կապագովիլացւոց Պայտակիսանուովիշխանն լսեց որ Արամ քատասուն հազար զըբքով իր երկրին մատերն է կերէ, վախնալսվոր ըըլլայ թէ կապտովկիսյ ալ տիրէ, բոլորու ժողվը Արամայ դէմ պատերազմի էլաւ. բայց Արամ վրան հասաւ սաստիկ կոտորածով վանեց հալածեց զինքն ու Միջերկրական ծովուն կղզիներուն մէկուն մէջը փախուց: իսկ Պայտակիսին երկրին տիրելով Մշակ անունով չայ մարդպան մը դրաւ ան տե-

3. Արամ ի՞նչպէս յաղթեց ու սպաննեց Բարշամ Բարելացւոց իշխանը.

4. Արամ կապագովիլոց ի՞նչպէս տիրեց, և զոլ իշխան դրաւ այն տեղերուն:

դէրուն՝ տասը հագար զօրք տալով իրեն. բաց ասկէ հրաման հանեց որ ամենին ալ հայերէն խօսին:

իսկ Մշակ մարդպանն կապագովիլիոյ մէջ քաղաք մը շնեց ու իրեն անունով Մշակ անուանեց * . բայց բնակիններն ըկնալով աղէկ հնչել Մաժակ կը զուուցէն. վերջէն աս քաղաքը շոով մայեցւոց Յուլիոս Կեսար ինքնակալէն նորոգու. էլով Կեսարի ըսուեցաւ, որ է հիմակուան Լայսերի ըսուածն:

5. Արամ բոլոր թշնամինները Հայաստանին վանելէն վերջնի երբոր տեսաւ որ ամեն կողմանէ ապահով է, սկսաւ բարեկարգել Հայաստանը՝ կարգեր ենանններ գնելով, և այնչափ երկելի եղաւ ու անունը օտարաց մէջ տարածեցաւ որ բոլոր ուրիշ ազգերն մեր ազգը իրեն անուանիը սկսան Արամեան կամ Արմէն կոչէլ, ինչպէս նաև մինչեւ հիման ոյն անունը կուտան մէզի իրենք:

6. Ասմիջնոցն Ասորեստաննեայց նինսութագաւորի կարգածով իրմէ առաջ եղած քաջերուն

5. Արամ իր ըրած բարեկարգութիւններով ու քաջութիւններով ի՞նչ համբաւ ստացաւ տար ազգաց մէջ.

6. Արամայ քաջութիւններուն համբաւը լի՞նչ ազգեցութիւններաւ նինսոս Ասորեստանի թագաւորին վրայ.

* Աս պատճառաւ Յոյները Փաքը Ասիային աս մասը Արմենիա անուաննեցին. իսկ Հայերն Առաջն Հայք դրին ան մասին անունը, ու անկէ վերջ Հայոց տիրած տեղերուն անունը Երկրորդ Հայք Երբորդ Հայք; իսկ Զորրորդ Հայք ասոնց մասը չէ, հապա բուն Հայաստանին հնգետասան նահանգներէն մէկն է որ ասոնց սահմանակից ըլլալով Զորրորդ Հայք ըսուեր է:

պատմութիւնը, կ'ուզէր որ անոնց նմանի ու
միայն իրեն անունը յիշուի աշխարհքիս վրայ.
ասիորհրդով բոլոր իրմէ առաջ եղած քաջերուն
պատմութիւնները այրել առուաւ, ու ինքն ալ
շատ զօրք ժողվելով սյլ և այլ սեղերու տիրեց,
առուաւ Եդիապոս ու անոր շրջակայ սահմանները:
Անցաւ անկէ Հնդկաստան, բայց հօն չարաշար
յաղթուելով ետ դարձաւ: Նոյնպէս պատմու-
թիւններուն մէջ կարգարով որ Նայկ զիւէլ ըս-
պաններ է, ուղեց Արամէն վրէժը առնել բայց
Արամայ քաջութիւններէն վախնալով ետ կ'ցաւ
եր նորհրդէն հաշտութիւն խօսեցաւ Արամայ
հետ և թող տուաւ որ մարդարտէ պսակ դոր-
ձածէ:

7. Խորենացին Արամայ վրայ խօսելու ատեն
առանկ կը զուրցէ Մարիբասայ խօսքերէն հանե-
լով. «Սա այր աշխատասէլ և հայրենասէր ե-
ղեալ, որպէսցուցանէն սյն պատմագիր, (այս մինքն
Մարիբաս կատինա) լաւ համարէր զմեռաննելն՝ ի
վերսց հայրեննեացն, քան թէ տեսանել զրդիս
օտարածնաց կոփելով զահմանս հայրենին, և
հարազատից արեան նորո՞ տիրել արանց օտա-
րածնաց»: Յիբաւի կարձ և քիչ բան կը գնէ,
բայց աս կատարելութիւններն ու առագինու-
թիւններն են որով ազդին թշնամիներուն յաղ-
թեց և իրեն անունը անմահացուց, ազդին սի-
րելի ու միանդամայն պատկառէլ ըրաւ զինքը,
և կարգաւորեց աէրութիւնն՝ կարգեր կահոն-
ներ գնելով: Սս գիսաւոր առաքինութիւններէն
զատ կը տեսնուի Արամայ վրայ աս կատարելու-
թիւններն ալ, բարեխառն կեանք, հմտութիւն-

7. Մովսէս Խորենացին Ե՞նչ գովեստ կուտայ
Արամայ վրայ և իրեն գլխաւոր կատարելութիւն-
ները որո՞նք են.

պատերազմական բաներու մէջ, աշխարհակալու-
թեան անյագ սիրյոն չափ գնել, արագութիւն
՚ի գործու և ուրիշ կատարելութիւններ: Պատե-
րազմական հմտութիւնը կ'իմացուե իրեն պատե-
րազմներու մէջ յաղթելէն, և այնպիսի թշնա-
մեց, որոնք նոյն ատենն շատ երեւէլի էին, մա-
նաւանդ Բարշամը որ Խորենացւոյն բասծիննայե-
լով, Ասորիք Երկար ատեն պաշտեցին զինքը իրեն
քաջութիւններուն համար:

8. Արամայ աշխարհակալութեան մէրը ամե-
նկն անոնց պէս չէր որոնք շատ անդամ օտար
ազգերուն վկայ կը յարձակէն առանց իրաւանց,
միայն իրենց անյագ փափաքը լշենելու համար.
Արամ անոնց Երկրին միայն տիրեց որոնք որ ու-
ղեցին իրեն և կամ իր հայրեննեացը վնաս մը
հասցընել որ ամենայն կերպով արդարացի է:
Դարձեալ Երբօր իր թշնամիներուն յաղթեց՝
ալ անկէց վերջը փոյթ չըրաւ աշխարհակալու-
թեան: Ահա այսպիսի գեղեցիկ կատարելութիւն-
ներով զարդարուած էր աս մեծ մարդք, որ
յիսունըութ տարւոյ չափ իշխելէն վերջը խա-
լազութեամբ մեռաւ, յանձնելով կառավարու-
թիւնը իր Արայ որդւոյն:

8. Արամ Ի՞նչ բնաւորւթիւն ունէր ու Ե՞րբ
մռաւաւ.

ԴԱՍԻ Դ.

1. Արայ. — 2. Շամիրամ և իր ըրած պատերազմն: Արայի մահը. — 3. Շամիրամայ խարէութիւնն. — 4. Արայի նկարագիրը. — 5. Շամիրամայ Հայաստան մտնելը: Շամիրամակերտին կամ Վանայ շնութիւնն: Կարդոս կը թագաւորէ Հայոց քայ. — 6. Շամիրամայ և կարդոսի մահը: Անուշաստանի թագաւորելն և մահը. — 7. Անուշաստի գովիստն:

1. Արայ Նինոսի վերջի տարիները և իր հօրը յաջորդելով նոյն պատիւն ունեցաւ Նինոսին, ինչ որ ունեցեր եր Արամ իր հայրը. ասիկայ գեղեցկութեանը համար Արայ Գեղեցկի ըստեցաւ: Խնան նստելուն պէս մէկէն շնութիւններուն ետև սկսաւ ըլլալ, և ան պատճառուաւ Արմաւիր քաջաքը իրեն ըլլակայ տեղերոյն Արարատ կամ Արարատը ըստեցաւ:

2. Երբոր Նինոս Ասորեստանցւոց թագաւորն մեռաւ, Շամիրամ* իր կինը տեղը յաջորդեց. ու լսելով Արային գեղեցկութիւնը ուղեց կարդուիլ հետը. խոստանալով Արային թիւն հետ մէկտեղ Ասորեստանի վրայ ալ թագաւորէ: Բայց Արայ իմանալով Շամիրամայ անկարդ ու չարմաքը, մէրժեց իրեն ինդիքը, և աւելի յանձն

1. Արամին ովլ յաջորդեց.

2. Ինչէն բացուեցաւ Արայի Շամիրամայ հետ ըստած պատերազմն ու ինչ վերջ ունեցաւ.

* Ամիկայ եղաւ աշխարհքս մէջ առջի թագուհին որ թագաւորեց, և միանդամայն ամենէն կարիքը ու երելին:

տաւալ պատերազմով մեռնիւլ քան թէ իրեն առաքնութիւնն ու բարեխառնութիւնը ոտքի տակ առնել: Ընդունայն տեղը շատ աշխատեցաւ Շամիրամ համոզելու զինքը, այլ և այլ անդամպատ գամաւորներ զիկելով, և ամեն անդամ իրեն անձեռնութիւնն խաղը եղաւ, բայց գիմացինին համեստութենէն շամըցաւ, վերջապէս յուսահատութեամբ ու բարկութեամբ լցուած պատերազմով Արայի վրայ եկաւ ու Այրարատայ գաշտին մէջ պատերազմի պատրաստուեցան երկու կողմէն: Շամիրամ իրեն զօրաց և զօրավարներուն խստիւ արգելեց որ զԱրան ըսպաննեն, հապա ողջ բաննեն. բայց պատերազմին տաք միջոցներն Արան զարնուելով մեռաւ, որ շատ աւելի մէծ յաղթութիւնն էր քան թէ Շամիրամայ անկարդ հաջոյքը կատարէր ու հարիւրաւոր տարի ալ թագաւորութիւնն ընէր:

3. Շամիրամ երբոր իմացաւ Արայի մեռնիլը շատ ցաւեցաւ որ իր գէջ կամքը ըլրցաւ կատարել, ու իրեն ամպարիշտ ախտովին կուրցած, կ'ուզէր գիւտութեամբ ողջընցնել. բայց որովհետեւ գինս սկսաւ հոտիլ և Հայոց զօրքն ալ Արային մահուանը վրայ բարկացած կ'ուզէին նորէն պատերազմը բանալ. Շամիրամ իրեն մարդիկներէն մէկն, որ քիչ մը Արայի կը նամանէր, զարդարելով ձայն հանեց Հայոց զօրաց մէջ որ աստուածները Արան լցէրով ողջացուցին: Իսկ Արայի մարմինը խորունկ վիհ մը նետել տուաւ որպէս զի Հայերը զգանան. ասով թէկէս և բուրով Հայերը չխարուեցան, բայց զօրաց մէջ շիոթութիւն ինկնալով Շամիրամայ դէմ ցդրին, ու անով Շամիրամ Հայաստան մտաւ (1743):

3. Շամիրամ ինչ վարպետութիւն բանեցուց Հայերը խարելու համար.

4. Արայի վրայ ունեցած գլխաւոր տեղեկութիւնիս այս է, և Խորենացին ուրիշ բան չպատմել վրան. բայց տարակայս չկայ որ բոլոր աշխարհքի տիրելն շատ աւելի վեր է իրեն համեստութեան առաքենութիւնը. մանաւանդ այն պիսի գարու և կառապաշտութեան խաւարին մէջ: Արայ ընդ ամենը 26 տարի իշխեց ազգին վրայ իրեն յաջորդ թողով իր կարգոս որդին:

5. Ինչպէս որ Խորենացին վը զուրցէ, ամառ ատեն ըլլարվ Շամիրամայ Հայաստան մտնելը, Շամիրամ տեսնելով օդին մաքրութիւնն ու զովութիւնը, գիտքին աղուորութիւնը, աղքիւներուն ու գետերուն շատութիւնն ու յստակութիւնը, ուղեց իրեն ամառուան բնակութեան տեղը շնուր Հայաստանի մէջ. ուստի այս բանիս համար ընտրեց Արթամարայ ծովրւն եղերը ու հոնքաղաք մը շնուց որ իրեն անուամբն Շամիրամի կերտ ըստուցաւ ու վերջէն Վան. այս շնորհիս համար քանինուերկու հաղար գործաւոր ու վեց հարիւր ճարտարապետ կ'աշխատին եղեր: Շամիրամ Արային սիրոցն համար անոր տասուերկու տարուան կարգոս որդին յաջորդ նստեցուց անունն ալ Արայ գրաւ, և ինքը ամառը կուգար Հայաստանի կը բնակէր, իրեն տեղը փոխանորդ գնելով Գրադաշտ անունով մողը որ Արայ իշխան էր: Բայց Շամիրամայ որդիի վերին մը առաջանաւ անարդ անիկարգութիւններուն գիտմաւ, զինքը այլ անգամ իրավունք ու առաջատանի մէկ մասին տիրեց խոստանալով որ տարուէ տարի տուրբ տայ. բայց վերջէն իրեն խոհմանութեամբն մէկաւ մասերուն ալ տիրելով, բոլոր Հայաստանի բացարձակ տէր եղաւ. շատ բարեկարգութիւններ ըրաւ ու վաժառունուելիք տարի իշխան վերջը խողագութեամբ մեռաւ:

4. Ասկէց գուրս Արայի վրայ ուրիշ բան մը կը պատմէի.

5. Շամիրամ իր մէծագործութեանը ի՞նչ յիշատակ մը թողուց Հայաստանի մէջ.

անցուց, բաց ՚ի պղտի տղէն որ Նինուաս կ'ըսուէր:

6. Ատէն անցնելով Զրադաշտ Նինուասին հետ միացած պատերազմի ելաւ Շամիրամայ գէմ. պատերազմի երբոր սաստկացաւ՝ Շամիրամ Հայաստան փախաւ ու կարգոսին հետ միանալով անոնց գէմ պատերազմի ելաւ. բայց յաղթուեցան ու երկուքն ալ պատերազմի մէջ ինկան մեռան, Շամիրամ վաթառունուերկու տարուան ու կարգութերսուն տարուան, տամնըրութը տարի իշխան վերջը: Նոյն պատերազմի մէջը գէրի ինկաւ նաև կարգոսին Անուշաւան որդին որ տամնըրոս տարուան էր, ու սյու պատմառաւ քիչ մը տաեն Հայաստան Նինուասայ իշխանութեան տակն մտաւ, ուստի քիչ մը տաեն Հայերն առանց իշխանի մնացին, մինչեւ որ Անուշաւան մեծցաւ ու սպալատին մէջն եղած մեծերուն շատին սիրելի ըլլարվ, անոնց մինորդութեամբն ու աղաւանքովն Հայաստանի մէկ մասին տիրեց խոստանալով որ տարուէ տարի տուրբ տայ. բայց վերջէն իրեն խոհմանութեամբն մէկաւ մասերուն ալ տիրելով, բոլոր Հայաստանի բացարձակ տէր եղաւ. շատ բարեկարգութիւններ ըրաւ ու վաժառունուելիք տարի իշխան վերջը խողագութեամբ մեռաւ:

7. Աս փառաւոր իշխանին վրայ թէպէտ և քիչ պատմութիւն ունինք, բայց Խորենացին աղէն համառօտէ իր արժանաւոր գովեստը և կատարելութիւնները այս երկու տողավու. « Արայ յանն Արա մեռանի ընդ Շամիրամայ, թօղով յեանն Արա մեռանի ընդ Շամիրամայ, թօղով

6. Հայաստան ի՞նչպէս Նինուասայ իշխանութեանը տակ մտաւ ու երքը նորէն ի՞նչպէս աշխատեցաւ.

7. Անուշաւան ի՞նչ կողմանէ երկելի եղաւ.

արու զաւակ ամենահարօւստ և չատահանձար
յի և 'ի բան զլյնուշաւանն »: Բայց 'ի Խորե-
նացւոյն այս մեծ գովեստէն, իրեն խելացիու-
թիւնը յայտնի կը տեսնուի իր գործադրւթեանը
մէջ ալ որ այնպիսի մեծ տէրութեան մը ձեռքէն
հայրենական ժառանդութիւնը առաւ առանց
արիւնչեղութեան, և ինչպէս որ Խորենացւոյն
վերի դրած խօսքէն կ'իմացուի, բոլոր իրեն քաղ-
ցրաբանութեամբն: Կ'ըսէ Խորենացին որ եր-
բոր ճնաւ Անուշաւան՝ Կարդոս իր հայրը նոուփ-
րեց վինքը այն Սուեաց անտարին զոր տնկած
էր Արմենակ: ասկէ Անուշաւանը Սոս կամ Սո-
սանուէր կոչուեցաւ: Կը կարծէին Հայերն որ
աստուածներ կը բնակին այն անտարին մէջ, որով
անոր նոուիրուող անարատ, կտրիմ ու սուրբ կը
համարուէր (1685):

ԴԱՅ Ե.

1. Հայկազուն իշխանք, Պարէտ: — 2. Զարմայր: Ակայր-
ուին: — 3. Հայ երևելի իշխանք: — 4. Պարոյր առաջին
կը թագաւորէ: — 5. Արդամալէք և Սանասար Հայա-
ստան կուգան: — 6. Խորենացւոյ համարմունքն և Պա-
րոյրի յաջրդիքն:

1. Որովհէտեւ Անուշաւանին ցեղէն իշխանու-
թեան օրինաւոր յաջորդ չէր մնացած, ուստի
հարկ եղաւ որ Հայկայ մէկալ որդւոցը ցեղէն
Պարէտ անունով իշխանը տիրէ Հայոց վրայ: որուն վրայ երկայն ծանօթութիւն չունինք,
բայց միայն գիտենք որ շատ պատերազմներ ըլլեր
է յիսուն տարի իշխելով Հայոց վրայ: Ասկէց
սկսեալ մինչև Պարոյր առաջինին մլոցները, Խո-
րենային բան չի պատմեր այս իշխաններուն վրայ,
այլ ազգին թագաւոր ունենալուն վրայ ուրա-
խութեամբ լցուած մէկէն թագաւորութեան
սկսելուն վրայ կը խօսի, մէկանոնք զանց առնե-
լով*: Միայն ասոնցմէ մէկ քանիին վրայ համա-
ռօտ տեղեկութիւններ ունինք:

1. Անուշաւանին մեռնելէն վերջը ո՞վ եշխեց
Հայոց վրայ:

* Անուշաւանէն վերջը կարգաւ ետեկ ետեկ նստած իշ-
խաններուն անունները ասոնք են. Պարէտ, Արբակ, Զա-
ւան, Փառնակ Ա. Սուր, Հաւանակ, Վաշտակ, Հայկակ,
Ամբակ Ա. Առնակ, Շաւարչ Ա. Նորոյր, Վաստամ, Կար,
Գոռակ, Հրանտ, Ծնձակ, Գղակ, Հօրդ, Զարմայր, Հա-
ւարչ Բ. Պերճ Ա. Արբան, Պերճ Բ. Բազուկ երկայնա-
կեաց, Հոյ հրաշակերտ, Յուսակ, Ամբակ Բ. Կայզակ,
Փառնաւազ, Փառնակ Բ. Սկայրդի ու իրեն տղան Պա-
րոյր:

2. Կը զուրցեն մեր պատմիներն որ Զարմայր նահապետն Տրյսից մեծ պատերազմին առենը Տրյացւոց Պրիամոս թագաւորին օգնութեան դնացեր է ու հոն շատ քաջութիւններ ընելն վերը պատերազմին մեջ մեռեր է. Խորենացին կը զուրցէ ասոր համար : « Մեռամի 'ի քաջացն Ելմնացւոց » : Նշյնպէս նաև կը տեմնուի որ Սկայորդին աւ քաջ մարդ եղած պիտի ըլլայ ինչ պէս որ Խորենացւոյն խօսքէն ալ կ'իմացուի որ զինքը « Քաջ նախնին մեր » կ' անուանէ : բայց վրան ամենեին բան չի պատմէր (749) :

3. Բաց 'ի գլխաւոր այս երկուքէն մէկանոնց վրայ որոշ տեղեկութիւն մը չունինք . բայց յայտնի կը տեմնուի որ անոնց մէջն ալ շատ քաջ մարդիկներ եղած պիտի ըլլան, ինչպէս որ իրենց անուններէն կամ քովի գրած մակդիրէն կ' իմացուի, ինչպէս Սուր, Վաշտակ, Առնակ, Կար, Հրանտ, Պերճ, Բաղրամ, Հոյ հրաշակէրտ և այն: Այս անունները որոնք նշանակութիւն ունին, կը տեմնուի որ իւրաքանչիւր մարդուն կատարելութեանը համեմատ դրուած են, և ոչ եթէ ըստ գիտաց. գարձեալ՝ գրեթէ հազար տարուան միջոց է այս զափի իշխանաց ետեւէ ետեւ յաջորդելը, որոնց տաենն Հայաստան ամենեին գերութեան առաջ մակ չմուռա՛թէ պէտք և հարգատու եղաւ այլ և այլ անգամ. այս բանս յայտնի կը տեմնուի պայազատներուն շարունակութենէն որոնց անունները վարը գրինք:

4. Պարսյր իր հօրը Սկայորդւոյն տեղը յա-

2. Զարմայր նահապետին ու Սկայորդւոյն վրայ ի՞նչ մասնաւոր բան մը կը պատմուի.

3. Մէկալ իշխաններուն քաջութեանը ի՞նչ բան կրնայ իբրև սասցդ նշան մը համարուիլ.

4. Պարսյր Վարբակէսին օգնելով ի՞նչ պատմուածացաւ.

Հորդելով հինգ տարի աղջը կառավարեց ամեն տեսակ բարեկարգութիւն ընելով: Նշյն միջոցին Ասորեստանի վրայ կը թագաւորէր Սարդանաւագալ որ զեղծ ու անխելք մարդ մը ըլլալուն հաբաւմար, իշխանները իրմէ ապստամբեցան Վարբակէս անունով իշխանին առաջնորդութեամբն: կէս անունով կամացն զօրացընելու համար Վարբակէս իրեն կողմն զօրացընելու Պարսյր մէր նահապետը որսաց, խոստանալով Պարսյր մէր նահապետը որսաց, խոստանալով որ Եթէ Սարդանաբաղին յաղթեն, զինքը թագաւոր ընէ Հայաստանի: Այս պատճառաւ ժողովը Պարսյր իրեն քաջ ու աղեղնաւոր զօրքերը ու Վարբակէսին օգնութեան գնաց. հոն Սարդանաբաղին յաղթելով Վարբակէս բոլոր Ասորեստանի թագաւորը եղաւ, ու ինչպէս որ Խոստացէր էր, Պարսյրին ալ թագ կապէց ու թագաւորական գաւազան առւաւ:

5. Պարսյրի տանին Սկեներիմին երկու աղաքը Սթրամէլք և Սանասար հայրենին սպաննելով Հայաստան վախիան, զորոնք ընդունեցաւ Պարսյր մէծ հիւրասիրութէամբ: Ասոնցմէ սերեցան Սանասոնք կամ Սասուն ըստածները և Արծունուիք ու Գնունիք: Պարսյր քառասոննելութեարի խազազութեամբ թագաւորուելն վերը մեռաւ:

6. Հոս պատմութիւնը նորէն կ' ինդ հատի, ու բովիչ տես Պարսյրէն սկսեալ մինչև մեծին Տիրունուած կամ ասուն յայտնիք: Պարսյրի ամենեին գրանայ թագաւորութիւնը գրեթէ ամենեին պատմութիւն ըստինք, վասնզի խորենացին հապատմութիւն ըստինք:

7. Պարսյրի միջոցը ուրիշ ի՞նչ նշանաւոր գիպուած մըն ալ հանդիպեցաւ. ու ինքն ընդ ամենը տարի թագաւորոց:

8. Յորում է խորենացւոյն համարմունիքն և որոնք են Պարսյրի յաջորդներն ու Հայկակին վրայ ի՞նչ կայ գիտիալէք:

մառօտութեան համար բոլոր այն թագաւորներուն ըստն ըրած գործքերը ձգելով միայն անուննին կը յիշէ ու մէկէն մէծին Տիգրանայ քաջութիւնն երբ կ'սկսի պատմել: Բայց այսու ամենայնիւ երեն մէծ համարմունքը կը ցուցընէ Հայոց թագաւորութեան այս մասին կրայ այս խօսքով. «Սիրելի էր ինձ յայնժամ դալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ առանել, և նոցա տեսութեամբն խրախճանալ»: Բաղմիմասս ու շատ նշանաւոր է Խորենացւյն այս խօսքը, որ ազգին այլ և այլ ատենուան վիճակները ալէկ ըմբռնելէն վերջն, այս միջյան ուղելը է աշխարհք դալ: Իսկ թագաւորներն ասնիք են. Պարսպը, Հրաշեայ, Փառնաւալզ, Պաճոյձ, Կոռնակ, Փաւոս. Հայկակ, Երուանդ ու Երուանդայ աղջան Մեծն Տիգրան: Ասոնց մէջ միայն Հայկակին վրայ գիտելիք մը կայ (թէ Նաբուգոդոնոսորայ հետ մէկտեղ պատերազմի դնաց Երուասալմի վրայ. Երբոր յաղթեցին ու ետ պիտի դառնար Հայկակ՝ իսկնդրեց Նաբուգոդոնոսորին, որ Հրէից գերիներէն ուղածը առնէ. ուստի Շամբատ անունով իշխանը առաւաւ ու իրեն ընտանիքովն Հայաստան բերաւ. Վերջը Վաղարշակայ ատեն Բագարատ Երեւելի նախարարին անունովն բոլոր ցեղն ալ Բագրատունիք ըսուեցաւ (580):

ԴԱԱ Զ.

1. Մեծն Տիգրան. — 2. Կիւրոսի բարեկամութիւնն: Աժդահակ և իր երազն. — 3. Աժդահակայ դաւաճանութիւնն: Տիգրանայ պատկրազմն: Աժդակայ մահը. — 4. Տիգրանայ կատարելութիւնն:

1. Մեծն Տիգրան Երուանդայ որդին պարծանք մեր թագաւորութեանն և պայծառացուցին ազգին, մեր ամեն թագաւորներէն աւելի երևելի ու անուանի եղաւ՝ չէ թէ միայն իրեն արտաքին քաջութիւններովն, այլ նաև իրեն հոգւոյն կատարելութիւններովը: Խորենացին ալ բոլոր Հայկազնաց պատմութեան մէջ, մէծին Տիգրանայ մասը ամենէն ընդարձակ կը պատմէ. անոր համար կ'արժէ որ մէնք աւլքիչ մը ընդարձակ խօսինք ասոր վրայ:

Խորենացին միայն Հաշակ մը կուտայ Տիգրանայ առաջին քաջութիւններուն վրայ, առանց պատմելու (թէ որոնց յաղթեց և թէ այն պատերազմներուն մէջը ի՞նչ կերպ բռնեց. ուստի ասնիկ կը զրուրցէ. «Արանց կացեալ գլուխի, և ըրութիւն ցուցեալ, զազդս մեր բարձրացցց, և զընդ լծով կացեալս՝ լծագիրս և հարկապահանջնիս կացցոյ բազմաց»: Ասկէց բնականապէս կրնանք մակարեւել (թէ շատ քաջութիւններ ըրած պիտի ըլսայ, և այս բանս յայանի կը զոռոցէ որ Յոյները նուածեց և Հայաստանի առաջնին սահմանները նորոգեց:

1. Ո՞վ է մէծն Տիգրան և ի՞նչ քաջութիւններ ըրած ունի.

2. Կիւրոս Պարսից թագաւորն լսելով Տիգրա-
նայ քաջութիւնները՝ ուզեց անոր հետքարեկա-
մութիւն հաստատել. արդէն Տիգրան ալ կ'ուզէր
Կիւրոսին բարեկամութիւնն ու օգնութիւնը, ա-
նով մէջերնին բարեկամութիւն հաստատեցին:
Այս բանն երբոր իմացաւ Աժդահակ Մարաց
թագաւորն, որ նոյն օրերը Կիւրոսի հետ թշնա-
մացերէր, կասկածի դնաց որ ըրլայ թէ այս եր-
կուքը միաբանելով իրեն դէմ պատերազմի ելլեն:
Քանի որ այս վախովս կը ծփէր, դիշեր մը սաս-
տիկ խռովուծ երած մը անսաւ որ ձիւնով ծած-
կած բարձր լըրան մը ծայրն, կին մը նստած
երեք դիւցաղը ծնաւ. առաջինը առիւծի վրայ
նստելով գէպ 'ի արևմտեան կողմը կը վաղէր.
Երկրորդը ընձու վրայ նստած հիւսիսային
կողմը կը նայէր, իսկ երրորդը վեշտի վրայ
չէծած իր թագաւորութեան վրայ կը վաղէր:
Երբոր իր խորհրդականներն ու պաշտօնեանները
լսեցին այս բանս խորհուրդ առւին իրեն որ այլ
և այլ ազգերէ զօրք ժողովելով անոնց գէմ պա-
տերազմի ելլայ. բայց Աժդահակ դիտնալով Տի-
գրանայ քաջութիւնները, վախցաւ անոր գէմ
պատերազմի ելլելու. այլ վարպետութեամբ
մտածեց որ նախ, զՏիգրանը սպաննէ ու վերջը
Կիւրոսին գէմ պատերազմի ելլէ. այս պատճա-
ռաւ խաբէութեամբ՝ Տիգրանայ Տիգրանուհի
քոյրը իրեն կին առաւ, որպէս զի անոր ձեռքովն
սպաննել տայ զՏիգրան: Այս ամեն բաներս
ընելէն վերը սկսաւ Տիգրանուհին յայտնել
իրեն սրտին չարութիւնները, ըսելով որ Տիգրան
նախանձելով իր մեծնալուն վրայ, մայցէր է

2. Աժդահակ ինչէ՞ն թշնամացաւ Տիգրանայ
հետ ու ինչ վարպետութիւն բանեցուց զինքը
սպաննելու.

Կիւրոսին հետ ու կ'ուզէ նախ թագաւորու-
թիւնը ձեռքէն առնել մեռցընել զինքը ու վերջը
Տիգրանուհին. ուսամի պէտք է որ եղայրդ մէջ-
աւելէն վերցուի որպէս զի մեր կեանքը ապահով-
նայ ըսաւ, ապա թէ ոչ զքեղ տիկնութենէ կը
ձգեմ:

3. Այս բաներս փոխանակ վախցընելու զնիւ-
մախուհ թագուհին, աւելի քաջալերեցին զնիքը
որ ինքն ալ ուրիշ որոտայթներ լարէ Աժդահա-
կայ գէմ:

Ուստի իմանալով որ իթէ չհաւանելու կերպ
ցուցընէ այս բանիս մէջ գէշ բաներ կրնան հե-
տեւել, անոր համար առջի բերան չէ թէ միայն
համուզութիւնըցուց, այլ նաև ինքն ալ վրայ
առուած, բայց վէրջը վարպետութեամբ մը իմա-
ցուց իր եղանգը՝ Աժդահակայ սրանին չարու-
թիւնը: Այս միջոցին Աժդահակ ալ նարդախու-
թեամբ Տիգրանայ պատգամաւոր զիկեց որ իրեն
աեսութեան գայ Մարաց երկրին սահմաններուն
մատիկ. բայց Տիգրան գիտնալով Աժդահակայ
գաւաճանութիւնը ետ զկեց պատգամաւորնե-
րը ըսելով որ իրաւցընէ կուգայ, բայց չէ թէ
աեսութեան՝ այլ պատերազմելու, ու մէկէն
Կիւրոսին իմացուց. և գետ այն չեկած՝ Տիգրան
ժողվեց Հայոց, Կապագովկացուց, Աղուանից
ու Վրաց աշխարհքին զօրքերը ու Մարաց կող-
մերն գնաց: Հոն հինգ ամիսի չափ պատերազմի
ուշացուց՝ որպէս զի Կիւրոս օգնութեան գայ,
ու Տիգրանուհին ալ աղստի առանց վասուելու:
Խոհէմ ու քաջ թագաւորին վարպետութեամբն
երկուքն ալ եղաւ. Տիգրանուհին աղատեցաւ,

3. Տիգրանուհին Երբոր եղորը մահուան խոր-
հուրդը լսեց ինչ ըրաւ, ու Աժդահակ ինչպէս
մեռաւ.

ու հինգ ամիսէն վերջը կիւրոս ալ օդնութեան
եկաւ հասաւ: Այէկէն Տիդրան պատերազմը
սկսաւ, ու պատերազմին սաստիւթեան ատենն
Տիդրան և Աժդահակ իրարու հանդիպելով, Տի-
դրան այնպէս ուժով զարկաւ իրեն տէրը Աժ-
դահակայ սիրան, որ դուքս հանելու ատեն թոքն
ալ հետը դուքս հանեց: Ինկաւ Աժդահակ ու
հոգին փչեց. բայց Տիդրան պատերազմը առաջ
տանելով վանեց թշնամիները, ու տասը հաղար
հոգիի չափ գերի բանելով՝ յազդութեամբ շա-
յաստան դարձաւ: Այս պատերազմին մէջ դրեթէ
բոլոր յաղթութիւնը Տիդրան ըրաւ. վասն զի
նչափէս որ Խորենացին կը զրուցէ, քաջ քաջի
հանդիպելով պատերազմը անպարտէն կը մնար,
մինչեւ որ Տիդրան զարկաւ մեռցոց Աժդահակը:
Նորէն այս գործողութեանս մէջն ալ Հայոց
դիւցալին պահուած էր շնչելու աշխարհքիս
վրայէն Աստուծոյ օծելցյն և աշխարհքիս թշնա-
մին, որ թէպէս կիւրոսին բազրուն ալ կարող
էր այս բանս ընելու, բայց տարակցս չկայ որ
քաջագունին պահուած էր այս պաթճանքն էր-
կնաւոր կանխագիտութեամբ: Ասկէ վերջն երբոր
կիւրոս Բաբելացոց վրայ պատերազմի ելաւ,
իրեն օդնութեան դնաց մէր Տիդրան թագաւորն
ալ, որոնք երկուքը մէկտեղ Բաբելոնը տևին ու
յաղթութեամբ իրենց աեղջ գարձան: Տիդրան
այսպիսի փառաւոր յաղթութիւններով քառա-
սունը հինգ տարի թագաւորելէն վերջն խաղա-
ղութեամբ մեռաւ, երեք որդի թողով որ են
Բաբ, Տիրան ու Վահագն:

4. Տիդրանայ կատարելութիւնները Խորենա-
ցին ի՞նչ գովեստներով յայտնի կ'ընէ.

գովեստը այս է. « Ամենեցուն որ առ իւրովքն
էին ժամանակը նախանձելի, և յեանոցս ըրձա-
լի ինքն և ժամանակ իւր »: Այս խօսքերէս վերջը
կը դնէ Հայաստանի երջանիկ վիճակը, թէ ազգը
ինչ հարստութեան մէջ էր, զինուորութիւնն
ինչ աստիճան առաջ գնացած էր, արդարու-
թիւնն ու խալզալութիւնն որչափ ծաղկած էին,
որոնք աղէկ բացատրելու համար այսպէս կը
զուցէ. « Խալզալութեան և շինութեան բերող,
իւղով և մեղու դհասակս ամենայն պարարեալ »:
Ասոնցմէ զատ կը դնէ նաև այնպիսի գովեստներ
ալ որ աւենայն կատարելութեամբ զարդարեալ
մարդու մը հարկաւոր են. « Զորմէս ասէին ՚ի
հինան մեր որը բամբուամբն երգեին լինել սմա-
ւ ՚ի ցանկութիւնն մարմնոյն չափաւոր. մեծ-
իմաստ և պէրճաբան, և յամենայն որ ինչ մարդ-
կութեանս պիտանի »: Խորենացը յն այսպիսի
նշանաւոր և գեղեցիկ գովեստներուն ճշմար-
տութեանը վրայ չենք տարակուսիր. միայն այս
բանիս իրաւունք ունի ցաւելու մարդ, որ այս-
պիսի ընտիր, մելացի, ազատամիտ, վեհանձն ու
ազգասէր թագաւորի մը բարեխնամ հօվանա-
ւորութիւնը քառասունը հինգ տարի վայելր է
Հայաստան, որ եթէ հազարաւոր տարի ալ
վայելէր՝ միշտ գոհ, միշտ ուրախ և միշտ շնորհա-
կալ պիտի ըլլար զինքը պարգևողին:

ԳԱՅԻ Ի.

1. Վահագն. — 2. Վահէ: Հայկազննց թագաւորութեան
վերջանալը. — 3. Ադուարդ Սիւնեաց նախարարն և Ար-
տասազ. — 4. Արտաշիս:

1. Տեղաբանայ էրեք որդւոց մէջ Վահագն թէ-
պէս ամենէն պղտի՞ն էր. բայց միւսներէն աւե-
լի զօրաւոր գտնուելով Հայոց վրայ և ևեց: Ասի-
կայ շատ քաջ մարդ էր, որուն վրայ Հայէրն ու
վրացիք այլ և այլ երգեր չինելով կ' երգեն եղեր,
մինչեւ նուա Խորենացւցն ատենաներն ալ, որ կ' ը-
սէ նաև ասոր Համար թէ Վրացիք արձանն կան-
գնելով երկար ատեն պաշտեցին զնիքը: Ասոր
ցեղն Վահունիք ըսուեցաւ, որ քրմութեամբ
իրեն պաշտամանը նուիրուեած էին:

Վահագնէն վերջը ետևէ ետև յաջորդեցին հինգ վեց թագաւոր ալ, որոնց վրայ պատմութեաւն չունենալով կ'սովորուինք միայն անուննին յիշելով անցնելու, որ են ասոնք. Առաւան, Ներսէն, Զարեհ, Արմագ, Բայրամը ու Վան՝ որ Շամբամակերտ քաղաքը նորոգելով եր անունով Վան կոչեց (352):

2. Վանայ որդին Վահե հօրը տեղ անցնելով
շատքածութիւններ ըրաւ երեն թշնամիններուն
գէմ՝ որոնկ կ'ուղէին Հայաստանի տիրել. Մշյն
միջոցներուն Աղեքսանդր Մակեդոնացւոց թա-

1. Տիգրանէն մինչև վահե որո՞նք յաջորդեցին.

2. Վահե մլէ ու ինչպէս վերջացաւ Հայկա-
զանց թագաւորութիւնը.

գաւորը սասահեկ զօրացած ըլլալով՝ Պարսից վրայ
պատերազմի էլաւ։ Վահե օդնութիւն զրկեց
անոնց, բայց աենանելով որ Պարսիկք չարաչար
յազդուռեցան և Աղեքսանդր իր վրայ պիտի գայ.
ասդիէն անդիէն զօրը ժողովեց ու Աղեքսանդրի
գէմ էլաւ, և պատերազմի մէջ մեռնելով Բոլոր
զօրբերը ցրուռեցան և Աղեքսանդր Հայաստանի
ակրեց (327):

Ահա այսպէս վերջացաւ Հայկաղնաց թագաւորութիւնը որ 1800 տարի գիւմացել էր։ Այսկեց ետքը 300 տարիի չափ Հայերը երբեմն Սելիկաց կողմանէ զգկռւած կուսականերու, երբեմն ալ Հայ իշխաններու կը հնացանդէին։

3. Այս Հայ իշխաններուն մէջ երեւելի եղան
քանի մը հոգի, և ամենէն երեւելին Արդուարդ Սիւ-
եաց նախարարն, որ Կապադովիլացւոց թագա-
ւորին Արիթէսս տղուն խորհրդովն ապասմբէ-
ցաւ Մակեդոնացւոց աբրութենէն: Այս բան
երբոր լսեց Պերգիկաս, Եւմենէս անունունի իշ-
խանը Արտարդին վրան զրկեց, որ Արտուարդին
հետ դաշնիք դրսու ու հաշտութիւն ըրպաւ: Ա-
դուարդ խաղաղութեամբ երեսունուերեք տարի
իշխեց ու մեռաւ: Երկրորդ՝ անուանի եղաւ Ար-
տաւարդ Հայոց մէծ իշխանն, որ Սելևկացւոցմէ-
տապամբելով ինքնազդուիս սկսաւ Հայաստանի
տիրել: Բայց երբոր Անտիոքոս շաա զօքով վրան
վազեց, Արտաւազ վախնալով դէմը լւլէլու՝ ըն-
ծաներ զրկեց Օնտափոսին ու սիրաը առաւ խոռ-
տանալով որ բոլոր հարկը վճարէ: Արտաւազ յի-
սուն տարի իշխելէն վերջը մեռաւ (212):

3. Ագռամբդ Սիւնեացնախարարին ու Արտաշեարարին ի՞նչ գիտելիք կան.

4. Արտաշևսին միջոց ի՞նչ է ու բան մը
հանդիպեցաւ ու իրեն որո՞նք յաջորդեցին.

կալդրաւ Անտիոքոս՝ Արտաշեաս անունով իշխանը, որուն ատենն Յնիբրալ Հայաստան փախաւ։ Արտաշեաս անոր Խորհրդովն Արտաշատ քաղաքը շինեց, ու ինքնագլուխ սկսաւ թագաւորել։ Երբ լսեց այս բան Անտիոքոս Եպիփան, վրան պատերազմի ելաւ, ու յաղթելով անոր՝ բռնադասեց-որ սովորական հարկը ասյ։

Արտաշեաս կ'ուղէր Փոքր Հայոց վրայ ալ իշխել, որուն կուսակաց էր Զահրատ անունով մէկը. բայց մահը վրայ գալով չկրցաւ առաջ առնելիր խորհուրդը, և իր տեղը յաջորդեց Արտաշադդ որդին, որ տասը տարի իշխելէն վերջը։ Արշակ Պարթևաց թագաւորը վրան պատերազմի ելլելով զինքը հալածեց, ու իր Վաղարշակ եղբայրը Հայոց թագաւոր դրաւ, ուսկից սկսաւ Արշակունեաց թագաւորութիւնն (149)։

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Ռ Ը Ա. Կ Ո Ւ Ե Ա. Ց

ԴԱՍ Ը.

1. Արշակունեաց թագաւորութեան սկսին, Վաղարշակ։
2. Վաղարշակ Մրգիւղկէսի հետ ըրած պատերազմ։
3. Վաղարշակ Հայկացնաց պատմութիւնը գրել կուտայց մահը։
4. Իր ըրած բարեկազութիւնները և մահը։
5. Վաղարշակ կատարելու թիւններն։
6. Արշակ Ա. Պատմացուն նուաճութիւն։ Բագրատունեաց նահատակութիւնն։

1. Երբոր Սելեկացիք Մակեդոնացւոց ձեռքով արեւելեան ազգերուն մեծ մասին ալրեցին, այսինքն Պարսից, Արարաց, Հայոց և Պարթևաց վրայ, Էրկար ատեն կուսականերու ձեռքով այդ ազգերը կառավարեցին։ Բայց Քրիստոսէ 247 տարի ատար Պարթևաց մէջէն Արշակ անունով իշխանն սաստիկ զօրանալով ապօստամբեցաւ Ակելակացւոցմէ ու շատ էրկիրներու ալրեց։ Ուրիշ շատ մեծամեծ յաղթութիւններ ալ ընելով այլ և այլ զօրաւոր ազգերու գէմ, շատ Երևելի եղաւ ու ամեն տեղանունը հռչակուեցաւ։ Ասոր թուն Արշակ Բ. նոյնական քաջութեամբ շատ տեղերու տիրելէն վերջն, եկաւ Հայաստանի վրայ ալ երբոր Հայոց վրայ կուսակալ էր Արշակունեաց թագաւորը զինքը հռնկէց, ու տաւադդ իշխանը։ Հալածեց զինքը հռնկէց,

1. Արշակունեաց թագաւորութիւնը ի՞նչպէս սկսաւ, ու ով է Վաղարշակ։

Հայոց վրայ իր Վաղարշակ եղբայրը թագաւոր
դրաւ։ Ասիկայ ազգին վրայ սաստիկ սէր կապե-
լէն վերջը՝ մասնաւոր ջանքով ուսումնասիրու-
թեան ետևէ եղաւ։ ազգին պատմութիւնը գոտ-
նելու առանձին փոյթ ունեցաւ, քաղաքական
կարգերն ու կառավարութիւնը շաղկեցուց,
և ազգին ամեն տեսակ յառաջադիմութեան
վրայ հոգ ունեցաւ։ Այս ամեն բաներս ըրբաւ
առանց քաջութիւնը ձեռքէ ձգելու։ Եւ տարա-
կյո չկայ որ այսպիսի կերպով սկսած թագա-
ւորութիւնն մը, չուտով պիտի զօրանար ու չու-
տով ալ պիտի ծաղկէր, ինչպէս եղաւ Արշակու-
նեաց թագաւորութիւնն։

2. Վաղարշակ ամենուը ՄՃբնին գրաւ՝ ինչպէս
որ իրեն եղբայրը ապսպիքը էր, բայց իմանալով
որ Սորփիւղեկէս անոնչով լիշխան մը Փօքր Հայոց
տիրեր է, շատ մը զօրք ժաղկեց ու անոր վրայ
գնաց, երբոր անիկայ բոլոր Պահտոսի ագճերուն
առաջնորդ եղած առաջ կուգարք: Պատերազմի
ատեն, որովհեաւ Սորփիւղեկէս քաջ մարդ էր,
շատ ջարդ ընելով վացեց Վաղարշակայ վրայ,
բայց իր քովիվ կորիք հայերն անոր վրայ վաղեցին
լարին ու գետին պառկեցուցին վինքը: ասով
մէկաւ զօրքերն ալ միրտ առնելով յարձակեցան
Սորփիւղեկէսին մնացած զօրաց վրայ ու այն
պէս չարաչար կոտրեցին, որ հեղեղի պէս արիւ-
նը կը վազէր, ինչպէս կ'ըսէ Խորենացին: Այս
պատերազմին վէրջը տիրեց Վաղարշակ ան կողմի
ազգերուն, ու անոնց առջեզ ահաւոր եղաւ:

3. Տեսնելով վաղարշակ Նայոց այս աստիճան

2. Վաղարշակ Ենցուես յաղթեց ու սպաննեց
Մորփիւղիկէոր.

3. Ի՞նչէն գրկոուեցաւ Վաղարշակ Հայկա, զանց պատմութիւնը գրել ապրու.

տիրասիլուռթիւնը և ուրիշ կատարելութիւններ և Հայաստանի ծաղկած վիճակը, իրեն ազնիւ բարքութիւննական հետաքրքրութիւնն մը ունեցաւ թէ արդեօք ո՞և եղեք է այս ազգին գլխաւորը, որո՞նք իրմէն առաջ թագաւորեր են, և արդեօք նիմքը քաջերու տեղ կը թագաւորէ՛ թէ չէ վասերու, ուստի աս բանին համար Մար Աքաս Կատինա անունով Ասորի մը գտառ, և անոր ապօպարեց որ Հայոց պատմութիւնը գրէ. Մար Աքաս Կատինա երբոր Հայաստանի մէջ ամբողջ պատմութիւնը ըստաւ, Վաղարշակայ Հրամանովն Անոնուէ գնաց, ու հոն թագաւորական գրատան մէջ գիրք մը գտաւ որ բոլոր աղդերուն պատմութիւնը կը գրէր, ու Մեծին Աղեքասնդրի հրամանովն յունարէն թարգմանուած էր. անոր մէջէն հանեց բոլոր Հայոց պատմութիւնը՝ Հայկէն մինչեւ Վահէ: Վաղարշակ տեսնելով աս բանս՝ սասակի ուրիսնացաւ որ քաջ մարդկանց տեղ ու քաջերու վրայ կը թագաւորէր, և իրեն իրեն ամենէն աւելի մեծ հրամատութիւնն ըլլար այն մատենանը իր գանձատան մէջ պահէց: Աս պատմութեան վրայ աւելցուց Մար Աքաս Վաղարշակայ և անոր օրդեւոյն Արշակայ գործերը:

4. Վաղարշակայ ըրած բարեկարգութիւնները ուստի են.

մէկու մը իշխանութիւն տուաւ՝ որ երբոր թագաւորը անիրաւ գատաստան մը կամ հրաման մը հանէ, իրեն իմացընէ տուած հրամանին անիրաւութիւնը. իսկ ուրիշ մը իշխանութիւն տուաւ որ եթէ թագաւորը անհոգ ըլլայ չարագործն ըպատճելու՝ միաքը ձգէ: Բագարատ անունով իշխանին ալ Արքակունեաց թագաւորներուն թագաւոր լեզուն թագավիր ըլլալու պատիւը տուաւ: Ուրիշը մէջէն միայն անդրանիկը քովկը պահեց, ու մէկանոնք բոլոր թագաւորական ընտանիքուն չաշանից գաւառը զըկեց: Այս կարգը պատշեցին մինչև կը ըստ Արքակունեաց թագաւորներն: Վաղարշակ ասանի իսելքով քսանուերկու տարի թագաւորելէն վերջը խաղաղութեամբ մեռաւ:

5. Այս ազգին երեսէլ մարդկանց մէջ առաջին աստիճանի յիշտատակի արժանի մարդիկներէն մէկն է Վաղարշակ, որ հաստատուն հիմն դրաւ կործանեալ աէրութեան մը, որ մէկէն զօրացաւ և ամեն բանի մէջ, ժամանակին համեմատ, չափէն դուրս աւելի առաջ գնաց: Վաղարշակայ գործերէն ցայտնի կ'իմացըս իրեն բնութիւնը, մասնաւանդ պարզ կը տեսնուի ու սումնապիրութիւնը, խաղաղասէր և աշխարհաշըն հոգին: Գարձեալ կը տեսնուի այնպիսի վեհանձնութիւն մը որուն նմանը սպատմութեանց մէջքէն կայ. աւելի գուրս կը ցատքէ այն կարգագորութեան մէջ որ մասնաւոր պաշտօնատէր կարգեց իրեն տուած անիրաւ հրամանները միտք ձգելու համար: Այս բանիս մեծութիւնը ամեն մարդ կընայ իմանալ մասնէլով թէ որչափ ծանր բան է թագաւորի մը լսել իրեն ըստած խօսքին ծոռութիւնը, տուած հրամանին անիրա-

ւութիւնը՝ մանաւանդ որ հին ատենը թագաւորին խօսքերն պատճամի տեղ կ'ընդունէին հպատակները: Արդարութիւնն ալ նշյնակէս կը փայլի աս երկու մարդկանց իշխանութիւն տալուն մէջ, որուն վախճանն է անիրաւ գործողութիւն մը ընթել:

6. Վաղարշակայ տեղ յաջորդեցի եթ անդրանիկ
որդին Արքակ Ա. որ հօրը առաքինութեանց
նմանելով՝ անոր պէս քաջ ու խելացի, և ինչպէս
որ Խորենացին կը զբուրցէ, շաա քարեկարգու-
թիւններ ըրաւ:

Ասոր ատենն Պոնտացիք ապստամբելով Հայեցին պատերազմ բացին. բայց Արշակ իրենց չարացար յաղթեց, և ծովեղերքը իրեն ըրած յաղթութեամբ նշան կոթող մը տնկեց: Ի ըսեն թէ Արշակ նիզակ մը ունի Եղեր օձի արիւնով ջուր տուած. անդամ մը աս նիզակը անսանկ ուժով նետեց կոթողին վայ որ մեջը դնաց խրեցաւ: Աս կոթողը երկար ատեն պաշտեցին Պոնտացիք իբրև Աստուծոյ գործք. բայց երբոր իր տղուն Արտաշեսին հետառին պատերազմ բացուեցաւ բարկանալով ծովը նետեցին:

Արշակ կույց սասաթիկ պաշտօնասէր ըլլարով՝
Բագրատունեաց մեջէն Երկու հոգինահատակէց
կուռք չպատելնուն համար • մէկալնոնք ալ սահ-
պեց որ թլխատութիւնը ճգեն, շաբաթ օր որսի
և պատերազմի երթան և ուրիշ խարական օրէնք-
ները թողուն. անոնք ալ յանձն առին աս բա-
ներս՝ բաց ՚ի կուռք պաշտելէն: Արշակ տաստե-
րէք տարի թագաւորելէն վերջը մեռաւ, ու իրեն
տեղը անցաւ Արտաշէս Ա. (114):

6. Վաղարշակայ ովլ յաջորդեց .

ԴԱՍ Թ.

4. Արտաշէս Ա. Պարսկաստանի կը տիրէ. — 2. Իր այլեպէ արշաւանքները և մահը. — 5. Օտար մատենագրաց տըւած գովնասն, և իր աշխարհակառութեան ոգւղն քննադասութիւն. — 6. Արտաշէսի մահուան պատճառն, և իր մէկ խօսքն :

1. Արտաշէս Ա. բնութեամբ կտրի՛՛, պատերազմող ու աշխարհակալութիւն սիրող ըլլարով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, շատ երկիրներու տիրեց ու Հայաստանը ընդարձակեց, և գրեթէ բոլոր աշխարհք գոլացուց : Մինչև իր ասենը Պարսից թագաւորն ամեռով պատուով ու մեծութեամբ առաջնին կը համարուէր, ու Հայոցն երկրորդ. բայց Արտաշէս Պարսիցը երկրորդ ըրտու Հայոցը առաջնին : Պարսկաստանի տիրեց, իր անունով գրամ կոխել տուուաւ ու հոն ալ իրեն արքունիք շննեց : Իր Տիգրան անունով որդին՝ Վարաժ բարած իշխանին յանձնեց, որ զինուորական արուեստ սովորեցնէ, որով ան իշխանին ցեղին անունն ալ Վարաժունիք ըստեցաւ : Իսկ Արտաշամա աղջիկն ալ Միհրատասայ տուաւ, որ Պարսից Դարեհ թագաւորին նախարարներուն ցեղէն էր ու Վարաց բգեաշն, և զինքը բոլոր Պատուոսի կողմերուն կուսակալ գրաւ իրեն քաջութեանը համար :

2. Թէպէտև մանրամանաբար չենք դիտեր Արտաշէսին ըրած պատերազմները, բայց Խորե-

1. Ո՞վ է Արտաշէս Ա.

2. Արտաշէս Ա. ի՞նչ քաջութիւններ ըրած ունի.

նացին կ'ըսէ թէ արևելքէն ու արևմուտքէն այն չափ զօրսք ժողովեց՝ որոց և ոչ թիւը գիտէր : Ասանկ բազմութեամբ բոլոր Յունատանի տիրեց և զամենկը վախցուց : Միջերկրական ծովուն մէջ շատ նաւերառ կղզիներու տիրեց, և ուրիշ շատ աշխարհակալութիւններ ըրաւ : Կ'ըսէ Խորենացին թէ երբոր բազմութեամբ զօրաց քարոտ տեղէ մը կ'անցնէին, հրաման կու ատր Արտաշէս որ ամենքը մէկ մէկ քար նետէն, և անոցմութուր մը կը ձևանար : Սոյնպէս նեաւ արեւու ատէն եթէ ամենը մէկէն նետ նետէին՝ բոլոր գետինը շուրէ կ'ըլլար, կ'ըսէ : Այսօտի անթիւ բազմութեամբ շատ յաղթութիւններ ընելն եաքը մեծ փառքով ու յաղթանակով Հայաստան գարձաւ . բայց որովհետեւ կ'ուզէր Պարսկաստանի բոլորին տիրել ինքը հոն գնաց թագաւորելու, և իր Տիգրանի որդին՝ թագաւոր գրաւ Հայաստանի վայր : Բայց անկէց ալ նորէն զօրք ժողովից ու գետ՝ ի արևմտեան կողմերը սկսաւ արշաւել : Արտաշէս Յունատանին դաւնալու ատեն Արտեմիսի, Հերակլի ու Արտոնի պղնձէ արձանները գտաւ ու իրենց քուրմերով Արմաւիր զիկէց : Զգիտցուիր ինչ պատճառաւ զօրաց մէջ խուլութիւննենալով զօրքերէն սպաննուեցաւ, քսանին հինգ տարի թագաւորելէն վերջը :

3. Աղջէկ գիտանալով Խորենացին որօտարազդիի մը բերնէն եւած գովեսան աւելի զօրաւոր և աւելի յարգի է, քան թէ համազդիի մը բերնէն, թէպէտև և ձմարտախօս ըլլայ, անոր համար Յունաց մատենագիրներուն տուած գովեսար տուած կը բերէ, որոնց մէջն մէկ երկուքը գնենք

3. Օտար աղքաց մատենագիրներն ի՞նչ դուլեստներ կու տան Արտաշէս Ան վրայ .

հոս. «Վեհ ինձ Արտաշէս պարթև քան զմակեցնացին Աղեքսանդրը, զի կալով յիւրում աշխարհին, իշխաց Թէրայ և բարելոնի... Աւազը բաղդին. միայն թէ ՚ի տէրութեանն և ոչ՛ի փականատեան էր վախճանեալ: Ոս խօսքս կը զուցէ Պողեկրատէս յշն պատմագիրն: Կոյնուէս նաև Փէտոնիոս պատմագիրն կ'ըսէ. » Ամենայն թագառարաց հուժկու եղեալ պարթևն Արտաշէս... յԵլլեպատոսու և ՚ի Թրակէ զուրեքացն փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերեալ լինէր, և ընդ ծոլ հետևակելով... առհասարակ նմա Ելլաց մատուցանէր զահն»:

Բայց անհաջող խօսիլ ուղիւղով չենք կրնար չպարսաւել Արտաշէսի աշխարհակալութեան հոգին, որ ըստ ինքեան անիրաւութիւնու բռնաւորութիւն է, և կրթեալու քաղաքականացեալ թագառորի մը չի վայելէր. բայց աս ալ խստովանելի է որ հին ատեն իրաւունք ազդաց ըսածը և արդարութեան սահմանները ինչպէս որ պէտք է չեն հասկըցած, այս պատմաւուած է որ Արտաշէմներ, Նիւրուսներ ու Աղեքսանդրներ ամեն հին ազդի մէջ աւելի գանուած էն, քան թէ աս վերջն ատեններս. և ըսածնուս մեծ ապացոյց մը կրնաց ըլլալ Հառվեկական հզօր պետութիւնն որ անիրաւ աշխարհակալութեամբ, այսինքն ըստ արդի իրաւանց ազգաց բռնաւորութեամբ, այնչափ մեծցաւ, իրացաւ ու պարարտացաւ:

4. Արտաշէսի իր զօրքերէն սպաննուելուն վրայ որշք բան մը չենք կրնար ըսել, որովհետեւ որչափ որ իր բռնաւորութեանը համար կրնան սպաննած ըլլալ զինքը, նոյնչափ աւ կրնան ըսած ըլլալ զզքերը աս բանս իրենց անկրթութիւնէն, և կամ նաև առանձնականաց չարութենէն,

4. Արտաշէսի մահուանը պատմաս ինչ բան կրնայ ըլլալ, և մըն է իրեն մէկ երևելի խօսքը.

Աղեկ հանցեր էր Արտաշէս որ աշխարհակալութիւնն ընկելին վերջը՝ պէտք է նաև պահէլ և օգուտը քաղելը. և թէ ազդին հանդերձեալ վիճակին հաստատուն օգուտ մը չունի. անոր համար ըսաւ. « Աւազ փառացս անցաւորի »: Այս պատմաւաւ. Արտաշէս անփոյթ չեղաւ աղջին քաղաքական կառավարութեանն և ապագայ բարւոյն վրայ, այլ այն մտածելով ուղեց որ իր Տիգրան որդին աղէկ կրթուեի, ու չեղաւ այն աշխարհականներուն պէս որ իրենց մեռնելովն՝ տէրութիւնն ալ մեռուցին և կամ սաստիկ տկարցուցին:

ԴԱՅ Ժ.

1. Տիգրան Բ. և իր քաջութիւններն. — 2. Կրօնքի նկատմամբ ըրած կարգաւորութիւնն. — 3. Տիգրանայ և Միջորդատայ յաղթութիւնքը Հռովմացեցոց դէմ. — 4. Տիգրան Ասորոց կը տիրէ. — 5. Միջորդատ Տիգրանայ կ'ապաւինի. — 6. Հռովմացեցիք Տիգրանակերտի կը տիրեն. — 7. Միջորդատայ մահը. — 8. Տիգրանայ հաստութիւնը. — 9. Իր աղթութիւնները Գարիկանուի և կրասուի դէմ. — 10. Տիգրան նախազահութիւնը Պարսից կուտայ. — 11. Իր մահը ու կատարելութիւնքը:

4. Ցոյները և ուրիշ հարկատու ազգեր լսելով Արտաշէսի մահը և իրեն քովի եղած զօրաց ըրութը, սկսան տպաստամբիլ և Հայուսանի վրայ վաշշել. Տիգրան որ երկու տարիէ ՚ի վեր թագառութած էր, միանդամայն պատերազմական բաներու վարժ ըլլալով և հօրը պէս քաջ պատերազմով, մէկն զըրք ժողվեց և Միջորդատայ հետ

1. Տիգրան Բ. յաշորդելով Արտաշէսի իր քառութիւններովը ի՞նչպէս փառաւորուեցաւ.

մէկտեղ վրանին պատերազմի ելաւ, զամենքը ցրուեց հալածեց և սրտերնուն մէջ իր հօրը տպաւորած լամբ ժամանակ չժողուց որ հանեն, այլ աւելի հաստատեց:

Անկեց դասնալու ատեն կեսարիա հանդիպել լովարեց բոլոր Փոքր Ասիս, և բոլոր այն կողմը ըստ Տիգրանասոյ յանձնեց ու Պոնտոսի թագւորաննունց զինքը, որպէս զի ուրիշ անդամ չկարենան պատամբել: Այլև այլ պատերազմներով ուրիշ շատ աղքերու ալ ափեց, և ամեն պատերազմներու մէջ քաջութեամբ յաշթող դանուեցաւ. իր անունէն գրեթէ բոլոր աշխարհք կը դողպար, անանկ որ շատ օտարազդի պատմինել կարծեցին թէ Հայոց թագւորութիւնն Տիգրանէն սկսած ու Տիգրանով լմնցէր է: Հռովմայեցւոց պատմիներէն շատը կ'ըսէն թէ այլև այլգերի թագւորներ կը ծառայէին իրեն, որոնց մզէն չորսը միշտ քովով էին, և երբոր միով տեղ մը երթար, անոնք իրենց թագաւորական զգեստովն ոտքով կ'երթային չորս կողմէն. նյոնպէս նաև ամեն դատաստանական և քաղաքական հանդիմներու մէջ դիմացը ոտքի վրայ կը կենային:

2. Տիգրան աս պատերազմներէս վերջը Հայաստան դառնալով, մէհեաններ շնեց, և Յունաստանէն բերած Արամազդայ, Ամենասասայ, Արտեմեայ, Արտողիտեայ և Հերակլեսի արձանները այլև այլ քաղաքներ դրաւ, նախարարներուն ալ խստիւ ապսպեց որ կուռքերուն աղէկ պատիւ տան, և որովհետ Բագրատուններ ուղի բերան յանձն չառին կռապաշտութեան բաները, անոր համար Ասուդ անունով նախարարին լե-

2. Տիգրան Բ. ի՞նչ կարգաւորութիւններ ըրաւ նաև կրօնքի նկատմամբ.

զուն կորել տուաւ, աստուածները նախատեւ լուն համար, ասով մայածներն յանձն առին գոհէալ խոզի միս ոււաել:

3. Աս միջոցներուս գրգռուեցան ան սոսկալի ու երկարած պատերազմներն որ Միհրդատ ու Տիգրան ըրին Հռովմայեցւոց գէմ: վասն զի Միհրդատ որ Պանտոսի թագաւոր էր Տիգրանայ օդնութեամբն շատ թագաւորութիւններու տիրեց, և ինչպէս որ Հռովմայեցւոց պատմիները կը զրուցեն, քսաննուերկու թագաւոր կը ծառայէին իրեն, և ամենուն հետ իրենց լեզուովը կը խօսէր. անոնցմէ զատ տիրեց կապագովինյ, և հօն թագաւոր գրաւ իր Արիարաթ որդին, ու Արիոքարզանը որ Հռովմայեցիք թագաւորեցուցեր էին հալածեց: Բայց որովհէեան ուժ տարեկան էր Արիարաթ, Գորդիաս անունով իշխան մը ինամակալ գրաւ անոր:

Կապագովկացիք Հռովմայեցւոց պատմինեցան որպէս զի գան ազատեն զիրենիք Միհրդատասայ ձեռքէն. անոնք կուռնելիոս Սիլլաքաջ զօրապետը զրկեցին, որ եկաւ Արիարաթը հալածեց անկէ, ու Արիոքարզանը նորէն թագաւորեցուց:

Սաստիկ բարկանալով Միհրդատ Տիգրանայ իմացուց, որպէս զի օդնութիւն զիէ իրեն. Տիգրան ալ իր երկու երեւելի զօրագուշինները զրկեց, որոնց գալը երբոր լսեց Արիոքարզան Հռովմայիս, որովդիւրաւ տիրեցին Հայերը, և նորէն Արիարաթը թագաւորեցուցին Կապագովինյ: Աս տեմնելով Միհրդատ սիրտ աւաւ, և բաղմութեամբ զօրաց ու շատ նաւերով սկսաւ վանել Հռովմայեցինները և ուրիշ թշնամինները և

3. Տիգրան ու Միհրդատ մէկմէկու հետ միանալով ի՞նչ յաղթութիւններ ըրին Հռովմայեցւոց վրայ.

տիրելչատ տեղերու. բայց Հռովմայեցիք նորէն էրկու հարիւր հաջարի չափ զօրք դոկեցին Մի- հրդատասայ վրայ, որոնք շատ հեղյալթուեցան, և Միհրդատ անոնց Ակիւղաս անունով զօրապե- տը բռնեց ու բերնէն վար հայած ոսկի լեցնե- լով մեռուց, ուղելով ցուցընել թէ ինքը քան զՀռովմայեցիները աւելի ճոխ ու առատաձեռն է: Խցնակէն նաև Տիգրան ուրիշ տեղեր մեծամեծ չարդեր ըրաւ Հռովմայեցւոց զօրաց վրայ, մինչև որ եկաւ Լուկուլոս:

4. Երբոր Տիգրան Հռովմայեցւոց պատերազ- մներէն քիչ մը գագրեցաւ, Ակելեկացւոց թագա- լորութեան մէջ խոսովութիւն ինինալով իշխան- ները ուղեցին որ Տիգրանայ յանձնեն իրենց թագաւորութիւնը: Տիգրան շատ զօրքով գնաց Անտիոքոսը հալածեց հօնիկ, և գրեթէ բոլոր Ասորւոց երկրին տիրեց, և Անտիոքիայի մէջ իրեն տեղապահ դրաւ Մաղդատ անունով իշխան մը (79):

Ասորւոց թագուհին եռոլոր Ասորիները գրգռեց որ Տիգրանէն ապաստամբին: բայց Տիգրան շուտ մը անհամար զօրքով վազեց Ասորւոց վրայ, ա- առաւ Պտղոմէյիսը և Սեղնէն թագուհին բռնեց ու սպաննեց: Երբոր լսեցին Հրեայք որ Տիգրան ան կողմերն է, վախնալով որ չըլայ թէ Հրեաս- տանի վրայ ու վալէ դեսպան վրկեցին Տիգրա- նայ որ գթայ իրենց վրայ և չարիք մը չընէ. աս բանիս համար մասնաւոր աղաքանիներ ըրին Բա- գրատունիք ալ, և Տիգրան խոստացաւ չարիք մը չքննէլ իրենց Սղեքսանդրա թագուհւոյն:

5. Տիգրան Ակելեկացւոց տիրելէն վերջը եր-

4. Տիգրան ինչ պատերազմներ ըրաւ նաև Ա- սորւոց գէմ:

5. Տիգրան երբոր լսեց Ակելայի մահընչըրաւ.

բոր լսեց Ակելայի մահը՝ շատ զօրքով կազեց կա- պատօվկից վրայ, և տիրեց բոլոր աշխարհներն. Միհրդատայ ալ մասնաւոր գունդ դրկեց, որ անոնցմով շատ տեղերու ամիրեց Ասիյ մէջ. բայց երբոր կիզեկոն քաղաքը պաշարեր էր զօրաց պաշարը լմննալով յաղթուեցաւ Լուկուլոսուն. դարձեալ ուրիշ անդամ մը պատերազմի տաեն զըլքին մէջ խովութիւն ինկնալով զօրավալնե- րէն շատն Հռովմայեցւոց կողմը անցան. ասով Միհրդատ հարկադրեցաւ Տիգրանայ քով փախ- չել, որուն վրայ սասափի բարկացաւ Տիգրան, ու երկու տարի չուզեց աեմնել:

6. Լուկուլոս իմանալով որ Տիգրան Միհրդա- տայ բարկացէր է, գեսպան զրկեց Տիգրանայ որ Միհրդատը իրեն մատնէ. բայց Տիգրան որ աղէկ գիտէր բարկութեան ժամանակը և շափը, ետ համբեց գեսպանը. Միհրդատայ ալ տասը հա- զար զօրք տալով Պոնտոս զրկեց: Նայն միջոցին Լուկուլոս պաշարեց Տիգրանակերպը, որուն վրայ եկաւ Տիգրան երեք հարիւր հաջար զօր- քով. բայց աեմնելով Հռովմայեցւոց սակառու- թիւնը, արհամարհէ լուվը ըսաւ, « թէ օր գեսպան են եկեր՝ շատ են, իսկ թէ որ թշնամի քիչ » . աս ըսելով անհոդ եղաւ պատերազմի պատրաս- տուելու, որով Հռովմայեցիք միրու տոփն ու յանարծակի վագեցին Հայոց վրայ, և Տիգրանը փատշընելով Տիգրանակերտն ալ առին: Տիգրան իմանալով իրեն ամբարտաւանութեան սիրալ- մուկըր, մէկէն հեծելազօրիք վրկեց Լուկուլոսի եաւելն. անոնք համբան Հռովմայեցւոց հեծելա- զօրաց հանգիւելով չարաչար կոտրեցին: Տիգրան ուրիշ շատ տեղեր ալ յաղթելով Հռովմայեցւոց,

6. Հռովմայեցիք Տիգրանակերտին ինչպէս ամիրեցին ու ինչպէս ստիպուեցան թողլու.

Հայաստանէն գուրս հանեց ու մինչև կապա-
դովիս հալածեց: Վերջը նորէն սպարապետ
դրաւ Միհրդատը, որ Հռովմայեցիներէն վրէժ
առնելով շատ անդամ յաղթեց աննոց և բոլոր
առջի կորսնցուցած տեղերն տիրեց: Կոյն մի-
ջոցին Տիգրան ալ կապագովկիսյ վրայ վազելով
հոնկեց ալ հաւրծեց Հռովմայեցիները ու նորէն
տիրեց կապագովկիս:

7. Տիգրանայ ու Միհրդատայ ըրած յաղթու-
թիւններուն լուրը երար Հռովմ հասաւ, ասա-
տիկ շփոթեց ու բարկացուց Հռովմայեցիները,
որոնք Լուկուլոսը ետ կանչելով տեղը Պամպէո-
սը զրիեցին: Միհրդատ շատ անդամ անոր դէմ
ալ պատերազմը ընելով երբեմն յաղթեց երբեմն
յաղթուեցաւ. բայց իր կաստոր անունով նա-
խարարն Հռովմայեցոցմէ կաշառք առնելով
ապատամեեցաւ իրմէ. նշյալէս նաև իր փառաշ-
մու և ինքնահաւառն Փառնակ անունով որդին
ապատամեեցաւ, և Հռովմայեցոց օգնութեամբն
հօրը տեղ թագաւոր եղաւ: Միհրդատոր բերդի
մը մէջ ամրացեր էր զափնալով որ ըրլայ թէ
Հռովմայեցոց ձեռքը ինկնայ, բալոր ընտանեացը
թոյն տուաւ, ինքն ալ իր թուրին վրայ ինկնա-
լով մեռաւ:

8. Ան միջոցին որ Փառնակ Միհրդատէն ապա-
տամբէր էր, Տիգրանայ Տիգրան որդին ալ իր հօր-
մէն ապստամբէլով Պարսից թագաւորին օգնու-
թեամբն եկաւ Արտաշատ քաղաքը պաշարեց.
բայց Տիգրան հալածեց զՏիգրանը, ան ալ նեղը
մանելով գնայ Պամպէոսի ապաւինեցաւ և անոր
առաջնորդէլով Հայաստան մարաւ Պամպէոս:

7. Միհրդատ ինչպէս մեռաւ.

8. Տիգրան ինչո՞ւ հաշտութիւն խօսեցաւ Պոմ-
պէոսին հետ.

Առ ձախորդութիւնները տեսնելով Տիգրան
իմացաւ որ գժուարին է Պամպէոսի դէմ դնել,
ուստի հաշտութիւն ըրաւ հետք այլ և այլ աե-
զեր տալով Հռովմայեցոց:

9. Տիգրան իր տեղը թագաւորեցուց իր Ար-
տաւազդ որդին, թագաւորութեան երեսուն և
երրորդ տարին: Պամպէոսի աեղը զրիեցին Հռով-
մայեցիք Գաբրիանոսը. և Տիգրան Հռովմայե-
ցոցմէ վրէժ առնելու համար Գաբրիանոսին
վրայ պատերազմի ելաւ, ու շատ աեղեր նորէն
ձեռքէն առաւ. Գաբրիանոս հաշտութիւն խօսե-
ցաւ, և ծածուկ ետ տուաւ Միհրդատայ աղաքը
ու ինքը Եղիպատոս գնաց:

Հռովմայեցիք իմանալով Գաբրիանոսի յաղ-
թուիլը և խարդախութիւնը, Կրասոսը զրիեցին.
անիկայ նախ Երուսաղեմի վրայ երթալով անբաւ
հարստութիւն առաւ Երուսաղեմին, ու Տիգ-
րանայ վրայ պահու գալ. բայց Տիգրան Պարսից
հետ միաբանած քաջութեամբ պատերազմելով
Կրասոսը մեռուցին և բոլոր զօրքը ցրուեցին,
հետը ունեցած հարստութիւնները առին: Անոր
մեղը Ասորեստանի Կուսակալ դրին Հռովմայե-
ցիք նախ Կասսիոսը, վերջը Բիբռուլոսը, որոնց
հետ շատ պատերազմներ ըրին Հայերը ու շատ
անդամ յաղթեցին. բայց վերջապէս Հռովմայե-
ցիք տիրեցին Ասորեստանի մէծ մասին, որովհե-
տեւ Տիգրան ալ ծերացեր էր:

10. Միհրդատ մեռաւ, և Տիգրան տեսնելով
որ իր օրդին Արտաշատը իրեն հոգին ու քաջու-

9. Տիգրան ինչ յաղթութիւններ ըրաւ Գա-
բրիանոս և Կրասոս Հռովմայեցոց զօրավարնե-
րուն դէմ.

10. Տիգրան ինչո՞ւ նախագահութիւնը Պար-
սից տուաւ.

թիւնը չունի, ուղեց Պարսից Արշէզ թագաւորին հետ հաշոռութիւն ընել և անոր հետ մէկ-
տեղ Հռովմայեցիները հարածել բայց որովհետեւ
առանց նախագահութիւնը անոր տայու չէր
կրնար ըլլալ աս բանս, և աեմնելով որ իր մեռ-
նելն վերջը նախագահութիւնը պիտի առնեն
Պարսիկք, իր կամբով տուաւ նախագահութիւ-
նը Արշէզին, որ շատ զօրք օգնութիւն դրէց
Տիգրանին. ան ալ զօրավար դրաւ Ոչտունեաց
Բարզագրան անունով քաջ նախարարը. ամիկայ
բոլոր Ասորւոց Երկիրը նուամեց, եաբը Անտի-
գոնոսին հրաւիրելով Հրէաստան գնաց. և հոն
Անտիգոնոսի ինոստացած պարգևն սիրյոն հա-
մար Հիւրկանոսը և Փասայելոսը, որ նոյն միջո-
ցին Հրէաստանի կը թագաւորէին, Երգմոնիով
և մեծամեծ դաշինքներով կանչեց ու խարդա-
բութեամբ բռնեց, որպէս զի Անտիգոնոս կարե-
նայ թագաւորել. անկէ վերջը բոլոր Հիւրկանո-
նոսի հարստութիւնն ալ կողոպտեցին: Խարզա-
փրան Գնէլ անունով քաջ զօրավարը բազմու-
թեամբ զօրաց հոն թողով՝ ինչը Հայաստան
դարձաւ, ու հետք բերաւ Հիւրկանոսը և շատ
գերիներ: Վերջէն Հռովմայեցիք նորէն զօրք
զեւելով Հայերը Երբեմն յաղթեցին Երբեմն
յաղթուեցան, մինչեւ որ բոլորովին Հռովմայե-
ցեք տիրեցին Հրէաստանի:

11. Տիգրան յիսունըօրս տարի թագաւորե-
լէն վերջը՝ ութսունըհինգ տարեկան մեռաւ, բո-
լոր կեանկը պատերազմով անցընելով իր կենաց
մէջ կը աեմնուի անպարտէլ արիութիւն, ան-
խոնջ աշխատասիրութիւն, վեհանձնութիւն
մտաց, ինչպէս արքուոց՝ Միհրդատը թշնամուոյն

11. Տիգրան քանի տարի թագաւորէց և ինչ
կատարելութիւններ կրան կը փայլին.

ձեռքը չտալուն մէջ, խոհականութիւն՝ որով
գիտէր ըստ տեղոյն և ըստ պարագային նաև
թշնամոյն խոնարհէլ, ինչպէս Պոմպէոսի հետ
հաշտութիւն խօսելու մէջ և Արշէզին նախագա-
հութիւնը տալու ատեն. կրօնից սէր, և ուրիշ
գովելի կատարելութիւններ: Տիգրանայ ըրած
սիալմունքներն աս էին՝ որ երբեմն չափէն աւե-
լի իր վրան վատահանալով պատշաճ դժուշու-
թիւնները ըրբաւ, և քիչ մը ատեն իր մեծ փառ-
քովը շացաւ:

Եթէ Տիգրան կենացը մէջ թշուառութիւն մը
ունեցաւ՝ իրեն արժանաւոր յաջորդ չունենալն
է: Ֆէ որ յաջորդը չկրցաւ իրեն քաջութեամբը
կենդանի պահէլ Տիգրանայ արդիւնքը, ազգը
իրեն երախատագիտութեամբը պարտական է
կենդանացնել իր անմահ արդիւնքները:

Դ.Ա. Ճ.Ա.

1. Արտաւազդ և իր զերութիւնն. — 2. Իր մահը և ըրած
վասն. — 3. Գրուածքն և գովեստը:

1. Տիգրան Երկրորդին յաջորդեց Արտաւազդ
որ հօրը պէս քաջութեան եսեւէ ըրլազով՝ ինք-
նիքը կերուխումի և զրօսանաց տուաւ, ան պատ-
ճառաւ բոլոր թշնամիներն սկսան զօրանալ, մա-
սաւանդ Հռովմայեցիք, որ Անտոնիոսի առաջ-
նորդութեամբն Ասորւոց Երկրին և ուրիշ շատ

1. Անտոնիոս ինչպէս բռնեց Արտաւազդը
ու Հայաստանի տիրեց.

արդպերու աիրեցին։ Աս տեսնելով ազգը սկսաւ արարնջալ, անով Արտաւազդ խելքը քիչ մը գլուխը ժողվեց, և ասդիէն անդիէն զօրք ժողվելով գէմ դրաւ Հռովմայեցւոց, բայց որովհետեւ հաստատոն քաջութեան և արիութեան միրա չունէր, անոր համար ալ չկրցաւ մինչև վերջը պաշտպանէլ իրեն ժաւանգութիւնը։ Երբոր Անտոնիոս ուղեց Պարսից վրայ պատերազմի երթալ ոգնութիւն ինդրեց Արտաւազդէն։ Արտաւազդ թէպէտ և արտապուսա օգնեց Անտոնիոսին, բայց ծածուկ աւելի Պարսից կողմն էր, որով Անտոնիոս չարաչար յաղթուեցաւ ու Եղիսակոս փախաւաւ։ Վերջէն Արտանիոս իմանալով Արտաւազդայ ըրած խարէութիւնն. շատ զօրքով վրան պատերազմի եկաւ։ բայց փոխանակախ քաջութեամբ պատերազմելով՝ վատութիւնը ձեռք առնելով երդունքով ու խարդախութեամբ կանչեց զԱրտաւազդը ու ոսկի շղթայի զարնելով Եղիսակոս տարաւ ու հոն Կղէոսպատրա թագուհոյն տուաւ։ Վերջը Խոքը Հայաստան դառնալով Ստորին Հնյքը իր Աղքեսանդր արդուն յանձնեց, վերինն ալ Մարաց տուաւ, և իրեն անունովն ալ դրամ կոխեց վրան ասանկ դրսմած։ Աւագին Յաղթու Հայաստանի։

2. Արտաւազդ քիչ ատեն մնաց գերութեան մէջ. վասն զի երբոր Անտոնիոս երկու իրեք տարիէն Օգոստոսին յաղթուելով ինք զննքը սպաննեց, աս բանիս Կղէոսպատրա սաստիկ տրամած կատաղութէնէն Արտաւազդայ գլուխը կարել տուաւ։ Իրաւ Արտաւազդ քիչ թափառութիւն ըրաւ, բայց իրեն մեղկութեամբը ազգին անանկ վնաս մը ըրաւ որ մինչև վերջը մնաց.

2. Արտաւազդ ինչպէս մեռաւ ու ինչ վեաս ըրաւ ազգին իր մեղկութեամբը.

այսինքն հակատու ըրաւ ազգը Հռովմայեցւոց և զինքն ալ մշտնինաւոր գերի Խորենացին, որուն ճշմարտախօսութիւնը ամենուն յայսնի է՝ այսպէս կը զոռւցէ։ « Բայց այլ ոչ ինչ գործ արութեան քաջութեան եցոյց այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնապուրաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զիսզա արածելով (որսալով), զիմաստութեան և զըածութեան և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ արդարեորվայնի մնելով »։

3. Արտաւազդայ վրայ Հռովմայեցւոց պատմիները շատ գովեստով կը խօսին յիշելով իրեն վէջուագիտութիւնն, ոտաննաւորներն ու Ճարտասանական քանի մը Ճառերն, որոնց համար կ'ըսէ Պլոտապաքոս թէ մինչև իր ատենը կանեղեր։ Աս վկայութիւնս Խորենացւոյն խօսքին գէմ կ'ելլէ, ինչպէս որ յայսնի է վերի առաջբերած խօսքերէն։ բայց արարակոյս չկայ որ Խորենացին ատոնք կ'ըսէ Արտաւազդայ թագաւորութեան միջոցին համար։ իսկ օտար պատմաց Արտաւազդայ ուստումնավիրութեանը համար տուած գովեստը շատ հաւանական է որ Արտաւազդ իրեն գերես յատկութեան սաենը ստացած ըլլայ աս գովելի յատկութիւնը, իբրև իրեն գառն գերութեանը միակ միկթարութիւնն ու գեղեցիկ պարապմունք մը, ինչպէս աս բանիս օրինակը ունինք այլ և սյլ թագաւորաց վրայ։ Ասով Խորենացւոյն տուած պարսաւանքը օտար պատմւաց գէմ ելլէր, որով և Արտաւազդ պատմութեանց մէջէն իր արատաւոր անունը սրբելով, վերջի իմաստութեան գնացքով գիւցազն և վէհանձն հօր որդի ըլլալը կը ցուցընէ։

3. Արտաւազդայ վրայ ինչ գովեստի բան մը կը յիշատակեն Հռովմայեցի պատմինէ ըն։

ԴԱՍ ԺԲ.

1. Արշամ Ստորին Հայոց կը թագաւորէ. — 2. Հայաստանի հարկատու ըլլան և Արշամն գլխաւոր արդիւնքն . — 3. Արգարու թագաւորեն՝ Քրիստոսի Տնունքն . — 4. Հռովմէ երթան . — 5. Հռովմայեցոց հետ թշնամանն : Պարսից խոռվութիւնն . — 6. Արգարու Քրիստոսի հետ ծանօթմանան . — 7. Իր մահը :

1. Երբեոր Արտաւազպայ գլուխը կտրելին , Արշամ Տիգրանայ եղբօր որդին Հռովմայեցոց ձեռքէն փախչելով Պարսից Արշէղ թագաւորին հետ միաբան Մարտէրը հալածեց և Հռովմայեցոց ալ մեծ ջարդ մը տոււաւ . ասով Արշէղ վերին Հայոց տիրեց , Արշամ ալ Ստորին Հայոց մինչեւ կեսարիա և Սորոցոց մէկ մասին :

2. Արշամ լսելով թէ Հռովմայեցոց վայ թագաւորերէ Ե Օգոստոս կայսր , գեսպան զիկեց որ Արտաւազպայ երկու տղաքը ետ տայ . բայց երբոր տեսաւ թէ լսելի չեղաւ իրեն ինդիրքը , նորէն գեսպան զիկեց , խոստանալով որ տարուե տարի հարկ տայ , ու ասիկայ եղաւ Հայոց հարկատուութեան սկիզբը . Օգոստոս յանձն տառա աս դաշինքը : Քանի մը տարի վերջը երբոր Սորոց երկիրն եկաւ , վերին Հայոց բնակիչները ձանձրացած Պարսից ըրած բռնութիւններէն ,

1. Արշամ ի՞նչ կերպով կրցաւ Ստորին Հայերը Հռովմայեցոց ձեռքէն աղատել .

2. Հայաստան ի՞նչու հարկատու եղաւ Հռովմայեցոց ու Արշամայ գլխաւոր արդիւնքը ո՞րն է .

Օգոստոսին ինդիրեցին որ Արտաւազպայ որդին Տիգրանը իրենց թագաւորը դնէ , ինչպէս որ կատարեց Օգոստոս : Արշամ թագրատունեաց մշջն մէկը նահատակեց , մէկաշնոք ալ սափակեց որ կռապաշտութիւնը յանձն առնուեն . անոնք մահուընէ աղատելու համար յանձն առին բոլոր ընտանիքով : Արշամ քաննուիրեք տարի թագաւորելին վերջը մեռաւ : Արշամ եղաւ մէր այնպիսի թագաւորուներէն մէկը որ իրեն ըրած բարեկովը բռուր Հայոց սիրոյն , համարմանն ու երախտագիտութեանը արժանաւորեցաւ . վասն զի ամբողջ աղջի մը գերութեան կապերը խոկեց քակեց ու իրեն առջի երջանկութեան ու փառաւորութեան մէջ համատեց . ու աս բանս այնպիսի կերպով մը ըրաւ որ գովութեան ու զարմացման արժանին է . նախ լւա ընտրեց թէ որու հետ բարեկամութիւն պիտի ընէ ու ինչ կերպով , երկրորդ՝ աղէկ գիտցաւ քիչ մարդովով ու քիչ արիւնչեզզութեամբ մեծ գործողութիւնն ընել . ետքը մեծ խոհեմութեամբ թշնամին բարեկամ գարձուց . և ըրած ապստամբութիւնը օրինաւոր երկցուց . որով և կրցաւ խաղաղութեամբ վայելել և վայելեցնել իր յաջորդներուն ան մեծազօր տերութեան ժառանգութիւնը :

3. Արշամայ յաջորդեց իր որդին Արգար , որուն վայ շատ գովեստներ կուտան Յունաց և Լատինացոց մատենագիրներն . անոր համար Հայերն ալ Աւագ այր ըսին իրեն , բայց Յոյներն և Ասորիները չկրնարով շիտակ հնչել . Ապակար կամ Արգար կ' ըսէին , ուսկից սովորութիւնն մաց Արգար ըսէլու : Արգարու թագաւորութեան առջի տարիները Քրիստոս Տէրն մէր ծնաւ

3. Արգար ովէ ու ի՞նչնչանաւոր բան հանդիպեցաւ իրեն թագաւորութեանը միջոց .

Հուեաստանի մէջ, նոյն միջոցին Օդոսառոս կայսրն
աւ հրաման հաներ էր աշխարհագիր ընելու բո-
լոր իր տէրութեան մէջ. միանդամայն հրաման
հանեց որ ամեն մէհեաններուն մէջ դրուի իր
արձանը. Հերովդէս որ Հուեից կը թագաւորէր
ուզեց որ իր արձանն ալ մէկաեղ կանդնուի
Հայոց սահմանները, բայց Արքար յանձն չառ-
նելով՝ սասափիկ պատերազմ ըրաւ Հերովդէսի
եղքօր որդւոյն հետ, որ իրեն գէմ եկեր էր, ու
բոլոր ջարդեց անոր զօքքէրը: Նոյն օրեւը մեռաւ
Հերովդէս, ու տեղը անցաւ Արքեզայս:

4. Հերովդէսին կուսակիցները անենելով որ
Արքարու պատերազմով չկրցան յաղթել, ուզե-
ցին վրան ամբաստանութիւններ ընելով Օդոս-
տոսի աչքէն հանել. բայց Արքար Հռովմ գնաց,
և հոն իրեն սիրելի և իրաստուն կերպովն անանկ
հաճոյ եղաւ ամենուն, և մանաւանդ Օդոստոսի
որ գժուարաւ թուրոց զինքը եր հայրենիքը
դառնալու: Պրոկոպիս յշն պատմագիրը կը
պատմէ թէ Արքար այսպիսի վարպետութիւն
մը բանեցուցած ըլլայ որովէս զի Օդոստոս զինքը
ազատ թոյուու: Օր մը Արքարի ծառաներուին
պատի կ'երթայ, ու շատ մը ողջ վայրի կենդանի-
ներ բռնելով Հռովմ կը բերէ, և իւրաքանչեւրին
բանուած տեղէն մէկմէկ քիչ հող ալ չետերին
կ'առնէ: Երբոր իրիկունը Օդոստոս թէտարոն
մտաւ, Արքար հրամայեց ծառաներուն որ բե-
րած հողերնին զատ զատ զնեն ու վիրջը կենդա-
նիները միաբան արձգիւն. Երբոր աս բանս ըրին
մէկն իւրաքանչեւր կէնդանի ինչ հողի վրայ որ
մեծած ու մասծ էր հոն գնաց անշփոթ. զար-
մացաւ Օդոստոս աս բանիս վրայ ու պատմառը

4. Արքար ինչո՞ւ Հռովմ գնաց ու Պրոկոպիս
ինչ կը պատմէ իրեն վրայ.

հարցուց Արքարու. և իմանալով հանձարեղ
թէպաւորին միքը հրաման տուաւ որ պա-
տուով աեղը դառնայ, թէպէտե մէծ վիշտ եղաւ
աս բանս Օդոստոսի:

5. Օդոստոսի մեռնելով վիրջը երբար Տիբեր
տեղը անցաւ, Արքար իննդակցութեան գեսպան
զրկեց իրեն. բայց անիկայ փոխանակ գեսպան-
ները պատուելու պատմէց: Աս բանի վրայ
սաստիկ նեղացած Արքար՝ սկսաւ պատերազմի
պատրաստութիւն տեսնել, ու Եղեսիան ամրա-
ցընելով հոն փոխադրեց աթոռը. բայց աս դի-
տաւուութեանը արդելք եղաւ Պարսից Արշա-
ւիր թագաւորին մահը, որուն աղջը մէջ խռո-
վութիւն ինկալով հարկ եղաւ որ Արքար
Պարսկաստան Երթայ զիրենք խաղաղցընելու
համար: Միայն Արքարացւոց Արեւ թագաւորին
օդնեց, որով ալ Հերովդէս չորրորդապետին
յաղթէց:

6. Պարսկաստան Արքարու վրայ բորստութիւն
եկաւ, և Երբոր ամեն տեսակ մարդկային հնարք-
ներէ յոյս կարեց՝ լսելով Քրիստոփի հրաշքնե-
րը, գեսպան զրկեց իրեն՝ աղաշելով որ գայ զին-
քը բժշկէ: Խոկ իրեն Քրիստոսի հետ ծանօթա-
նալը աս կերպով եղաւ:

Երբոր Հերովդէս Արքատէն յաղթուեցաւ Ար-
քարու օդնութեամբը, Հերովդէս ուզելով Ար-
քարէն աս բանիս վրէժը առնել՝ զրպարառու-
թիւններ ընելով ամբաստանէց զինքը Հռովմայե-
ցւոց առնէ: Արքար ինք զինքը արքարացընելու
համար գեսպաններ զրկեց Երուսալէմի մէջնեղած

5. Արքար Հռովմայեցւոց հետ ինչպէս աւ-
րուեցաւ.

6. Արքար Քրիստոսի հետ ինչպէս ծանօթա-
ցաւ ու բորստութիւնը ինչպէս անցաւ.

Հոռվիմյեցւոց զօրավարին. հոն դեսպաններն
աւսան ու լսեցին Քրիստոփ ըրած հրաշքները,
ու գարձան եկան պատմեցին թագաւորին: Ար-
տարու երկնային ու երկրաւոր խմասութեամբ
լցուած սիրտը՝ ծագեց մէկէն աստուածային
հաւատոյ պայծառ լցու, որով խսկցն հաւա-
տաց թէ Քրիստոս ըսածնին կամ Սասուծոյ որ-
դի և և կամ երկնային բարերար աստուածնե-
րէն մէկն որ իրեն ըրած գերածայրեալբարինե-
րով լցարդիկ Աստուծոյ հետ պիտի միւտորէ:
Ուստի թուղթ մը գրեց Քրիստոսի, ու իր Անանէ
սուրհանդակին ճեռքեց լրկեց, ազաքէլով որ
դայ զինքը բժշկէ ու Եղեսին բնակի հանդիսու-
դեսպաննին հետ պատկերահան մ'ալ լրկեց, որ
եթէ Քրիստոս չդայ, գէմքը օրինակէն ու բերեն:
Դեսպաններն հասան Երուսալէմ ու կուզէին
Քրիստոսի հետ տեսնուիլ ան օրը՝ որ Քրիստոս
յաղթանուկով Երուսաղէմ կը մտնէր. Ուստի
Փիլիպոս տառելցն քովը մտենալով ինդրե-
ցին որ Քրիստոսի հետ տեսնուին: Քրիստոս մէծ
ուրախութիւն ցուցընելին ետքը՝ հրամացեց
Թովմաս առաքելցն որ Արքարաւ թղթին պա-
տասիանը տայ, որոն մէջ նախ իրեն հաստա-
տուն հաւատըք գովլէն ետքը՝ խօսր կու տայ
որ իր յարութենէն վերջը առաքեալներէն մէկն
կը զըկէ զինքը բժշկելու համար: Ան միջոցին
պատկերահանը անկիւն մը քաշուած ետեկ էր
Քրիստոսի գէմքը օրինակելու. բայց երկար ա-
տեն աշխատելին վերջը չկրցաւ օրինակել. ան
ատեն կանչեց Քրիստոս զպատկերահանը, ու
ձեռքը լաթ մը առած երեսին վրայ բռնեց, մէ-
կէն ապաւորուեցաւ իր աստուածային ու լու-
սաւոր գէմքը լաթին վրայ: Դեսպաններն մէծ
ուրախութեամբ գարձան. ու թագաւորին հետ
մէկտեղ կ' սպասէն խոստացուած առաքելցն

դալսաւեանը, որ քիչ ատենէն եկաւ, և էր Թա-
գէսս առաքեալն: Երբոր Թագէսս առջի անգա-
մուն ձեռքը գրաւ Արքարու վրայ, մէկէն սրբե-
ցաւ թագաւորին բորոտութիւնն ու բոլորովին
բժշկեցաւ. վերջը մղտեց զթագաւորը ու բո-
լոր Եղեսացիքը և իրեն աւզը եպիսկոպոս գնե-
լով Արդէ անսանով մէկը՝ որ թագաւորին Խոյը-
արարն էր, ինքը գնաց որ Հայաստանի միւս
տեղերն ալ քարողէ քրիստոնէական հաւատ-
քը (32):

7. Արքար քրիստոնեայ ըլլալէն ետե երկու ի-
րեք տարի ալ ապրեցաւ ու մեռաւ խաղաղու-
թեամբ, երեսունութը տարի թագաւորելէն
վերջը: Այնպիսի յիշատակ մը թողուց Արքար
որ մէկ թագաւոր մը չէ ունեցած: Արքարու
հեղութիւնը, խոհեմութիւնը, խոնարհութիւ-
նը, պարկէշտ վարքը և ուրիշ առաքինութիւնն-
ները կը քարողէն իրեն պատմութիւնն և իրեն
վախճանն, որով երկրաւոր թագաւորութենէն
երկնաւոր փառքը և յաւիտենական ուրախու-
թիւնը հրաւերուեցաւ:

7. Արքար քանի՞ տարի թագաւորեց ու ի՞նչ
բարի համբաւով մեռաւ:

ԴԱՍ ԺԳ.

1. Անանէ ու Անատրուկ կը թագաւորեն. — 2 Անտարուկ Եղեսից կը տիրէ: Իր անգիտութիւնն. — 3. Իր քաղաքաշնութիւնն և մահը. — 4. Երուանդ. — 5. Իր զգուշութիւնն և պատրաստութիւնը. — 6. Արտաշեմի պատերազմն: Երուանդայ մահը. — 7. Արտաշեմի թագաւոր պատկուխն. — 8. Երուազայ մահը. — 9. Հայաստանի ծաղկածութիւնն. — 10. Ալանաց յաղջօրաց չորս մասն բաժնուին. — 11. Արտաշեմի որդին: Արտահայ մահը Զօրաց չորս մասն բաժնուին. — 12. Հռովնացեցոց դեմ պատրազմն. — 13. Արտաշեմի մահը և իր հանդիսաւոր թաղումն. — 14. Ամբատ Բաղրատունիին գովիստն:

1. Աբգարու մեռնելէն վերջը թագաւորութիւնը երկու բաժնուելով մեծ շփոթութիւնն ինկաւ ազգին մէջ, վասն զի Անանէ Աբգարու որդին՝ Հայաստանի մէկ մասին տիրեց, և Անատրուկ Աբգարու քեռորդին մէկալ մասին տիրեց մի և նոյն ժամանակի մէջ, իրարու հակառակ: Անանէ որ հօրու տեղը Եղեսիա թագաւորեց՝ Քրիստոնէութիւնը Քիրյուց ու սկսաւ մեծ հեանները բանալ և քրիստոնէայքը մարտիրոս ընել, ինչպէս Աբգէ Հոյրապէտը և ուրիշները: Քայց ինքն ալ Աստուծմէ իրեն պատիմը դտաւ. վասն զի իր նոր շինած պալատին մէջ սիւն մը կանգնել տալու ատեն՝ սիւնը վրան ինկնալով մեցուց զինքը:

1. Անանէ ով է ու ինչպէս մեռաւ.

2. Անատրուկ լուլով Անանէի մահը՝ մեծ ու բախութեամբ մէկէն զօրք ժողվեց ու սկսաւ Եղեսիոյ վրայ դաւ. երբոր լսեցին ասքանս Եղեսայիլք դեսպան զիկեցին ըսելով որ սիրով կ'ընդունին զինքը թէ որ իրենց քրիստոնէական հաւատքինչի քովիչը ասքանս երդմունքով յանձնա առաւ Անատրուկ, բայց ետքենը երգմանը դէմ ըրաւ ու նաշտակեց Թագէսու և Բարդուղիմի մէրսու կոյսը, որ առաջնին մարտիրոս կոյսը եղաւ, և ուրիշ շատ մարդիկ, բոլոր Աբգարու ընաանիքն ալ թէ անցուց, և միայն աղջիկներն ու Աբգարու կինը որ Հեղինէ կ'ըսուեր և իրեն ալ շատ բարիքներ ըրած էր ասպեցուց: Ասոր համար կ'ըսեն թէ շատ բարեպաշտ ըլլալով չուզեց կռապաշտից մէջ բնակիլ, ուստի Երուսաղէմ գնաց ու Հոն սովի մը ատեն բոլոր ունեցած ծախիւնով բնակչուց յորին կը բախնէր: Ամը ըրած բարեց համար գերեզման մը շնեցին Հրեայք Երուսաղէմայ դրան առջեւ:

3. Անատրուկ թէպէաւ քրիստոնէայքը հաշոծեց, բայց շատ շինութիւններ ալ ըրաւ լնդդհանուր Հայաստանի մանաւանդ Մըննայ մէջ վասն զի ասքալաքս Երկրաշարժէ վնասած ըլլալով, բոլոր քաղաքը փլցուց ու նորէն շնեց շատ գեղեցիկ. և քաղքեն մէջ իր արձանը կանգնել տուաւ, ձեռքն ալ դրամ մը, բաւէ ու վելով թէ բոլոր ունեցածը ծախեր է քաղքին շինութեանը համար և միայն ան հնացեր է: Անա-

2. Անատրուկ խարդախութեամբ Եղեսիա մանալով ինչ անդթութիւններ ըրաւ ու ինչ գիտելիք կայ Հեղինէ թագուհւոյն վրաց.

3. Անատրուկ ինչ շինութիւններ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

տրուկ երեսունը չորս տարի թագաւորելէն վեր. ջը որսի մէջ պատահածամբ նետով զարնուելով մեռաւ։ Այս տէմնուել որ Սանաւրուկ մասնաւոր ախորժակ ունի եղեր քաղաքական շինութեանց։ Բնութեամբ խորամանկ և ճարտար եղած պիտի ըլլայ որ կըցէր է այնքափ տարի թագաւորել իրեն երդմանը դէմն ընկէն վերջը։ Բայց Սանաւրից մէծ անարդանք է իրեն երդմանը վրայ հաստատուն չկենան, անդժութեամբ Արքարուց եղը թրէ անցընելն, և իրեն աղջիկը սպաննելը (67)։

4. Սանաւրուկէն եաբը բէմ մը ատեն շփոթեցաւ բուն օրինաւոր թագաւորութեան յաջորդութիւնն. վասն զի Սանաւրկոյ ատենը Արշակունի կին մը երկու որդի ունէր Երուանդ ու Երուազ անունով։ Երուանդը Կարիճ, հսկայ, անուշ բարբով ու ճարտար մարդ մ' էր, որ Սանաւրկոյ առենի շատ քաջութիւններ ըրած ըլլալով ամենուն սիրելի եղած էր. ուստի երբոր Սանաւրուկ մեռաւ՝ քաջր կերպերով և առատաձենութեամբ բոլոր նախարարներուն սիրալ իրեն քաջը և թագաւոր եղաւ Հայոց կոսոյ, առանց թագրատունի ասպետ պատկուելու։ Բայց վախնալով որ ըլլայ թէ Սանաւրուկին տղաքը իրեն թագաւորութեան արդելք ըլլան՝ զամէնքն ալ թրէ անցուց բաց ՚ի պղտիկ աղէ մը որ Սմբատ Բագրատունին մէծ դժուարութեամբ Պարսկաստան փախուց, և աղուն անունն էր Արտաշէս. բայց Երուանդ իմանալով վանս և միշտ վախի մէջ ըլլալով որ որ մը յանկարծ թագաւորութիւնն կրնայ ձեռքէն առնել, շատ

4. Սանաւրուկին մեռնելէն եաբը ի՞նչպէս չփոթեցաւ թագաւորութեան յաջորդութիւնը ու ո՞լ է Երուանդ։

թղթեր գրեց Պարսից Դարեհ թագաւորին և Սմբատին, որ Արտաշէս մեւցննեն, ըսելով որ Մարտ աղայ է ու Արշակունի չէ։ բայց ինդիբեքը լսելի չեղաւ։

5. Երուանդ բարակամիտ և կանխատես մարդը ըլլալով յայտնի կը գուշակէր թէքանի որ Արտաշէս ողջ է անկարելի է իրեն թագաւորութեան հաստատութիւնը, անոր համար սկսաւ պատրաստութիւններ տեմնել, աս պատճառաւ օգտակար համարեցաւ բոլոր աղքին իշխանութիւններն ձեռքը առնել։ Սիջագետաց երկիրը՝ որ Հայաստանէն դուրս էր՝ ձռովմայեցները իրեն հարեկամ ընէ՝ աւելի հարկ տալ խոստացաւ. արքունիքը փոխեց Արմաւելը տարաւ աւելի ամրութեանը համար. Երասմի գետին վրայ ալշնեց Երուանդաշասա քաղաքը, որ ինչպէս կը ստորադրէ Խորենացին՝ Հայաստանի գեղեցիկ, զուարձալի ու ամուր քաղաքներէն մէկն եղաւ։ Կոյնոպէս շնեց Ախուրեան գետին հայոց գործութիւնները հնա փոխադրեց, և քրիմապետ դրաւ իր Երուալ եղբայրը։ Երուանդայ բոլոր աս ամէն պատրաստութիւնները ընդունացն ելան. վասն զի Սմբատ ասպետը իրեն լաւ բարուքն և շատ քաջութիւններ ընելով Պարսից նախարարներուն առջեւ, ամենուն սիրելի եղաւ. ուստի Պարսից նախարարներն աղաքեցին Դարեհին որ Սմբատ ինչ բան որ խնդրէ՝ կատարէ թագաւորն։ Սմբատ աւելնդրեց որ Արտաշէսը հաստատէ իր թագաւորութեանը մէջ՝ օդնութիւն

5. Երուանդ իր թագաւորութիւնը ապահով ցընելու համար ի՞նչ զգուշութիւններ ու պատրաստութիւններ ըրտւ։

սալով Արտաշեսին որ կարենայ յաղթել Երուանդայ: Յանձն առաջ Ֆարեհ օգնելու. ուստի շատ մը զօրք տուաւ Սմբատայ ու Արտաշեսի և Երուանդայ վրայ զիկեց:

6. Երուանդ Ուսէացւոց վրայ պատճրազմի գացեր էր՝ երբոր լսեց Արտաշեսի գալը. հոն պահապան թուղուց զօրաց մէկ մասը և նախարաններէն չատը, ու ինքը գնաց առաս վարձքով զօրք ժողվելու վրաց, Մէջագետաց և կեսարից կողմէրէն:

Արտաշես առանց գիտնալու թէ Երուանդ Ուսէացւոց աշխարհէն հեռացեր է՝ ան կողմերը գնաց բոլոր զօրքով. երբոր իմացան տէզացներ և Երուանդայ ձգած զօրքերն ու նախարարներն Արտաշեսի դալը, բոլոր իրեն կողմն անցան. աս բանն անա Երուանդայ քովի եղած նախարարներուն միտքը պատորեց, որոնցմէ շատն կ'ուղէին Արտաշեսի կողմն անցնիլ: Արտաշես և Սմբատ տէնենլով Երուանդայ զօրաց բազմութիւնը՝ ամեննեին չէին վախնար, միայն մեծ վախ ունեին Արդամնախարարէն, որովհետեւ կարիճ մարդէր և տիգաւոր զօրաց մեծ մասը իր ձեռքն էր. անոր համար պատերազմէն առաջ ծածուկ իմացուցին Արդամայ որ էթէ իրենց կողմը անցնի, Երուանդայ տուած պատիւնէրը պահէլէն զատ՝ կրկին պատիւ և կրկին հարստութիւն կու տան իրեն: Աս պատճառաւաւ պատերազմին սկիզբը մէկն Արդամ Արտաշեսի կողմն անցաւ, և Սմբատ այց գնէին չէա միացաւ, և երկու դռնները մէկտէ յարձակեցան Երուանդայ բանակին վայ. պատերազմին տաքցած միջոցը Երուանդայ բանակին մէկ մեծ մասը Արտաշեսի կողմն անցնելով

6. Արտաշեսի և Երուանդայ մէջի պատերազմը ինչէսէս եղաւ ու Երուանդ ինչպէս մեռաւ.

անոր զօրացը հետ միաբան սկսան ջարդել Վրացիքը և ուրիշ վարձուոր զօրքերը բայց որովհէտեւ Երուանդ Ծուրացւոց շատ պարգևներ խոստացեր էր՝ որ Արտաշէսը մեռցնեն, երբոր անմիք կատաղբար Արտաշեսի վրայ կը վագէին Գիտակ անունով քաջ նախարարը առաջնեառեցաւ ու արգիւց իրենց յարձակմնէքը, ու ինքը գեղեցիկ ու գովիտի աթբասիրութեամբ մեռաւ՝ գիտուն կէոր կողմնցընելով ատանի կարծութեամբ մինչեւ Երիկուն պատերազմելով բոլոր Երուանդայ զօրքը ցրուեցին. իսկ ինքը Երուանդ հաղիւ կը բցաւ Երուանդաշատ փախչելով աղատիլ: Երկրորդ օրը հրաման տուաւ Արտաշես որ մեռելնէրը թաղէն. և քիչ մը զօրքերը հանգչեցնելով ետքը գնաց Երուանդաշատի վրայ ու քաղաքը առաւ: Երուանդ իր որոգայթաւոր պալատին մէջ պահուըտած ըլլումը, զինուոր մը դտաւ զինքը ու զարկաւ սպաննեց քսան տարի թագաւորելն վերջը: Այսպէս լմինցուց Երուանդ իր թագաւորութիւնը, որուն վրայ յայտնի կը տեսնուի որ անիրաւութեամբ թագաւոր եղողն ոչ երեք կրնայ խաղաղութեամբ թագաւորել, թէ պէտ և գէշ մարդ ալ ըըլլայ ու շատին սիրելի, ինչպէս էր Երուանդ. Արտաշես փառաւոր գերեզման շնէն տուաւ Երուանդայ վրայ մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար (89):

7. Երուանդայ մեռնելն վերջը Սմբատ թագաւորական գանձին մէջ փնտուելով դտաւ Սանարկոյ թագը, ու բոլոր Հայոց վրայ թագաւոր պատիւ զԱրտաշէսը. Արտաշես թագաւոր ըլլալուն պէտ՝ Մարաց և Պարսից զօրքերը ետաւ

7. Արտաշես ինչպէս թագաւոր պատակուեցաւ ու ինչ փառքի հասուց զՍմբատ և իրէն ուրիշ սիրելները.

զրկեց շատ պարգևներ տալով անոնց. Արդամնակ ինչպէս որ խոստացէր էր, իրեն երկրորդը ըրաւ, ուրիշ շատ պատիւններով ու հարստութիւններով: Նոյնպէս Սմբատն ալ շատ պատիւներով մեծարելէն ետքը ընդհանուր պարապետ անուստնեց, հաջարաբետ տան աբօննի և ամեն պատօնառակարգ վրակացու, ուրիշ ամեն իրեն բարերարներուն ալ իրենց արդեանցը համեմատ պատիւններ ու պարգևներ տուաւ:

8. Առկեց ետքը Արտաշէս հրամայեց Սմբատայ որ երժայ Երուանդայ Երուալ Եղբայրը սպաննէ. Սմբատ ալ կատարեց հրամանը, ու բոլոր անոր ունեցած հարստութիւնները Արտաշէսի բերաւ. Արտաշէս ալ անոնց վրայ շատ անդին բաններ աւելցընելով Սմբատայ տուաւ որ Դարեհի տանի ՚ի շնորհակալութիւն և ՚ի փոխարէն անոր ըրած բարեացը:

9. Արտաշէս երբոր իրեն ազնիւ բնոււթեամբն ամենուն սիրելի եղաւ և ամեն բան կարգի գրաւ, սկսաւ ուսոււմնական և արտաքին բաններու ուշ դնել. Երախու և Մեծամօրդետելորունքով Արտաշատ քաղաքը մեծուց ու զարդարեց. մեծամեծ պալատներ շնիւելով, և հնա փոխագրեց իր աթոռը: Մինչեւ իր ասենք, ինչպէս կըսէ Խորենացին, կամուրջ, նաւակ և ուրիշ ասուն նման բաններ շատ անկատար էին. բոլոր Արտաշէս շինել արւաւ, վարձ ինոստանալով անոնց որ նոր նոր գիւտեր գտնան: Ոյլ և այլ տեղերէ գաղթականներ բերելով բոլոր Հայաստանը բազմամարդ ըրաւ. Երկրագործութեան վրայ ազդին մեջ այնպիսի

8. Երուազ ի՞նչպէս մեռաւ.

9. Արտաշէս ի՞նչ բարեկարգութիւններով զարդարեց զայաստան ու ի՞նչ փոյթ ունեցաւ ուսմանց և արուեստից.

ուր ձգեց, որ ինչպէս կըսէ Խորենացին՝ Հայաստանի մեջ ափ մը տեղ չկար Արտաշէսի ժամանակ որ մշակուած ըրլար, մինչեւ նաև լեռներուն վրայ ալ, բոլոր երկիրը այլ և այլ սահմաններ բաժնեց սահմանագլուխները կոթողներ կանգնելով: Ամեն գիտութեանց և արուեստներու վարժարաններ բացաւ, և ահա աս բաներովս ոչ իր ազգին միայն սիրելի եղաւ, այլ նաև Պարսիկը, Մարք և ուրիշ ազգերն լելով կը նախանձեն Հայաստանի սրանչելի վիճակին վրայ, և շատերն ալ Հայաստան կուգային:

10. Երբոր Արտաշէս այսպիսի բարեկարգութեանց եաւել էր, Ալաններն ուրիշ լեռնցի աղգերու հետ միաբանած Հայաստան վազեցին. բայց Արտաշէս բազմութեամբ գրաց վասնին ելլով, պատերազմի ատեն Ալանաց թագաւորին որդին գերի բռնեց, առ պատճառաւ սկսան հաշուութիւն ինչպէտ Ալանները Արտաշէսին. բայց անիկայ յանձն չէր առներ, մինչեւ որ Ալանաց թագաւորին Սաթինիկ անունով աղջիկն աղաւելով Արտաշէսի սիրտը վաստրկեցաւ. որով Արտաշէս հաստութիւն ընելով արձեկեց թագաւորին որդին, ու իրեն թագուհի ըրաւ Սաթինիկը:

11. Արտաշէս որչափ որ կը ջանար ուրիշի թշուառութեան պատճառ չըլլալ, այնչափ ալ ինքը վատեր ունեցաւ իր որդւոց կողմանէ, վասն զի վեց որդի ունէր՝ որ են Արտաւազդ, Վրոյր, Մաժան, Տիրան, Զարեհ, Տիդրան. ասոնկը ընդհանրապէս իրարու և ուրիշներու պատուոյն

10. Ալաններուն ի՞նչպէս յաղթեց Արտաշէս ու ի՞նչ կերպով հաշուութիւն ընելու զիջաւ.

11. Արտաշէս քանի որդի ունեցաւ ու ի՞նչ վատեր քաշեց անոնցմէ:

վրայ նախանձելով՝ խռովութեանց պատճառ եղան. բայց ամենէն աւելի Արտաւազդ բնութեամբ տաք արիւն, հպարտ ու նախանձուս ըլլուով՝ Արգամայ վրայ ամբաստանութիւններ ըրաւ ու անիրաւ տեղը սպաննել տուաւ, բոլոր անորոշեղին էրեւել մարդիկը թրէ անցուց, ու ինքը տաւ անոր իշխանութիւնը: Խոյնուէս նաև Սմբատաս վրայ նախանձելով՝ կ'ուղէր սպաննել, աս բանս էրըօր լսեց Արտաշէս սասաթի խռովից տաւ և չէր գիտեր ինչ ընելիքը. բայց հայրենասէրն և մեծանորհուրդն Սմբատ իր կողմանէ յօժարամիտ հրաժարելով սպարապետութեան պաշտօնէն ամենայն խռովութեանց առաջը առաւ, և Արտաւազդ որ ամբարտաւանութեան վախճանին հասնելով՝ Սմբատին տեղը սպարապետ եղաւ: Տեմնելով աս բանս մէկալ եղայրներն սկսան նախանձիլ Արտաւազդոց վրայ. Արտաշէս ալ աս իրենց նախանձը և խռովութիւնը դադրեցնելու մարով, Վորոյը որ խելացի մարդէր, թագաւորական տանը հաջարապետ գրաւ, Սմբանը քրմապետ, իսկ զօրքը գլխաւոր ըլրս գունդ բաժնեց. Արեւելեան՝ որ Արտաւազդոց յանձնեց, Արևմտեան՝ որ Տիբանայ տուաւ, Հարաւային՝ որ Սմբատաս յանձնեց, ու Հիւսիսայինը Զարեհի:

12. Երբոր տեսաւ Արտաշէս որ ամեն բան կարդի մէջ է՝ չուղեց վճարել Հռովմայեցոց սովորական հարկը, աս պատճառաւ բարկացաւ Տրայիանոս ու շատ զօրք զրկեց Հայոց վրայ: Առաջ Արտաւազդ զիմանին ելաւ արևելեան ու հիւսիսային զօրքութ, բայց չկրնալով գէմ դնել

13. Ինչ պատերազմի առիթ ունեցաւ Արտաշէս Հռովմայեցոց հէտ ու ինչպէս նորէն հաշտուեցաւ.

Հռովմայեցոց՝ երբոր սաստիկ պիտի յաղթուէր, պատերազմին վերըէրը հասաւ Ամբատ հարաւային դնդով, ու բաջութեամբ պատերազմերով յաղթեց Հռովմայեցոց, և անոնց ետևէն ինկնուղով հալածեց Հայաստանէն դուրս Երրոր աս բանս իմացաւ Տրայիանոս կայսրն, անթիւ զօրքով սիսաւ անձամբ Արտաշէսի վրայ դաւ. ուսափ մէկէն Արտաշէս փութաց շատ ընծաներով զիմանին ելաւ և Տրայիանոսի ցասումը ինեցուց բոլոր հարկը տալով:

13. Անկէ քանի մը տարի ետքը Արտաշէս Մարաց կողմերը գնացած ըլլալով հիւսնդացաւ. անոր համար մէկէն Բակուրակերտ աւանը դարձաւ, ու չկրնալով աւելի առաջ գալ մեռաւ հնի քառասունըմէկ տարբաւորելէն ետև: Փատաւոր հանդէններ ըրին Արտաշէսի թաղմանը ինչպէս սոր կ'սորտաբրէ Խորենացին Արտաշտոն Փիլացինին խօսերէն առնելով. « Դադալքն էին ուկէպէնք, գանցըքն և անկողինք բեհեղեայ, և պատմումանն որ զմարմնովն սուկեթել. թագ կապեալ ՚ի գլուխն, և զէնն սուկով առաջի եղեալ»: Անկէց վերը կ'սորտաբրէ պաշտօնաւեաց կարդը, և թէ ինչպէս բոլոր ազգին թէ ազնուականց և թէ ռամկաց առ հասարակ մեծ տրոտութեան պատճառ եղաւ Արտաշէսի մահը, և թէ ինչպէս շատ մարդիկ իրենք վերէնք կամաւորապէ զո՞յ ըրին՝ ողջ ողջ Արտաշէսի գերեզմանը նետուելով: Անկարելի բան է որ մարդաս պատմութիւնը կարգալէն վերը կարենայ իր տագին հետ մէկաեղ վլտակից ու ցաւակից ըլլալը որ այսպիսի թագաւորէ մը զրկուէր է, որ ամենուն իրաւցընէ հայր, Հայաստանի բա-

13. Արտաշէս ինչպէս մեռաւ ու ինչ հանդիպաւոր թաղումն ըրին իրեն.

ըերար, ազգին պարծանք, ամենուն վշտակից,
ամենուն երջանկութեանը պատճառ էղեց է:

14. Արտօաշեսի հետ մէկաեղ գովութեան ար-
ժանի էնաւ Սմբատ Բագրատունի առպեսն,
որ շատ երեւելի եղաւ իրեն քաջութեամբն, ինչ-
պէս որ տեսնուեցաւ պատճառ թեան մէջ: Սմբա-
տայ ափրասիրութիւնը, հասարակաց օգուտը
մասձելը՝ առանց իր շահը մտածելու, որով
սպարապետութենէն կամաւ հրաժարեցաւ, որ-
պէս զի խռովութիւն ըբլայ. հաւատարմութիւ-
նը, վեհանձնութիւնը, և ուրիշ կատարելու-
թիւնները ոչ միայն իր յիշատակը անհաջացընե-
լու արժանի կ'ընեն, այլ և աշխարհքիս մեծութե-
մարդկանց ու մեծանուն սպարապետաց կարգը
կ'անցընեն զինքը: Սմբատ միշե խոր ծերու-
թիւն ապրելով խալազութեամբ մեռաւ (128):

14. Ի՞նչ առանձին գովեստից արժանի է նաև
Սմբատ Բագրատունին.

ԴԱՅ ԺԴ.

1. Վերին Հայոց թագաւորութիւնն. — 2. Առլեւ այլ թա-
գաւոր Վերին Հայոց. — 3. Միհրդատ և իր Զենոբիա
կինն: Տիրիթ. — 4. Ներոն Կայսեր պատրազմունքն
Պարսից դէմ: Վերին Հայոց թագաւորութեան վերջա-
նալն:

1. Թէպէտ և Վերին Հայոց թագաւորութիւնն
պատի և մասնաւոր բան ըլլալով, մեր ազգին
պատմութեան հետ շատ այնափակ վերաբերու-
թիւն մը ըսնի, բայց եղած գործողութիւններն
Հայաստանի մէկ մասին մէջ ըլլուելով, ան պատ-
ճառաւ համառօտ յիշատակութեան մը արժանի
են. մանաւանդ որ Հասովմայեցաց պատմչներն
Հայոց պատմութեան աւելի աս մասին վրայ տե-
ղեկութիւն ունենալով, Վերին Հայոց դէպէրը
բուն մեր պատճութեանց հետ կը շփոթեն, որով
մէծամեծ սխալանաց մէջ կ'ինկնան: Ուստի այս
ութսուն և չըրս տարուան պատմութեան ծու-
ծը դիտնալ հարկաւոր է՝ անոնց սխալը ուղղե-
լու համար:

2. Երբոր Անառնիս Հայաստանի տիրեց՝ վե-
րին Հայքը Մարաց առւաւ, ինչպէս որ առաջ
աւլուինք: Արշաւեր Պարսից թագաւորն Արտա-
շեաս անունով փոխարքայ մը գրաւ ան կողմէ-
լու համար:

1. Մէր ազգին պատմութեան հետ ի՞նչ վերա-
բերութիւն ունի վերին Հայոց թագաւորու-
թիւնը.

2. Անտոնիոսի Հայաստանի տիրելէն եաքը ո-
րո՞նք թագաւորեցին վերին Հայոց յաջորդաբար
մինչև Զենոն:

բուն, որուն բանութիւններուն չդիմանալով Հայերը՝ Օգոստոսուն խնդրեցին որ Արտաւազդայ տղան փոքր Տիգրան ըսուածն իրենց թագաւոր գնէ: Օգոստոս կատարեց ինդիգրին, բայց երբոր Տիգրան մեռաւ. Հռովմայեցիք անոր Երրուազ եղայրը զբկեցին. Հայերը ընդունենելով զանիկայ աեղը Տիգրան անունով ուրիշ եւնան մը դրին, որ Տիգրան կրտսէր ըսուեցաւ, Երեք տարեկէն Տիգրան կրտսէրն ալ մերժեցին ու Ապրասմ անունով Արծրունին թագաւորեցուցին, որ ամենուն մերելի և հաճոյ եղաւ: Երբոր ան ալ մեռաւ, Պարսկից թագաւորն իր Արշէլ որդին թագաւորեցուց, բայց Հռովմայեցուց կամացը գէց ըլլալով Հռովմայեցիք հալածեցին զինքը ու Պանտոսի թագաւորին Զենոն որդին թագաւորեցուցին՝ որ մինչ իր մասը իսազարութեամբ թագուցըք:

3. Զենոնին մեռնելէն ետքը Արտաշէս Պարսկից թագաւորն իր Արշակ անունով տղան թագաւոր դրաւ Հռովմայեցուց կամացը գէմ: անոր համար Տիգրեր կայսրն Վարսկ թագաւորին Միհրդատ եղայրը յորդորեց որ Արշակ հալածէ ու ինքը թագաւորէ Վերին Հայոց: Միհրդատ դրամ կերցնելով սպաննել տուաւ Արշակը ու ինքը տեղն անցուած բայց քանի մը տարիէն Հռովմայրը իր եղօրը տղան նախարարաց սիրաը իրեն քաշելով, ու հօրմէն ալ օգնութիւն տուած, եկաւ Միհրդատը իր ընտանեօք սպաննել տուաւ ու ինքը անդուռութեամբ թագաւորեց: Երբոր լսեց աս եղած բաները Դարեհ Պարսկից թագաւորն, շատ զօրքով Հռամփդին վրայ եկաւ, ու զանիկայ

3. Միհրդատ Արշակայ յաջորդելէն ետքը բնապէս յալթուեցաւ Պարսկիցմէ ու ինչ դիտելիք կայ Զենոնից վրայ.

հալածեց և իր Տիգրիթ եղայրը տեղը դրաւ: Հռամփդ ետևէ եղաւ նորէն Պարսկիները հալածելու, բայց նեղը մանելով հազիւ կրցաւ փախչէլ իր Զենոնիտ կնիկովն. բայց Զենոնիտի արշապէրի մէջ ըլլալով ձամբան սաստիկ փաստեցաւ, որով ալ չէր կրնար առաջ երթալուսափ ինդրեց Հռամփդէն որ զինքը սպաննէ: Հռամփդ ալ վախէն ու յուսահատութէնէն խենդեցածի պէս ըլլալով, զարկաւ սրովը ու վիրաւորելով գետը ձեգ զինքը. իսկ ինքը փախուա գնաց Վրաստան: Հոն մօտիկները գլունուած քանի մը գեղացիներ տեղնելով կիսամեռ զինոնիբիան, հանեցին գետէն ու մէրքը պատելով առողջացուցին. Վերը Տիգրիթն սարին՝ որ մասնաւոր ինապատուի կը աւհէր զինքը: Աս գէպէս Եւրոպացոց շատ ծանուցեալ ըլլալով, կը կարծէն որ Զենոնիտի մեր Արշակունի թագուէիներէն մէկն ըլլայ:

4. Ներոն կայսրն լսելով Պարսկից տիրելը մէրին Հայոց վրայ, Կորբուղոն անունով զօրավարը զրկեց շատ զօրքով որ Տիգրիթը հալածէ հօնէկ. Կորբուղոն եկաւ յաղթեց Պարսկից, Տիգրիթն ալ փախուց ու անոր տեղը Տիգրան կրտսերին եղուորդին թագաւոր դրաւ, որ ըսուեցաւ Տիգրան կրտսերագոյն. իսկ ինքը մողուց վերին Հայքը ու Ասորեստան գնաց: Դարեհ նորէն շատ զօրք ժողված վազեց վերին Հայոց վրայ ու շատ յաղթութիւններ լնելով սկսաւ առաջ երթալու ան տուն կայսրը Բեառու անունով քաջ զօրավարը զրկեց որ պատերազմը լմացնէ: Ասիկայ Կորբուղոնին հետ միացած երկար ատէն

4. Խոնչ պատաւերազմէն ըրաւ Ներոն կայսրն Պարսկից հետ Վերին Հայոց թագաւորութեամբ համար ու ինչպէս հաշտութիւնն եղաւ մշկենին.

պատերազմեցաւ Պարեհի հետ բայց վերջապէս գլուխ չկրնալով ելքելավաղթուեցաւ ու հաշուեթիւնը ըրաւ Պարսից հետ, աս պայմանով որ վերին Հայքը Պարսից ձեռքը մնայ, միայն թէ թագաւորը՝ կայսրն անուանէ քնակիչներն զով որ ուղեն: Ուստի նորէն Տիրիթ թագաւորեց ու Հռովմ դնաց. ուր որ կրկնն անդամ թագաւոր պահպուեցաւ Ներոն կայսրէն մեծ հանդիսով ու փառաւորութեամբ:

Տիրիթ ինը տարի թագաւորելէն Ետքը երբորինք մեռաւ վերին Հայոց թագաւորութիւնն աւ վերջացաւ. վասն զի Երուանդ Միջագեաքը Հռովմայեցաւ տալով, ինքը վերին Հայոց թագաւորութիւնը առաւ ու իր մասին հետ միացուց:

ՊԱՍ ԺԵ.

1. Արտաւազդ. — 2. Իր մահուան վրայ եղած առասպեն. — 3. Տիրան. — 4. Տիգրան Գ. իր գերութիւնն և կրկն թագաւորելն. — 5. Վաղարշ: Իր քաջութիւնն և մահը:

1. Արտաւազդ խիստ և կատաղի բնութիւնը որ արդէն հօրը կենդանութեան ասենն ալ տեսնուեր էր թագաւորելով ամենեին տարբերութիւն մը քրաւ: Եղայրները Այրարաւաեան գաւառէն հանեց, միայն Տիրանը քավը պահէց՝ որովհետև ինքը տղայ չունէր: Արտաւազդ ոյս պէս երկու տարի թագաւորելէն վերջը, որ մը որսի մէջ կատաղաբար ձին վաղցընելու ատեն խորունկ փոսի մը մէջ լինկաւ ու կորսուեցաւ:

1. Արտաւազդ ինչպէս ըստաւ իր թագաւորութիւնը ու ինչպէս մռաւ:

2. Ասոր վրայ առասպել մը հանեցին որ Կը-սէին թէ, Արտաշեսի թաղման ատեն երբոր շատ հոգի իրենք զիրենք կամաւորապէս Արտաշեսի գերւզմանը կը ձգէին ըսեր է Արտաւազդ հօրը, « Դու գնացիր և բոլոր երկիրը և մարդիկները քեզի հետ տարիիր, ես աւերակներո՞ թագաւորեմ »: Աս պատճառաւ անիծեր է Արտաշես զինքը ըսելով. « Եթէ դու յորս հեծցիս յաշ-զատն ՚ի վեր ՚ի Մասիս, զքեզ կացին քածք, արցին յաջան ՚ի վեր ՚ի Մասիս, անդ կաց-ցես, և զլյոս մի տեսցես »: Ասկէ կը կարծէ եղեք ռամիկը թէ Արտաւազդ մուժ այրի մը մէջ շլթա-ներով կատուած է, քովը երկու շուն կեցած միշտ կը կրծեն շլթաները որ Արտաւազդ ելէ ու աշխարհն կործանէ, բայց գարբինեներուն կուա-նահարութեան ձայնէն կը զօրանան եղեր շլթա-ները: Աս պատճառաւ մինչեւ նաև Խորենացւոյն ժամանակը տգետ գարբիները կիրակի օրերն ալ չորս հինգ անդամ առը կը ծեծէին որ ան շլթա-ները չժուղնան:

3. Տիրան որ Արտաւազդայ քովին էր՝ եղբօրը աեղն յաջորդեց, բայց անոր պէս թագաւորութեան բաններուն անփոյթ ըլլալով, աւելի զրօ-սանիք և որսի ետևէ եղաւ, մանաւանդ որ լաւ ձի հեծնել գիտէր: Երեկի գործք մը ըըրաւ, ու քսանըմէկ տարի խաղաղութեամբ թագաւորելէն վերջը, ճամբան երթալու ատեն ձեան հիւս մը վրան ինկնալով տակը մնաց ու խղդուեցաւ:

4. Տիրանայ տեղը յաջորդեց Տիգրան Գ. իր

2. Արտաւազդայ մահուանը վրայ ինչ առաս-պել ելաւ Հայոց մէջ.

3. Արտաւազդայ մը յաջորդեց.

4. Տիգրան Գ. ովէ ու ինչ պատերազմունե-ցաւ Հռովմայեցաւ հետ:

պղտիկ եղբայրը Պարսից Պերող թագաւորին հաճութեամբն; Երբոր Անտոնիոս Պիոս Հռովմայեցոց Կայսրը մեռաւ, Պերող ու Տիգրան միաբանած՝ Ասորոց երկիրը Եղանձ Հռովմայեցոց վրայ վաղեցին ու մեծ կոտորած ըրին. անկէ կուզէին Կապադովիոյ վրայ ալ վաղել: Աւերիանոս Կապադովիոյ կուսակալը, վախնայով պատերազմին անյաջաղութենէն պատգամ հարցուց. քրմասէալ ամենայն կերպավերաբեցածողութիւն պատերազմի գուշակեց. անով զօրացաւ Սևերիանոս, աներիկիւլ ու թեթև պատրաստութեամբ Հայաստան վաղեց. բայց Հայերէն ու Պարսիկներէն չարացար յալթուելով ինքն ալ սպաննուեցաւ: Աւերէլիոս կայսրն երբոր լսեց Հռովմայեցոց կրկին անդամ յալթուելը. Ղուկիս իր կայսերակիցը զրկեց մեծ պատրաստութեամբ. բայց անիկայ գեռ չհասած՝ Տիգրան փութայ փորք Հայոց սիրելու. Հօն կնկան մը շողորոթութիւններէն խաթուելով գերի բըռնուեցաւ, մինչև որ Ղուկիս եկաւ ու բոլոր թիւմինները սարսափեցուց. վերջը տեսնելով զՏիգրան որ գերի ընկեր է, խղճաց վրան և ազատեց զինքը: Ղուկիս Տիգրանայ կերպին և գեղեցկութեանը հանեցաւ, շատ սիրեց զինքը ու հետք կապուեցաւ սիրտը. անոր համար նորէն թագաւորեցուց ու շտո պատուով Հայաստան դարձուց: Ղուկիս իրեն սիրոյն նշան Ռոփի անունով աղջիկը, որ իր ազգականներէն մէկն էր, Տիգրանայ կնութեան տռաւ: Դարձեալ աս բաներուս յիշատակը պահելու համար դրամ կոխել տռաւ աս կերպով. ինքը Ղուկիս գահը նսատած՝ Տիգրանը թագաւոր կը պահէ Հայոց. վրան ալ տասնկ դրած. « Թագաւոր Հայոց առեւեալ »: Տիգրան Հայաստան դաւանալով երկար տեսն ալ ապրեցաւ ու քառասու-

նըմէկ տարի թագաւորելէն ետքը մեռաւ, առանց քաջութեան յիշատակ մը ձգելու (193): Յ. Տիգրան Պիոս յաջորդեց անոր պղտի որդին Վաղարշ, որ առջի երեքին պէս զօսանաց ետևէ ըզզալով շատ շնութիւններ ըրաւ, միանդամայն հայրենասէր ու քաջ եղաւ. Վաղարշաւան քաղաքը շնէց ան տեղը՝ ուր ինքը ծնէր էր մօրը ճամայ ընելու տաենն. Վարդգէս աւտոնը պարսպով պատեց ու աթոռը հան փոխագրեց, անունն ալ Վաղարշապատ գրաւ: Ասոր թագաւորութեան քսանէրորդ տարին Հիւսիսային աղդերը սկսան բազմութեամբ Հայաստան վաղել. Վաղարշ ալ ժողվեց բոլոր իր գորբերը և քաջութեամբ պատերազմելով հալածեց զաններ իսկըզբան՝ շատ մարդ ջարդելով. բայց թշնամինները նորէն միաբանած, աւելի կատալութեամբ վազեցին Հայաստան: Հայերը սաստիսպէս պատերազմելով նոյնակն երկրորդ անդամուն ալ վանեցին ան վայրէնի ազգերը. բայց տիսոս որ Վաղարշ զարնուելով մեռաւ՝ զոհ ըլալով իր աղջին օդին՝ համար, որով անունն ալ անմահացուց, ինչպէս նաև կըսէ Խորենացին. Թէպէտ և ինքը մեռաւ, բայց գեռ կենդանի է իրեն բարի անուամբը:

5. Տիգրան Պիոսի յաջորդեց ու ի՞նչ կողմանէ երեկելի եղաւ Վաղարշ.

ԴԱՍ ԺԶ.

1. Խոսրով Ա. — 2. Անասնիսս Կարակալյան. — 3. Խոսրով պատերազմների Պարսից դէմ. — 4. Անակայ Հայաստան գանձ: Խոսրովու սպանութիւնն. — 5. Արտաշը Հայաստան մտնեն. — 6. Մանդակունեաց ցեղին չնշնուն:

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս ուղեց իր հօրը մահուան վրէժը առնել Հիւսիսային ազգերէն. ուստի բարու զօպէթը ժողվեց և անոնց վրայ պատերազմի ելաւ, բոլորովն ընկճեց ան զօրաւոր ազգի որ անսնց ընտիրներուն մէջէն հարիւրին մէկ պատանդ տուաւ, իրեն քաջութեանը յիշատակ յունարէն գրով արձան մը կան դնեց, ու այնպէս փառաւոր յաղթութեամբ Հայաստան գարձաւ: Խոսրով ազգը ծաղկեցընելու ջանքութ լուածած սկսաւ շատ շէնքերով գարդարել Հայաստանը, և ան շէնքերուն համար քրիստոնեայքը կ'աշխատացնէր. շատ քրիստոնեայք ալ հաւատաբի համար նահասակեց:

2. Ան միջօցին Անսնիսս Կարակալյան Հառլ մայեցւոց կայսրը Միջադեսաց կողմերն եկած ըլլազով, Խոսրով առջի բարեկամնւթիւնը հաստատելու մոքով անոր հետ տեմնուելու գնաց. բայց կայսրն քովը պահեց զնիքը սրպէս զի գիւրաւ կարենայ Հայաստանի ալիրէլ: Հայերը լսելով աս բանս՝ անանկ բարկացան որ մէկէն պատերազմի պատրաստուեցան. վախցաւ Կարա-

1. Խոսրով Ա. Թագաւորելուն պէս մինչը ըրաւ: 2. Խոսրով Կարակալյանին ձեռքէն Ենչպէս ազգատեցաւ.

Կալլա, ու շատ պատուով արձակեց քովին Խոսրովը:

3. Խոսրովու թագաւորութեան ատենը Պարսից վրայ կը թագաւորէր Արտաւան, որ ազգաւ Արշակունի ըլլալով մասնաւոր սէր և բարեկամութիւն ունէր Խոսրովու հետ: Արտաշէր անունով Պարսից նախարարներէն մէկը ուրիշ նախարարները իր կովըն քաշեց, շատ զօրբով Արտաւանին վրայ պատերազմի ելաւ, և տարիի մը չափ պատերազմելին վերջը սպաննեց զննիքը: Աս բանս երբոր իմացաւ Խոսրով շատ ցաւեցաւ Արտաւանին մահուանի վրայ, և կը մտածէր որ վրէժը առնէ Արտաշըրէն. մէկէն զօրք ժողվեց Աղուանից, Վարս, Լինայ, Կասպիկ կովմերէն, ու անժիւ բազմութեամբ Արտաշըրին վրայ պատերազմի ելաւ: Միշտ յաղթուղ գանձեցաւ մեծն Խոսրով, տալը ասրիթ չափ պատերազմելով մինչեւ Հնդկաստան հալածեց Արտաշըրը. գրեթէ բայոր Պարսկաստանի տիրեց, Արտաշըրին մէջ ալ քաղաքը մը շննեց՝ Պարսկէ անունով, այսինքն ու նէ կէծ Արտաշըրի (253):

4. Արտաշէր փորձով տեմնելով թէ շիկրնար Խոսրովու յաղթէլ, և գիտնալով թէ քանի որ Խոսրով կենդանի է՝ իր թագաւորութիւնը և ինքը հանդատութիւն պիտի չգանէ, մեծամեծ պարգևներ ու պատիւներ խսսացաւ ան մարդուն որ վԽոսրով սպաննէ: Նախարարներէն մէկն ալ չհամարձակեցաւ աս բանս յանձն առնելու, միայն Անակ անունով նախարարը, որ

3. Խնչէն ծագեցաւ Խոսրովին Պարսից հետ սնէցած պատերազմը, ու Խոսրով ինչպէս յաղթէց.

4. Արտաշէր ի՞նչուս կըցաւ Խոսրովը սպաննել ասու.

առջաւ Պարթե էր, սիրով յանձն առաւ կատարել Արտաշը ուսափ տնօվ տեղով ջայաստան էկաւ, ըսելով թէ Արտաշըն ձեռքէն փախայ և Խոսրովու կ'ասպաւինիմ: Անակ էր կեղծաւորութեամբն անմնաւն սիրելի ըլլալով, շատ մեծ պատիւներ դժուաւ Խոսրովին և շատ բանի մէջ անոր հետն էր, անգամ մ' ալ որսի տաեն Անակ և իր եղբայրը մէկուել խոսք դրած՝ զարին Խոսրովը չարաչար վիրառեցին, և իւրենք ձիերնին հեծան ու սկսան փախէլի մէկէն ետևնէն ինկան Խոսրովի մարդիկը, և երբոր զանոնք պիտի բանէին, անոնք իրենք զիրենք գետը նետեցին ու խոդուեցան: Խոսրով գեռ չմեռած՝ հրաման տուաւ որ Անակայ ընտանիքը բոլոր թրէ անցընեն՝ որոնցմէ միայն երկու տղայ աղատեցաւ, մէկը Սուրէն՝ որ Պարսկաստան փախուցին, մէկալը մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչը որ Կեսարիա տարին: Այսպէս Խոսրով քառասունը ութ տարի թագաւորելին վերը, բոլոր Հայերը մեծ սուրբ մէջ թողով մեռաւ (258):

Յ. Արտաշիր լսելով Խոսրովը մահը շատ ուրախացաւ, մեծամեծ հանդէսներ կատարեց, ու շատ զօրեով Նայաստանի վրայ վազել սկսաւ: Նախարարները իրենց սիրելի թագաւորին մահուանը վրայ տրամած ու շփոթած, մէկէն չկրցան Արտաշըն գէմ գնել, բայց գովելի միաբանութեամբ մը շուտով օգնութիւն ուղեցին Հռովմայեցոց Վաղերիանոս կայսրէն: Հռովմայեցոց զօրքը Հայաստանին քուրս այլ և այլ երկիրներ ասպատակութիւն ընելով ուշացան Հայոց օգնութեան դալու: ան միջոցին ալ Վաղերիանոս մեռաւ, որով յուսահատեցան Հայերն

Հռովմայեցոց օգնութենէն, Արտաշիր ալ առանց շատ գժուարութեան Հայաստան մտաւ: Մէկէն հրաման տուաւ որ Խոսրովու ցեղը թրէ անցընեն, անոնց մէջէն միայն Տրդատ անունով տղան ազատեցաւ. Արտաւազդ Մանդակունին զԾրդարը Կեսարիա մեծցընէլին վերջը՝ Հռովմայ տարաւ: Եցինպէս ազատեցաւ նաև Տրդատայ Խոսրովի գիւղութեամբ անունով քպրը՝ Օտանախարարին ձեռքովին:

6. Արտաշիր ընդհանրապէս նախարարները իրենց պատույն մէջը սպահէց. բայց Մանդակունեաց ցեղը բոլոր թրէ անցընել տուաւ: Իմանալով որ Տրդատը փախցընով Մանդակունի է: Այսանկ քսան տարի ալ Հայոց վրայ թագաւորելին վերը մեռաւ Արտաշիր, ու անցը անցաւ իր Շատուհ որդին, մինչև որ Տրդատ եկաւ Հռովմայեցոց զօրքովն ու նորէն տիրեց իր հայրենի ժառանդութեանը:

6. Արտաշիր Հայոց հետ ինչպէս վարուեցաւ ու քանի՞ տարի թագաւորեց.

ԴԱՍ ԺԼ.

1. Տրդատ: Իր քաջութիւնքն և թագաւորելն. — 2. Տրդատայ Հայաստան մանեն. — 3. Աշխատակութիւնն. — 4. Հովհաննեսանց նահատակութիւնն. — 5. Ա. Գրիգոր Լուս. Ենի վիրապէն: Իր բժշկութիւնքն. — 6. Տրդատայ և Գրիգոր Լուս. Հառվիշերթալն. — 7. Հովհաննեսային աղջաց պարասութիւնն. — 8. Տրդատ թագաւորութիւնը կը թողաւ: Իր մահը. — 9. Տրդատայ կատարելութիւնքն. — 10. Իր մահուան աղջած ցաւն:

1. Տրդատ երբոր Հառվիշ գնաց, Վիկիանոս անունով մեծ իշխանին ծառայութեան մէջ մոռաւ առանց իմացընելու իրեն ովլ ըլլալն. հոն շատ քաջութեաններ ընելով և միջու հաւատարիմ գանուելով Վիկիանոսին շատ սիրելի եղաւ: Իր գլխաւոր քաջութեանները, որով թագաւորութեան արժանի եղաւ, ասոնք են: Անդամ մը ձիրնթացի ատեն թշնամուցն կառքը վարպետութեամբ մը առաջ անցնելով, զինքը կառքէն վսր ձգեց: Տրդատ մէկէն վազեց հասաւ կառքին ետևէն ու բանեց կառքը կեցուց: Անդամ մ'ալ երկու վայրենի ցուլերու հետ կռուելու ատեն եղթերներէն բանեց թօթվեց ու փրցուց: Պոռը կայսէր զօրքը երբոր ապրաստամիեցան սովի պատճառաւ պատերազմի ատեն, ու զինքը և եշխանները սպաննեցին, Տրդատ Վիկիանոսի շքանն առջլը կեցած՝ չթողուց որ մէկը ներս մոնէ: Պատերազմի ատեն ձիերուն խոտը լմնաց ըլլալով, Տրդատ պարապէն անդին անցաւ, ու

1. Հառվիմայեցիք զՏրդատը իրեն լին քաջութիւններուն համար թագաւորեցուցին.

հան աեղի գիլած խոռերը՝ պահապաններով ու շնէրով մէկանեղ պարապէն ասդին նետեց: Դիոկղեատիանոս Գութացւոց Հաչէ թագաւորին գէմ պատերազմի ելեր էր, որ շատ քաջ և ուժով մասք էր. Հաչէ առաջարկեց Դիոկղեատիանոսի որ Երկութը առանձին մենամարտուն ընէն և ովոր յաղթէ՛ յաղթութիւնը անոր կողմը համարուի: Դիօկղեատիանոս ինքը անձամբ չէր կրնար Հաչէին դիմացը ելլել, և ոչ բոլոր զօրայը մէջ ալ գանուեցաւ մարդուն որ կարող ըլլար անոր դիմացն ելլել, ան ատեն Վիկիանոսի խորհրդուին Տրդատ Հաչէին չէտ պատերազմելով բանեց զինքը ու կապած Դիօկղեատիանոսին դիմացը բերաւ: Դիօկղեատիանոս առանելով Տրդատայ քաջնութիւնը՝ ուղեց մեծ պատուց մը հասցնել զինքը. և երբոր իմացաւ թէ Խոսրովու Հայոց թագաւորին որդին է, մէկին թագաւորու սնուաւնեց զՔրտա, ու շատ ընծաներ տալէն վերջը բազմութեամբ զօրաց Հայաստան զրկեց որ երթայ իր հայրենական թագաւորութիւնը ժամանդէ:

2. Տրդատ երբոր Կեսարիա հասաւ, մէկէն ի մացուց նախարարներուն իր գալուստը, ուստի նախարարներուն շատն ելան Կեսարիա գնացին, ու զինքը փառաւորապէս ընդունելով կրկին անդամ պասկեցին Ամբատ Բագրատունին ձեռքովին (286):

Տրդատ Կեսարիայէն բոլոր նախարարներով Երզնկայ եկաւ, ուր մասնաւոր շնորհակալութիւնը առաջ Անահատայ, որ ան կապատառութեան առանեն Հայաստանի պաշտպան համարուած էր,

2. Տրդատ լին կերպով Հայաստան մտաւ ու թուապէս Պարսից ձեռքէն աղատեց Հայաստանի ոյլ և այլ քաջապէները.

և ստիպեց նախ զուռբն Գրիգոր Լուսաւորիչը որ նոյնպէս Անահայ նուռեցը տայ. Երբոր անիկայ յանձն չառաւ, Տրդատ շատ չարջարանիներ տուաւ սրբոյն Գրիգորի. Վերջը Երբոր իմացաւ թէ անիկայ իր հսյրը սպաննով Անակին որդին է, Արտաշատու մէջ խոր վիրապ մը կար՝ հսն ձգել տուաւ, իսկ իր բարերարներուն՝ այսինքն Արտաշալլդ և Յտանախարարներուն՝ հաջարապետութեան պատիւ տուաւ: Վերջը Կախուրդին Երեւանի զանազան կողմերէն շատ զօրք ժողվերով. Հռովմայեցոց զօրացը հետ մէկ տեղ Հայաստանի այլ և այլ քաջարաներուն վրայ գնաց ու տաւաւ պարուկի իշխաններուն ձեռքէն. Երեւ անդամ ալ Շապուհին հետ պատերազմէլով բոլորովին հալածեց հանեց վնաքը Հայաստանէն: Անկէց Ետքը սկսաւ ամեն բան կարդի կանոնի դնել ինչպէս էր տուած, և բոլոր աղդը մէծ ուրախութեան մէջ էր աեմնելով իր օրինաւոր կարիչ թագաւորը:

3. Տրդատ այսպիսի փառաւոր յաղթութիւններով ուրախացած՝ հրաման զրկեց ամեն կուսականներւն ու քուրիլեցուն որ զոհերով նըւերներուն պատուեն աստուածները, և ամեն տեղ գտնուած քրիստոնէայքը կամ տանջելով սպաննեն և կամ հաւատաբնին ուրացընեն: Երբոր ամեն տուած հրամանները կատարուեցան, ուղեց իրեն թագուհի ամսել Ալանաց թագաւորին շշէն Աշխէն անուննով աղջիկը. առ բանիս համար հարմանախօսութեան զրկուեցաւ Մբատ իշագրատունի ասպեկան. անիկայ ալ գնաց բերաւ զԱնէնը: Տրդատ նախ հրամայեց որ Արշակունի գրեն վերջը, Վերջը Արշակունի թագուհիներէն վերջը ի՞նչ ըրաւ.

3. Տրդատ իրեն փառաւոր յաղթութիւններէն վերջը ի՞նչ ըրաւ.

բուն թագն ու ծիրանիները հագցնելով հետը ամուսնացաւ, և հարանեաց հանդէսը շատ շքեղ եղաւ:

4. Ան միջոցին որ Տրդատ սաստիկ հրաման հաներ էր քրիստոնէայքը հալածելու Դիոկղեամբանու կայսրին ժուղթ մը Եկաւ իրեն, որուն մէջ կ'իմացընէր կայսրն Հռովմայմէ կուսին և իր ընկերաց Հայաստանի փախչեց, և կրկին կրկին կը յանձնէր Տրդատայ որ փնտըռէ գանկայ զանոնք, և թէ որ Հռովմայմէին գեղեցկութեանը հաւանի իրեն կնքութեան առնէ, ապա թէ ոչ Հռովմայմէին ամեն տեսակ հնարք ի գործ դրաւ Տրդատ ու տեղ ընմաց որ ինդրակիներ ըջրէ: ուստի քիչ ատենէն գտան ան կուսանքը որ այգիի մը մէջ քաշուած կը պանէին Վաղարշապատի քոլլը: Տրդատ Երբոր տեսաւ Հռովմայմէին գեղեցկութիւնը հիպատակ, և շատ ետևէ եղաւ որ կարենայ Հռովմայմէն համոզել իրեն կին ըլլալու բայց ամեն շաները ընդունայն ելաւ, և ուղեց առնենքըներն իրեն չար կամացը խոնարհեցնել զվյուղը: և չկրնալով միտքը գրածը առաջ տանիլ բարկութենէն անողորմաբար մեացընել տուաւ Հռովմայմէն և եսքը անոր ընկերներն ալ: Բայց անոր վրայ մէծ ցաւի ու տրտմութեան մէջ ինկաւ, և աեմնելով որ չկրցաւ աղջիկն մը յաղթիւ և իր փափաքին հասնիլ, քանի մը օրէն տրտմութիւնը փարատելու համար որսի ելաւ, և Երբոր կառքով կ'երթար՝ յանկարծակի դեւահարեցաւ ու խոզի կ'երպարանք մանելով կատարութեամբ կառքէն վար ինկաւ, և սկսաւ ի՞նք զինքը խածնել, և անապատ անմարդաբնակ տեղեր քաշուելով չէր ուղեր որ քոլլը մարդ մատե-

4. Տրդատ Հռովմայմէն ինչո՞ւ սպաննեց ու իր վրայ ի՞նչ կ'երպարանափիսութիւն եղաւ.

նայ. Նոյնպէս նախարարներէն ոմանք ալ հարուածեցան՝ նոյնպիսի պատիճներով:

5. Երբոր բոլոր Հայաստան սուգի ու արքաներան մեջ էր աս երկնառաք պատիճներոն համար, և սարսափած չէին դիտեր ընկլիքնին, որ մը Հրեշտակ Աստուծոյ երեցաւ Տրդատայ Խոսրովիթութիւն քրոջը, և իմացուց իրեն որ մինչև Անակայ սրդին Գրիգորը խոր վիրապէն չէլլէ, չեն կրնար հոգւոյ և մարմնոյ բժշկութիւն ստանալ: Աս տեսիլք ամենուն ծաղրելի երեցաւ, բայց երբոր երկու օրուան մեջ հինգ անդամնոյն բանը կրկնուեցաւ, ան ատեն Յոտա Նախարարը լիիեցին որ երթայ Գրիգորը վրապէն հանէ հանէ (301):

Անհաւատ ու հետաքրքիր մարդիկ անթիւ բազմութեամբ վիրապին չորս կողմն ժողովաւած կ'սպասէին ասնոր տեսարանիս վերջը աենելըու. և աշա իսկոյն իրենց անհաւատութիւնը հաւատքի փոխուեցաւ, երբոր տեսան որ իմացան որ Գրիգոր՝ վիրապին մեջ երկինցուցած չուանը բանելով շարժեց, և ատանըըրու տարի անքար բառ անըուր միացած ձայնը հնչեցուց թէ «Ողեմ»: Դուրս հանեցին զինքը, մէկէն բզրքատած ու մըլուստած հագուստները փոխեցին, սեացեալ մարմնը լուացին ու մաքրեցին, երբոր Վաղարշապատ կը բերէին, թագաւորն ու հարուածէալ նախարարներն սրբոյն Գրիգորի դէմն ելան և բժշկութիւն կը ինդրէին. սուրբն Գրիգոր հոն մէկէն ազօթքի կեցաւ և զամենքն ալ երենց ախտերէն բժշկեց: Անկէ առաջ երթալով

6. Գրիգոր Լորսաւորիչ Յնչպէս ելաւ վիրապէն, Յնչպէս զժագաւորն ու սրբոյն Սեղբեստրոսի ձեռքով քրիստոնեայ եղած ըլլալով, Տրդատ և սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հոռովդ գնացին խնդակցութեան համար. հոն շատ պատիւնքութիւն մացընել Հայոց մէջ.

գնաց Նորիփմիման կուսանաց նահատակութեամ տեղը, անոնց սուրբը մարմինները գիւղակներով պատեց՝ որ ինն օր բացօթեայ մնացեր էին առանց ապականելու: Վաթուուն օր միակը առենուն քրիստոնէական կրօնքը քարոզեց, ու, անկէ ետքը ան սուրբ կուսանաց համար մատուններ շինել տուաւ, որոնց համար Տրդատ անձամբ լեռնէն մեծամեծ քարեր կը բերէր. իսկ Աշխէն ափկինն ու Խոսրովիթութիւն հող և ուրիշնիւթեր կը կրէին:

Աս բաներս լմիշցնելին վերջը՝ նորէն սուրբն Գրիգոր ազօթքի կեցաւ հարուածեալներուն համար որ բալորովն բժշկուեցան, որովհետեւ առջի անդամնեւն զգաստացեր էին, իսկ երկրորդ անդամնեւն մարմիններնուն այլանդակութիւններն ալ անցան: Ետքը սուրբն Գրիգոր ու Տըրդատ գնացին միաբան մեծեաններն ու կուռքեց ըր կործանեցին, և ամեն տեղ քրիստոնէութիւնը հասաւեցին. և սուրբն Գրիգոր Վեսսարիա երթալով Վեռնդիս պատրիարքէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

Երբոր Կեսարիայէն ետ կը դառնար, Դեմետր, Գիւտանէ և ուրիշ շատ չաստուածներու կուտունները կործանեց, և Վաղարշապատ գալով մկրտեց զՏրդատ, որ Յովհաննէս կոչուեցաւ: Վերջը շինեցին լշմանայ տաճարը և ուրիշ շատ եկեղեցիներ:

6. Ան միջոցներուն Հոռովդայեցոց Կոստանդիանոս թագաւորն ալ սրբոյն Սեղբեստրոսի ձեռքով քրիստոնեայ եղած ըլլալով, Տրդատ և սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հոռովդ գնացին խնդակցութեան համար. հոն շատ պատիւնքութիւն մացընել Հայոց մէջ.

6. Տրդատ ու Գրիգոր Լուսաւորիչ Յնչպէս Հըռովդ գնացին.

դատան էրիուքն ալ կոստանդիանոս թագաւորէն և Սեղբեսարոս պապէն, ու մէջէրնին սիրոյ և բարեկամութեան դաշնք հաստատեցին դրով. Ետքը սուրբն Ուղղեսատրոս Գրիգոր Լուսաւորչաց աթոռը պատրիարքական աթոռ անուանեց պատույ համար:

7. Տրդատայ իր թագաւորութենէն հեռաւ նալը լսելով Շապուհ Պարսից թագաւորն, յարմար ատեն համարեցաւ Հայէրէն վլէժը առնելու, անոր համար շատ զօրք ժողվեց ամեն կողմէն, և Հիւսիսային ազգերը դրգուեց որ իրէն հետ մէկաեղ Հայաստանի վրոյ վաղեն: Տրդատ հազիւ թէ Հռովմէն դարձաւ, տեսաւ որ ամեն կողմէն պատարեր են Հիւսիսային ազգերը, որով առանց աշեկ մը պատրաստուելու հարկադրեցաւ պատերազմի ելելու, և յաղթեց Ակիւթացոց Գեղուեհնոն զօրալարին որ քաջութեան կողմանէ շատ անուանի էր: Երկրորդ անդամուն պատերազմիով Գեղուեհնոն ալ սպաննեց. և այնպէս ուժովի իմեցուց թուրը որ մէկ հարուածով էրիւու կտոր ըրաւ զօրալարը ձիովը հանդէրձ:

Տրդատ Հիւսիսային ազգերը վանելէն վլէժը շատ պաերազմեր ալ ըրաւ Շապուհին հետ ու միշտ յաղթոյ գանուեցաւ, ետքը հաշտութիւն ըրաւ հետ ու խաղաղութեամբ թագաւորեց:

8. Ինչպէս որ յայտնի է՝ բոլոր ան պատերազմներուն մշջ մեծ գործողութիւն ընողը Տըրդատ էր, որուն քաջութենը շատ բանակիներու ալ բռնէր, և ինչպէս որ պատմութենէն

7. Տրդատայ Հայաստանէն հեռանալը ի՞նչ գէշ հետեւանք ունեցաւ.

8. Տրդատ ինչո՞ւ թագաւորութիւնը թողուց առանձնացաւ ու ի՞նչպէս մռաւաւ.

յայտնի է իրեն պէս կտրիճ մարդ շատ քիչ տեսնաւեր է աշխարհքիս մէջ բայց աւելի զարմանալին աս է որ պապիսի թագաւորը մը քրիստոնեաց ըլլալէն վլէրը պրանչելի բարեկալաշտութեամբ մը զարդարուեցաւ, այնչափ որ անուղղայ և զեղծ նախարարները համարձակ կը իրատէր որ հէմանուսական մոլութիւններէն ես կենան: Բայց որովհետեւ ծանր է ձմարառութեան ձայնին մտիկ ընելը, անոնք ոչ միայն զգացտացան, այլ նաև Տրդատայ դէմ ատելութիւննին աւելցաւ, որով Տրդատ ալ վլրէնք խրատելէն ձանձրացած՝ թագաւորութիւնը թողուց և լուսաւորչաց բնակած այրը քաշուեցաւ: Նախարարները քանի մը անդամ կանչեցին զինքը որ դայ նորէն թագաւորութիւնը ձեռք առնէ: բայց երբոր Տրդատ յահճն շառաւ, թօւնաւորելով մեռուցին զինքը յիսունըլիք աարի թագաւորելէն վլէրը, ութառունըհինգ տարի թագաւորելէն:

9. Տրդատայ անպարտելի ուժին հետ զորմանալի է հոգւոյն զօրեղութիւնը, անընկանչելի արբութեան հետ հաւատոքն ու շերմանանդն բարեպաշտութիւնը, ահէլ և պատակառելի դէմքին հետ ներողամիտ զիջողութիւնն ու հեղաբարութիւնը, քաջ պատերազմող բարուցը հետ բարեկարգութիւնն ու շինութիւն սիրող հոգին, վլհանձնութեան հետ վլէմ խոնարհամառութիւնը, և ուրիշ ասոնց նման զեղեցիկ պատքինութիւնները: Խորենացին ալ աեմելով որ Տըրդատայ վայելուց ու իրաւացի գովեստը համառոտ պատմութեան մը մշջ ամբողջ բովանդակելը շատ գուռարին է, այսպէս կը ջանայ արդարա-

9. Տրդատ իր զօրաւոր ուժէն գուրից ի՞նչ կատարելութիւններ ու բարեկամանութիւններ ալ ունէր.

ցընելինք զիմքը, կամ թէ սանձելիր եռանդուն փափաքը զջրգաս գովելու. «Պատմութեանց, կ'ըսէ, և ոչ գովեսալից է ժամանակո»:

10. Որչափ որ հայրենապիլի մը սիրաց ուրախութեամբ կը լէցուի Տրդասայ և ուրիշ իրեն պէս առաքինազարդ թագաւորներ ունենալուս վրայ որ մեր արքունական թագին վրայ մէկմէկ անդին ու անգիւտ ակունք եղան, նոյնչափ ալ ան ուրախութեան վրայ սգաւոր քով մը կը ծածկուի՛ երբոր յիշէ թէ պյափիսի ամենայն պատկաւանաց ու սիրոյ արժանի թագաւոր մը անտնկ վերջ ունեցեր է քանի մը անկարգ մարդկանց պատճառաւ. քանի մը կ'ըսէմ, վասն զի անկարելի է որ բոլոր ազգը միաբանած ըլլայ առ գործողորթեանս մէջ, որովհետև շատ բարե պաշտ մարդիկ ու նկարարներ ալ կային որ թագաւորին գեղեցիկ սկզբանցը մասնակից ու գործադիր էնին. բայց ափսօն որ գեշերուն չարութիւնը ան գիպոււածին մէջ ալ արդարներուն քաղցրութեամբ զեղծաւ, որով և ան սոսկալի ոճիրը գործեցին՝ իրենց անձանց յաւետնական նախատինք և ազգին անդարձանելի վնաս: Աս իրաւ է որ ամեն ազգի մէջ ալ քիչ կամ շատ թագաւորներ և իշխաններ զոհ եղած են հաւատոյ համար, և կամ մեծ ամենձաց չար կամքը չկատարելնուն պատճառաւ. ուստի տառը նման քանի մը գիպուածի համար պէտք չէ ազդ գը նախատել և ուրիշ ազգերէն աւելի վոր ու անարդ համարիլ, և կամ առանձնականաց պակասութիւնը ընդհանուրի տարով բոլոր ազգը աղքատեաց, տիրատեաց, անօրէն կօնէլ. բայց փափաքելի էր որ մեր ազգին խաղաղասեր ու

10. Տրդատայ մահը ինչըն աւելի ցաւալի է հայրենասիրի մը սրտին:

Խոհէմ կառավալարութեանց պատմութեանը մէջ այսպիսի պարասւելի դիպուածներ ամեննեին գրանուէին:

ԴԱՍ ԺԲ.

1. Լուսաւորչայ թառներն: Բնշնչիք, Մանաւազեանք, Ուրդոնիք. — 2. Խոսրովն: Կը թագաւորէ: Պարօց յաշշամուին. — 3. Տիրան: Իր սանդթութիւնիքն. — 4. Իր մամուկն: Արշակ կը թագաւորէ: — 5. Աւեծն Ներսէս: Իր հարեկարգութիւններն. — 6. Վաղեննատիանոս: Տիրիթև կ'անէլ. — 7. Գնեւայ մահը. — 8. Տիգրանակերտի առումն. — 9. Արշակաւան: Արշակայ պատերազմնունքն. — 10. Ա. Ներսէսի աքտորուին: Արշակայ մահը. — 11. Մերուժան Արծրունի:

1. Որովհետև Տրդատայ որդին Խոսրով երկրորդն տկար և թշով մարդ էր, չկրցաւ մէկէն թագաւորութիւնը ձեռք առնել, ու իրեք տարել չափ թագաւորական ամոռուը պարապ մնաց, որով շատ գէլ հետևանքներու պատճառ Եղաւաւ: Վասն զի ոմանիք քրիստոնէութենէ թուլանով՝ ուղղեցին Լուսաւորչայ թոռները սպաննել որպէս զի ուղածնին ընեն: Ասով սուրբ Արքիստակէսը որ Լուսաւորչայ կրտսէր որդին էր՝ զի քենաք յանդիմանելուն համար՝ սպաննեցին. զոտըն Գրիգորիս որ Աղուանից կաթուղիկոսն և Լուսաւորչայ թոռն էր՝ ձիու պոչի կապած վազընելով մեսցուցին, նոյնպէս նաև զսուրբն

1. Տրդատայ մահուանէն ետքը թագաւորական աթոռուն պարապ մնալը ինչ գէլ հետեւանքներ ունեցաւ.

Ալլթանէսը կ'ոռւցէին մեռցնել, բայց անհիկայ մէջէրնէն անլիսաս անցնելով պատեցաւ:

Քաղաքական վիճակն ալ հոգեսրին պէս մեծ խեղճաւթեան մէջ էր. վասն զի մէկ քանի խռով արար և փառասէր նախարարները ատեն դանելով սկսան իրարու հետ կռուիլ պատույ և իշխանութեան համար, որով իրարու ցեղն ալ բոլորին ջնջեցին, ինչպէս Քնունիկը, Մահաւաղեանը և Որդունիկը ըսուած նախարարութիւններն: Աղուանիք ապստամբեցան, և Արշակունեաց ցեղին Սահատրուկ անունով մէկը նիքնագլուխ թագաւորեց՝ Պարսից Շապուհ թագաւորին օգնութեամբն. նշյալիւնակ Աղջնեաց բժեշխը Բակուր ապստամբեցաւ Պարսից օգնութեամբն:

2. Նախարարներէն շատերը տեմնելով աս անկարգութիւնները, և թէ ասոնց վախճանը աղջին կործանումն պիտի ըլլայ, միաբանեցան մէջնինին, և արբայն Վրթանեսի քովը ժողջլուելով, խորհուրդ ըրին որ Կոստանդ կայսեր օգնութեամբ թագաւորը դնեն իրենց վնորովին: Աս բանիս համար նախարարներէն երկու հոգի զրկեցին Կոստանդնուպոլիսը, որ երթան Կոստանդ կայսեր հաճութիւնը առնեն Խոսրովը թագաւորեցնելու համար: Կայսրը շատ հաւաքցաւ Հայոց հաւատարմութեանը ու մէկէն Անահիոքս անունով իր պալատան հաղարապսիկը շատ զօրքով զրկեց, որ եկաւ Խոսրովը թագաւորեցուց Հայոց վայ, ու ինքը նորէն կ. Պօլիս դարձաւ: Գլխաւոր նախարարները միաբանելով մէջնին՝ ամեն բան կարգի դրին, ապստամբները ջնջեցին և եկեղեցական բարեկարգութիւններուն ալհոգ

2. Խոսրով Բ. Բնչապէս թագաւորեց ու Պարսիկը ի՞նչպէս յաղթուեցան Հայոցմէ.

ունեցան: Բայց որովհետեւ Խոսրովը բնութեամբ ակար և անկարող մարդ էր, ինչպէս որ ըսկինք, Շապուհ և Սահատրուկ որ արդէն գետէին, գրգռեցին Հեւափային ազգերը ու անոնց հետ Հայաստանի վրայ սկսան վազել: Խոսրով նախ ինքը անձամբ պատերազմի գնաց ու չարացար յաղթուեցաւ, անանկ որ թշնամիները մինչև Վաղարշապատ հասան, ան միջոցին վրայ հասան Վահան և Բագարատ երևելի սպարապետները, և մէծ ջարդ ապօվալ վանեցին թշնամիները:

3. Խոսրով ինը տարի թագաւորելովն վերջը մեռաւ, աելզ յաջորդեց իր որդին Տիրան, որ հօրմէն աւելի թոյլ եղաւ, և ամեն տեսակ անընդգամնութիւնն ըրաւ: Սիրոյն Վրժմանեսի հետ մէկաել կ. Պօլիս գնաց ու թագաւոր պատկուած ցաւ կոստանդ կայսերէն, և երբոր նոր գեռ հոն էր՝ Շապուհ իր ներսէ եղբայրը զրկեց որ երթայ Հայաստանի տիրէ: Երշաւէիր Կամսարական, որուն յանձնուած էր Հայաստանի պահպանութիւնը, ուրիշ նախարարներու հետ մէկաել դիմացը ելաւ ու ցրուեց բոլոր Պարսից բանակը թէպէտ և Հայերէն ալ մեծամեծ նախարարներ մեռան: Տիրան թագաւոր պսակուած Հայաստան գարձաւ, բայց իրեն անկարդ գործողութիւններով անունը և արքունական ծիրանին արատաւորեց: Ծնդգէմ իրեն դաշնացը և երդմանը որ ըրել էր Շապուհի հետ Յուլիանոս ուրացովն օգնեց որ Պարսից գէմ պատերազմի կ'երթար. և անոր զրկած պատկերը՝ որուն վրայ Յուլիանոսի գէմքընկարուած էր, երբոր կ'ուզէր մայր եկեղեցւոյն մէջ կախել, սուրբն Յուսուի ան պատկերը ձեռքէն յափշտակեց ու ուրին տակն առնելով կատր ըրաւ: Բայց Տիրան փոխա-

3. Տիրան ովէ ու ի՞նչ անդթութիւններ ըրաւ.

նակի խրատուելու այնշաբ ծեծել տոււաւ սուրբ հայրապէտը՝ որ ծեծի ատէն մեռաւ. նոյնպէս խզել տոււաւ նաև Դանիէլ ասորի սուրբ ծերունին՝ զինքը խրատելուն համար։ Աս անդժու ժիւններս ընելէն վլրջ անովլ տեղով ջնջեց Ռըշտուննեաց ցեղը. վասն զի Տիրանին Հրամանովն Զօրայ Ռշտուննեաց նահապէտն որ Յուլիանոսին ոգնութեան գնացեր էլ մասնաւոր գնացով տեսնելով Յուլիանոսի անօրէնութիւնները բոլոր գործով փախէր էր քովին. Տիրան ալ Յուլիանոսին կամքը կատարելու համար՝ ջնջել տոււաւ Ռշտուննեաց նախարարութիւնը, և միայն մէկ տպայ մը աղատեցաւ որ գայեւակները փախուցին։

4. Երբոր Յուլիանոս Պարսկաստան պատերազմի մէջ վիրաւորուելով հոգին փէց, Շապուհ Տիրանայ ըրած խարդախութեան վլէմն ուղեց առնուլ ուստի բարեկամութիւն ճենացընելով կանչեց զինքը Պարսկաստան ու ացուըները կուրցուց՝ տասնըմէլ տարի Թագաւորքէլէն վլրջը։ Շապուհ վախնալով որ ըըլայ թէ Հայերը սաստիկ սրբութիւն Տիրանայ աշքերը փորելուն համար, մէկէն անոր Արշակ որդին հօրը տեղ թագաւոր գրաւ, որ ան ալ հօրը պէս և աւելի անկարդ և անօրէն կեանք ունեցաւ (363)։

5. Թէպէտ և աս միջոցներուս ետեկ ետեկ անպիտան թագաւորներ ունեցեր էնք, բայց Աստուած բոլորովին երեսէ չճգելով Հայաստանը՝ ան անդգամ թագաւորներուն աեղզ այնախին հայրապէտներ տոււաւ որ թագաւորաց ընելու օգուտներն ու բարեկարդութիւնները իրենք

4. Տիրան ի՞նչ մահ ունեցաւ ու իրեն ովլ յարդեց։

5. Ո՞վ է Մեծն Ներսէս ու ի՞նչ կարդաւորութիւններ ըրաւ Հայաստանի մէջ։

կ'ընէին. աղդին խեղձութեանը կ'օդնէին և վշտակից կ'ըլլային, ըլլայու չարիքները ըստ կարի կը խափանէին, զեղծմունքներն ու անկարդութիւնները կ'արդիէին, վերջապէս աղդին հոգեւոր և մարմնամեաց պիտոյքը կը հոգային, մինչև նաև թշնամեաց բարկութեանը միջնորդ ըլլալով Հայոց թագաւորին և օտար թագաւորաց մէջ. Աս սուրբը հայրապէտաց մէջ գլխաւորն է Մեծն Ներսէս որ անթիւ օգտակար բարեկարդութիւններ ըրաւ Հայաստանի մէջ, աշքատանոցներ, հիւանդանոցներ և գպրատուններ բացաւ, և անոնց համեմատ կարդեր դրաւ. իսկ Արշակ ընդ հակառակն անփիցթ ըլլայով աս բարեկարդութիւններուն արգելք ալ եղաւ անոնց գործադրութեանը, որով մեծամեծ վնասներու և դրեթէ թագաւորութեան կործանմանը պատճառ եղաւ. ուստի չենք կրնար չափսոսալ որ այսպիսի անպիտան թագաւորներ յաջորդաբար Հայոց գահը ելլելով պղծեցին զանիկայ ու խարսանեցին, որ այնշաբ քաջ, առաքինի և խելացի թագաւորներն անուանի եղեր էր ու աղքին ուրագութեան պատճառ։

6. Երբոր Վաղենատիանոս գեսակն զրկեց Արշակյա որ Պարսկից հարկ տալը գադրեցընէ, Արշակ գեսապանները նախատելով մէրժեց, և հարկ տալը գադրեցուց՝ Աս բանին վրայ սաստիկ բարկացաւ Վաղենատիանոս, ու Արշակին Տրդատ եղբայրը՝ որ քովը պատանդ կեցած էր՝ մեռցնել տոււաւ, ու Թէոդոս սպարապէտը շատ զօրքով Արշակյա վրայ զրկեց։ Արշակ աս բանէս սարսահած աղաջեց սրբոյն Ներսէսի որ միջնորդ

6. Վաղենատիանոս Արշակյա գեմ ունեցած բարկութենէն բնչպէս զիջաւ ու ինչէն մկամա Տիրիթ Գնելայ վրայ նախանձիւ.

ըլլայ Թէոդոսին ու կայսեր բարեկութիւնը իջեցնէ: Երբոր լսեց Վաղենատիանոս սրբոյն Ներսիսի միջնորդութիւնը՝ իջաւ բարեկութիւնն և վասա մը չըրաւ Արշակոյ, իսկ Տրդատայ որդւոյն Գնելին հիւպատոսութեան պատիւ տոււաւ, շատ ալ ընծաներ՝ իր հօրը անիրաւ տեղը սպաննուելուն համար: Աս բանիս սաստիկ նախանձեցաւ Տիրիթ Տիրանին թոռը՝ ու առթի մը կ'սպասէր որ աս իրեն նախանձու ատելութիւնը յագեցընէ: Երբոր Գնէլ իր պապուն քովին գնաց որ կուաշ աւանը կը նստէր, պատմեց իր հօրը Տրդատան թշուաւ մահը՝ որուն վրայ սաստիկ ցաւեցաւ Տիրան, և ուզելով իր թոռը միմիթարել, որով և ինքն ալ միմիթարուիլ, բոլոր իրեն ունեցած ժառանգութիւններն ու կալուածներն ալ Գնելին տոււաւ, ատոլաւելի զայրացաւ Տիրիթին նախանձն, մանաւանդ Երբոր Փառանձեմն ալ իրեն կին առնելով թագաւորավայել Հարսնիք ըրու, որով շատ մեծամեծներու հաճոյ ըլլալով անսնց սիրելի եղաւ: Տիրիթին համար շատ զօրաւոր պատմառ եղան ասնիք Գնելայ կ'եանըը կարձեցնելու համար, ուստի Վարդան անունով Մամիկոնեան նախարարի մը հետ միացած՝ Գնելին վրայ ամբաստանութիւն ըրին Արշակոյ առջելթէ Գնել կ'ուզէ թագաւորել հայոց վրայ, անոր համար հետեւ է նախարարներուն սիրտը իրեն քարշելու որուն համար ամենայն ջանք կ'ընէ, կ'ըսէին: Արշակ որ առթի կ'սպասէր, Այրարատայ գաւառէն հալածէլ տոււաւ Գնելը, աս բանիս շատ նեղանալով Տիրան՝ յանդիմաննեց Արշակոյ, Արշակ առ առթի ծածուկ տոււաւ:

7. Անդամմը Արշակ Վարդանայ ու Տիրիթի

7. Գնել ի՞նչպէս մեռաւ.

հետ Մաղկոտն ըստած լեռան քովելը որսի ելեր էր, երբոր Արշակ կը պարծէր որսէրուն ու տեղոյն գեղեցկութեանը, Տիրիթ ու Վարդան սկսան վար զարնել, ըսելով թէ Գնելին որսի անտառին քովեան մը չէ: Մէկէն Արշակոյ նախանձը շարժեցաւ և ուզեց հն որսի երթալ շուտով թուղթ մը գրեց որ ամեն պատմաս արասա ըլլայ, ու ինքն ալ անդանդաղ ետակէն ձամբայ ելաւ որ եթէ պատրաստ ցդանայ զիմքը, երբեւ յանցաւոր սպաննել տայ. Երբոր եկաւ ու տեսաւ որ տմեն բան պատրաստ է, ձայն չկրցաւ հանել. բայց նախանձը աւելի շարժելով ծածուկ ատպարեց Վարդանայ որ նետով սպաննէ, ան ալ մէկէն կատարեց, ետքը երեքը մէկէն սկսան լաց ու ողբ ձևացնել իրեն թէ գիպուտածով եղած ըլլայ, վերը մեծահանդէս յուղարկաւորութիւն ըրին զորիշները խաբելու համար, բայց անօգուտ, վասն զի ամենքն իմացան ու ստըր Ներսէ խսախւ յանդիմաննեց Արշակը և նզովեց զինքը ու իրեն գործակիցները աս անդգամութեան համար:

8. Կապուշ Յունաց վրայ պատերազմի Երթալը ատեն կերակուր ուզեց Տիրբանակերա քաղաքին բնակիցներէն. անսնք գանելը գոյցեցն ու արհամարհեցն զինքը, ուստի Կապուչ Յունաց հետ ունեցած պատերազմը լմացնելով ետ գառնալու ատենը՝ առաւ Տիրբանակերու ու մեծ ջարդ տոււաւ քաղաքացւոց, մնացածներն ալ գերի ըրաւ:

9. Նշն պիտիցներուն Արշակ ալ քաղաքը մը շենց իր անդգամութեանը յիշատակ, և անունը

8. Տիրբանակերա ի՞նչպէս առնուեցաւ.

9. Արշական քաղաքին վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Արշակաւան դրաւ, և որպէս զի քաղաքին լնաւ կինքերը շատանն հրաման հանեց որ եթէ յանցաւոր մը փափչի հոն, պատմէ ալզատ ըլլայ, աս պատմառաւ ամեն աեսակ անզգամներով լեցուեցաւ քաղաքը ուսասի բոլոր նախարարներն միքան բողոքեցին Արշակայ որ աս բանիս գարման ընէ, բայց երբոր անիկայ մարկ չըրաւ, օգնուեթիւն կանչեցին Շապուհ Պարսից թագաւորը որ գայ իրնց հետ միաբանի Արշակաւանը կործանելու համար, Արշակ երբորը լեց աս բան՝ Վրաց ապաւինեցաւ, Ան միջոցին որ Արշակ Վրաց ևոց մէ օգնութիւն առնելու դնացեր էր, նախարարները տիրեցին Արշակաւանին ու բոլոր մէջի բնակիչքը թրէ անցուցին բայց 'ի կաթնէր տղոցմէ որ որբոյն Ներսէսի աղաշանկովին աղատեցան :

Արշակ Վրաց ևոց օգնութեամբն նախարարներուն վրայ պատերազմի ելաւ ու երիու տարիի չափ պատերազմելով երկու կողմանէ ալ շատ մարդկի ջարդուեցան : Ահա այսպիսի անպիտան թագաւորի մը ըրած յիշատակի արժանի դործութիւնները ասոնք են, որ բոլոր խոռովութեանց, անիրաւութեանց պատճառ եղաւ:

10. Երբոր Արշակ նախարարաց հետ կը պատերազմէր, Վաղէս կայսրն ալ լսած ըլլալով որ Արշակ օդնիւր է Շապուհին, նորէն թէոդոսը շատ զօրքով վրան զրկեց : Արշակ երբոր աեսաւ թէոդոսի դալը բոլորովին անձրկեցաւ և նորէն սուրբ Ներսէսի ապաւինեցաւ որ աս բաներուն դարձան տանիք. ան պանչէի ու հայրենասէր անձն ալ զնաց շատ գժուարութեամբ հաշտեցու նախարարները թագաւորին հետ, և վերջը

10. Ա. Ներսէս ինչպէս աբորուեցաւ, ու Արշակ ի՞նչ վերջ ունեցաւ.

Թէոդոսի բարկութիւնը իջեցուց պատանդ տալով Արշակայ Պատ որդին. իսկ ինքը սուրբն Ներսէս թէոդոսի խորհրդովին Կ. Պոլիս գնաց Վաղէսին բարկութիւնն ալ հանդարտեցլնելու համար, բայց Վաղէս արիոսեան ըլլալով մէկէն սուրբ Ներսէսը աքտորել տուաւ : Արշակ երբոր լսեց որբոյն Ներսէսի աբորուելը նորէն իր առջի ընթացքը սկսաւ բնել քանի մը նախարարները անիրաւու անվանել տուաւ, կամսարականաց ցեղը բոլորովին Ծնջեց, բայց 'ի Սպանդարատէն որ իր տղոցմնզը գախէլով աղատեցաւ : Նախարարները աս բաներս տեմնելով առթի մը կապասէին որ Արշակայ չարեաց զրէժը հանեն. ուստի նոյն միջոցներուն Շապուհ պատերազմ բացած ըլլալով Արշակայ դէմ, նախարարները միաբանեցան Պարսից հետ ու այնապի նեղը ձգեցին զԱրշակը որ անհնատուր եղաւ, ու Շապուհ ալ զնիքը Անցուշ ըսուած ըերգը զըրկեց (380) :

11. Հազիւ թէ ազգը Արշակայ բռնութիւններէն աղատեցաւ, ահա անոր տեղը ելաւ ուրիշ աղգատեաց մը, ազգին հիմը քանդող ու վնասակար, որ է Մերուժան Արծրունեաց նախարարը. ասիկայ մնավախութեամբ կ'ուզէր Հայոց թագաւորը ըլլալ, հաւատաբը ուրացաւ, և Պարսից կրօնէր ընդունեցաւ, որսէս զի անոնց օգնութեամբը թագաւորէ, ուստի Արշակայ բռնուելէն վերջը ասիկայ շատ զօրքով Հայաստանի վրայ եկաւ, ու մեծամեծ վնասներ հասցուց աղգին, շատ քաղաքներ աւրեց աւրշտըկեց ու անսպատ դարձուց : Արշակ աս բաներս լսելով և յօւսահատելով իր վիճակին, անդամ մը կերպակուր ուտելու ատեն զարկաւ մեռցուց ինք զնիքը : Այս-

11. Ո՞ւ է Մերուժան Արծրունին .

պիսի թշուառութեամբ կորսուեցաւ գնաց, առանց բարի յիշատակ մը թողլու, որուն մահուանը վրայ և ոչ մէկը լցաւ, ուրեմն աեսթէ որչափ տարբերութիւն կայ ան թագաւորին մէջ որ մէանելովն բոլոր աշխարհք սուրգի և ողբի մէջ կը ձգէ, և անոր՝ որուն մահուանը վրայ կ'ուրախանան աւելի քան թէ կը արտմին:

ԴԱՍ ԺԹ.

1. Մերուժանայ Հայաստան մտնեն: Պապայ թագաւորեն. — 2. Հայոց յաղթութիւնն Մերուժանայ գէմ. — 3. Իր մահը. — 4. Հայաստանի խաղաղութիւնն. 5. Ա. Ներսէսի թունաւորութիւնն: Պապ կը մեռնի. — 6. Վաղաղատ: Իր քաջութիւնն և մահը:

1. Հապուէս ուզելով որ Հայաստանի մէջ նորէն կուպաշտութիւն մտցրնէ, խոսսացաւ Մերուժան Սրծրունեցն որ եթէ կարենայ առաջ առնիվ աս բանս, զի՞նքը Հայոց թագաւոր կը դնէ, ուսանի բաղմութեամբ զօրաց և շատ մոգերով Հայաստան վզլէց որ երթայ խոսսացածը արդեամբ ի գործ դնէ: Մերուժան բռնութեամբ Հայաստան մոտաւ և շատ մարդ նահատակէց, եկեղեցները կուտառն շնէց, բոլոր Յունարէն գրով գտնուած գրքերը այրեց և արդեւց որ Յունարէն չորսին: Աս բաներս լսերով սուրբ Ներսէս որ աքսորանքէն դառնալով դեռ կ. Պօլիս էր, աղաշեց Թէկոգոս կայսեր որ Պապը թագաւոր դնէ Հայոց վրայ և Հայաստան վակէ, որպէս զիքրիստոնէութիւնը պաշտպանէ

1. Ի՞նչպէս կըցաւ Մերուժան բռնութեամբ Հայաստան մտնել ու ի՞նչ վնասնէր ըրաւ.

Պարսից և Մերուժանայ գէմ: Թէոգոս ալ զիշանելով սրբոյն Ներսէսի աղնաշնաց կատարեց երեն ինդէբքը ունական տալով Տերենատիանոս զօրավարը: Մերուժան լսելով Պապայ գալը մէկէն Պարսկաստան փախաւ, հրաման առաջը որ նախարարաց կանայքը բէրդէրէն կախէն, առ երբոր տէսան նախարարները կատրէցան ու բէրդէրնւն վրայ վաշելով տվիցին անոնց ու մէջն Պարսիկ պահպանները ջարգէցին:

2. Մերուժան նորէն այլ և այլ ազգերէ զօրք ժողված վաղեց Հայաստանի վրայ նոյնակէն նաև Տէրենատիանոս պէտ շատ զօրք ու շատ պատերազմական գործիքնէ բէրել տուաւ Ադդէ զօրավար ըին ճէս մէկաւել կ. Պօլիսէն: Յըբոր պատերազմը պիտի սկսէր, առաջը Ներսէս նպատ լւուան վրայ եւաւ ու բաղկանարած սկսաւ աղօթել պտաւերազմին յաղողութեան համար. և սրովէն արևէ Հայոց բանակին զիմացէն էր և զիրենք կը նեղէ՛, սրբոյն աղօթքովն ամսկ մը եկաւ ու արևէ ծածկեց, նոյնակէն նաև հով մը ելելով Պարսից նետերը իրենց վրայ կը գարձնէր: Աստվ սիրտ առած Հայերը սկսան կատարաբար ծարդէլ զարարսիկները, ու Սպանդէրա Կամարականն մէկ զարնելով սպաննեց Վէկաց Ներսարական կը աղաղակ առաջ կարեց կարիք թագաւորը որ արթէն առիծծի պէս մարդ մը ըլլալով, և չորս գինն ալ կարիք զինուոր որներով պաշտօւած անհարին ջարգ. կուտար Հայոց պաշտօւած անհարին Պօլիսէն նաև Մուշեղ Մաֆկանէանը Պարսից կարեց քաջ սպարապէտ սպաննեց, ուրիշ շատ քաջութիւններ ընելով:

3. Պատերազմին տաքցած միջոցները Մերու

2. Հայերը ի՞նչպէս հրաշքով և իրենց քաջամիրտ արիութեամբն յաղթէցին Պարսից.

3. Մերուժանը մէ սպաննեց.

ժանին ձին վիրաւորուելով չկրցաւ պարսից զօրաց հետ փախչել ու ետք մնաց. աս բանս տեսնելով Ամբատ Բագրատունին ետևէն վազեց ու համեմելով բանեց ու կ'ուղէր բանակը բերել. բայց Երբոր մտածեց որ եթէ սուրբ Ներսէս իւմանայ գլծարով վասն կ'արձելէ զինքը, ուղեց հոն սպաննել. և ջորս դին նայելով ետաւ որ հոն մօտիկները վասնաբնակ հովիւներ կրակ վառած միս կը խորովեն շամբուռով օւսափ քո վերնին մօտենալով կուրցուց շամբուռը ու կրակի պէս սաբցընելով Անրուժանայ գլուխով դրաւ ըսելով. « Որովհետեւ կ'ուղէիր Հայոց թագաւոր ըլլալ, ահա եւս կը պատկեմ զքեղ իմ հայրենական իշխանութեամբս » ու այնպէս սատիեցաւ: Ահա աս է ազգատեաց, փառամոլ ու շահասէր մարդուն վախճանը, որուն ասկէց աւելի գեղեցիկ փոխարէն չէր կրնար գտնուիլ իր անթիւ չարեաց համար, և ոչ ասկէ աւելի արժանավայէլ թագով պասկուիլ (381):

4. Երբոր այսպիսի փառաւոր յաղթութեամբ լմնցաւ պատերազմը, Պատ շատ ընծաներով Յունաց զբար ետ զմինց, և Տէրենտիանոսի ալ շատ պարգևներ տալով, Հայաստանի մէջ բնակեցուց: Խոկ սուրբ Ներսէս նախարանի երեսու և թագաւորը մեկտեղ ժողովելով զամնքը յորդորեց որ աստուածապաշտութեամբ կեանքերնին անցընեն, թագաւորին հաւատարիմ ըլլան, ու թագաւորն ալ զիրենք հօր պէս արդարութեամբ ինամէ ու պահպանէ: Այսպէս քիչ մը խաղաղացաւ աշխարհքը և Պատ քանի մը նախարարներուն իրենց քաջութեանցը համեմատ պարգևներ ու պատիւներ տուաւ:

4. Աս պատերազմէս ետքը ի՞նչպէսքիչ մը տեն խաղաղացաւ Հայաստան.

5. Աս խաղաղութեան զինադադարումը ամիսոն որ երկար չուեց վասն զի Պատ թէպէտ և արտաքուստ լսւ կը ձեւանար, բայց ծածուկ անկարդ ու անառակ կեանք կ'անցընէր. աս բաներուս համար սուրբն Ներսէս միշտ կը խրատէր զինքը. բայց Պատ ձանձրանալով անոր սպանչելի կրատանէրէն ծածուկ թոյն տուաւ ու զիկց զԼայաստան ան հրաշլի և սպանչելի հօրէն, որուն հայրագութ խնամոցը կը վկայէն մարդկանց հետ նաև անբան անասուններն ու անշունչ արարածները: Պատ աս անօրէնութիւնն ընելին ետքը իրեն ախտելով և ամբարտաւանութեամբն կուրցած ուղեց Թէոդոր կայսերէն ապատամբէլ, ուստի Տէրենտիանոսը Հայաստանէն հալածէց ու սկսաւ պատերազմի պատրաստուի. բայց Թէոդոր շատ զօրք է հրաման զըրկեց Տէրենտիանոսին որ Պատայ հետ պատերազմի, որ բանեց զինքը և շլթանէրով կապածկ. Պոլս Թէոդորին գիմացը հանեց: Թէոդոր առ հրամայէց որ սակրով գլուխով կարեն իրեն չարութեանցը փոխարէն, իրեք տարի թագաւորէլն վերը:

6. Պատայ տեղը Մէծն Թէոդոր՝ Վարադդատ արշակունի իշխանը Հայոց թագաւոր դրաւ, որ ամենաշատ քաջութիւններ ըրած էր ովմալիս կան խաղելու մէջ, և ամեն տեղ իրեն քաջութեան անունը հռչակուած էր: Գլխաւոր քաջութիւնները որոնք կը պատմէ Խորենացին ասոնք են. Թէատրոնի մը մէջ քանի մը առիւծներու դէմ ըլլելով յաղթեց անոնց ու սպանելու դէմ ըլլելով:

5. Պատ ինչո՞ւ թունաւորեց զսուրբ Ներսէս ու ինքը ի՞նչ մահ ունեցաւ.

6. Վարադդատ ո՞ւ է ու ի՞նչ քաջութիւններ կը պատմուին վրան.

նեց : Անդամ մը երբոր Լոնդոնաբացւոյ դէմ պատերազմի գացեր էր , ինքը մինակ հինգ Լոնդոնաբացին դէմ մենամարտութեան եւաւ . հինգն ալ հոն ետևէ ետև սպաննեց ու ինքը չլիսասուեցաւ . գարձեալ ուրիշ անդամ մ'ալ վաղեց կատալաբար բերդի մը լսայ , ու այնպիսի արագութեամբ և յաջողութեամբ պասերազմեցաւ որ քանի մը վայրկենի մշջ բոլոր պարըսպին վայրի եղած պահապանները նետով սպաննեց , որոնք տամնելութ հոգի էին : Վերջին բայց գրեթե ամենէն մեծ քաջութիւնը առ եղաւ՝ որ երբոր թագւուրութիւնը առած Յունաց զօրքով Հայաստան կուգար Համբան ասորի աւազակներու հանդիպեցաւ , որոնց ետևէն վայրիով հալածեց զերենք . անմոն երբոր նեղը մտան , Եփրատ գետէն անցնելով վայրի կամուրջի տեղ դրուած գերանը գետեցին : Վարազգատ կատղեցաւ առ բանին և անանկ ուժով ցածեց գետին վայրէն , որ կարծէն թէ սաստիկ բանութեամբ չգուած մեծահատով քարի մը պէս մէկ մանրերկրորդի մշջ գետին անդիի կողմը նիկաւ , որուն լսյնութիւնը քսանուերկու կանդաչափ էր . երբոր տեսան առ բանս աւազակները մշէն զէնքերնին ձգեցին ու անձնատուը եղան : Վարազգատ թագւուրութիւնը առելէն վերջն ալ շատ քաջութիւններով բարոր թշնամիները վախցուց . բայց քանի մը տարիէն չկրնալով Յունաց զօրավարներուն ամբարտաւանութեանը դիմոնալ ուղեց Յոյնէրէն ապստամբիլ և Պարսից հարկատու ըլլալ . բայց երբոր իմացաւ Թէկոդոս կայսր կ . Պօլիս կանչեց զինքը . ան ալ յուսալով որ եթէ անձամբ երթայ կրնայ ինքզինքը արդարացնել , եւաւ գնաց . բայց Թէկոդոս առանց երեսն ալ տեսնելու Թուշիս կողին աքսորեց , չուրս տարի թագւուրիէն վերջը :

ԴԱՍԻ.

- Արշակ Գ. Վաղարշակ Բ. կը թագաւորեն . — 2. Արշակայ և Խորով Գ. պատերազմն . — 3. Խորովու Կ. Վաղաւոնի գերութիւնն : Շաւարչու Պարգև . — 4. Վաղաւապուհ և իր զվարոր արդինքն . — 5. Հայկական տասից գիւղոր . — 6. Խոսպով Գ. գարձեալ կը թագաւորէ . — 7. Հայոց բնդգիւն թիւնն Շավուհին գէմ : Արտաշէս Գ. կը թագաւորէ . — 8. Արշակունեաց թաղաւորութեան վերջանալը . — 9. Արշակունեաց թագաւորութեան վերջանալուն պատճառնեը :

- Թէկոդոս տեմնելով որ Հայոց թագաւորներն կ'ասպատամբին նրան , մտածեց որ երկու թագւուրո գնէ , որպէս զի չկարենան մէկենին միաբանելով ապստամբիլ : Ուստի Պապայ երկու աղաքը Արշակն ու Վաղարշակը թագաւորեցուց Հայոց վրայ : Արշակ Պուխն նստեցաւ ու Վաղարշակ Երիխոս , որ տարիի մը չթագւուրուած մեռաւ : Իմանալով Շավուհ որ Մեծն Թէկոդոս մեռեր է , ու տեղը Արշակին որդին յաջորդեր է , որ տկար մարդ մ'էր , ուղեց հաշտութիւն ընել որպէս զի Հայաստանին մէկ մասն ալ Պարսից հարկատու ըլլայ . ուստի որոշեցին որ արեմտեան մասը Ցունաց հարկատու ըլլայ և արելէլեան Պարսից . ան պատճառաւ Արշակ , որ արևելեան մասին թագւուր էր , չուղեց անհաւատ Պարսից տակն ըլլալ , արեմտեան կողմը :

- Թէկոդոս ինչո՞ւ երկու թագաւոր գրաւ Հայոց վրայ ու իրեն մեռնելէն եւոքք ինչ վոփունութիւններ ըրին Պարսիկք և Յոյնք Հայաստանին նկատմանը .

եկաւ, աթոռը Երիդա քաղաքը դրաւ, չեան ալ շատ նախարարներ մէկտել Եկան՝ իրենց կալուածները թողով։

2. Շապուհ իր մասին վրայ թագաւոր դրաւ Խոսրով Երրորդը, և Արշակոյ հետ գնացող Եշաններուն ալ թուղթ դրեց, յորդորելով որ դառնան դան, և թէ իւրաքանչիւրին իրեն կը դարձնէ առջի ունեցած կալուածները։ աս պատճառաւ նախարարներէն շատն նորէն ելան գնացին Պարսից մասը՝ բայց 'ի մէկ քանիէն։ Ասոնք Երթալու ասեննին Արշակոյ դանձերն ալ կողովաեցին Խոսրովու ատրին։ Արշակ դեսպան իրկեց Խոսրովու որ դանձերը ետ դարձընէ. բայց Երբոր անիկայ չտուաւ, պատերազմ բացուելով մէջերնին՝ շատ արիւնչէղութիւն ըլլալէն ետքը Արշակ սաստիկ յաղթուեցաւ և Երփնայ գալանալով հիւանդացաւ ու մեռաւ, հինգ կամ եօթը տարի թագաւորելէն վերջ։

3. Կայսըր յօյն կոմա մը դրաւ Արշակին տեղը. անոր համար նախարարներն բարկանաւով Խոսրովու մասը դացին. և Խոսրով խոստանալով կայսէր Յունաց մասին հարկն ալ ատլու՝ ան մասին ալ թագաւորութիւնը ինքը առաւ ու բոլոր Հայտատանի տիրեց։ Բայց քանի մը նախարարներ մասնաւոր թշնամութիւն ունենալով Խոսրովու հետ, անիւլքութեամբ յարմար ատենի մը կ'սպասէին որ վասա մը հասցնէն Խոսրովու. ուստի Երբոր Ասպուրակէս կաթուղիսին մեռնելէն վերջը մեծն Արշակ Պարթուղիսին գրուեցաւ, գնացին ասոնք

2. Արշակոյ ու Խոսրովու մէջ ինչէն պատերազմ բացուեցաւ։

3. Խոսրով ինչո՞ւ համար Անյուշ բերդը փակուեցաւ, ու ով են Շաւարշ ու Պարգև։

ամբաստանութիւն ըրին Շապհոյ թէ Հայերը կ'ուղեն ապատամբէլ, և ահա ասոր նշան՝ առանց Պարսից թագաւորէն հրաման առնելու կաթուղիսու դրին։ Շապուհ հաւատալով աս բանիս գեսալոն զրկեց Խոսրովու որ իրեն գայ. բայց Խոսրով յանդիմանեց գեսալաները և բանի տեղ չամարեցաւ, Շապհոյ հրամանը։ Շապուհ աս բանիս վրայ շատ նեղացած՝ իր Արտաշեր որդին շատ զօքքով Հայտատանի վրայ զրկեց։ Խոսրով յուսահատած՝ ելաւ Արտաշրին գնաց, որ շղթանիրով կարեց զինքը ու տեղը անոր Վամաշպուհ եղայրը թագաւոր դրաւ, զուրբն Արշակ կաթուղիկոսութենէ ձգեց, և Գաղաւոնն նախարարը՝ որ ան ատենները շատ երևելի էր, խարդախութեամբ քովը կանչելով բռնեց ու շղթայի գարկաւ։ Եղյն իրիկունը Պաղաւոնին Եղբայրը Շաւարշ և Պարգև Ամասունին եօթը հարթւը կտրիճ մարդիկներով գնացին որ Խոսրովով ու Պաղաւոնը ազատեն, բայց գժեալդութեամբ հնարքին շալաղողելով հարկադրեցան Պարսից հետ պատերազմեցու. իրաւ է որ իրենց քիչուորութեանը համեմատ՝ շատ կտորածներ ըրին Պարսիկներէն, բայց ափսոն որ Շաւարշ մեռաւ. Պարգևն ալ բռնուելով Արտաշրին դեմոց տարուեցաւ, որ հրամայեց կաշին տիկ համել. իսկ լիսորով Պարսիկաստան առնելով Այսուշ բերդը դրաւ և դիմացը կայնեցուց Պարգևին կաշիէ տիկը. Ոչա բարբարոսութեան դան պտուղներէն մէկն (392)։

4. Վամաշպուհ իր եղորը տեղն յաջորդելով, ուսումնասէր ու հանդարատարարոյ և խոչեմբնութեամբն մեր անուանի թագաւորներէն

4. Վամաշպուհ ինչ կերպով ըրաւ իրեն թագաւորութիւնը և գլխաւոր արդինքը ո՞ն է.

մէկն եղաւ, թէ պէտք և քաջութեան կողմանէ մասնաւոր բան մը չունի: Ըստ ամենայնի Պարակից հպատակութիւն ցուցընելով սիրելէ եղաւ Պարսից Վամամ Կրման թագաւորին, անոր համար Կրման ուղելով Վամաշապուհին հաճոյական բան մը ընել Խոսրովը Անցուշ բերդէն հանեց ու պատուով կը պահէր: Վամաշապուհ ասանկ խաղաղութեամբ և հանդարատութեամբ քամառերկու տարի թագաւորելէն վերջը մեռաւ, իր բարի անունը յիշատակ կանգնելով աղջական օրին մէջ, երախագիտութեան անմահական արձանը:

Վամաշապուհ գեղեցիկ արդիւնքներէն մէկն է իր ուսումնակեր բարի, որ Հայաստանի ուսումնաց ոսկեդարեան տաճարին ոսկեծայլ սիրելէն մէկն եղաւ Սահակայ, Մեսրոպայ ու Խոսրենացոյն հէտ: Իր ասենը գանուեցան մէր գեղեցիկահիւս երկնապարզ գրելն, իրեն հովանուորութեամբն ու եռանդեամբն ան գրերուն արդիւնքը երկցաւ, որով այնպիսի սպանէլի գրաւորական ճոխութեան ժառանգորդ եղանք: Վամաշապուհ միայն գործակից, քաջալերից ու օգնական եղաւ, իսկ մէկաշնորդ գործի և արդիւնք, որով կ'իմացուիթէ որչափ աւելի երախատագէտ պիտի ըլլանք անոնց որ այսպիսի անհամամատ բարեաց պատճառ եղան, և առանձին հայկական տառից գիւտովն, որ ասանկ հրաշալի կերպով եղաւ.

Յ. Վամաշապուհ թագաւորութեանը ժամանակն մէծ անուն հանած էր Մեսրոպ վարդապետն Տարոն գաւառէն իրեն սրբութեամբն ու իմաստութեամբը, և մէծին Ներսեսի աշա-

Յ. Հայկական տառից գիւտը որո՞ն ձեռքովը եղաւ ու ի՞նչպէս.

Կերան ըլլարով անոր հայրենասիրութեան ու բարելարութեան հոգին զգեցած էր: Երբոր ինքը անապատքաշուած կը ճգնէր, լսեց սրբոյն Սահակայ համբաւը, քովն եկաւ ու վարդապետութեան պատիւ առնելով անկե՛ սկսաւ ամեն տեղ քարոզութիւն ընել քանի մը աշակերտներով, և ետակ ըլլալ գիւտութիւնները ծաղկեցընելու: Բայց տեսնելով մեր ազգին յատուկ գիւր չունենալուն վասները և անով ուսմանց յառաջանաբուն գժոււար ըլլալն, երկուքը միաբան սկսան ետակ ըլլալ գիւր գտնելու: Բայց շատ աշխատելին ետքը երբոր մարդկային հնարքներէ յայսէրինն կտրեցին՝ աղօթքի ապաւինեցան: Մուրբն Մեսրոպ քանի մը աշակերտներուն երաւեցեմս գնաց՝ Պլատոն անունով մեծանուն փիլիսոփայի մը քով որ շատ հաջակուած էր աս տեսակ բաներու ճարտար ըլլայուն համար. Բայց յայսը սպարապ ելլելով անկէ Սամուսատ գնաց, Հռուտիանու անունով ուրիշ փիլիսոփայի մը քով, որ նոյնպիս ան ալ մէծ անուն ուներ. Բայց անօգուտ եղաւ ան ճամբարդութիւնն ալ, որովէտան լցու մը չէրցաւ առնել իր ինդրոյն վրայ: Տեսնելով սուրբն Մեսրոպ աս գժոււարութիւնները նորէն Աստուծոյ առնել տարածեց իր սրբառուց մանղթանքները, և ահա յանկարծ տէսիլը մը աեսաւ, որովսրտին մէջ տարաւորեցան աստուծապարգեն լեզուին գրելը. անսիլքն որ անցաւ՝ սուրբն Մեսրոպ գրեց տառերը ու փորձեց աեսաւ որ լեզուին բոլոր յատկութեանցը յարմար էին, ան գրելը կարգի գնելովն մեր այրութենքը ձևացուց: Աս գրերով հայերէն առաջին գրտւածքն եղաւ: Սոլյմանի Սահակայ գրելն թարգմանութիւնն, որ երբոր տեսաւ ըստ ամենայն մասանց յաջողած՝ առանձ ուրախութեամբ հայաստան բերաւ: Մէ-

կէն թագաւորը սրբոյն Սահակայ և սրբոյն Մերուպայ հետ միաբան, դպրոցիներ ու արուեստանոցներ բանալ տուաւ և մեծ ջանք ունեցաւ անոնց յառաջադիմութեանն. որով քիչ միջոցի մէջ ամեն բան առաջ երթալով ունեցաւ Հայաստան ալ՝ թէպէտ սակաւատե՛ բայց գեղեցիկ ոսկեդար մը՝ իր գրականութեանը պարծանք:

6. Որովհէտեւ Վաւաշապուհին որդին Արտաշէս գեռ պղտիկ էր, նախարարներն ինդրեցին Յազիկերտէն որ զիսորով երրորդը նորէնց թագաւոր նստեցրնէ. բայց Խոսրով հաղին թէ տարի մը թագաւորեց մասւ, և նորէն Հայաստան տակն ու վրայ եղաւ, այնպէս որ մինչև թագաւորութիւնն ալ կործանեցաւ, Վասըն զի Յազիկերտ ուղելով որ Հայերը արևապատճընէ, փոխանակ մեր ազգէն մէկը թագաւոր գնելով՝ իր Շապուհ որդին թագաւորեցուց Հայոց վրայ, որ կը ջանար պարսկական տօներ, հանդէմներ ընելով կամաց կամաց Հայերը ընտանեցրնել արևապատճութեան. իսկ Հայերն իմանալով Յազիկերտին միտքը սկսան արհամարհանօք վարուիլ Շապուհին հէտ:

7. Անդամ մը Շապուհ Հայոց նախարարներուն հէտ մէկտեղ որսի գնացեր էր, անոնց հէտն էր նաև Ատովլ Մոկաց քաջ նախարարը. ասսնք հէտուէն վայրի էշերու երամակ մը տեսնելով սկսան ետենուն ինինալ ու հալածել. Երբոր վայրի էշերը քարոտե ժայռոտ տեղեր եւ մելով իրենց որջերը քաշուեցան, նախարարներն ուղելով քաջութիւննին ցուցընել Շապուհին,

6. Վաւաշապուհին ետքը ո՞լ թագաւորեց.

7. Հայերը ի՞նչ գիպոււածներու մէջ իրենց ընդգիմութիւնը ցուցին Շապուհին գէմ, ու Շապուհին տեղ Վաւամ զ՞ո՞վ գրաւ.

սկսան ժայռերէն վէր արշաւել. բայց Շապուհ վախիկոտ ու միանդամնային անվարդ ըլլալով մէկդի քաշուեցաւ. անտաեն Ատովլ Մոկացին նախարարնեց զինքն ու ըսաւ. « Ինչո՞ւ վաստութեամբ կեցեր ես, ու Պարսից աստուածորդի, չվաղեմ գուն ալթէ որ մարդ ես ու մարդու քաջութիւն ունիս »: Պատասխան տուաւ Շապուհ. « Ատանանները միայն կրնան ատանկ քարոտ տեղէրէ վէր ելլեւ ու ոչ եթէ մարդիկ », որով նախարաբնը սատանայի տեղ գրաւ: Ատովլ անհանտանինը միաքը պահեց ու առթի մը կ'սպասէր որ ան խօսքին վահքը հանէ Շապուհին: Ուստի երբոր ուղիւ անդամ մը կինձ որսաւու գացերէին, ինչպէս որ սոլորութիւնն էր, եղեգնուածին կրակ տուին. Շապուհ դանդաղելով չկրցաւ եղեգնուածէն գուրս ելլեւ ու կրակը ըրս դին տուաւ: Ատովլ իմանալով որ Շապուհ վասնդի մջ ու գունութեան կարօս է, մօեցաւ Շապուհին քովիս ու ծալը ընելով ըսաւ. « Ահա քու հայրդ ու աստուածդ, ինչո՞ւ կը վախիս », Շապուհ նեղանալով ըսաւ. « Կատակի տաեն չէ գիմայ. շուտով անցիր ու գուրսէլիր որ ես ալ կարենամ ետեղդ գալ, որովհէտեւ ձիս խրանէ »: Ատովլ աւելի համարձակութիւն աննելով թագաւորին վախուսութիւնն ըսաւ. « Գիտցիր չափդ ու անիէ աւելի մի յոխորար. թէ որ գուն Մոկացինները սատանայի որդի կը կոչէս, ես ալ զՊարսիկները կնամարդի ու վատ կը կոչէմ »: Աս ըսէլէն վերջը զարկաւ ձիուն, անցաւ կրակին մէջէն և Շապուհը ազատէց: Բայց զիտնալով որ աս իրեն համարձակախօսութիւնները Շապուհն ծանր էկած են, թողնոց Հայաստանն ու իր Մոկաց աշխարհքը քաշուեցաւ: Ատովլ նման ուղիւ քանի մը նախատական գէպէրով այնչափ բարկացուցին զՇապուհ, որ առթի մը

կ'սպասէր Պարսկաստան փախէլու. ուռափի լսէլով որ Յաղիերտ իր հայրը հնւանդացէր է, ձամբայ եւլու Պարսկաստան երթալու: Կապուհ երթալու ատեն հրաման տուաւ իր ջորագլխին որ վերջը Հայոց Նախարարները բանէ ու իր եւուէն Պարսկաստան զիկէ. բայց հազիւ թէ ինքը Պարսկաստան հասէր էր՝ հայրը մեռաւ, ինքն ալ իր քովի մարդիկներն սպաննուեցաւ: Նախարարներն իմանալով Շասպուշին հրամանը՝ ամենքը միաբան Պարսից զօրքը հալածեցին Հայաստանէն, ու շատ մարդ ալ սպաննեցին: Բայց վախնալով Պարսից Վամ թագաւորէն՝ ամենքն ալ իրենց բերդերը քաշուեցան, ու Պարսիկները շատ նեղութիւն տուին իրենց մասին մէջի եղած Հայոց: Վամ ամենքնով որ առանց մէկ գլխի մը չկլնար ժողովը սովորական հարկը, հաշուութիւնը ըրաւ Նախարարներուն հետ, ու Վամաշապուշին որդին Արտաշէս երրորդը թագաւորեցուց որ տամանլութ տարեկան էր: Առջև բերան ուրախանալով գոհ եղան նախարարներն, բայց քիչ ատենէն աեսնելով Արտաշէսին նմիարդութիւնները՝ զցուեցան իրմէ և կ'ուղեին թագաւորութիւնը Պարսից տալ. աս բանիս շատ դէմ կեցաւ տուրքն Սահակ, գիտանլով որ ազգին կորստեան և մեծամեծ վնամներու պատճառէ. բայց Նախարարներն ձանձրացած ըլլալով անանկ սնկարդ թագաւորներէ՝ մտիկ չըրին սրբոյն Սահակայ խրատին ու գնացին Վամաշն իննդրէցին որ թագաւորութիւնը վերցնէ ու անոր տեղը Պարսիկ իշխան մը դնէ:

8. Վամ նախարարներուն իննդրէքը լսելով կանչել տուաւ զուրբն Սահակ ու զԱրտաշէս:

8. Արշակունեաց թագաւորութիւնն ինչպէս վերջացաւ.

Արտաշէս թէպէս և ինքզինքը արդարացուց ըսելով որ աէրութեան դէմ յանցանք մը ըրած չունի, բայց Վամ ուզելով թագաւորութիւնը վերցընէ զուրբն Սահակ բանտ դրաւ, Արտաշէմ ալ Պարսկաստանի ներսերը քչեց ուր երեք չորս տարի ալ ապրեցաւ ու մեռաւ, վեց տարի թագաւորէնէն ետքը: Սահա աս կերպով վերջացաւ Արշակունեաց հզօր թագաւորութիւնն Քրիստոսի 428 թուականին, 580 տարի գիմանալէն ետքը:

9. Արշակունեաց թագաւորութեան վերջանալուն բոլը պատճառ նէրը հոս շարելն աւելորդ կը համարինք որովհետև պատմութեան վերջը աւելի ընդարձակ խօսած ենք. հոս համառօտ մը կ'ուղենք յիշել նախարարաց անխօնէմ գործողութիւնը, որով մեր Արշակունեաց թագաւորութիւններ կործանեցին: Գործողութեան պահարկելի ըլլալը ամենուն ալ յայտնի է. վասն զի մարդուն ևս առաւել ազգի մը ազատութիւնը աստուածային տուրք ըլլալով, առողջ միայն կրնայ վերցընել աս վերցիկ ձիգը ան իշխանութեամբ որով տուել է. ուստի ով որ պատճառ կ'ըլլայ վերնալուն և կամ ինքը կը վերցընէ, իրաւամբք ատելի է ամենուն ու Աստուծոյ պատիմը կը համարուի: Աթէ թագաւորը գէշ էր, կրնային զինքը թագաւորութենէն զոկէլ, թէ որ ազգին ու հասարակաց օգուտը անանկ պահանջէր. որով ոչ միայն կ'արդարանար իրենց գործողութիւնը, հասկա յաւիտենական օրհնութիւն կը ժառանդէին. իսկ հմայ փոխանակ օրհնութեան անէծք կը ժառանդէն, որովհետեւ որչափ թագաւորին գէշութիւնը՝ նոյնչափ ալ

9. Արշակունեաց թագաւորութեան վերջանալուն պատճառները որովհեք եղան.

Երենց անկրթութեանը, հասարակաց բարին չմտածելը, ու ասոնցմէ առաջ եկած չարեքներուն պառազներն են, որով Երենց կրիցը զահ ըրին այնչափ ժողովուրդ գերութեան մատնելով, և այնպիսի սասկալի գերութեան մը մատնեցին ան գեղեցիկ ձիբբերով զարդարուած ազգը, որուն բարու ունեցած սփանչելի ու օատրաց նախանձելի առաքենութիւնները խանգարուելով, այնչափ թշուառութեանց մէջ ընկաւ՝ զոր պատմնեթեան յաջորդ թերթերուն մէջը պիտի աւեմնենք ու լսենք:

ԽԾԽԱՌՈՒԹԻՒՆ

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Ս Յ

Գ Ա Ս Ի Ա .

1. Մարզպանք . — 2. Յաղերտի Հնաբըն: Հայոց բնդութիմութիւնն . — 3. Նախարարաց բանդարգելութիւնն և ուրացութիւնն . — 4. Վարդան: Ազուանից կ'օգնէ: Վասակաց անօրէնութիւնքն . — 5. Վարդանանց պատերազմն . — 6. Նախարարաց երկրորդ գերութիւնն . — 7. Վասակաց դատապարութիւնն և մահուան ստորգերութիւնն :

1. Արշակունեաց թագաւորութեան վերջը մարզպան գրուեցաւ Վեհմի՛րշապաւէ անունով պարսիկ իշխան մը, որ բնութեամէ խալվազսէր և աղնիւ մարդ ըլլալով՝ շատ լաւ կառավարեց Հայաստան տամնըչորս տարի, և երբոր ինքը մեռաւ, տեղը մնցաւ Վասակ Սիւնի, փառասէր, անհաւատ, նախանձուտ, ազգատեաց նախարան, որ փոխանակ ազդէն ուրախութեան և երջանկութեան պատճառ ըլլալու իրբ Հայ, թշուառութեան և մեծ տրամութեան պատճառ եղաւ Հայաստանի:

1. Արշակունեաց թագաւորութեան ինկնալէն և աբը ազգերնիս ինչ վիճակ ունեցաւ.

2. Յաղկերտ Երկրորդ Պարսից թագաւորն ուղելով որ ամեն իրեն հարկատու ազգերը արևապաշտ ըլլան, ամեն նար մասածելէն վլրջը՝ մոդերուն խորհրդովն հրաման զսկեց Հայոց, Ազուանից, Վրաց, որ մէկմէկ բազմաթիւ գնդեր զըրկեն, որպէս զի կարենայ ազգին Երևելի զօրավարներն ու նախարարները հետացընել ու մատածները գիւրաւ արևապաշտ ընել: Ազդին վրայ ալ մէր ցուցընել ուղելուն, նախարարներէն մէկ քանին պատուեց, ինչպէս Վասակոյ Սիւնեացնախարարնին մարդուպանութիւն տուաւ, և Վարդան Մամիկոնեանին ընդհանուր սպարապետութեան պատիւը (442):

Հայերն խորհուրդ ըրին մէջերնին ու բազմաթիւ գունդ մը զբկեցին՝ շատ քահանաներով ու բազմութեամբ նախարարաց, որպէս զի անհաւատտրմութեան կամկած մը չտան Յաղկերտին, անոնց հետ մէկտեղ դացին նաև Վասակու Վարդան, նոյնպէս Ազուանից և Վրաց զօրքերն ալ եկան: Յաղկերտ Երկու տարի Հմնաց դէմ պատերազմ ընելէն վլրջը Երբոր չկրցաւ յալթել դարձաւ Պարսկաստան, ու սկսաւ նաև նախարարները յորդորել և ստիպել որ արևուն Երկրագութիւն ընեն: Նախարարներն միաբան դէմ կեցան Յաղկերտի, ոմանք ալ նահաւակուցան, ինչպէս Դարեգին, Ատովմ Գնունի ու Մանաժիհը Ուշունի իրենց զօրքովն: մէկալ նախարարներն ալ շատ ստիպեց, բայց չկրցաւ մաքերնուն հաստատութիւնը խախտել:

3. Նոյն միջոցն Յաղկերտ Դենշապուհ անու-

2. Յաղկերտ ի՞նչ հնարք մտածեց Հայերը արևապաշտ ընելու.

3. Ի՞նչպէս սկսաւ Պարսից կրօնքը Հայաստանի մէջ սարածուիլ ու ի՞նչ գիտելիք կայ Վարդանայ ու Վասակ Սիւնին վրայ.

նով մարզպան մ'ալ Հայաստան զրկեց որ Երթայ ծանր տուրքերով և ուրիշ նեղութիւններ տալով Հայերը գարձնէն. իսկ նախարարները սասափի բանավի մը մէջ գրած կը նեղէր, ըսկելով որ Եթէ հաւատքնին ուրանան՝ զիրենք աղատ կը թողու: Նախարարներն աեմնելով որ առանց իրենց Հայաստան ոտքի տակ պիտի երթայ, մտածեցին՝ անդամ մը արտաքուսա ուրանալ հաւատքնին, որպէս զի գերութենէն աղատելով կարենան օգնել ամբողջ ազգին. այսպէս մէջերնին միաբանելով արևու և կրակի Երկրագութիւն ըրին. Քերջը Յաղկերտին պատահ գտած Հայաստան գարձան եկան, անոնց հետ մէկտեղ եկան շատ մը մոգերու բազմութիւն, որպէս զի Հայերը կրակապաշտութեան մէջ կրթէն: Երբոր տեսան Հայերն աս մոգերը, սրբոյն Ղենդի և ուղիւ սուրբ քահանայից աւաշնորդութեամբն մոգերուն վրայ վաղեցին, շատ մարդ մեռուցին շատն ալ վիրաւորեցին, մնացածներն ալ լեզապատօն փախուցին: Վարդան որ արտաքուսա միայն ուրացեր կը, աեմնելով որ մոգերը հաշածուեցան Հայաստանէն, մէկէն եկաւ Յովսէփ կաթուղիկոսին և ուրիշ քահանայից սոբքը ինկաւ, թողութիւն ինդպէլով ակամաց ուրացութեամբ: իսկ Վասակ սրանց ուրացած ըլլալով չէր ուղեր որ մոգերը Երթան Հայաստանէն, ուստի խարէութեամբ կ'ըսէր որ առժամ ընդունին մոգերը, որպէս զի Յաղկերտ վրանին չքարկանայ, ու վերջը կամաց կամաց գուրս հանէն զիրենք, ասով շատին միաբը համոզուեցաւ, մանաւանի թուրլահաւատաներունը, և շատ եղ կրակապաշտութիւնն սկսաւ տարածուիլ մանաւանդ մէծամեծաց աները:

Մեծն Վարդան տեմնելով աս չարիս և չկրնալով գարման մը ընել, սրանին ցաւէն ելաւ Հայաս-

տանէն և գէպ 'ի Յունաց մասը սկսաւ Երթաւը
բայց մէկալ նախարարներն Երբոր ըսէցին Վարդանայ Երթաւը՝ շատ աղաքանկներով եւտ գարձուցին զինքը, և իրեն հետ միացած՝ աներէն հալածեցին մոգերը, վերջը Պարսից զօրաց վրայ յարձակելով, որ Վասակայ առաջնորդութեամբն Բագրեանի ժողովուեր էին, մեծ ջարդ ըրին, և շատ մարդ բանեցին, որոնց հետն էր նաև Վասակ: Բայց սասափի ապաչէլուն և աւետարանին վրայ Երդում ընելուն համար նորէն աղատ թռողւցին զինքը:

4. Յազկերտ Աղուանից Երկիրն ալ շատ մոգեր զիկեր էր որ զանոնք ալ արևապաշտ ընեն. անոնք չկրնալով գէմ գնէն Հայերէն օգնութիւն ուղղեցին, անոր համար հարկ եղաւ որ բոլոր զօրքը Երեք բաժնէն, առջնին տուին Ներշապուհ Արծրունիին որ Պարսից գէմ գնէ. Երկրորդը Վասակայ՝ Հայաստանը պահէլու համար. Երրորդ գունդն ալ տուին Վարդանայ որ Աղուանից օգնութեան Երթայ: Ճամբան Վարդանայ զօրաց գէմ ելաւ Պարսից զօրքը որոնք մեծ ջարդ կերան Հայերէն: Վարդանին զօրքերը Աղուանից Երկիրն որ հասան՝ բոլոր մոգերը կոտրեցին, կրակատաւնները կործանեցին և Պարսից զօրքը որը հալածեցին անկէ: Երբոր Վարդան Աղուանից Երկիրը ասանկ քաջութիւններ կ'ընէր, անըզգամ Վասակն իրեն Երդմանը վրայ հաստատուն չկենալով՝ հաւատքը ուրացաւ ու նորէն սկսաւ մոգերը Հայաստան մացընել, կրակատաւնները բանալ, ու քահանաները և ուրիշ շատ մարդիկ չարչարել. իրեն հետ միաբանեցան մէկ քանի

4. Վարդան Աղուանից ի՞նչ օգնութիւն ըրաւ ու Վասակ իր անօրէնութիւններովը ի՞նչ չարիք հասուց գարձեալ Հայաստանի.

Թուշահաւատ մարդիկ ալ: Քաջն Վարդան Երբոր լուեց Վասակայ նորէն ըրած դաւաճանութիւնը, մէկէն իր զօրքովը անօր վրայ հասաւ, և հետոը ուրացով միաբանողներուն մեծ ջարդ տուաւ: Վերջը Յազկերտին գեսպան զրկեց, որ Եթէ զիրենիք աղատ թուու որ քրիստոնէութիւննին իրան սիրով կը ծառայէն: Յազկերան Երբա թէկաէն և հրաման տալ ձեսցուց, այց միութը խարդախութիւնը ըլլապով՝ Հայերն իմացան, և իրենց կերպը չփոխեցին: Յազկերտ Հայոց գրենց հաւատքին վրայ հաստատութիւնը տեսնելով՝ յուսահատեցաւ զիրենիք շահէլէն, ու Միհներսէն հազարապետը զրկեց շատ զօրքով: Միհներսէն տեսնելով Վասակայ հաստատուն և անդրդրդութիւնը չարութիւնն ու անզգամութիւնը, բոլոր զօրքը անօր յանձնեց և ինքը դարձաւ Յազկերտին քով, օգնական տալով Վասակայ Մուշկան նիւսալաւորութը:

5. Տեսնելով արին Վարդան Վասակայ մէծամեծ պատրաստութիւնները, ամեն տեղի Հայերուն գեսպան զրկեց որ ուղովը իր քովը գայ. ասով Արտաշատու մէջ վաթսունըլլէց հազար հոգի ժողվուեցան, ամենն ալ կտրիճ հաւատոյ համար պատերազմելու վառուած. մէջնին կային նաև քանի մը եպիսկոպոսներ ու շատ քահանաներ: Իսկ Վասակ մէկ քանի սուտքահանաներու ձեռքով շատ մարդ խաբեց՝ իր կողմը ձգեց, ըսելով որ հրաման եկեր և Յազկերտէն համարձակ քրիստոնէութիւնը պաշտելու. ասով մինչեւ Վարչիներն ու Աղուանները Հայոց միաբանութիւններ բաժնէց: Երբոր Երկու կողմէն ալ պատերազմի պատրաստուեր էին, Հոգեգա-

5. Վարդանանց պատերազմը ի՞նչպէս եղաւ ու ո՞չչափ քաջեր զոհ եղան Հայոց կողմանէ.

լըստեան վեցերորդ երիկունը, որ Երկրորդ օրը պատերազմ պիտի ըլքար, ամենն ալ խսոսովլանելով հաղորդուեցան, որպէս զի հոգւով և մարմառով զօրանան: Երկրորդ առաւօտք սկսու պատերազմը շատ կատաղբար, և պատերազմին սկիզբները հինգ հազար հոգւոյ չափ Վասակայ կողմը անցան, ինչպէս որ առաջուց խօսք առեւրէին, ու մեծ շփոթութիւն պատճառեցին: Մեծ քաջութեամբ պատերազմեցան Վարդեանիք. բայց երբոր սուրբն Վարդան անհիւթի պէս աստին անդին վաղելով մեծամեծ քաջութիւններ կ'ընէր՝ վիրաւորութելով ինկաւ մեռաւ, ինչպէս նաև ուրիշ շատ մը նախարարներ և երկու հարիւր վաթունը ըլլեց հոգի. մնացածներն ալ տեսնելով Վարդանան մահը, ցիր ու ցան եղան, և իրենց բերգերուն մէջը ամրացան: Բայց Պարիկները վերջն Հայոց այլ և այլ գունդերուն հետ ալ պատերազմելով ուրիշ եօթը հարիւր հոգւոյ չափ ալ մեռուցին, որով Վարդանանց նահատակաց թիւը եղաւ հազար երեսուն ու վեց: Խոկ Պարսից կողմանէ մեռան նոյն օրը իրեք հազար հինգ հարիւր հոգի: Վասակ աս ամեն չարիքներով չկշտանալով նաբեռութեամբ շատ մարդ բռնեց ու սպաննեց, և Ղեկանդեանք ըսուած սուրբքահանայքն ալ բռնեց շղթայի զարկաւ (ԱՅ):

6. Վարդանայ հետ միաբանած նախարարներն գունդ գունդ ձեւացած սկսան Պարսից քաղաքներուն ու բերգերուն վայ յարձակիլ ու վնասներ հասցընել. անոր համար Յաղկերա Անրորմզդ անունով մէկը դրաւ Հայոց վայ որ նախարարները խաբեռութեամբ բռնէ ու իրեն վրկէ: Նա խարարները թէպէս և իմացան Անրորմզդին միտքը, բայց մարտիրոսութեան փափաքով վա-

6. Մէկաւ մնացած նախարարները ինչ եղան.

ոռուած՝ փոյթ ըըրին, ու ելան Անրորմզդին քովը գնացին. ան ալ զամենքը բռնեց և Ղեկանդեանց հետ մէկանեղ Յաղկերատին դրկեց, ու համան տոնաւ Հայոց որ ամեն մարդ իր կրնքը պաշտէ:

7. Վասակ աս ամեն չարութիւններն ընէլէն վէրը յանցաւոր գանուեցաւ Յաղկերատին առնչել, և անոր հարամանովն իր ամեն իշխանութիւնն ու հարասութիւնը աւեն և սոսկալի բանափի մը մէջ գրին: Վասակ իր անմոռութեամբն ու փառամողութեամբը չկրցաւ իմանալ թէ աղդատեաց, անձնասուկ և անմիաբանասուկ մարդուն վախճանը ստոկալի մահէ և Մերուժանայ չարաչար մահը իրեն խրատ չեղաւ, անոր համարքան դայն ալ տեւիլ գէշ և սարսափելի մահ ունեցաւ: Որ չափ տարբերութիւն կոյ աս երկու զօրավարաց, այսինքն Վարդանայ և Վասակայ մէջ. Վարդան բարերար և հայր աշխարհի, իսկ Վասակայ սեացեալ ճակտին վրայ որոշ կը տեսնուի իր թշուառութեանը պատճանն, այսինքն նախանձ, փառամոլութիւն, աղդատեցութիւն և անմիաբանասիրութիւն: Վարդանայ պէս անմահ բարերարներուն անունը մարմարին քարերու վրայ գրելն ալ ոչ ինչ է, վասն զի այնպիսւոյն արժանաւոր տեղը մարդուն գերազանց միաքը ու աստուածանման հոգին է. իսկ Վասակայ պէս աղցանեաց մարդիկներուն անունն աղմի վրայ գրելն ալ շատ է, թէպէտ և ոտից կոխան ըլլան, վասն զի այնպիսիներուն անունը մարդկանց անուններուն կարգէն գուրս հանելու էր՝ թէ որ իրենց գէշ վաբքը ուրիշներուն խրատի հա-

7. Վասակ ի՞նչպէս իրեն անօրէնութեանց պատիքը գտաւ և ի՞նչ սոսրագրութիւն կ'ընէ իրեն մահուանը մեր Եղիշէ պատմագիրը.

մար միջյն հարկաւոր ըսլլար: Լսելու արժանի
է Վասակայ որդնալց յաւալի մահուն ստորա-
դրութիւնը որ կ'ընէ մեր Եղիշէ քաջ և ճարտա-
սան պատմին:

« Օր ըստ օրէ բերելին իբրև զգեւընկենուեն՝ ի
մեծ հրավարակին, ձաղէին և այսպանէին, և տե-
սիլ ամենայն կարաւանին զնա առնէին... Եւ
երբեւ այսպէս յամենայն կողմանց հարեալ վաս-
թարացաւ, անկաւ յախոտ գմնդակի անդէն՝ ի
կապանն: Ձեռաւ փոր նորա, և հարան և տրո-
ւեցան գոգե նորա, և քամեալ մզեցաւ թանձա-
մութիւն նորա: Եւացին որդունք ընդ աչս
նորա, և ՚ի վայր սորեցին ընդ ոնդունս նորա.
իցան լսելիք նորա, և ծակոսեցան չարաչար
շրթունք նորա. լուծան չիղք բազկաց նորա,
և յետ կյս կրացան կրկոնք ոտից նորա:
ինինեաց ՚ի նմանէ հոտ մահու, և փախստա-
կան եղեն՝ ՚ի նմանէ ձեռնասուն՝ ծառայք նո-
րա: Լեզուն միայն կսյր կենդանի՝ ՚ի բերան
նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն՝ ՚ի շըր-
թունս նորա: Ճաշակեաց զմաք հեղձամիլձուկ,
և էջ՝ ՚ի գժոխս անհնարին դասնութեամբ: Ուն-
հար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ
յագեցան սաստիկ հարաւածովք ամենայն թշնա-
միք նորա: Եւ այն որ կամերն թագաւոր լինել
մեղք՝ Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գե-
րեզմանի նորա. քանզի իբրև զուն մեռաւ և
երբեւ զգէշ (կամ զեշ) քարշեցաւ...: Ու ինչ
եթող չարիս զոր ոչ գործեաց ՚ի կեանս իւր. և
ոչ ինչ մնաց ՚ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին
ընդ նա ՚ի մահուան նորա »:

ԴԱՍ ԻԲ.

1. Վախարարաց վիճակն: — 2. Վահանայ ուրացութիւնն
— 3. Վահանանեանց պատերազմն: — 4. Վախարարաց ան-
միաբանութիւնն: Վահանայ յաղթութիւնն: — 5. Վա-
հանայ հաշոտութիւնը:

1. Արտրորմիզդ բոլոր նախարարները բռնած
Պարսկաստան զգեց: Հոն Յազկերտին հրամա-
նովն բոլորն ալբանտ գրուեցան՝ իսկ քահանայք,
քիչ մ'ատենէն ծածուկ սպաննուեցան: Նախա-
րարները չըրս տարի բանտը կենալէն վերջը
Շղոմշապուհ իշխանին աղաւանքովն աղատեցան
բանտէն, բայց Պարսկաստան մնացին. Երբոր
յածորդ տարին մեռաւ Յազկերտ, տեղը Պերոզ
որդին անցնելով ուժ տարինախարարներն իրեն
գործողութիւններուն ծառայեցուց. բայց Եր-
բոր Արթվանասպ մարզպանը Հայաստան կ'եր-
թար զիրենիք ալ անոր հետ մէկտել գարձուց
իրենց Հայրենիք (ԱՅՀ):

2. Երջանիկ նախարարներն Հայաստան որ
գարձան՝ մկան Խաղաղութեամբ կառավարել
իրենց երկիրները: Ան միջոցներուն մեծին Վար-
դանայ Հմայեակ եղածորը մեծ որդին Վահան:
իրեն քաջութեամբն ու խելացիութեամբն շատ
միբերի եղաւ բոլոր Պարսից մեծամեծներուն և
նաև Պերոզայ: Ան բանիս նախանձելով մէկ քանի
ուրացող նախարարներ, որ գեր Պարսկաստան
կը գտնուեն, չարխախօսութիւններ ըրին Վահա-

1. Վարդանանց պատերազմէն Ետքը նախա-
րարները ինչն վիճակ ունեցան.

2. Վահան ինչո՞ւ հաւատքը ուրացաւ.

նայ վրայ. Վահան ալ վախնալով որ Պերողին աքբէն չխնկնայ՝ հաւատքը ուրացաւ, թէպէտ և վերջէն սաստիկ զղջաց:

3. Քրիստոնեայ նախարարներն շատ անդամ նախատուելով ուրացող նախարարներէն՝ առթի մը կ'սպասէին որ աս նախատանաց վրէժր առնեն. ուստի երբոր Հեփթաներուն պատերազմէն կը գառնային՝ լսելով որ Վրաց Վախտանկ թագաւորն ապստամբէր է Պարսիկներէն, երենք ալ մաքանեցան՝ մշշերնին ու Վահանը երենց զօրագուռի գնելով զատուեցան Պարսից բանակէն: Ասրպէշնասպ երբոր լսեց աս բանս՝ վախնալով սկսաւ Պարսկաստան փախչիլ. ան ատեն ետևնէն գնացին Վահանեանք և շատ մը հոգի ջարդեցին: Աս պատի յաղթութենէն վերջը Դոււին գառնալով՝ Սմբատ Բագրատունին մարզպան դրին, Վահանն ալ ընդհանուր սպարապետ. և երբոր Ասրպէշնասպներէն եկաւ եօմը հազար զօրքան, Վահանն ըսրս հարիւր հոգի միայն ունէր. զանոնք չորս բաժնելով՝ Ակոսիի մօտ պատերազմի պատրաստուեցաւ, պատերազմէն սկիզբը Դարձըլ նախարարը իրեն հարիւրով թշնամեաց կողմը անցաւ. բայց աս բանս փոխանակ զիբենք հաշտեցընելու աւելի զօրացուց, որով սաստիկ ջարդ մը տուին Պարսից. և երենք ուրախութեամբ Դոււին գարձան:

4. Վահան որչափ որ կընալ կը ջանար բոլոր նախարարները միաբանել, որպէս զի աւելի գործնալով կարենան քաջութեամբ դէմ գնել թշնամեաց և բոլորովին հալածել զանոնք, բայց

3. Ի՞նչ կերպով սկսաւ Վահանեանց պատերազմը.

4. Ամեն նախարարներն միաբանեցան Վահանայ հետ.

աս իրեն փափաքանացը չհասաւ. վասն զի նախարաբներէն ոմանք արտաքին շահու և փառապիտութեան համար հաւատքնին ուրացած՝ Պարսից կողմը սնցեր էին, ոմանք ալ իրենց քաղաքը քաշուելով հանգիստին կը նայէն. թէպէտ և կային նաև ոմանք որ հասարակաց օգուտը մոտածելով իրեն քովին եկած իրեն հետ մէկաել սիրով կը պատերազմէին: Խոկ Վահան թէպէտ և քիչուոր էր, բայց մըս յաղթող գտնուեցաւ, և չորս հինգ տարի միակերպ պատերազմէլով մեծամեծ յաղթութեւններ ըրաւ Պարսից դէմ: Պարսիկը չորս հինգ զօրավար փոխեցին քիչ ատենի մէջ, բայց ամենին ալ յաղթուեցան: Աս պատերազմէններուն մէջ աղէկ կը տեսնուի Վահանայ անսպարտին արիւութեւը, վէհաննութիւնը, հաստատուն հաւատքը և առ Աստուած յայսը: Երբոր Պարսիկը Շապուհ Միհրաննեան մարզպանը զգիցին Վահանայ վրայ, անիկոյ սաստիկ կատղած Վահանայ ըրած յաղթութիւններուն վրայ, միտքը դրեր էր որ կամ յաղթէ Վահանայ ու զինքը մեացընէ, և կամ յաղթուելով նիքը մեռնի, աս մարտ պատերազմի պատրաստուեցաւ: Վահանին քովնները որ հարիւր հոգիի չափի կային՝ տեսնելով Պարսից բազմութիւնը և իրենց քիչուորութիւնը՝ շատը եւանցրուեցան, և միայն երեսուն հոգի մնացին. Պարսիկ Վահանայ խմբին քիչուորութիւնը տեսնելով երբոր անհոգ կեցեր էին, ասոնք յանելով՝ երբոր անհոգ կեցեր էին, ասոնք յանելով՝ կարծակի վաղեցին Պարսից վրայ, և մէծ շփոթութիւն ձգելով բանակին մէջ սաստիկ ջարդուեն Պարսից զօրաց, և իրենցմէ միայն չորս հոգի մեռան:

5. Այսն միջոցին Պերող Պարսից թագաւորը

5. Վահան ի՞նչպէս Պարսից աչքը մոտաւ ու

մեւաւ, ու տեղը անցաւ իր Վաղարշ եղբայրը, որ քննելով Վահանայ քաջութիւնները և անոր ապաստամբելուն պատճառը՝ իրաւունք առաւ Վահանայ, և ուզեց հետք հաշտութիւն ընել, որպէս զի՞նակ կարենայ անվիշտ ժողվել Հայստանին հարիսը: Վաղարշ աս բանիս համար մարզպան զրկեց Նիխոր Վշնասպատա անունով խաղաղասէր մարգը: Նիխոր երերոյ Վահանայ մարգ զրկեց հաշտութիւն ընելու համար, անիկայ աս երեք պայմանն դրաւ. Ա. Քրիստոնէութեան բաներուն Պարսիկը չխառնաւին: Բ. Արքանաւոր և հաւատարից մարդիկ միայն պատուց համնին. Գ. Մինչեւ որ երկու կողմի պատճառները ըստեն՝ դատաստան մը չկարուի: Աս երեք ևնգիրբն ալ հաւանեցաւ Նիխոր, ու անհեց վերջը գնաց Վահան Նիխորին քով, որուն հետ շատ սիրով աենուեցաւ, ու մէշելինին դաշինք հաստաեցին: Վերջը Պարսիկ գուռն ալ երթալով իրեն վնաս մը չընելու և գաշինքին վրայ հաստատուն կենալու երգմունք առաւ Վաղարշըն, և սպարապետութեան պատիւը առած՝ դարձաւ եկաւ Վաղարշաստա քաղաքը: Երբոր Անդեկան անունով մարզպանը փէս մը ատեն կենալէն ետքը հարկաւոր գործողութեան մը համար եա կանչուեցաւ, անանկ դումեց զՎահանը Պարսիկ գրան առջեւ որ Վաղարշ անոր լաւութեանը փոխարէն մարզպանութեան պատիւը տուաւ: Վահանալինդրեց որ իր Վարդեղբայրը սպարապետ ըլլայ: Բոլոր ազգին մէծ ուրախութիւն եղաւ աս անակնունելի յաջուռութիւնը: Ետքը ընջեց Վահան բոլոր կրակաստիւները, և անսնց տեղը եկեղեցիներ շնուրով սկսաւ այլ և այլ բարեկարգութիւններ ընել (484):

Հայստան ի՞նչպէս դարձեալ իրեն քրիստոնէական կրօնը. բը սոտացաւ.

6. Վահանին մարզպանութեան ատենը մեռնելով Վաղարշ տեղը նստաւ կաւաս, որ թէ պէտ և առջի բերան Վահանին մարզպանութիւնը հաստատեց, բայց վերջը քուրմերուն խորհըրդութով Պարսիկ մարզպան մը զրկեց, հետն ալ շատ քուրմեր, որոնք եկան նորէն սկսան կրակաստիւներ շնել ու արեապաշտութիւն սորվեցընել: Այս եղած անկարգութեան ցդիմանալով Վահանին մէկ քանի նախարարաց հետ միաբանեցաւ, ու Պարսիկ վրայ վաղելով ջարդեցին զիրենք և կրակաստունները աւրեցին: Բայց որովհետեւ կաւատ Յունաց գէմը պատերազմի կ'երթար՝ ան պատճառաւ հաշտութիւն ըրաւ Հայոց հետ, շատ ջրը առնելով Հայոցմէ:

Վահան ան միջոցներուն մեռաւ. քսանըլլից տարի մարզպանութիւն ընելն վերջը, որուն յիշատակը անկարելի է որ Հայու մը մոքէն Ծննդուի, որ ազգին Հանգստութեանը համար իր ամեն հանգստութիւնն, հարստութիւնն, փառքը, իշխանութիւնը կորսնցուց, մինչեւ որ գտաւ բոլորն ալնախ իր ազգին և վերջը իր անձին համար, և իրաւցնէ իրեն անուանը համեմատ Վահան եղաւ ազգին բոլոր թշնամիններուն գէմ:

6. Կաւատին միջոց ի՞նչ հանդիպեցաւ, ու Վահան Ե՞րբ մեռաւ.

ԴԱՍ ԻԳ.

4. Վարդ: ՄԺԵԺ Գնունին. — Զ. ՄԵԺ Թուականը. —
5. Վարդան Բ. Մամիկոնեան. — Կ. ՄԺատ Բազմայաղթ.
— Յ. Գայլ Վահան և իր քաջութիւնն. — Ե. Վարդիրի-
մահը. — 7. Վահանայ արիսթիւնն Վախտանկյ դէմ
և իր մահը. — 8. ՄԺատ և վահան:

1. Վահանին տեղը մարզպան գրուեցաւ Վարդ
իր պատի եղայրը, որ հազիւ թէ չորս հինգ
տարի մարզպանութիւն ըրաւ. վասն զի քանի
մը անաբիտան մարդիկ նախանձելով իրեն պա-
տուցին, վրան ամբաստանութիւն գրեցին: անոր
համար կաւատ ալ մարզպանութիւնը ձեռքէն
առաւ ու բուրդան անունով անդքամ Պարսկի
մը տուաւ որ շատ չարչարեց զաղքը: Աս ատեն-
ներս Ճնէք Հայաստանի վրայ վաղեցին ու շատ
չարիք հաստցին աղքին. անոնց դէմ եւաւ
ՄԺԵԺ Գնունին իր զօրբովը, և թշնամիները
հալածելէն վերջը՝ ուրիշ քանի մը նախարարնե-
րու հետ միաբանելով աղքը հանդարտեցաց:
ՄԺԵԺին հաւասարութիւնը երբոր լիւ Կա-
ւառ զինքը մարզպան գրաւ, որ երեսուն տարի
մարզպանութիւն ըրաւ (Տ48):

2. ՄԺԵԺին տեղը ետևէ ետև չորս հինգ Պար-
սիկ մարզպաններ գրուեցան, այսինքն ԳԵՆՉա-
պուհ, ՎՇԽասպ Վահամ, Վարազդատ, Սուրէն

1. Վահանին ետքը ո՞լ եղաւ մարզպան ու
բնչ գիտելիք կայ ՄԺԵԺ Գնունին վրայ.

2. ՄԺԵԺին ետքը եղած մարզպանները բնչ
պէս կառավարեցին զՀայաստան ու բնչ է ՄԵԺ
թուական ըսուածը.

Ճիհը: Ասոնցմէ ոմանք ազգը նեղեցին հաւատքի
համար, ոմանք ալ խաղաղութեամբ կառավարե-
ցին: Ասոնց ատենը Մովսէս կաթողիկոս Հայոց
տօմարը նորոգեց, և Մեծ թուական ըսուածը
դրաւ. որ թուականութիւն հայոց կ'ըսուելի
(Տ51):

3. Վարդան երկրորդ Մամիկոնեան տեմա-
լով Պարսից ըրած բանութիւնները, մանաւանդ
Սուրէն Ճիհը մարզպանին ըրածը, որ իր Մա-
նուէլ եղայրը մեացընել տուեր էր, խօսք դրաւ
քանի մը նախարարաց հետ որ ապստամբին
Պարսիկներէն: ուսափ Յուստինիանոս կայսեր
խոստացան հարկատու ըլլալ թէ որ իրենց
օգնէ. անոր խոստամունքներուն վրայ վասահա-
նալով վաղեցին Դուքին քաղթեն վրայ. Սուրէնը
սպաննեցին, մոգերն ալ ջարդեցին: Խարով աս
բանիս վրայ բարկացած շատ զօրք զլիեց Հայոց
վրայ. բայց Վարդան նորէն յաղթեց Պարսից,
և ցրուեց զիւենք: Բայց նիքը կասկած առնելով
քանի մը նախարարաց մասնութեանը վրայ,
ելու կ. Պահս գնաց և Յուստինիանուէն օդ-
նութիւն առնելով եկա Պարսից վրայ, յաղթեց
անոնց ու բանակնին ցրուեց: Խոսրովնիքը ան-
ձամբ եւաւ Հայոց և Յուստին վրայ շատ անգամ
մեծամեծ պատերազմէն ըլլալէն վերը՝ նորէն
Պարսից ձեռքը մնաց Հայաստան ուր մարզպան
դրին Ճիհը Վլոն անունով Պարսիկ իշխանը որ
տասնուշինդ տարի խաղաղութեամբ կառավա-
րեց Հայաստանը:

4. Ան ատենները անուանի եղաւ Սմբատ Բազ-

3. Վարդան Բ. Մամիկոնեան բնչ յաղթու-
թիւններ ըրաւ Պարսից դէմ ու վերջը բնչպէս
յաղթուեցաւ.

4. Ի՞նչ գիտելիք կայ Սմբատ Բազմայաղթ ու
իրեն յաղորդ մարզպաններուն վրայ.

մայալթ իշխանը, վասն զի Պարսից Խոսրով թագաւորին զօրավարներէն մէկը իրմէ ապստամբէն ըսկ երբոր կը հալածէր զինքը, Խոսրով սունութիւն ուղղեց Մօրիկ կայսրէն, որ շատ զուր զըրկեց, և անոնց զօրավարներն էին Սուշեղ Մամիկոնեան, Երսկո Բանեցի, և Սմբատ Բաղրամյալթ. ատուր շատ քաջութիւններ ընելէն. վերը չը ապստամբը սպաննեցին ու Խոսրովը նորէն թագաւորութեցին: Խոսրով ասնց ըրած բարեացը փոխարէն Սմբատը Պարսից զօրավար անուանեց, ու Սուշեղը Աղատ իշխան: Բայց Սմբատ ուրիշ շատ քաջութիւններ ալ ընելուն համար մարզպան գրուեցաւ Վրիկանի կովը, և ուժը տարի մարզպանութիւն ընելէն. վերջը մեռաւ, ու շատ քաջութեան, բարեկարգութեան, բարեուպաշտութեան և աղջասիրութեան յիշտատիւնը թողուց: Սմբատէն վերջը մարդպան գրուեցաւ Պահառունի. որ քսանուցորս տարի մարզպանութիւն ընելէն վերջը՝ Կոստանդնուպոլիս փախաւ. տեղը մարզպան գրուեցաւ Վարազտիրոյ Սմբատ Բաղրամյալթին որդին, որ նոյնպէս ութը տարի մարզպանութիւն ընելէն վերջը Կոստանդնուպոլիս փախաւ. (603):

Յ. Վարազտիրոյին մարզպանութեան ատենաները Խոսրով Պարսից թագաւորը թշնամացաւ Սուշեղ Ազատ իշխանին հետ ու վան պատերազմի վրկեց իր Միհրան քեռորդին տասը հազար զօրքով, որուն բացարձակ իշխանութիւն տուած էր որ կրցած չարկեք հասցնէն Սուշեղը. բայց որովհետեւ Սուշեղ ծերացած էր ու

Յ. Գայլ Վահան իրեն կարճութեամբն ու արթուն հնարագիտութեամբը ի՞նչ որոգայթներու մէջ ձգեց Պարսիկները ու ի՞նչպէս յաղթեց.

չէր կրնար ինքը մինակ էկ մզդակնել Պարսից, քովը կանչեց իր Վահան անունով ազգականն որ շատ հնարագէտ ու ճարտար մարդ ըլլալուն Գայլ Վահան կ'ըսուեկը, և աղաչեց անոր որ աս պատերազմը նորը վրան առնէ, և անոր խոստացաւ տաւ իր ունեցած հարստութիւններն ու սաւցուածքը: Վահան սիրով յանձնառաւ, որով հետեւ քաջ և միանգամյան խորագէտ մարդ էր, և գրեթէ վատահ էր պատերազմին յաջողութեանը վրայ, մանաւանի որ իբրև հաւատայ պատերազմը Սսառուծոյ վրայ յայսը դրած էր: Վահան որչափ որ աներկիւղ և վատահ էր յաղթութեան վրայ, այնափ ալ ջանաց առանց արինչելութեան ու քիչ վաստով գործողութիւնները մնան են: ան պատճառաւ սկսաւ հնարքներ գետեր մտածեն որ թշնամին որոգայթի մէջ ձգելով ուղղո՞ծ առաջ տանի: ուստի առաջ մարդ վակեց Միհրանայ խոստանալով որ Սուշեղը կը մասնէ Պարսից թէ որ իրեն տան Տարօնոյ երկիրն ու Սուշեղայ ուրիշ հարստութիւնները. Միհրան մէկն հաւանեցաւ, ու գարձաւ Սուշեղացը եկաւ, որ արգէն ճամբայ ելեր էր ուրիշ տեղ էրթալու: Վահան բարեկամութիւն ձեւացնելով Միհրանայ քովը գնաց ու համոզեց զինքը որ իրեն չորս հազար հոգւց չափ Պարսիկ զօրք տայ, որ երթայ Սուշեղը բանէ: Վահան իր հեալ պատ ան չորս հազարը, Խարձ գեղը եկան, հոն յիսուն հոգի միայն թողուց, ու մէկանընկը Օձքաղաքը վրկեց. վերջը ապսարեց ան յիսուն հոգին որ էթէ ինքը մարդ վրկ իրենց յա անունովն ու նշանովը գործողութեան յաջողութեանը վրայ, երթան Միհրանին իմացնեն ու անկէ ուրիշ զօրք առնելով իրեն գան: Աս բանս յարմարցնելէն ետքը եկաւ Օձքաղաքը մնացած զօրաց քովը.

անոնց ալ ապսպրեց որ զէնքերնին իրենց հա-
գուստաներուն տակը պահեն, բարեկամական
կերպով քաղաքը մտնեն, և երբոր ինքը նշան
տայ՝ անխայ ջարդեն քաղաքացիքը առանց մէ-
կու մը խնայելու: Քիչքիչ սկսաւ քաղաքը մըտ-
ցընել զանոնք, ու ինչպէս որ ասածուց որոշած
էր, բոլորն ալ բաժնեց ան տներուն մէջ, ուր
զինաւլ մարդիկ պահութած ներս մտածը կը
խցէին, որոն ամենքն ալ սպաննեց. վերջը մէ-
կէն մարդ զիկեց ան յիսունին որ իրթան ուրիշ
երկու հազար հոգի ալ օգնական բերեն. ան մի-
ջոցին որ մէկանոնիք գացէր էին օգնութիւն կան-
չելու, քաղաքացւոց հագոցնել տուաւ Պարսից
զօրաց հագուստաները, ու բոլորն ալ քաղքին
գրան դիմացը շարել տուաւ. երբոր ան երկու
հազար Պարսիկները սկսան տեսնութիւն հրաման
տուաւ դրան բովի Հայ զօրքերուն որ քաղաքը
մտնեն փող զարնելով, իբր թէ քաղաքը առին.
հասան քիչ ատենէն Պարսիկներն ալ և ուրա-
խութեամբ քաղաքը մտան, բայց Հայերը զիրենք
մէջ առնելով զամենն ալ թրէ անցուցին: Վահան
նոյնպէս ասոնց հագուստն ալ Հայոց հագուց,
և ուժ հարիւր կարիք հետն աւած Մեղալի
ըստած կրձին քով գարանի գրաւ, իսկ ինքը
ելաւ Միհրանայ բովի գնաց ու սկսաւ գանդա-
տիլ իրեն տուած զօրքերուն փառութեամբ
վրայ. ան պատճառաւ ուրիշ երկու հազար հո-
գի ալ ուղեց Միհրանէն, և ան Մեղալեայ կրձին
քովիրը բերելով զարանամուտները վրանին վո-
զեցին ու զամենն ալ թրէ անցուցին: Երբոր աս
հնարքն ալ յաջողեցաւ, մէկէն Վահան աւե-
տաւոր զիկեց Միհրանայ (թէ ամեն բան յաջողե-
ցաւ, Մուշեղ բանուած է ու քիչ ատենէն ինքն
ալ ամեն բան կարգի գրած կուգայ. պատգա-
մաւորին հասնելին քիչ մը ետքը ինքն ալ եկաւ

հասաւ, ու Միհրանը հիւանդ գտնելով մսիթա-
րեց զինքը և ուրախացուց ըսելով (թէ քիչ ատե-
նէն Մուշեղը կապած զիմացդ կը տեմնես, ու
ամեն արտմութիւնդ կը փարասի. աս բաներս
ըսելին ետքը քովի մարդկը ճամբեց, ու ինքը
Միհրանին հետ առանձին մնաց. երբոր իրարու-
հետ սիրով սահուեին զարկաւ Վահան ձեռքի
նիզակովը ու սպաննեց Միհրանը. ետքը դաները
գոցելով ելաւ ուրիշ սենեակ մը գնաց ուր կան-
չել տուաւ Միհրանայ ատենագիրն ու սուր-
հանգակը, և ստիպեց որ Միհրանայ կողմանէ
շուտ մը թուղթ գրէ Վարչեր զօրավարին, որ
երեք հազար զօրը առած՝ երեք օրէն իր քովը
գայ. ուղածը գրել տուշեն ետքը երկուքն ալ
խղել տուաւ, վերջը մնացած զօրաց մէջն ալ
կրակ ձգելով բոլորն ալ այրեց, երբոր անոնք
ուտելով խմելով կուրախանային:

6. Այսակի և այսպիսի հնարքներուն յաջո-
ղելին ետքը, կութ ըստած լեռը գնաց բանակը
հոն գրաւ, ու կ'սպասէր Վարչերին գտլուն. և
որպէս զի զանոնիք ալ խարեւ Միհրանայ վրանը
կանգնել տուաւ ու վրանին գիմացը Հայ իշխան-
ները կայնեցուց Պարսից հանգուռներով: Եր-
բոր եկաւ Վարչերը իշխանները իրմէ առաջ ներս
մտան, անոնց եամենն մտաւ Վարչեր ու բարե-
տուաւ Վահանայ կարծելով թէ Միհրանն է: Վահան
բարկանալով մը ըսաւ Վարչերին, « Ու-
գիեք անօրէնութեան, թերեւ մորենիդ գրած
էր Հայերը Պարսից աղանդը գարձնելու. ա-
նարժան էր կենդանութեան », աս ըսելով հրա-
մայեց ծառաներուն որ Վարչերը ծեծնէն. երբոր
սինկայ սկսաւ աղմաւէլ որ գէթ կենացը ինայէ,

6. Վահան ինչ հնարքով զՎարչեր բանեց ու
սպաննեց.

ըսաւ Վահան. Թէ որ ուղածա կատարես՝ կը ինայեմք զեղի. ուստի մէկէն դրէլ տուաւ իր զօրապէտին որ հազար հոգի կութ լւսան ստորապ զրկէ, հազար հոգի ալ ուրիշ տեղ մը, մնացած հաղոր վեց հարիւրն ալ իրենց տեղը ձգէ, ու ինքը տասը հոգւով իրէն դայ: Թուղթը դրէլ տալէն եաբը մէկէն սպաննել տուաւ Վարչերը, ու երբոր մէկալ զօրապէտն ալ եկաւ, զայն ալ խղդէլ տուաւ. վերջը ասդիս անդին ցրուած զօրացը վրայ վաղելով առևնն ալ թրէ անցուց, որով այնչափ բազմութենէն հազիւքառասուն հոգիի չափ ազատեցան ու փախան Խորսրութքով դացին: ու եղած կոտորածները պատմեցին:

7. Խորսրով շատ տրամեցաւ ու բարկացաւ Վահանայ դէմ, առջնէն աւելի բազմաթիւ զօրի առւաւ Միհանայ Վախտանկ հօրելք բարը ձեռք ու Վահանայ վրայ վրկէց: Վահան Վախտանկայ դէմ վարպէտութեան տեղը քաջութիւնն ու կենդանի հաւատաքը զէնք ու օդնական ամենով իրեք չորս անդամ սասափի ջարդ տուաւ Պարսից ու վատաւաւոր յաղթութիւններով իր զօրավարութիւնը պատկեց: Վահան աս յաղթութիւններէն եսքը արդէն ծերացած ըլլալով անընդհատ սպատերազմներէ ալ տկարացած՝ մեռաւ, և իր հայրենասիրութեանն ու աստուածաշատութեանը. Հետ անմոռանալի ըրաւ նաև իր պատերազմական նասագիտութիւնը, որուն մէջ թէ որ չափազնց երեւայ խորագիտութիւնը, Պարսից անդթութեանն և ան միջոցին Հայաստանի ինեղութեանը նայելով դիւրաւ կ'արդարանայ:

7. Վահան ինչպէս արիացաւ Վախտանկին դէմ ըրած պատերազմին մէջ ու ինչպէս մեռաւ.

8. Վահանայ քաջութեանն ժառանգորդ եղաւ իր Սմբատ հսյրենասէր որդին որ միշա յաղթող գտնուեցաւ անպարտելի ու զարմանալի քաջութեամբ և Պարսից չորս երեկի զօրավարները սպաննեց: Սմբատայ ալ յաջորդեց Վահան որդին որ իր նախորդներուն պէս քաջ, կարիճ ու պատերազմով եղաւ:

ԴԱՍ ԻՒ.

1. Դասիթ Սահառունի: Հագարացոց արշաւանքն. — 2. Վահան կամարական. — 3. Հագարացոց և Յունաց արշաւանքն. — 4. Սմբատ ինքառան և իր յաղթութիւնն. — 5. Մոհամատ: Սահակ կաթող. և Հայաստանի ազատութ. — 6. Կայմ և իրեն յաջորդ Ոստիկաններն. — 7. Բագարատ Բագրատուննին: Նախարարաց գերութիւնն. — 8. Բուղայի չարութիւննքը: Սմբատ խոսուովանող:

1. Վահանայ մեռնելէն ետքը երբոր Վարաչտիրոց մարզպանը Հայաստանէն փախաւ, նախարանները մարզանած Յունաց կայսերէն իրներցիցն որ Դաւիթ Սահառունին իրենց կիւրապազատ գնէ, ըսց իրեք տարիէն վերջը նորէն խորովութիւն ինկնալով մէջենին Դաւիթ Սահառունին հանեցին կիւրապազատութենէն: Անմիջոցներուն Պարսկաստան խռովութիւն ըլլալով Հագարացիք զօրացան և Պարսկաստանի տիրեցին: Անկէց այլ և այլ խումբեր ու աս-

8. Վահանէն ետքը որո՞նք յաջորդեցին.

1. Սմբատայ ու Վահանայ մահուլնէն ետքը Հայաստան ինչ վիճակ ունեցաւ.

պատահներ Հայաստանի վրայ վաղեցին ու սկսան շատ աեղ աւրել աւրդարեկել, ու շատ ջարդեր ըրբին Հայաստանի մէջ (635):

2. Վահան Կամարական՝ Գրալ Վահանայ թռող, աեմալով ազգին թշուաւութիւնները ութը հազարի չափ զօրք ժողվեց, ու իր Տիրան եղբօրը և Առչեղ զօրավարին ձեռքը տալով հագարացւոց գէմ զրկեց: Առնոց հետ միացաւ Սահուռա Անձնացին իրենց զօրքերովը բայց պատերազմին ատենը Սահուռա թշնամեաց կողմն անցնելով սկսաւ իր ազգայիններուն գէմ պատերազմիլ, ասով թշնամիները զօրացան ու բոլոր Հայերը ջարդեցին իրենց զօրտալաներովը հանգերձ: Հայաստանի ներսերն առ վաղելով շատ վնասներ ըրբին. Դուենքալքին մէջ առ տառեւրիս հազար մարդ թրէ անցնելին վերջը երեսունուշինդ հազար հոգի առ գերի տարին:

3. Հագարացւոց առջի յարձակնակերէն վերջը Յունաց կողմանէ կիւրապաղապա գրուեցաւ Վարազտիրոցը, որ տարիի մը չափ պաշտօնը բնէլին ետքը մեռաւ, ու աեղը անցաւ իր որդին Սմբատ: Ասոր կիւրապաղապաւութեան երկրոդ տարիին Հագարացիք նորէն անթիւ բազմութեամբ Հայաստանի վրայ եկան և շատ կոտրածներ ըրբին: Իսխարաբաները տեմնալով որ Հագարացւոց անթիւ բազմութեանը և անոնց գաղանային անգթութեանը գէմ գնելը գրեթէ անկարելի է, աւելի օգտակար համարեցան խոնարհութեամբ յաղթելանոնց գաղանութեանը քան թէ պատերազմով. ուստի իրարու հետ քան թէ պատերազմով. ուստի իրարու հետ միաբանեցան, շատ լինձաներ տարին, հապատ-

կութիւն խոստացան անսոնց և հարկ տալ Յունաց չպատակելով:

Ասկէց գուռաբացուեցաւ որ երբեմն Յոյները և երբեմն Հագարացիք Հայաստան արշաւելով սոսկալ վնասներ հասուցին մեր խելք երկրին. վասն-զի երբոր Յոյները կը լսէն թէ Հայերը Հագարացւոց հպատակեր են՝ զօրքով Հայաստանի վրայ վաղելով վրէժինդիր կ'ըլլացին. նոյն պէս երբոր Հագարացիք կ'իմանալին թէ Յունաց հետ վերաբերութիւն մը ունեցեր են, ձեռքերնէն ու մոգերնէն անցած չարիքը կ'ընելին Հայոց: Աս բանս քառասուն տարիի չափ տեսէց:

Ո՞ս քառասուն տարուան մէջ Սմբատին տեղը կիւրապաղապա գրուեցաւ Հանգամատ Մամիկոնեան, որ հնիգ տարիի կիւրապաղապաւութիւնը բրաւ. տեղը անցաւ Գրիգոր, որ քսանուուրս տարիի իշխելին ետքը պատերազմի մէջ մեռաւ (682):

4. Առջի Հագարացի սոտիկանն եղաւ Աբդլա անունով մէկն, որ Հայերը որսալու համար նախ սկսաւ քաղցրութեամբ վարուիւ հետերնին, ու վերջը գրեթէ բայր նախարարները և Սահակ կաթուուկիսոր բանեց ու շղթայակապ Դամասկոս զրկեց: Նախարարներուն մէջէն փախաւ Սմբատ իշխատեան Բագրատունին, և Յուստինիանոս կայսերին օգնութիւն տանելով, ու բէ մնացած նախարարներն ալ ժողվելով Աբդլային վրայ պատերազմի ելաւ, և անանկ սասաւիկ չարդ տուաւ որ հազիւ թէ Աբդլան միայն կրցաւ աղատիլ: Խոկ Սմբատ կիւրապաղապաւութեան պատիւ առնելով վեց տարիի չափ հանգարակեց, մինչեւ որ

4. Աբդլա ի՞նչ բռնութիւն ըրաւ Հայոց գէմ ու ի՞նչպէս հալածուեցաւ Հայաստանէն.

Սոհմատ անունով զօրավարը եկաւ ու սկսաւ նորէն խմանել հայացնել Հայաստանի. ան ատեն Սմբատայ հետ միացաւ Ներսէս Կամաւրականը, ու մէկաեղ յանկարծակի Մոհմատին վրայ վագելով փախուցին զինքը:

5. Մոհմատ յաղթուելուն վրայ սաստիկ բարկացած երբոր շատ զօրբով նորէն Հայաստանի վրայ կուգար որ տակնուվայ ընէ Երկիրը, Մահակ կաժուղիկոս որ Դամասկոս գերութեան մէջ էր ու միանդամայն Մոհմատին սիրելի բարեկամ, աս բանս լսելուն պէս ինդրեց որ Մոհմատին հետ տեմնուին Բայց ճամբռու տառենը մեռաւ, ու չկրցաւ հետը անմուկէ թուղթ մը գրեց Մոհմատին. Մոհմատ երբոր իմացաւ Սահակայ մահը, հրամայեց որ չժաղէն զուրբը մինչև որ ինքը գայ անսնէ: Երբոր Մոհմատ մեռելին խոցը մտաւ ու բարետուաւ սուրբին, ան ալ բարել առնելով երկինցուց ձեռքը ու թուղթը տուաւ Մոհմատին իբրև թէ կենդանի ըլլար: Կարգաց Մոհմատ սրբոյն խնդիրը, ու ըստաւ, «Կատարուի խընդիրը, ու այրդ Աստուծոյ»: Ան հրաշքէն շարքածած ամենաին խմաս մը ըրբաւ Հայոց, և ամիրասպետին միջնորդութեան ընելով ազատել տուաւ Դամասկոս եղած բոլոր Հայոց գերմանէրը:

6. Քիչ մը ատեն խաղաղութեամբ երթալէն ետքը Հայաստանի սատիկան խրկուեցաւ Կաշմ, որ խաբէութեամբ բոլոր նախարարները նախջուանայ եկեղեցւոյն մէջ ժողլելով լայրել տուաւ Կաշմէն ետքը անդամութեան կողմանէ անուա-

5. Հայաստան ինչպէս հրաշքով ազատեցաւ Մոհմատին բարկութենէն.

6. Կաշմ ու իբրէն յաջորդ սատիկանները ինչպէս չարչապեցին զայերը:

նի եղաւ Եզիս սոստիկանը, որ ծանր տուրքերով և ասպատակութիւններով սաստիկ նեղեց Հայերը: Երկու տարիէն ետ կանչուելով իրեն տեղը Պատրիկ անուանեց Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը, որ խաղաղութեամբ կառավարեց ազգը շատ մը ատեն: Սահակէն վերջը դրուած սատիկաններուն մէջ ամենէն աւելի Հայերը տանջողն եղաւ Հասան սատիկանը, որուն ատենը Հայերն Մուշեղ Մամիկոննեամին առաջնորդութեամբն մէկ քանի կոտորածները ըրին Հագարացւոց. աս պատճառաւ սոստիկան դրուեցաւ Եզիս Բ. և ասկիպայ զՀայերը անանկ չարչապեց որ նմանը ամենամին չէր եղած:

Կաշմէն մինչև Եզիս հարիւր տարուան միջոց է, սատիկան դրուեցան ատենք. Վկիթ, տասը աարի. Մահմատ, հնիգ. Աբրուտաղիզ, աասը. Մրուան, մէկ. Աշոա Բագրատունի, տասնուշ հնիգ. Եզիս Ա., երկու. Սահակ Բագրատունի Պատրիկ, վեց. Սիւլյամն, երեք. Պէքիր, ինը. Հասան, երեք. Հայ իշխաններ, հինգ: Եզիս Բ. տասուերկոս (797):

7. Եզիսին տեղը սոստիկան դրուեցաւ Խուզեմայ անունով Հագարացին, որ հանդարտ խաղաղասէր և լաւ մարդ ըլլալով քանի տարի սատիկանութիւնը ըրաւ ու ազգը հանգչեցուց. Երբոր ինքը մեռաւ, տեղը անցաւ Հոլ անունով մէկը, որ նոյնպէս խաղաղասէր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց ազգը ասանուելով տարի: Երբոր Հոլ ետ կանչուեցաւ նախարարներուն աղաջանքովն Պատրիկ դրուեցաւ Բագրատ Բագրատունին, որ տասնուշորս տարի Եփելէն վերջը յանցաւոր գանուելով տէրու-

7. Եզիսէն ետե եղող սոստիկանները ինչպէս վարուեցան Հայոց հետ.

թեան բաներուն մէջ՝ երեսէ ինկաւ, ու տեղը
զրկուեցաւ Ապուսէթ ոստիկանը, որուն ապըս-
պիքը էր ամիրապետն որ վարպետութեամբ
բռնէ Բագարաաը ու իրեն զրկէ. ան ալ խար-
դահութեամբ բռնէց զինքը ու ամիրապէտին
զրկէց, ուր Բագարաա մահուընէ աղատելու
համար՝ առ երեսս հաւատքը ուրացաւ: Երբոր
Սասունցիք իմացան Բագարաաայ բռնուիլը,
սատիի կատղած Ապուսէթին վրայ վազեցին,
զինքը սպաննեցին և բռուր զօրքը ցրուեցին:
Ամիրապետը իմանալով եղած գործողութիւն-
ները անհամար զօրքով զրկէց Բուզա ոստիկա-
նը, որ բոլոր նախարարները ըսնելով իրեն զրկէ.
Խոկ հասարակ մարդկանց մէջն աեսքով, քաջ ու
բանի եկող մարդիկները տաճնկցընէ ու իրքովը
պահէ, մէկանոնք առանց ինայելու սպաննէ:

8. Բուզա անմեն չարիք ընելով՝ բոլոր Հայաս-
տանը արիւնլուայ ըրաւ, ոչ աղաշսնաց, ոչ խել-
ձութեան և ոչ ընծայից կը նայէր. այլ ամենքը
անիստիք կը մեռցընէր: Աս բաներս տեսնալով
Սմբատ Բագրատունին ուզեց որ ուրիշներուն
ինքը աս թշուտառութիւններէն աղա-
տի. ուստի շատ ընծաներով Բուզային գնաց,
ու ամեն բանի մէջ անոր չարութեանցը խոր-
հըրդակեց կ'ըլլար և առաջնորդ Հայաստան մըտ-
նալու: Բայց ինչպէս որ սովորաբար կ'ըլլայ
մասնիշներու, ինքն ալ վախճանին չհասաւ.
վասն զի Բուզան Հայաստանէն երթալու ատեն
ուրիշ կալանաւորաց հետ մէկտեղ զինքն ալ
Պաղտատ տարաւ, ու իր տեղը սատիկան դրաւ
Ենիք անունով Պարսիկ մը:

Ամիրապետը բոլոր նախարարները բանտ դնել

8. Բուզա ի՞նչ անդ թութիւններ ըրաւ ու ո՞լ
է Սմբատ Խոստովանող.

տուաւ, Սմբատն ալ հետերնին, ու սկսաւ ստի-
պէլ որ հաւատքնին ուրանան: Ոմանք հաւատք-
նին ուրացան, և ոմանք նահատակեցան: Սըմ-
բատ ալ զվարով ըրած չարութեանցը վրայ,
հաւատքնին վրայ հաստատուն կեհալով բամստին
մէջ մեռաւ, ու անով Խոստովանող ըստեցաւ:
Աս թշուտառութիւններէս չորս հինգ տարի վեր-
ը սկսաւ Բագրատունեաց թագաւորութիւնը:

որ իրեն պէս հաւատարիմ ըլլան և խռովութիւնն:

Երբոր Շեխին ետ կանչուեցաւ, ամիրապետը շատերէն լսած ըլլալով Աշոտին հաւատարմութեան ու լսուութեան անունը՝ ուղեց փոխարէն մը ընել Աշոտին. ուստի շատ ընծաներով և թագաւորավայրէ զգեսաներով Ալի Էրմէնի անունով ուրացեալ Հայ նախարարը զրկեց որ գայ Աշոտը բոլոր Հայաստանի վերակացու զնէ, և աս եղաւ 859ի: Աշոտ երբոր առաւ աս իշխանութիւնն, հաւատարմութիւնը աւելցընելով զօրքերը շատցուց, սկսաւ բարեկարգութիւնները ընել ամեն բանի մէջ, եր Աքաս քաջ եղբայրը սպարապետ գրաւ, և անոր հետ մէկտեղ Հայաստանի թշնամիները հալածեց, և անոնց յաղթութեան ձայնը բոլոր շրջակայ տեղերը տարածուելով ամենուն սիրալը վախ ձգեց ու ալ անկեց ետքը դադրեցան Հայաստան արշաւելէն:

2. Այս միջոցին որ Աշոտ Հայաստանը բարեկարգելու հետ էր, Պաղաստի մէջ նոր ամիրապետ նսաելով, իսուղային ատենը գերի գնայած նաև նսարաները խնդրեցին նոր ամիրապետէն որ գերութենէ ազատին, ու երբոր կատարուեցաւ խնդիրքնին մեծ ուրախութեամբ Հայաստան եկան, և իրենց ուրացութեանը վրայ զջալով Աշոտին հետ միաբան սկսան կարգի գնել Հայաստանը: Նախարարները ամեն կերպով իմանալով Աշոտոյ կատարելութիւնները, ինդրեցին ամիրապետէն որ (Ժագաւորեցընէ վրանին Աշոտը՝ իսոսանալով) որ հաւատարիմ կը կենան իրենց հապատակութեանը մէջ: Ամիրապետը հաւանեցաւ նախարարներուն աղաջանացը.

3. Նախարարները ի՞նչպէս գերութենէ աղաջանը ու Աշոտ ի՞նչպէս (Ժագաւորեց.)

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Բ Ա Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Ե Ա . 8

ԴԱՍ ԻԵ.

1. Բագրատունեաց Ժագաւորութեան կանդառն: Աշտ Բագրատունին: — 2. Նախարարաց գերութենէ աղաջին: Աշոտ Ժագաւոր կը պատկուի: — 3. Աշոտը կարգաւորութիւնն և մահը:

1. Երբոր մեր աղջին գառն գերութեան 431 տարին լընցաւ, ուղելով Աստուած իր ողորմութեամբն միսիթարել ազգը և առջի փառքը կերպով մը նորոգել Աշոտ անունով Բագրատունի նախարարը հանեց, որ իրեն ագքասէր, աղիւ և իմաստուն բնութեամբը ամենուն սիրելի ըլլալով կանդնեց Ժագաւորութիւնը և ազգը գերութենէ աղաջեց:

2. Այս Աշոտ Ամբատա Խոստովանողին որդին էր. Երբոր Շեխին Հայաստանի վրայ սստիկան դըրսած էր՝ Աշոտ շատ արդիւնք ցըցուց անոր առջև՝ իր աղջակիցներուն վրայ դուռժ ունենալով, Հայաստանի աւելքակ դարձած աեղերը նորոգելով և տէրութեան ամեն բաներու մէջ հաւատարիմ գանուելով զամենքը կը յորդորէր

3. Բագրատունեաց Ժագաւորութիւնը որո՞ն ձեռքովը սկսաւ ու ի՞նչպէս.

Թագ և թագաւորական ծիրանի զրկեց Աշուանին: Աշուանի փառաւորությալը լսելով Յունաց Վասիլ կայսրը, որ աղջաւ չայ ու Արշակունեաց ցեղեն էր, թագ մ'ալ ինքը զրկեց (885):

3. Աշուան թագաւորելէն վերջը առջի թագաւորական կարգերը նորոգեց, աւորուած տեղերը նորէն չինեց, երկրադործութիւնը սկսաւ ծաղկեցնել: Թագաւորանիստ քաղաքն ալ բարդարանը ըրաւ: Կամաց կամաց սկսաւ նուաճել Հեւսիսյին աղջերը, որոնք ատենով Հայոց ձեռքին տակն էին, նոյնպէս նաև Գուգարացիներն և Ուսէացիները, որոնց կարգ կաման գնելով խոհեմ առաջնորդներ ու իշխաններ գրաւ անոնց վրայ: Աս գործողութիւններէս վերջը Աշուան կ. Պուշի Լևոն կայսէր աեսութեան գնացած ըլլալով, պատուով ետ դասնալու ատենը երբոր Շերակ հասաւ, ծանր հիւսներացաւ, ու տեսնալով որ մեռնելու մօտ է կանչեց կաթուղիկոսը, և բուլը հոգենոր պատրաստութիւնները ընելէն վերջը Եօթանասունումէկ տարեկան մեւաւ քանառվեց տարի իշխանութիւն ընելէնէ հինգ տարի թագաւորելէն վերջը: Աշուան ինչ քովով ու խոհեմութեամբ առաւ թագաւորութիւնը, քաջութեամբ պահեց, բարեպաշտութեամբ անցուց կեանքը և ամենուն իրաւցնէ փրկիչ և սիրելի Հայոր հասարակաց եղաւ:

3. Աշուան թնջ կարգաւորութիւններ ըրաւ ու ինչպէս մեռաւ.

ԴԱՍ ԻԶ.

1. Ամբատ Ա. — 2. Ափշին: Իր յաղթուիլն. — 3. Ամբատայ յաղթութիւնն Ահմատին դէմ. — 4. Ափշինի կատաղութիւնն: Յուսուփայ հաշուաթիւնն: — 5. Ամբատայ գեմ եղած դաւաճանութիւնն: Գաղիկ Արծրունի Վասպորականի վրայ կը թագաւորէ. — 6. Յուսուփ Հայաստանի կը տիրէ. — 7. Միբատայ գերութիւնն և նահատակութիւնն:

1. Ամբատ Աշուանց որդին և յաջորդը՝ Գուգարաց աշխարհքն էր երբոր լսեց իր հօրը մահը, ուստի շուտ մը եկաւ որ թագաւորութիւնը առնէ, և բոլոր աղջին հաւանութեամբն թագաւոր եղաւ: Աս բանս լսելով Աշուանի Աքաս Եղբայրը, ուզեց որ ինքը թագաւորէ, և պատերազմ բացաւ Միբատին Հատ. բոյց Գէորգ կաթուղիկոսն արգելեց զինքը երդում աւնենով Աքասէն որ նորէն չապատամբի: Եէպէտ անիկայ Երգմանը վրայ հաստատուն չկենալով նորէն ապստամբէցաւ ու յաղթուեցաւ Միբատէն:

2. Միբատ Աբասին յաղթելէն վերջը եղած գործողութիւնները և ան ատենի հանգարտութիւնը իմացնելով ամիրապետին, արքայական թագ ընդունեցաւ անկէց, նոյնպէս նաև Լևոն կայսէրէն շատ պատիւներ առաւ: Միբատայ աս փառաւորութեանցը նախանձելով Ափշին Պարսից ոստիկանը վրան պատերազմի ելաւ: Միբատալ երեսուն հազար զօրքով անոր գէմ պատե-

1. Միբատ Բնչպէտ թագաւոր եղաւ ու բնչ կոիւ ունեցաւ իր Աքաս հօրեղբօրը հետ:

2. Խոչժու Ափշին պատերազմ բացաւ Միբատայ գէմ ու բնչպէտ յաղթուեցաւ.

բազմի ելաւ, բայց առանց արիւնհեղութեան քաղցրութեամբ սիրտը առաւ ու իր տեղը դորձաց: Երկու տարիէն վերջը Ափշին զջալով ըրած հաշտութեանը լրայ, ուղեց Հայաստանը նուածել, ուստի շատ զօրքով եկաւ սուտ ձայն մը հանելով թէ Հայաստանէն պիտի անցնի երթայ. բայց երբեք իմացուեցաւ խորդախութիւնը, մէկէն Սմբատ հրաման, զրկեց նախարարներուն որ իրենց զօրքերովք դան ժողովուին. և անսնց հետ միաբան վազեց Ափշինին լրայ, չարաչար յաղթեց անոր և փախուց զինքը:

3. Ան միջցին Ահմաս Միջագետաց ոստիկանը ապաստմիելով ամիրապետէն Հայաստանի վայ վազեց, քանի մը տիրասէր նախարարներ թագաւորին հետ միաբանելով, վաթսուն հազար զօրքով Ահմատին գէմ պատերազմի պատրաստուեցան: Բայց ինչպէս շատ անդամ կը հանդիպի որ նաև քաջէրուն բազմութեամբ մէջ վատէր դանուին, ասանկ ալ աս գիպուտածիս մէջ Գագիկ Սմբատայ աները փառասիրութեամբ ուղելով թագաւորութիւնը ինքը առնել՝ ծածուկ Ահմատին հետ միաբանեցաւ, ու Սմբատայ չար խորհուրդներ տալով և գէշ ճամբանէրէ առաջնորդելով անոր զօրացը՝ կ'ուղէր որ յաղթուի. բայց Հայերը քաջութեամբ պատրազմինվ՝ յաղթեցին Ահմատին ու Գագիկայ անխելք լոյն ալ պարապը հանեցին: Գագիկ իրեն արքանաւոր պատիմէր դանալով Սմբատին քեռորդին սպաննուեցաւ:

4. Ափշին երբոր լսեց թէ նախարարները պա-

3. Հայերը ի՞նչպէս Ահմատին ու յաղթեցին Գագիկ Սմբատայ աները ի՞նչ չար գործ ըրբաւ:

4. Սմբատ Ափշինին կատաղութեան ի՞նչպէս

տէրտպմին լմնալուն պատճառաւ ցրուեր են՝ նորէն վաղեց Հայաստանի վրայ. բայց աս անդամ նախարարները թագաւորին հրամանին չհնազմութելով օդնութեան չեկան. ասով հարկադրուեցաւ Սմբատ հաշտութիւն խօսելու՝ պատանդ տալով իր որդին և մէկ եղբօրորդին: Ափշին երբոր աս բաներով գոյն չըլլալով կ'ուղէր ուրիշ չարիններ ալ հասցնել, ինը չարաչար սատիցաւ, պատանդներն ալ աղատեցան: Տեղը անցաւ իր եղբայրը Յուսումքի, երբոր աս բանն լսեց Սմբատ, գիտնալով Յուսումքին խարդախ և անդութ բնաւորութիւնը աղաւեց ամիրապետին որ ասկէց վերջը Հայաստանին հարկը ուղղակի թագաւորն զրկէ ամիրապետին ու ստիկանները ամեննին ըսառնուեն, որովհետեւ սաստիկ կը նեղէին զայերը: Ամիրապետը կատարեց Սմբատայ խնդիրքը, և թագաւորական թագ և ուրեմն շատ ընաներ ալ զրկեց Սմբատայ: Աս բանին Յուսումքի սաստիկ նեղանալով մէկէն զօրք ժողլեց ու սկսաւ Հայաստանի վրայ վաղել. Սմբատ ալ իր զօրքերովք գիմացը եւաւ. բայց գեռ պատերազմ ըըրած՝ երկու կողմէն ալ ուղեցին հաշտութիւն ընել և բարեկամութեան նշան՝ Յուսումքի ոսկէի թագ զրկեց Սմբատայ:

5. Հաղութէ քիչ մը հանդսառութիւն գտաւ Սմբատ թշնամեաց ձեռքէն, Եղերացւոց Կոստանդին թագաւորն առանց պատճառի պատերազմ բացաւ Սմբատայ հետ. անոր գէմ գնաց Սմբատ Վրաց Արքներսէ թագաւորին հետ.

աղատեցաւ ու ի՞նչ հանդիպեցաւ Յուսումքի և իրեն մէջ.

Յ. Սմբատ ի՞նչպէս յաղթեց Կոստանդինին, ի՞նչպէս Ատրներսէը ու իրեն դաւակիցները պատեցաւ ու Գագիկ ի՞նչպէս թագաւորեց.

ասոնք յաղթեցին կոստանդինին, և Ալորներսէ՛ կոստանդինին հետ հաշտութիւն խօսելու ատեն՝ նը՝ և արէութեամբ բանեց զինքը ու թագաւորին բերաւ։ Ամբատ չորս ամիս Անիի բերդին մէջ պատուով պահէլէն ետքը գթացաւ Կոստանդինի վրայ ու ազատեց զինքը, աս բանս Ալորներսէ՛ իրեն անարգանք համարելով ուրիշ քանի մը նախարարաց հետ խօսե դրաւ որ Ամբատ սպաննէ՛ Եւ որովհէտեւ նոյն միջոցին թագաւորը Տաշրաց գաւառն էր, ապստամբ նախարարներն մէջերնէն մէկը որոշեցին որ Երթայ թագաւորին հետ բարեկամութիւն ձևացընելով զինքը սպաննէ՛ Աս բանիս վրայ ապահովացը իրենք վաղեցին Անին առին, վերը Երազգաւորս գացին, ու թագաւորին պալատը մտնելով ժամէ՛ ի ժամ կ'սպասէին որ Ամբատին սպաննութիւն լսեն. բայց բարեքալլութեամբ իմացաւ թագաւորը անոնց գաւը, ու մէկին իր զօրքերը ժողվեց որ ապստամբները նոււանէ՛ Պատերազմի ատեն թագաւորին զօրքերը իրենց տիրոջ սիրով վառուած, այնպիսի սաստիկ ջարդ կուտային ապստամբներուն, որ Ամբատայ սիրաը ըդիմանալով կաղաքէր որ խնայէն ասլըստամբներուն։ Ալորներսէ տեսնելով էղած ջարդը, ըստ Եկա թագաւորին ոտքը ինկն ու թողութիւն ինդրեց իր ապերախտութեանը. Ամբատ ներց անոր յանցանացը, և մէկալ նախարարներուն աչքերը փորել տոււաւ։ Բայց անանկով ալ խաղաղութիւն չդառաւ, վասն զի իր քեռորդին Գագիկ Արծրունի թեթև պատմափառ մը համար աւրուեցաւ թագաւորին հետ, գնաց Յուսուսութիւն հետ միաբանեցաւ առաջ առաջ առաջ մէծամեծ ամբաստանութիւններ ըրաւ անոր. Յուսուսուփ ալ Հայոց մէջ երկառակութիւն ձգելու մաքով Գագիկ այ թագ դրաւ ու

իր Վասպուրական աշխարհքը զիկեց անիկայ աշխատ նախարարներ իր կովմը որսալով յայտնի սկսաւ թագաւորիւ (908)։

6. Երբոր լսեց Սմբատ Գագիկ թագաւորէլը մէկին Յովհաննէս կաթուղիկոսը շատ ընծանելով Յուսուսութիւն զրկեց որ երթայ Յուսուսութիւն սիրաը իշխցնէ ու խաղաղութիւն ընել այ. բայց ոստիկանը փոխանակ զիջանելու կաթուղիկոսին ազաւանացը, բանս դրաւ զինքը, ու սկսաւ պատերազմի պատրաստութիւն աեսնել։ Գարնան սկիզբները Գագիկ առաջնորդութեամբն սկսաւ Հայաստանի ներսէրը վազել ու մեծամեծ կուրարածներ ըրաւ, որով նախարարներէն ոմանք յուսուհասելով գնացին անձնատուր եզզան Յուսուսութիւն։ Ամբատ իր ունեցած գելէ զօրքովն որչքի որ կրնար գէմկը դնէր, բայց Ճարը հատնելով Գուգարացոց երկիրը փախաւ, ասս բանս որ իմացաւ Յուսուսուփ աւելի ազատութեամբ սկսաւ Հայաստանը քանդէլ ապականել մինչեւ Սմբատ տեմնելով եղած չարիքները ելաւ Գուգարացոց աշխարհքէն ու սկսաւ ինքն ալ պատերազմի պատրաստութիւն Յուսուսութիւն համար բոլոր ունեցած զօրքերը ժողվելով իր երկու որդուոցը տոււաւ, անոնք մեծամեծ քաջութիւններ ընելով երբոր թշնամեաց պիտի յաղթէին՝ Աւորդիները թշնամեաց կովմը անցան, անով Սմբատայ զրբքերը հարկադրուեցան փախէլու, և բոլորովին յաղթուեցան։ Աս բանս երբոր աեսան ուրիշ շատ նախարարներ, փոխանակ իրենց թագաւորին օդնելու գնացին Յուսուսուփին անձնատուր եղան, որպէս զի բա-

6. Սմբատ երբոր Գագիկ այ թագաւորէլը լսեց ինչ ըրաւ, ու Յուսուսուփ ինչպէս տիրապէտեց Հայաստանի.

ներնին ապահովցնեն, բայց Յուսուփի տեմնալով նախարարներուն բաղմանալը վախցաւ, ու սուտ պատճառներով շատը յայտնի սպաննեց, շատը ծածուկ նոդեց, ուսնաց ալ թոյն տուաւ, որով քովը քանի մը մեծ նախարարներ միայն մնացին:

7. Տեսաւ Ամբատ որ բոլոր նախարարները բոլին հեռացեր են, ու ինքը չի կրնար գէմ դնել Յուսուփին, ուստի իր մարդիկներովը քաշուեցաւ Կապօյտ բերզը, որ անառիկ էր: Յուսուփի եկաւ պաշարեց եերգը ու Հայոց զօրքերը դրաւ որ բերդապններուն հետ պատերազմն: Ամբատայ սիրաց քդիմաց երկու կողմէն եղած ջարդերուն որ իրեն համար էին, և վեհանձնութեամբ յանձն առաւ աւելի իրեն թշուառութիւնը քան թէ տեսնել իր ազգակիցներուն մաշը, ու ինք զինքը Յուսուփին ձեռքը տուաւ, երդմանիք առնելով անիկ որ իրեն անձին վխաս մը չընէ: Յուսուփի առջի բերանը պատուով պահեց զինքն ու ետքը թողուց որ Երիակ երթայ. բայց երբոր Գագիկ քոլին փախաւ, Յուսուփի բարկանալով խաբէութեամբ կանչեց Ամբատը ու շլթայի զարկած Դումին տարաւ, հոն տարի մը մութ բանափ մէջ պահեց հովի վրայ պահեցնելով միայն հաց և ջուր տալով. վերջը երբոր լսեց որ Երնջակ բերդին մէջ շատ մը նախարարներ ապաստաներ են՝ գնաց ան բերդը առնելու, ու երբոր պատերազմով չկրցաւ յաղթել, հրաման տուաւ որ Ամբատը բերդին գիմացը տանին ծեծեն ու նախուաեն: Դահիձները սկսան տանջանիքը աւելցնել որ հաւատըը ու բանայ. նախ թաշկինակով բերանը գոյցեցին որ

7. Ամբատ ի՞նչ գառն ու սարսափելի մահ ունեցաւ.

չունչ չկարենայ առնել, վերջը գելարանով կիզը ձմէցին, ու գլխուն վրայ ծանր բեռներ դնելով տասը հոգի վրան կ' ինկնային որ նեղութիւնը սասափայցնեն: Ու ամեն անդթութիւններս ընելն վերջը, քանի որ գեռ ողջ էր մորթը հանեցին ու Դումին տանելով խաչեցին երանելի թագաւորը, որուն վրայ լցոյ ծագեց և շատ հրաշքներ ալ եղան: Ա, բանիս մէջ մերնախարարաց ըրածը, այնպիսի գործողութիւն մ'է որ մէջը յայտնի կը ատմառութ նախանձու և տաելութեան կիրք, քաղաքականութեան պակասութիւն, անձնասիրութիւն, աիրատեցութիւն, թշուառութիւնը, և գահավէժ նորհուրդ, որ ասոնք ամենն ալ մեծամեծ ու անսպաս աղբիւրներ են անմիաբանութեան, ազգագույնութեան և կրօնից ու մարդկութեան պակսելուն, որով գաղանային բնութիւն մը անոնց տեղը կը աիրէ, ինչպէս որ տեսանք աս բանիս մէջ ու պիտի աեսնելիք բոլոր հագրատունեաց և իուրենինանց պատմութեան մէջ շատ տեղ: Թէ որ թագաւորը գէշ ըլլար (ինչպէս էր Արտաշելը Արշակունեաց վերջի թագաւորը), ան ամեն քիչ մը իրաւունք կրնային ու նենալ նախարարները, բայց ո՞վ չխաեմներ Ամբատայ սբանելի առաքինութիւնները, այսինքն հայրենասիրութիւնը, խաղաղասիրութիւնը, ներողամութիւնը, հայրագութիւնակը, արդարութիւնը և իրեն ուրիշ շատ կատարելութիւնները. որով մէկէն յայտնի կ'ըլլայ իր թշնամեաց ըրածին վերջի աստիճանի չարութիւնը (914):

ԴԱՍ ԻՆ.

4. Աշուա Բ. Երկաթ. — 2. իր Կ. Պօլսի երթանը։ Աշուա
բռնաւոր. — 5. Աւասայգ դաւաճանութենէն աղասին։
4. Ցիկ Ամրամ. — 6. Ցշիր յաղթուլին։ Գրիգոր
Մարգարետանի. — 6. Աշուա մահը և իր յատկութիւններ։
— 7. Աւաս Կը թագաւորէ։ Բէր Ավիազաց թագաւորէ
պարտութիւնն։ — 8. Աշուա Ռողմած թագաւոր Կօ-
ծուի։ Մուշեղ Լարսի մէջ Կը թագաւորէ. — 9. Աշու-
այց քրիստոնէական կատարելութիւնն։

1. Աշուա Բ. Երբոր լսեց հօրը մահը, իր ունե-
ցած քիչ մը զրբը կարգի դրաւ ու անոնց հետ
մէկաեղ վաղեց Հայաստանի ան քաղաքներուն
վրայ՝ որոնց մէջ բռնացեր էին Յուսուփին զօր-
քերը. մէծ յաջողութեամբ ու քաջութեամբ
թշնամիները վանեց, այլ և այլ տեղեր սաստիկ
ջարդ տալով թշնամեաց սիրաը վախ ձգեց ու
աս իրեն քաջութիւններուն համար Երկաթ
ըստեցաւ։ Նախարարներն ալ սիրա առին,
եկան միացան հետը ու զինքը թագաւոր օծեցին.
բայց հաղեւ թէ խապատութեան ձայնը ոկասւ
տարածուել Հայաստանի մէջ՝ նորէն խավու-
թեան ձայնները հալածեցին խաղաղութիւնը։
Վասն զի նախարարներն ոմանք նորէն սկսան
մէջերնին կուիւ ընել ֆաւասիրութեամբ և ա-
տելութեամբ, ոմանք ալ թագաւորին դէմ ել
լալով սկսան պատերազմիլ ու ցաւալի Հայաս-
տանը տակն ու վրայ ըրէն։ Յուսուփի ալ առիթ-

4. Աշուա Բ. Բնէպէս հալածեց զՅուսուփ ու
Հայաստան ի՞նչպէս նորէն իր խաղաղութիւնը
կորսընցուց.

գանալով վաղեց Հայաստանի վրայ ու ինքն ալ
սկսաւ քանդել տպականնել առջնին աւելի։
Ամբողջ գեղեց քայլաքներ անապատ դարձուց։
Բնակիչները ջարգել կուտար, մանաւանդ ծե-
րերն ու ակարները, մանր աղաք ու անկարող
մարդիկը. մնացածները կամ կը տաճկըցնէր և
կամ կը նահատակեր։ Եսցն բաները սկսան ընել
նաև ուրիշ բարբարոս ազգերն ալ։

2. Կոստանդին Պերփեռուժէն կայսրը ուղեց
օգնել Հայոց. և թղթով իմացուց իր կամքը
Յովհաննէս կաթողիկոսին, աս բանիս վրայ մե-
ծապէս ուրբախսանալով ազգամէր կաթողիկոսը,
շատ ետեւ եւլա որ նախարարները վարանէ,
որպէս զի հաւանութեամբ թուղթ գրէն կայ-
սեր օգնութիւն ինդրելով իրմէ, բայց ան-
օգուտ, աս պատճառաւ ինդրէն հարը հասնե-
լով ինքը առանձին պատասխան մը գրեց կայ-
սեր, Հայոց խեղանութիւններն ու թշուառու-
թիւնները պատմեց, ու միանդամայն օգնութիւն
ինդրեց, ան թղթէն այնպէս շարժեցաւ կայսեր
գութը Հայոց վրայ որ մէկէն թէ օգորոս անու-
նով իշխան մը զրկեց Հայաստան որ գայ թագա-
ւորն ու կաթողիկոսը Կոստանդինուպօլիս տա-
նի։ Գնաց Աշուա, ու շատ մեծ պատիւ և ընդու-
նելութիւն դաւա կայսերէն. նորէն թագաւոր
պատկուեցաւ, ու մէծամեծ պարգևներով ու
շատ զօրքով Հայաստան դարձաւ։ Յուսուփի
վախնալով որ Աշուա Յուսուաց օգնութեամբը
կրնայ իրէն վկասել բարեկամութիւն ձևացուց.
բայց ուղելով Հայոց մէջ երկապատկութիւն
ձգել որ զիրէնք ակարացնէ առջնին պէս,

2. Կոստանդին Պերփեռուժէն ի՞նչ օգնու-
թիւն ըրաւ ու ի՞նչպէս պատուեց զԱշուա ու
Յովհ. կաթողիկոսը ու ո՞վէ Աշուա Բանաւորը.

Աշոտ Երկաթին հօրելքօր որդին Աշոտը թագաւոր գրաւ՝ որ Աշոտ Բանաւոր ըսուեցաւ։ Աշոտ բանուորը մէկէն սկսաւ Աշոտ Երկաթին հետ պատերազմ ընել որ թագաւորութիւնը առնէ . նախարարներէն ոմանք թագաւորին կողմն էին, ոմանք ալ բանաւորին . աս պատճառաւ շատ սիդամ մէջներնին սաստիկ պատերազմներ եղան, ու ամեն անդամ Յովհաննէս կաթուղիկոս մէջ մտնալով կը խաղաղցնէր :

3. Թագաւորին եղբայրը Աբաս՝ տեսնալով Աշոտոց առաջ երթալը նախանձեցաւ, ուստի Ափիսազաց Գուրդէն իշխանին հետ միանալով ապստամբեցաւ Աշոտին ու ետեւ եր Աշոտը մեռցնելու . բայց Հոտու առաջուց իմանալով Եղբօրը դաւաճանութիւնը, իր ընտանիքովը ծածուկ Ուտի աշխարհքը վախաւ, հոն զօրք ժողլեց, Եղբօրը գէկ պատարազմի ելաւ ու միշտ յաղթաղ գանուեցաւ, բայց վերջէն ուրիշները մէջ մտան ու գրուանց հաշտեցուին զիրենք :

4. Անդամ մը երբոր Աշոտ առանց գիտնալու Ուտեացւոց աշխարհքը կ'երթար քանի հոգ հոգւով զնւարձութեան համար, մէկ մ'ալ լուր առաւ որ Յլիկ Ամրամ Ուտեացւոց իշխանը ապստամբեր է երմէ ու շատ զօրքով պատերազմի կը պատրաստուի : Աշոտ մէկէն Եգերացւոց թագաւորին քովը գնաց, ու անկէ օգնութիւն խնդրեց, գիտնալով անոր համարիտ մէկը և ինչպէս որ կը յուսար իր կարծածէն աւելի օգնութիւն դաշտ անկէ, ու սկսաւ Ուտեացւոց աշխարհքը վաղել Ամ-

3. Աշոտ ինչպէս իր Աբաս Եղբօրը դաւաճառութիւնէն ապրեցաւ .

4. Աշոտ երբոր լսեց Յլիկ Ամրամին իրմէ ապստամբիլը ինչ ըրաւ .

րամ իր զօրքերը անտառին մէջը դարանի գրաւ՝ որպէս զի յանկարծակի վաղէ Աշոտին վասյ . բայց Աշոտ ծածուկ ճամբաներէ անցնելով գնաց ամսուր լերդ մը քաշուեցաւ իրեններովը . Յլիկ Ամրամ ալ եկաւ պաշարեց բերդը : Աշոտին զօրքերը յուսահատեցան և խօսք գրին թշնամիներուն հետո որ Աշոտը բռնեն կապեն ու իրենց ձեռքը մատնեն : Աշոտ իմանալով անոնց միտքը, նոյն գիշերն որ առաւատը զինքը պիտի մասնէին առանց ուրիշի բան մը բանլու հեծաւ իրեն աշխայժ ձիուն վրայ ու թշնամեաց մէջէն անցնելով վախաւ գնաց, ու հարիւր հոգի հետ առած՝ Աւան կղզին առանձնացաւ :

5. Ան միջցին Յուսուփի նորէն ընդհանուր ոստիկան գրուելով ամիրապետէն, Հայաստանի վրայ առանձին օստիկան գրաւ Նըսր անոնուլ մէկը, որ անտէր գոնալով Հայաստանը՝ շատ չարիք հասուց Հնյոց բանի որ աւելի մեծ չարութեան մը ձեռք չէր զարկած՝ ետ կանուեցաւ Յուսուփին, ու իր աեղը եկաւ Երշը ոստիկանը Ասիլայ լսելով որ Աշոտ Աւան կղզին է քաշուեր Գեղամայ ծովլւն քովը իր անթիւ զօրքերը չարեց : Աշոտ իր մարդիկներէն եօթանասուն հոգի ընարեց ու տասը նաւով սկսաւ ցամացիներուն հետ պատերազմիլ այնչափ որ թշնամիները բանակնին թողուցած վախանն Երշը հոնկէց վախսելու ասեն գնաց ուրիշ բերդի մը վրայ, ուր աւելի մեծ ջարդ կերաւ Գեղորդ Մարզպետունիէն, որ թէպէտ և քիչ բայց անպարաելի զօրքովը մէծամեծ կլասներ հասուցեր Եր Եղնամեաց ուրիշ անդամներ ալ :

6. Ովէ Նըսր, ու Բըշ ինչպէս Աշոտէն ու Գէորգ Մարզպետունիէն յալթուեցաւ .

6. Բըշբին աեղը նորէն եկաւ Նըսր, բայց սկսաւ քաղցրութեամբ նայիլ Հայոց վրայ ու դութ ցուցնել: Ազոտ աւ սիրտ առնելով եկաւ իր թագաւորութիւնը առաւ ու սկսաւ բարեկարգել. իր Աբաս եղբօրը հետ ալ հաջուեցաւ. բայց ափսոն որ թագաւորութեամ խաղաղիլը չկրցաւ վայելը, ու հիւանդանալով մեռաւ քսանիցըս տարի նեղութեամբ թագաւորելէն մերը: Քաջ էր և միանդամայն խոճեմ, խաղաղասէր, ու նեղողամիտ, բայց ժամանակը և նախարարաց անկարգութիւնները ու ժողովներն որ թէ ինքը ու թէ Հայաստան վայելէն անոնց արգելները:

7. Աբաս Աշոտ Եղբայրն նախարարներուն հաւանութեամբն թագաւոր ընարուեցաւ ու աթուը Կարս քաղցրը դրաւ. շատ շինութիւններ ըրաւ, ու այլ և այլ պատերազմներով Հայաստանը խաղացուց: Մերձակայ աղդերը լսելով Աշոտ վարապայ փառաւորութիւն ու ըրած բարեկարգութիւնները՝ սկսան վրան նախանձիլ. մանաւորապէս Ափիսաղներուն Բէդ թագաւորը, որ նաև շատ զօրքով վրան պատերազմի եւաւ, ու յոխորտանօք պատամ զոկեց թէ եկեր եմ կարսի նոր շինած մայր եկեղեցին Վրաց ծիսով օծելու: Աբաս զօրքերը ժողովեց ու պատերազմի պատրաստուեցաւ. յալթեց Բէրայ, բռնեց զինքը տարած մայր եկեղեցին ու ըստաւ. « Ահա աս է ան եկեղեցին որ կ'ուզէիր օրհնել Վրաց ծիսով. լսաւ նայէ, որովհետեւ աշ պիտի չտես-

6. Ո՞ւր և ի՞նչպէս մռաւ Աշոտ Երկաթ ու օրո՞նք են իրեն յատկութիւնները.

7. Աբաս ի՞նչպէս թագաւորեց ու ի՞նչպէս յաղթեց Բէր Ափիսաղոց թագաւորին.

նես»: աս ըսելով աչքերը փորել տուաւ. իսկ Ափիսաղները շատ ընծաներով ու աղաջանիքով ազատեցին Բէրը գերութենէ: Աբաս քսանը ըորս տարի թագաւորելէն երբը խաղաղութեամբ մեռաւ. և ըրած շնութիւններն ու բարեկարգութիւնները իրեն մէկ մէկ արձան իր անոււանը յեշտակ կանգնեց Հայաստանի ամեն կողմերը (951):

8. Աբասէն շատ աւելի լսաւ, առաքինի ու աղդամէր եղաւ իր յաջորդը, որով ազդը երջանկացուց. ասիկայ էր Աշոտ իր որդին, որ իր բարեգործութիւններուն համար Աշոտ Ողորմած ըստեցաւ: Ասիկայ հօրը մենակէն եաբը ութսուն հազարի չափ զօրք ժողովեց. Գէորգ Մարզպետանին Գոռ որդւոյն հետ միացաւ ու թշնամիները հալածեց Հայաստանէն մեծամեծ քաջութիւնները ընելով. ինը տարի աս կերպով Հայաստանու սահաց մինչեւ որ նախարարները աենելով իրեն քաջութիւնները, ազգասիրութիւնը ու բարեկաշտութեան հոգին, ժողովը ըրին ու թագաւոր օծեցին զինքը ըոլոր ազդին վրայ: Երբոր Աշոտ Ծինդհանուր ազդին թագաւոր օծուեցաւ, իրեն Մուշեղեղբայրն ալ քանի մը նախարարներու գլուխ կենալով Կարսի մէջ թագաւորեց. բայց որովհետեւ միան Աշոտին կը հոգատակիր և կ'օգնէր անոր, ան պատճառաւ ձայն չհանեց Աշոտ ու թողուց որ թագաւորէ: Աշոտ այսպէս ամեն կողմանէ խաղաղութեամբ և հայրաբար աղդը կատավարած ատենը՝ Հագարացոց Համատւն սպարապէտը ապստամբէլով ամբապէտէն Հայաստանի վրայ վազեց. Աշոտ

8. Ո՞ւկ Աշոտ Ողորմած, ի՞նչպէս թագաւոր օծուեցաւ ու ի՞նչ պատերազմ ունեցաւ Հադրացւոց Համատւն զօրավարին հետ:

բազմութեամբ զօրաց գիմացը ելաւ, յաղթեց
թշնամոցն ու բանեց սպաննեց զինքը, ամիրա-
պետը ուրախանալով և հաւելով Աշոտին ըրած
քաջութեանը կրկին թագաւորական թագ ու
շատ մեծագին պարգևներ զգիեց անոր:

9. Աշոտքաջութեան հետ մէկտեղ բարեպաշ-
տութեամբ և ողորմածութեամբ զարդարուած՝
բալոր ունեցածը ալքատաց կը բաժինը, որով
մեռնելին ետքը գանձատանը մէջ դրամ չդըա-
նուեցաւ, շատ հիւանդանոյներ ու աղքատա-
նոցներ շնել տուաւ, որոնց մէջ մտած շատ
անգամ ինքն աւ անձամբ կ'աշխատէր ու կը ծա-
ռայէր հիւանդաց, շատ անգամ աւ աղքաներն
ու ցաւադարները իրեն սեղանակից կ'ընէր,
եկեղեցիներ վանքեր, ուսումնարաններ և ուրիշ
բարեպաշտական տեղեր շնել տուաւ: Իրեն
պէս բարեպաշտ ու ողորմած էր իր Խոսրով-
անոյը թագուհին ալ, որ շատ բարեգործու-
թիւններ զատ՝ վանքեր, եկեղեցիներ ու հի-
ւանդանոյներ շնել տուաւ:

9. Աշոտ իր քաջութենէն դուրս ի՞նչ քրիստո-
նէական առաքինութիւններ աւ ունէր.

ԴԱՅ ԻՐ.

1. Ամբատ Բ: Իր մեծագործութիւնքն և անիրաւութիւնքն.
2. Գագիկ Ա. — 3. Դաւիթ կիւրապազատ և իրնա-
նաւոր մահը. — 4. Յովհաննէս Ամբատ: Աշոտոյ պատե-
րազմն և հայութիւնը. — 5. Աշոտոյ վրայեատու-
թիւնն. — 6. Սկիւթացոց արշաւանքը: Վասակ Պահլա-
ւոնին: Իր մահը. — 7. Յովհաննէս կողեւն. — 8. Կի-
րակոս քահանային մահանութիւնը. — 9. Դաւիթ Ան-
հողն և իր յաղթութիւնն. — 10. Խորիկ և իր ան-
դժութիւնն. — 11. Վեստ Սարգիս: Վահրամ Պահ-
լաւոնին յաղթութիւնն: Գագիկ Բ. կը թագաւորէ.
- 12. Վեստ Սարգիս բանառուին. — 13. Գագիկ յաղթութիւնքն Ոկիւթացոց և Յունաց դէմ. — 14.
Վեստ Սարգիս գաւաճանութիւնն: Գագիկ Կ. Պօկիս
երթալ. — 15. Բագրատունեաց թագաւորութեան
կործանումն. — 16. Տաղովի և իր անդժութիւնն:
Հարսիկ իշխանը. — 17. Թամթուլ սպարապետին քաջու-
թիւնն և մահը: Մանազկերսի ազատուուն. — 18. Ամե-
րամանին Ամին առնելը. — 19. Գագիկ Աբասեն. —
20. Գագիկ Բ: Իր կէտինդութիւնն. — 21. Գագիկ յաղթա-
ունուին ու սպանութիւն: Գագիկ Աբասեանին և Ար-
ծրունեաց թագաւորաց Տիւղերուն վերջանալ:

1. Աշոտին երեք որդոց մէջէն, որ էին
Ամբատ, Գագիկ ու Գուրգէն, Ամբատը թագա-
ւորէց, որ իրեն ըրած քաջութիւններուն համար
Շահնշահ (թագաւորաց թագաւորը) և Տիւղե-
րակալ ըսուեցաւ: Ամիկայ շատ զարդարեց Անի
քաղաքը՝ բաղմաթիւ եկեղեցիներ վանքեր ու
շատ մը պալատներ շնելով. բայց ամենէն մեծ

1. Ամբատ Բ: իր մեծագործութեանը հետ
ի՞նչ անիրաւութիւններ աւ ըրաւ.

ու յիշատակի արժանի ընտառաքն է Ասկին շըր-
ջապատ քաշած պարիսպը՝ որուն համար ութը
տարի հազարաւոր հոգի աշխատեցան. իսկ քա-
ղաքին բոլոր եկեղեցեաց թիւը կըսնէն թէ հա-
զար ու մէկ էր, և ասկից սովորութիւն մտած
էր ուամրաց մէջ Ասկին հազար ու մէկ եկեղե-
ցեաց վրայ երգում ընել: Ամբատ երկրորդ,
տատարեք տարի թագաւորեց ու մեռաւ, ինա-
զաղասէր ու աշխարհաչէն թագաւորի անուն
ժառանգելով. բայց բարեպաշտութեան կող-
մանէ թագաւորութեան վերջի տարիները եկե-
ղեցական օրինաց գէմ բաներ ընելով անունը
արատաւորեց: Իսկ ըրած գործողութիւնները
ասոնք են. նախ իրեն քրոջ արջելով կին տուաւ,
որուն շատ գէմ կեցան եկեղեցականք, բայց ան-
սաստեց. թէպէտ և քիչ տաենէն կինը մեռաւ,
որով և ինքն ալ մեծ սուդի ու տրտութեան
մէջ ինկաւ: Ասկէ զատ ուրիշ անդթութեան ու
անիրաւութեան գործողութիւն մ' ալ ըրաւ,
որ իրեն մեծանձնութեանը չէր վայլեր: Անդամ
մը թագաւորականի խոտի ու յարդի համբարա-
նոցները այրեցան, որուն գործադիրը դսնելու
համար շատ ետևէ եղաւ Սմբատ, բայց որոշ
չկրցաւ իմանալ: Օր մը Երեսոր մազովորդը
բազմութեամբ եկեղեցին փողուած հոգեսր
խորհրդին ներկայ էր, յանկարծ իսենթ մարդ
մը վաղեց խորանը ու բուրվառին կրակարանը
առնելով ժամէն գուրս սկսաւ փափչէլ. ժողո-
վուրդը աս նորատեսիլ գործողութեան պատ-
ճառը հարցուց. անիկայ ալ սկսաւ գոչելով
ըսել թէ կ երթամ Ամբատայ համբարանոցներն
այրելու. աս խօսք թագաւորին ականջը հաս-
նելով բռնել տուաւ ան մարդը ու առանց քննե-
լու ինչ տեսակ մարդ ըլլալը հրամայեց որ նախ
աչքերը փորեն ու վերջը եղեցով պատել տալով

այրեց, և խստիւ արգիլեց որ չմաղեն. զասիկայ
քանի մը կրծնաւորներ տեսնելով, սրոնք և ոչ
թագաւորին հրամանը գիտեն, մերուցին մար-
մին ու թաղեցին քրիստոնէական ամեն պաշ-
տամունքները կատարելով: Երբոր լսեց աս ե-
ղած գործողութիւնը Սմբատ շատ նեղացաւ և
նորէն հրամայեց որ մարմինը հանեն ու գաշտի
մէջ ձգեն. աս բանիս բարկացան ան կրծնաւոր-
ներն ու ըսին « Սմբատայ մարմինն ալ իր գերեզ-
մանին մէջը սկսի չմիայ »: Ըստանին կատա-
րուեցաւ Սմբատայ մեռնելուն քիչ մը ատեն
ետքը (988):

2. Գագիկ Ա. Եղբօրը անզը յաջորդելով իր
հօրը Աշոտին ու նախորդներուն քաջութեանցն
ու առաքինութեանցը Տէւեղող եղաւ, և քան
զանոնիք ալ Երեւելի ըլլալով մածագործութեանց
կողմանէ, Բագրատունեաց թագաւորութեանը
սպարծանէ Եղաւ. նոյնպէտ նաև իր Կատարամիտէ
թագուհին որ ըմբնցուց Սմբատին սկսած Անեոյ
մայր Եկեղեցին: Գագիկ թագաւորելուն պէտ'
իսենթ ինկան մը պատճառաւ խոռվութիւն նն-
կաւ զօրաց մէջ. վասն զի աս կինս կը քարոզէր
ամենուն թէ Սմբատ թագաւորը տէսիլքով
իրեն երկցէր ու ըսէր է թէ ինքը գերեզմանին
մէջը գեռ ովչ է. Գագիկ աս իսենթիս ստութիւ-
նը ցուցընելու և ժողովուրդը հանդարակեցնե-
լու համար Սմբատին մարմինը գերեզմանէն
հանել տուաւ որ ամենքը տեսնան. ասով խոռ-
վութիւնը իջաւ ու ամենքն ալ խաղաղէցան:
Գագիկ երեսուն տարի թագաւորեց միշտ քա-
ջութեամբ, բարեկարգութեամբ ու բարեպաշ-
տութեամբ (1019):

2. Գագիկ Ա. Բնչակես ըրաւ իր թագաւորու-
թիւնը ու ինչ գիտելիք կայ Կատարամիտէ թա-
գուհացն վրայ.

3. Գագկայ ատենը անուանի եղաւ Պաւելթ կիւրապաղատ, որ Տայոց գաւառին իշխանն էր. Պաւելթ ծերաւթեան վերջի տարիները Աստրազանի ամիրապետը Մամլուն հարիւր հազար զօրով Հայաստանի վրայ վաղեց. Պաւելթ օդնութեւն ուղեց Գագկեն և Վրաց Գուրգեն թագաւորէն, անոնք ալ տասնըհինգ հազարի չափ զօրք զկեցին, որ Պաւթայ զօրացը հետ միանալով քան հազար եղան: Հայերն ու Վրացիք տեսնալով իրենց քիչուորութիւնը, առջի բերան ահի գողի մէջ էին. մէկ մ'ալ զօրացան հաւատքով, և զԱսուուած օդնութիւն կանչելով թշնամեաց վրայ վաղեցին, ու մեծ ջարդ տալով տաճիկներոն, մնացածները ցիրուցան ըրին ու իրենցմէ չինդ վեց Վրացի միայն մեռան: Տայոց ուրիշ իշխանները տեսնալով Պաւթի այնչափ փառաւորութիւը առ յաղթութեանս համար, սարսափելի անօրէնութեամբ մը հազորդութեան սուրբ Խորհրդին մէջ թշոյ խառնեցին: Պաւելթ իմացաւը ըսած անդգամութիւննին, ներեց ամենուն ու մեռաւ սրբութեամբ յանձնելով իր երկրին իշխանութիւնը Յունաց կայսեր, որովհետեւ նորը մերձաւոր ազգական չունէր:

4. Յովհաննէս Ամբատ, որ Գագկայ անդրաբիկ որդին էր, հօրը տեղը թագաւորեց. հանգարանաբարոյ, խոհեմ, գիտուն էր, բայց միանգամյն դանդաղամիս, վախկոտ և անդործունեայ. աս իրեն պակասութիւնները մեծամեծ խոռովութեանց պատճառ եղան ոչ միայն իր կենդանութեան ատենը, այլ և մեռնելն ետքն ալ

3. Ո՞վէ Պաւթի կիւրապաղատ ու ի՞նչ նշանաւոր մահ ունեցաւ.

4. Ի՞նչ բնութեան աէր էր Յովհ. Ամբատ ու ի՞նչ պատերազմունցաւիր Աշոտ եղբօրը հետ-

որով և թագաւորութիւնն ալ վերջացաւ: Երբոր Յովհաննէս Ամբատ թագաւորեց. իր պըլամիկ եղբայրը Աշոտ որ քաջ, աշխայժ, արագամիտ ու գեղեցկաաեսիլ երիտասարդ մ' էր, շատ նախարարներ իր կողմը որապավ կ'ուղեր եղբօրը աեղ թագաւորեց: Վրաց Գորդի թագաւորն ուղելով իմացընել թէ ինըը զԱմբատ օրինաւոր թագաւոր կը ճանճնայ Հայոց ընծաներ ու թագաւորական պասկ զրկեց Ամբատայ, աս բանիս վրայ Աշոտ կրակ գարձաւ և յայտնի ապստամբելով գնաց Վասպուրականի Սէւնեքերիմ թագաւորէն շատ զօրք օդնութիւն առաւ: Յովհաննէս, որուն կոլմն էին բոլոր ժողովութեան և նախարարներուն մեծ մասը, վաթուն հազարի չափ զօրք ժողված՝ Աշոտի դիմացը եւլաւ, բայց որովհետեւ վախկոտ և պատերազմական բանեկուր մէջ վարժ չէր, Աշոտին ու անօրդիէ զօրաց քաջնութիւնը տեսնալով սկըսաւ յուսահամարիլ վախկոտ մեծ ջարդ տալով հալածեց զիրէնը, մինչեւ եկաւ Անին ալ պաշարեց. քանի մը մեծ նախարարներ, Վրաց թագաւորը և Պետրոս կաթուղիկան Յովհաննէսին շատալի վիճակին վրայ խոչնացին ու մէջ մանելով խաղաղուց ցին երկուքն ալ, և պայման գրին որ Յովհաննէս նոյնաէկ թագաւորէ, և Աշոտ իրեւ անօր երկրորդը՝ ուրիշ տեղերու իշխէ: Յովհաննէս իր վասահիրտ երկուսութեամբն շատ նախարարներուն երեսէն ինկաւ, որ զինքը թողուցին ու Աշոտին կողմը անցան:

5. Քիչ մ' ատենէն Աշոտ զջալով եղած դաշնագրութեանը վրայ՝ ուղեց նորէն Յովհաննէսին

5. Աշոտ ի՞նչ վարպետութիւն բանեցուց դար-

տեղը ընդհանուր ազգին թափաւոր ըլլալ, սայց որպէս զի խառնվութիւն ըլլայ՝ այսպիսի վարպետութիւն մը բանեցուց. ծանր հիւանդ ձեւցու ու անկազնոյն քավը որոգայթաւոր մեքենայ մը գնել տուաւ. երբոր Յովշաննէս զինքը տեսնելու եկաւ՝ որոգայթին մշջ բանուել բավական ազատէլ որ կենացը ինայէ. ան ատեն Սոլիրատ էշանն եկաւ կապեց զՅովշաննէս ու ձեւցուց որ մեռցնելու կը տանի. բայց ընդհակառակն տարաւ նորէն թագաւորեցուց, ըսելով թէ «Լաւ է խօսէմ գթած ու վախիստ թագաւոր մը ունենանք, քան թէ անիրաւ ու անդութ բանաւոր մը թէպէս և քաջ»: Աշոտին գործողութեանը վրայ պժգալի նախարարները, ամենքն ալ անօգնական ձգեցին զինքը ու չեռացան քովին. ինքն ալ Կոստանդնուպոլիս դնաց Աշոտի կայսեր օգնութեամբը շատ զօրքով եկաւ նախարարները նուտաճեց, ու շատ քաջութեաննէր ընելով այլ և այլ աեղերու տիրեց. բայց վերջը քաջութիւնը մեկդի ձգուծ՝ զեղիսութեաց եւեկ եղաւ մինչեւ իր մահը:

6. Հայաստան որ արգէն անդամարներին և արարքին թշնամիննու ձեռքէն սոսկալի ազետից տեսարան մը եղած էր, ան միջոցներուն ունակիս եղաւ գաղանացեալ և տրեան ծարաւի նոր ազգէ մ' ալ, որ էն Սկիւթացիք, որ երբեմն երբեմն անթիւ բազմութեամբ յարձը կելով կ'սոլոզէին արեւմէ Հայաստանը: Ասոքնախ վալքին Վասպուրական աշխարհը ու

ձեալ զՅմրատ իր թագաւորութենէն ձգելու ու երբու ի՞նչ մէջ ունեցաւ.

6. Աս միջոցի ի՞նչ նոր արտաքին թշնամի մը ալ ունեցաւ Հայաստան ու ի՞նչ դիտէլիք կայ Վասակ Պահլաւունին վրայ.

շատ վնաս հասցցնելով անցան գնացին: Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը կանաչատես ըլլալով Սկիւթացւոց ընելու շարեացը՝ թուղթ դրեց Վասպուր կայսեր, աղաքէլով որ Սեբատիոյ գաւառը կայսրը իրեն տայ ու ինքը Վասպուրական աշխարհքը առնէ. կայսրը համեցաւ ու Սենեքերիմին ինդիբքը մշջերնին երդունքով հաստատեցին. այսպէս Սենեքերիմ Սեբատիա գնաց, հետա տանելովը հարիւր հազար հոգին աշխարհքը, առնելու գումար կայսրը հազար, ու մեծ կոտորած ընելով ցրուեց զիրենք, բայց երբոր ինքն ալ առանձնացած աղօթքէ կ'ընէր Աստուծոյ, բանի մը Սկիւթացիք հոն աեղերը պահութած ըլլալով քար մը զարկին գլխուն ու սպաննեցին պատուական ծերունին: Աս բաներս աեսնելով Յովշաննէս թագաւորը, և բնական երկըսուութեամբն ալ վախնալով որ պիտի չկարենայ գեմ գնել Սկիւթացոց յարձակմանն, դաշնիք դրաւ Վասպուր կայսեր հետ որ մեռնելն ետքը Անին կայսեր անցնի, միայն թէ Ցյոնելն օգնեն Հայոց (1024):

7. Ան միջոներուն սոսկալի հարուածներ եղան Հայաստանի մշջ. այսինքն երկրաշարժ, սով, ու արևու խաւարմունեցներ, որով ամենքն ալ սկսան վախնալ. մանաւանդ որ աննշան մարդ մը ելած գումալ քաղաքէ քաղաք կը պարակը ու կ'ըսէր. «Այ ինձ, եղուկ զի», և որով հետա երեւելի էր ան ատենները սրբութեամբ ու իմաստութեամբ Յովշաննէս Կողեւոն ըսուած վարդապէտաց, թագաւորը մարդ զրկեց ու ան

7. Ո՞ւ է Յովշաննէս Կողեւոն.

երեսյթներուն մեկնութիւնը հարցուց, ինքն ալ զիրենք խրատեց՝ յայտնի ցուցընելով Ասուռ ծոյ բարկութեան նշանները:

8. Յովհաննեսին մեռնելով տասը տարիի չափ տռաջ Վասիլ կայսեր եղբայրը կոստանդին՝ մեռաւ. ասիկայ մեռնելու տաենը յիշելով Անիին համար եղած անիրաւ և ապօրինաւոր գանձարութիւնը, Աիրակոս անունով հայ քահանայ մը կանչելուաւ ու գտնիքին թողթը յանձնեց անոր որ տանի Յովհաննէս թագաւորին տայ: Իսկ ան արծաթասէր քահանան պահէց թողթը, ու երբոր Սիբայէլ կայսրը թագաւորեց՝ տարաւ կայսեր տուաւ, և ինքը անոր փոխարէն չատ գրամ տաւ: Միբայէլ կայսրն ալ օրէ օր կ'սպասէր Յովհաննէսին մեռնելուն որ Անին պահանջէ: Պատմութեանց մէջէն անհետ ընելու դէմք և անիծից արժանի մասնութիւնն:

9. Ան միջոցներուն Յովհաննէս թագաւորին հօրեղբօրդին որ Դաւիթ Անհովին կը կոչուէր՝ անուանի եղաւ իրեն իսելքով և ինքնադրութ թագաւորեց Գուգարաց աշխարհքը, աս բանիս վրայ նախանձելով Նըւայ Ապուսվար ամիրան՝ Պարսից Տուղրիլ թագաւորը գրգուեց, ու երկուքը մէկտեղ անթիւ բազմութեամբ Դաւթայ վրայ էկան: Դաւիթ օդնութիւն ուղեց Հայոց և Ավիսաղաց թագաւորներէն. Երբոր ամենը մէկտեղ միացան ու պատերազմ պիտի սկսէին՝ հարիւրաւոր քահանաներ ու շատ եպիսկոպոս.

8. Կիրակոս քահանային ըրած մասնութիւնը ո՞րն է:

9. Հայերը Դաւիթ Անհովինին հետ ի՞նչ վառաւոր յաղթութիւն մը ըրին Պարսից և Ապուսվար ամիրային դէմ:

Ներ միտքերան ական աղաղակել «Արի Տէր օգնեա մեզ, և փրկեա զմեզ վասն անուան քո սրբոյ»: Աս ձայնէս բալոր քրիստոնեայք սիրտ առած՝ վագեցին թշնամեաց վրայ, մեծ շիռթութիւն ձգեցին մէշերնին ու սասափկ ջարդ մը տալէն երբը հարուստ աւարով ամենքն ալ երեսնց աելզ գարձան:

10. Աս փաւաւոր յաղթութեան վրայ եղած ուրախութիւնը Բէրկի գաւառին մէջ հանդիպած անդթութեամբը գառնացաւ: Բէրկին Սէնեքրիմայ Յունաց տուած քաղաքներէն մէկն էր, Պարսիկ տիրեր էին անոր, ու Խըտըիկ անունով անդութ մարդ մը քաղաքապետ գրեր էին: Յայնէրն ու Հայերը միացած վաղեցին Բէրկիլին վրայ, ու քաղաքը առնելով Խըտըիկը բանտ գրին. ասերբոր իմացան մօտ տեղերու ամիրաները՝ եկան նորէն առին Բէրկին ու Խորիկը աղառեցին բանտէն, աս բանիս չդիմացաւ Գանձի անունով իշխանը, շատ զօբքով վաղեց Տաճէկիներուն վրայ, զօբքերնին ցրուեց, Խորիկն ալ Բէրկիլին միջնաբերդը փախուց, և վերը անհոգացած սկսաւ իրեններովը կերուխումի եռեւ ըլլալ: Ան ատեն քանի մը ամիրաներ նորէն միացան, վաղեցին Գանձիին վրայ, զնիը սպաննեցին, զօբքը ցիրուցան ըրին. Խըտըիկն ալ աղառելով առչի իշխանութեանը հասուցին: Խորիկ իր գաղանային վուժը առնելու համար՝ մարդաչափ խորութեամբ փոս մը փուրել առւաւ, ձեռքը ինկած մարդիկը մորթել տաղով արիւնով լցուցաւ փոսը, ու ետքը մէջը մասնելով լցուացուեցաւ:

10. Խորիկ ով է ու ի՞նչ գաղանային անդթութիւն կը պատմուի վրան:

11. Ան ատեները մեռաւ Յովհաննէս, քսան տարի թագաւորելէն ետքը և որդի չժողուց իր զգուշաւորութիւնը՝ անխոհեմութեան և երկ չոտութեան փոխուեցաւ, որով Վեստ Սարդիս ըսուած մարդուն ու անոր նմանեացը երես տուաւ: Վասն զի Վեստ Սարդիս Սիւնեաց փառամու ու ազգատեաց իշխանը՝ ինքը ուղելով թագաւորելէ ետեւ եղաւ որ օրինաւոր յաջորդը չժագաւորէ, աս բանիս համար ամեն բանի մէջ սկսաւ Յունաց ձեւանու ըլլաւ որպէս զի անոնց առաջերագիւնք մը ցուցընելովիր վախճանին հասնի, և որովչեն Միքայէլ Յունաց կայսրը լսեր էր ան միջոցներուն Յովհաննէսի մահը, մէկէն գեսպան զրկեց նախարարներուն որ Անին տան: Երբոր նախարարները յահճն չառին, կայսրն ալ չըրս անդամ զօրք զսկեց Հայոց վրայ որ երթան բանութեամբ տիրեն Անիին, և որովհեան բոլոր նախարարները միասնած չենին անոր համար Յոյները շատ չըրիք հասուցին Հայոց գոռող Սարդիսին օդինութեամբ: Երկու տարի այսպէս անցնելէն ետքը՝ նախարարները միաբանեցան, ու Վահրամ Պահլաւունին Վասակայ եղբայրը որ կարիմ ու առաքենի էր իրենց գլուխ գրին: յիսուն հազարի չափ զօրք ժողվելով՝ քաջութեամբ յարձակեցան Յունաց վրայ, ու անանկ սոսկալի ջարդ տուեն Անիին որ Ախուրեան գետը արեամբ ներկուեցաւ կ'ըսէ ժամանակակից պատմիներէն մէկն: Ան յալգութենէն վերջ Պատիկ երկրորդը կամ չեցին ու թագաւոր օծեցին, որ Յովհաննէս թագաւորին Աշոտ եղբօրը որդին էր, ու Վեստ

11. Յովհաննէսին մեռնելէն ետքը ովկ գրգռեց զՅոյները Հայոց գէմ ու Պատիկ Բ. ի՞նչպէս թագաւորեց:

Սարդիսին բանութիւններէն փախչելով թագաւորական կը պարզաւիր:

Պատիկ Բ. Երբօր թագաւորեց՝ տասնըվեց աւարեկան եր բայց իր կրթութեամբը, իմաստութեամբը, զգուշաւորութեամբը և խոհական ընթացքովը մէր երեւելի թագաւորներէն մէկն եղաւ (1042):

12. Վեստ Սարդիս երբօր իմացաւ նախարարաց միաբանութիւննը և Պատիկայ թագաւորելը, փախան գնաց Անիին միջնաբերդը պահութանցաւ, Պատիկ ելաւ մինակ քովը գնաց, ու խելացի նոսքերով յորդորեց ու ստիպեց զինքը որ միջնաբերդէն ելէ: Սարդիս գնաց Ուուրմանի բերդը քաշուեցաւ, ու երբօր հոն ալ սկսաւ իր անհանդարտ բնաւորութեամբը ասպատակութիւնները ընել Պատիկ նեղացած զօրք ժողվեց, վրան գնաց բանեց զինքը ու բանա գրաւ, բայց մէրջը ուրիշ նախարարաց ալլուցմնիքին զիջնանելովկ անոր կեղծաւորութիւններէն խաբուելով բանեւն ալբանեց ու նորէն սկսաւ հետը բարեկամութեամբ վարուիլ:

13. Պատիկ թագաւորութեան բաները հազ զիւ թէ քէլ մը կարգի գրեր էր՝ Ակեւթացիք անհամար զօրբով Հայաստանի վրայ վաղեցին: Պատիկ ասամբը լից հազար զօրբով կարձութեամբ պատերազմնելով սասկանի չարգ տուաւ թշնամեաց, բայց բանակնին ցրուեց, ու յաղթութեամբ գարձաւ իր աթոռը: Բայց գետ հանգստաութիւն չպատած նորէն իր թագաւորութիւնը լուց ըստած:

12. Վեստ Սարդիս երբօր Պատիկայ թագաւորելը լուց ի՞նչ ըրաւ:

13. Պատիկ ի՞նչպէս յաղթեց Ակեւթացւոց ու Անոնմախասին զօրացը, ու ի՞նչ գիտելիք կայ Գր, Մագիստրոսին վրայ.

թիւնը տակն ու վրայ եղաւ վեստ Սարգսի ու
Մոնունխոս կայսեր պատճառաւալը: Վասն զի
երբոր Մերքայէն կայսեր տեղը Մոնունխոսը յա-
չորդեց, գիտուածով ձեռքը ինկաւ Յովհաննե-
սին Վասիլ կայսեր հետ ըրած գաշնքը. գեսպան
զրեց Գագկոյ որ Անին տայ. Գագկի սիրով ըն-
դունեցաւ գետուպանները, ու իմացուց թէ ինքը
առանց ընդհանուր ազգին հաւանութեամիջ չք
կրնար Անին տայ: Կայսրը նեղացած Գագկոյ
սս կերպով իր խօսքը մըրժելուն վրայ, Աօիտ
զօրավարին ձեռքովն շատ զօրք դրկեց թագա-
ւորին վրայ և Դընայ Ապուսպար ամփրան ալ
Գագկոյ էւմ պատերազմի գրդուեց. բայց բոլոր
յայսը պարագ եղաւ. վամն զի Յունաց զօրքը չա-
րաչար յադթուեցան, Դընայ ամփրան ալ Գագ-
կոյ ընծաներովն հետք բարեկամացաւ: Իմա-
նալով Գագկի որ Մոնունխոսը գրգուողը Սար-
գին է՛ կ'ուզեր սպաննել զինքը. բայց անիկայ
յանցանքը Գրիգոր Մագիստրոսին վրայ ձերլով
թագաւորին աչքէն հանեց զինքը՝ որ ամեննեին
սս բաներուս մէջ ձեռք չունէր: Խսկ Գրիգոր
տեսնելով որ իր կենացը վտանգ կայ՝ եղաւ կոս-
տանդնուազօխս գնաց, և հօն իր կատարելու-
թեւններուն համար կայսերէն Մագիստրոսու-
թեալ սպատիւ գտաւ. ասով Գագկոյ միտքը
աւելի հսանառառեցաւ թէ Գրիգոր Մագիստ-
րոս կայսեր հետ համախոհէ է, վեստ Սարգին
ալ արդարացաւ:

14. Երբար կայսրը յուսահատեր էր Անին
առնելէն, վեստ Սարգիս ու իր կուսակիցները
չար գաւաճանութեան խորհուրդ մը առւին

15. Ի՞նչ գտաւաճանութեամբ վեստ Սարգիս
ու նախարարները համոզէցին զԳագկի կ. Պօլս
երթաւ.

կայսեր որ Անին Գագկոյ ձեռքէն յափշտակէ, այսինքն դու զԳագկի Կոստանդնուպօլիս հրա-
վիրէ. ըսին, բարեկամութեան համար, ու մենք
ան միջոցին Անին կը մասնէնք: Մոնունխոս ու-
րախացաւ անոնց տուած խորհրդին վրայ, և
թուշլթ գրեց Գագկոյ Կոստանդնուպօլիս հրա-
վիրելով զինքը: Բարակամիտ և հետատես թա-
գաւորը իմացաւ գաւաճանութիւնը, ու յանձն
չամոզի այսեր հրաւերքը, բայց վեստ Սարգիս
և ուրիշները շատ յօրդորեցին խոստանալով որ
իրենք Անին կը պաշտպանին. երբոր տեսան
թէ չեն կրնար համոզէլ զթագաւորը, պատա-
րագի ատեն երգում ըրին հաւատասրիմ մնալու
թագաւորին, ու նամակով մը կաթուզիկոսին
յանձնեցին: Գագիկ գիտնալով նախարաց
չարութեւնը, յանձն չէր ուզեր առնել, բայց
վերջապէս ճարը հատած, եղաւ կայսեր գնաց,
և Անին վերակացու դրաւ Ապիրատ իշխանը,
որ իրեն շատ սիրելի ու հաւատարիմ էր, ար-
քոնական ընտանիքն ալ յանձնեց Վեստ
Սարգսին:

15. Գագկի մեծ սպատիւ գտաւ Մոնունխո-
սէն, և իրեն գիմացը ելան Յունաց բոլոր մեծե-
րը: Բայց քանի մը օրէն սկսաւ կայսրը Անին
ուղել երբոր Գագկի կ'ընդգրիմար անիրաւ
պահանձմանը խելացի և իրաւացի պատճառնե-
րով, կայսրը զինքը բանու դրաւ որ թերեւս անոն-
կարենայ խոնարհեցընել զԳագկի: Քանի որ
գեռ աս գործողութիւններուս հետ էին, մէկ
մ' ալ Մոնունխոս Գագկոյ գիմացը հանեց Ա-
նին ու իր արքունեաց բանալիները նախարա-

16. Գագկի թագաւորութիւնը կորմնցընելէն
ետքը ի՞նչ վիճակ ունեցաւ ու Բագրատունեաց
թագաւորութիւնը երբ վերջացաւ.

բաց միաբան հաւանութեան թղթով: Ազգեցագիրն է կատարել, իսկ լըքը կորսնցուց և չէր գիտեր ինչ ընելքը. իմայցաւ որ իր արգաւորութիւնը, իրաւունք գիտնալը և գթասրաւութիւնը յաշ-թուեցան. մանաւանդ թէ արհամարհուեցան անօրէնութենէ, ափրատեցութենէ, փառասիրութենէ և աղքատեցութենէ, որով և սիրուեցան թագաւորութիւնը ձեւէ, հայրէնիքը թողուշ հեռանալու ու աստանդական հեանք մը անցրնելով հայաստանի ու Անիի աւերագիներուն տակը թաղել իր անունը (1048):

Սոնմամխաս Հայաստանի ալբելն ետքը Գագ. կայ տոււաւ Պիզու քաղաքը Կապադովիս մէջ, և պալատ մը Կոստանդնուպոլսոյ մէջ. թագաւորական գանձէն ալ եկամուտ կապեց իրեն. Գագելքիւ մը տաեն Կոստանդնուլուի իենալն ետքը՝ հրաման խնդրեց կայսերէն ու Պիզու իր քաղաքը գնաց, ուր միրաց կը հաշէր ու կը մաշէր տեսնելով ոչ այնչափ իր թշուառութիւնը՝ որչափ ազգին ողորմելի ու աւագելի վիճակը, որուն պատճառ եղաւ իր մատնիներուն սոսկալ չափանիւնը, որով իրենց շահուն համար բնութեան և ազգաց օրէնքը ոտքի տակ առն ու խեղճ ազգը թշուառութեան ու գերութեան մէջ ձեգեցն: Աս կերպով վէջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնը 1048ին, մօտ Երկու հարիւր տարիի շափ տեելն ետքը:

16. Բագրատունեաց թագաւորութեան կործանելն քիչ մը ետքը սկսան տեմնուիլ գլուխ ու թագաւոր չունենալուն ազէտափի հետեանդները. վասն զի ամեն կողմանէ սկսան Հայաստանի վրայ կատաղաբար յարձակիլ արեան ծարա-

16. Ո՞ւէ Տուղթը ու ի՞նչ գիտելիք կայ Հարպիկ իշխանին վրայ:

Ավայլերու պէս բիւրաւոր թշնամիք, ու իրենց դէմ ելող մը չպանելով ամենայն չարիք հասուցին Հայոց: Ասեաց առջնոր եղաւ Տուղթի Պարսից թագաւորոն, որ երեք անհամար բազմութիւն զրկելով անհամար մարդ թրէ անցուց, եկեղեցներ ու վանքեր փցընել տուաւուշատ մարդ ալ գերի ըրաւ. միայն Արծն քալքին մէջի ըրած կոտրած էն կրնայ իմացուիլ միւսներն ալ: Աս քաղքիս մէջ իրեք հարիւր հազար բնակիւ կար ու հարիւրաւոր եկեղեցներ: Տուղթին պաշարմանը՝ մէջները գէմ կեցան ու չէին ուղեր անձնատուր ըլլալ: Բայց վէրջապէս յաղթուեցան ու թշնամիները կատաղաբար ներս լեցուեցան. հարիւր քառասուն հազար մարդ կոտրեցին, մատցածները գերի տարին, քաղաքն ալ այրեցին, որուն աղետալի աւերագիներն մինչեւ հիմա կեցած էն: Վաժտաւ հազարի շափ յշն զօրք կային Հայաստանի մէջ ան միջցին, բայց փախանակ օդնելուն Հայոց՝ իւնիք ալ ձեռքերնեն եկած չարիքը կը հասցընեին: Այսպիսի գործողութեանց մէջնաւառոր է Հարպիկ անունով իշխանին գիպուտածը: Երբոր Յշնք Զորորդ Հայոց բնակիցները պատերազմու ու հարկածանութեամբ կը նեղէին, Հարպիկ իրեն պաշտիկ գնդովն բերդ մը քաշուած՝ Յունաց լինաներ կը հասցընէր. Պէրոզ Յունաց զօրավարն առանելով որ չի կրնար բերդին տիրել մօտ գլուխ սկսաւ ըսել: Ու որ Հարպիկն գլուխը ինձի բերե՛ բերդը անոր կը պարզէմ: Ասոսկալիք ձայնէս խեղճին գունը աչքէն հեռացաւ, և արծաթասէր մասնիչներէ վախնաւով չորս հինգ օր ամեննեն չքնացաւ: Քովի հաւատարիմ կարծուած մարդիկը շատ յորդուցին որ քիչ մը քուն ըլլայ հանգչի, և հազիկ երկիւղալից ու վայրկենական բունը կոխեց

վրան ու աչքերը դոցեց, մէկ մ'ալ քովինները
վաղեցին վրան ու անողորմաբար մարթելով, մա-
հուան խոր քունին մէջ թաղեցին: Բներգին մէ-
ջնները իրենց արժանաւոր պատիշը դանելով,
շղթայտակաս կ. Պոլիս տարուեցան, Մոնոմա-
խուան ալ մէկէն քշել տուաւ զիրենք: Աչա այս-
պէս միշտ մատնիչները մատնուողին շատ աւելի
դառն և ահաւոր պատիֆ ունեցեր են:

17. Տուղթիլ Սլոճն քաղաքը հիմնայատակ
ընելէն եաքը երկրորդ տարին շատ զօրքով բա-
սեն գաւառին վրայ յարթարկելով մէծամեծ վաս-
ներ հտաւոց ան տեղերուն ալ: Գագիկ Արաբան,
որ մինչև ան ատենաները կը թագաւորէր Կարսի
մէջ, զօրք ժողվեց Թաթուլքաջ սպարապետին
ձեռքը տուաւ, ու թշնամեաց գէմ զիկեց: Որ-
չափ որ զօրքը քիչ էր՝ քաջութիւնը այնչափ մէծ
եղաւ Հայոց կողմանէ, մահաւանդ Թաթուլին
ըրածնէրը: Բնոյց երկար ատեն թշնամեայն ընդ-
դիմանաւէն ետքը յաղթուեցան Հայերը ու
Թաթուլը բանուեցաւ, երբոր Տուղթիլն դիմացը
եւառ քաջ սպարապետը, ըստ Տուղթիլ. « Թէ
որ Ասուբան իշխանին որդին մահուունէ ազատի
զքեզ կ'ազատեմ, ապա թէ ոչ պիտի մեռնիս » .
սպատախան տուաւ Թաթուլ. « Թէ որ հա-
րուածը իմն է՝ չապրիր, հիմակուունէ սպաննէ
զիս » : Մեռաւ աղան, ու Թաթուլ սպանուե-
ցաւ: Տուղթիլ անկէ գնաց Մահացիերափ վրայ,
որուն քաղաքապետը Վասիլ անունով յցն
մ'էր, տարո քովին Հնարագէտ ու խելացի հայ
քահանայ մը կար որ թշնամեաց ամեն հնար-
ները պարապ կը հանէր իրեն գիւտերովին.
այնչափ որ Տուղթիլ յուսահատելով բարկու-

17. Տուղթիլ Բասեն գաւառը ի՞նչ ըրաւ ու
ի՞նչ կը պատմուի Թաթուլին վրայ.

թեամբ թողուց գնաց, շատ մարդ ու երկելի
անձնիք կորմնցընելէն ետքը: Գաղղիացի մ'ալ
դիւրավառ նիւթ մը գտաւ, ու անով սյրեց
Պարսից ահագին բարանը՝ որ չորս հարիւր հոգի
հացիւ կրնային շարժել:

18. Յաջորդ տարին մեռաւ Տուղթիլ, ու տեղը
յաջորդեց իր եղբօրորդին Ալֆասալան, որ գիտ-
նալով Հայաստանի անտէր ըլլալը՝ անթիւ բաղ-
մութեամբ Հայոց վրայ եկաւ ու Անին պաշարեց:
Տէմինելով Անին պարիսպներուն ամրութիւնը,
առջի բերանը յուսահատեցաւ, բայց վերջը
ինմահալով պարապին մէկ կողմին ակարութիւնը՝
բոլոր ուժը զնի թափեց, ու բարանով անդա-
գար զարնելով քիչ մը տեղ վկաց: Պարմիները
Երբոր սկսան ան պատառուածքէն ներս մանել
քաղաքացին քանութեամբ գէմ գրին ու շատ
ջարդ ըրին իրենցին: Ալֆասալն քանի մը անդամ
ալ փորձ ընդլէն ետքը յուսահատեցաւ ու սկը-
սաւ քաղթէն հետանալ: Բագարատ և Գրիգոր
քաղթին Ալբակացուները չիմանալով Ալֆաս-
ալնին հետանալը՝ մոքեցնին գրին որ պիտի
հիարենան մինչև վերջը Պարսից գէմ գնել, ուն-
ափ յուսահատած՝ իրենց զօրքովն միջնաբերդը
քաշուեցան: Պաղաքացին որոշ չէինանալով թը-
նամեաց հետանալը, սկսան վախերնին կանչուըս-
տել, լալ ու ողբալ, ու ձայնէս ետ գործաւ
Ալֆասալն, ու անձնելով որ ամենքը շինթու-
թեան մէջ էն կատալաբար ջարգել տուաւ բիւ-
րաւոր մարդիկ, քաղթին մէջն ալ քանի մը հա-
զար մարդ թողուց որ աւերակները նորէն շնէն:

19. Ալֆասալն Անին ի՞նչպէս առաւ ու ի՞նչ
սրիք հտաւոց Հայոց.
19. Գագիկ Ալբական ի՞նչ հնարքով բարեկա-
մացաւ Ալֆասալնի հետ.

Աբասեանին որ իրեն հնազանդի, առաջուց իմաստալով Գագիկ գեսպանին դալը՝ սուգի զգեստ հաղաւ, ու միսրի վրայ նստած սկսաւ ուղը ու լայ ձեւցընել, երբոր հարցուց գեսպանը պատճառը, ըստ Վագիկ, « Ի՞նչ սրտով կրնամ ու բախ ըլլալ երբոր իմ միքելի բարեկամն Տօւղիլ մեռաւու։ Յա բանիս վրայ Ալֆասանին դութը շարժեցաւ, եկաւ հետք սիրով պատժուեցաւ ու շատ պատի ըրաւ անոր : Բայց Գագիկ գուշակելով օր անկեց վերջը հանգստութիւն պիտի չկրենայ գտնել Պատիկ ձեռքէն, իր երկիրը կայսեր տուաւ, ու տեղոր առաւ երեք քաղաք, Մամիդաւ ըերդը, հափեր ալգեղ (1065)։

20. Աս միոցներուա Յունաց Հայոց գետ ու նշցտ ատելութիւնը նորէն սաստականալով շատ չսրիք հասուցին Հայ իշխաններուն, և ամեն աեստկն ատաստինք կ'ընէին աղցին, աս պատճառաւ Գագիկ, Բագրատուննեաց վերջի թագաւորը, Կեսարիոյ յայն մետրապօլիսը սպաննեց, թէպէտ և ինքն ալ սպաննուեցաւ։ Աս Մարկոս անունով մետրապօլիսն ուղելով զայշերը նախատել՝ իր շան անունը Արմէն գրած էր, ասրանս լսած ըլլալով Գագիկ՝ առթի մը կ'սպասէր աս նախանանց վուէմն հանելու, ուստի օր մը քանի մը ծառաներով մետրապօլիսին գնաց, և երբոր գետ ուղանի վրայ էին ալզանց Գագիկ մետրապօլիսին որ շունը կանչէց : Երբոր անիկայ նեղը մանելով շունը կանչեց Արմէն անուանելով, հարցուց Գագիկ աս անուանագրութեան պատճառը մետրապօլիսն ալ ըստաւ . « Ոլովէնտ գետ պլատիկ է՝ անոր համար Արմէն կ'ըսէն »։ Մէկէն աչք ըրաւ Գագիկ ծառաներուն, շունը և մե-

20. Գագիկ ի՞նչ կերպով Մարկոս Յունաց մետրապօլիսէն աղցէրնուու ըրած վրէմբը առաւ.

արապօլիսն ալ բռնեցին՝ պարկի մը մէջ դրին և սկսան շունը ծէծել ան ալ կատաղութենէն զակը կը իսածնէր, որով երկուքն ալ մեռան պարկին մէջ, իսկ Գագիկ եւաւ գնաց անկէ։ Յոյնք Մարկոսին աս տեսակ նախատական մասնաւնը վրայ իրաւամբ կաղաքած սաստիկ ոն կապեցին Գագիկ վրայ ու ետեէ էին զինքը սպաննելու։ Իրաւ, հայրենաւակը մարդու մը համար ծանր բան է իր ազգին նախատանացը գիմանալ, բայց Գագիկ հայրենասիրութիւնը արդար վրէմբն գրութեան չափը անցուց, և ըրած անգնեռութիւնը ոչ երբէք կ'արդարանայ։

21. Անուամ մը Գագիկ Տարսոնի կողմերէն իր քաղաքը Պիլուով գտանալով, երբոր ձամբան կից վաստա բերդին կողմելով հասաւ, բովի մարդուկիը հէտուն ձգեց ու ինքը երեք հոգով գետ՝ ի՛ ամոցին կողմերը գնաց զքոսմէքի համար : Ինըդին տէրերը օր որդիկը Մաստալեայ կ'ըսուելին շատ մը մարդիկ գարանի գրին, իրենք եկան Գագիկ երկրպագութիւն ըրին, ու մէծ յարգութեամբ ընդուկեցան զինքը, ան միոցին գարանամուտ նէրը գուրա վազելով բանեցին զԳագիկը ու շլմայի զարկած Բերդը տարին, իսկ քովի երեք հոգին ատեն գտնելով փախան գնացին ուրիշ Հայ իշխաններու իմացուցին, անոնք ալ եկան ու սկսան բերդին հէտ պատերազմիկ . բայց չկրնալով վսա մը հասցընել անառիկ ըլլալուն համար՝ յուսահատած եւան գնացին : Ան ատեն Մանտալեայ որդիկը զԳագիկը սաստիկ չարչարելով սպաննեցին, ու մարմինը պարսպին վրայ կախեցին որ Հայերը աեմնէն : Չորս հինգ ամիս ետքը

21. Գագիկ ի՞նչպէս բռնուեցաւ ու սպաննուեցաւ առաջաւագ ու ութինչ գիտեկիք կայ Գագիկ Աբասեանին ու Արծրունեաց թագաւորական ցեղին վրայ .

Բանիկ անունով Հայ մը գնաց գիշերանց գերելզ
մանէն ոսկորները հանեց, որ բերդին պարսպին
տակը թաղուած էին, ու տարաւ Պիզու Գագ-
կաց շնել տուած վահքին մէջը թաղեց: Ահա
այսպէս մեռաւ այն թագաւորը որ աշխարհքիս
անուանի թագաւորներէն մէկը պիտի ըլլար, և
եր անմոհական արդեամբն յաւիտենական
յիշատակներ պիտի ունենար. և հիմա, անունը
հաղիւ թագաւորաց մէջը յիշատակուեցաւ:
Մէկ Վեստ Սարդիս մը և երեն պէս քանի մը
փառամոլ և ախտալից մարդկէկ այսպիսի չարեցց
պատճառ եղան, և թողուցին մեղի երենց ահա-
ւոր մասնութեան պատուլը ՚ի խրատ և ՚ի յան-
դիմնութիւն:

Ան ատենները վերջացան նաև Գագիկ Արա-
սեանին, ու Արծրունեաց թագաւորութեան
ճիշդերը, որով բարութիւն չնշուեցաւ Հայաստա-
նի մէջէն թագաւորութեան անունը (1070):

ՅԱԳԱՍԻՈՐՈՒԹԻՒՆ

Ռ Ա Դ Բ Ի Ն Ե Ա Ն Ց

ԴԱՍ ԻԹ.

1. Ուոքինեաց թագաւորութեան սկզբ. — 2. Ուոքէն
Ա. Գող Վասիլ. — 3. Կոստանդին Ա. — 4. Թօրոս
Պարսից և Ակիմացոց կը յաղթէ. — 5. Մանսալեայ
որդոց բանակն. — 6. Լեռն Ա. և իր քաջութիւնն. —
7. Կոստանդին Պերփեռութիւնն. Ամսի փախաւան: Ա-
նաբարզայի Հայոց քաջութիւնն. — 8. Վահկաց ամբո-
ցնի առումն: Լեռնի գերութիւնն. — 9. Թօրոսի տե-
սած երազն: Լեռնի մահը:

1. Բագրատունեաց ինկնալէն մէրջ երեսուն
տարի անիշնանութիւն ըլլալով՝ սյնպիսի աղե-
տալի խեղձութեան մէջ մնաց Հայաստան որ
հայրենասէր մարդուն աչքէն արտասուրք չդա-
գրիր մինչեւ որ տեսնէ գէթ Ուոքինեանց իշխա-
նութեան կանգնութիւն, որ թէպէտ և ընդարձա-
կութեանն ու զրութեանը նայելով պղամիկ էր,
բայց ըստ քաջութեանն, ըստ բարեպաշտութեան
և ըստ խոհեմութեան մէջ էր, մանաւանդ այն-
պիսի գարերու մէջ որ ամեն կողմանէ թշնամիք
զօրոցած, ու ազգին ներքին և արտաքին ուժը
տկարացած էին (1080):

1. Բագրատունեաց թագաւորութեան ին-
կնալէն եաքը աղքերնիս ի՞նչ վեճակ ունեցաւ.

2. Որուբէն Ա. Գագկայ ազգականներէն մէկը, որ անոր բանուելու տաենը քովին էր, Կիլիկիա փախչելով, հնի գանուած Հայոց իր կատարել Ըստմիւններով ու քաջութեամբը սիրելի եղաւ. քովի կարիճները շատցուց ու սկսաւ քանի մը պղափ քաղաքներու ու բերդերու տիրել. շատ անդամն Յունաց ալ յաղթեց, ու Կիլիկիոյ մէջ գանուած Հայոց իշխեց: Որուբէնին օդնական ու գործակից եղաւ Վասիլ անուշնով քաջ ու հնարագետ իշխանը որ յանկարծ յանկարծ Եշնամեաց վրայ յարձելով շատ վասի կը հաս ցընէր անոնց, ան պատճառաւ անուան ալ Գող Վասիլ գրեր էին; Կիլիկիոյ Հայերը թէպէտ և իրենց ազգասէր իշխանին առաջնորդութեամբը հանդիսաւ ու գոհ էին, բայց բուն Հայաստանի բնակիչները շատ ներութեամբ կը քաշէին Պարսիկ գործակիշներուն ձեռքէն, մինչև որ Մելիք Շահ ՋՅոյները հալածեց Հայաստանէն ու ինքը տիրեց. և լսելով որ Պարսից գործակալներն զայերը կը նեղէն սաստիկ հրաման հանեց որ քաղցրութեամբ վարուին Հայոց հետ. ասով խաղաղ մասց Հայաստան մինչեւ անոր մահը:

3. Ան միջոյներուն մշտաւ Որուբէն Ա. տառնչնիտ տարի Խելքով, տրթնութեամբ, Հայրաբար ու քաջութեամբ ազգը կառավարելէն ետքը: Կոստանդին Ա., իր հօրը տեղը յաջորդելով՝ հոյնին անուանի եղաւ ընալիք բարեմասնութիւններովն, մահաւանդ զբուշաւորութեամբն, մեծանմութեամբն և պատերազմական հայութեամբն, որով Յայներէն պատերազ-

2. Ո՞լ Էն Որուբէն Ա. ու Գող Վասիլ ու Ի՞նչ գիտելիք կայ Մելիք Շահին վրայ.

3. Ո՞վ յաջորդեց Որուբէն Ա. ու Կոստանդին ի՞նչ ոգնութիւն ըրաւ իտակիրաց.

մով շատ աեղեր առաւ ու տէրութիւնը ընդարձակեց: Ասոր ատենը Լատինացիք հանեցին առաջին խաչակիր զօլքը Կովբետոսին տառաջնորդութեամբը, ասոնք երբոր Անտիոքը սպաշտեր էին՝ պաշարնին լմնցաւ ու սով ինկաւ բանակին մէջ. Կոստանդին ուրիշ Հայ իշխաններու հետ մէկաւդ առաւ պաշար զօկեց անոնց, որով զբացած Անտիոքը առն ու Կոստանդինին շատ աղինել լմնաներու առավետթեան պատիւ զրկեցին: Կոստանդին տասնկ լսաւ կերպով հինգ տարի իշխանէն ետքը մեռաւ, և իրն յաջորդեց Թորոս որդին (1099):

4. Յորոս շատ քայլութիւններով ու բարեկարգութիւններով իր անուշնը պայծառացուց, շատ անդամ Յունաց յաղթեց ու Անարզարա քաղաքն ալ առաւ: Ասոր ատենը Պարսիկքան համար բաղմութեամբ կիլիկիոյ վրայ եկան, ու շատ չարիք հասցնելին ետքը Թորոսին հալածուեցան, նշյագէս նաև Գող Վասիլ որ գեռ կ'ապրէր, երկու անդամ Պարսից գէմ մէծ յաղթութիւն ըրաւ: Հազիւ թէ Պարսիկը Կիլիկիայէն հալածուեցան անթիւ զօրբով Սկիւթացիք լցուեցան հնի: Թորոս տեսնելով որ չկրնար միարկ գէմ գնել, օգնութիւն հանչեց Տիւրան և Աղտամաթ Հայ իշխանները: Պատերազմը սաստիկ ըլլապով, քաջութեամբ պատերազմիւն ատեն երկուքն ալ մեռան, ան ատեն Անըն Թորոսին եղարյուր երեսը խաչակիրեց ու զԱստուած օգնութիւն կանչէլով մտաւ թշնամաց մէջ, ու այնպէս քաջութեամբ սկսաւ կոռուի որ հազարաւոր մարդ սպաննեց ու թշնամիները հալածեց:

4. Թորոս ի՞նչպէս Պարսից յաղթեց ու Սկիւթացիքը Հայաստանէն հալածեց.

3. Ան միջոցներուն թորոսի ու Մանտալեայ երեք որդւոյք մէջ թշնամութիւն մը ծագեցաւ, ուստի Թորոս զօրք ժողվեց, վրանին պատերազմի ելաւ, բոյց տեսնելով որ ահաւիկ է բերդերնին, անոր համար գիշեր առեն գարանի դրաւ շատ մը կարիք մարդիկ բերդին քովերը, ու ինքը հեռացաւ գնաց: Առաւուսնաց տեսան Մանտալեայ որդիքը որ Թորոս հոն չէ, կարծեցին թէ յուսահատած ելեր գնացեր է, ուստի բերդին դուները բացին ու սկսան համարձակ դուրս ներս մտնելու ելլեւ, և ահա յանկած Թորոսին դարած մարդիկը վլանին վազելով բոլոր հոն դտանին թրէ անցուցին, Թորոս ալ իր զօրքերովը վրայ հասաւ, ու բերդին տիրեց: Վերջը Մանտալեայ երեք տղաքը բռնեց ու հրամայեց որ Գագիկայ թուրն ու Հագուստները բերեն Ան միջոցին երեք եղբայրներէն մէկը գնաց ինք զի՞ն քը բերդէն վար նետեց ու մեռաւ. Թորոս անոնցմէ մէկը սպաննեց ծեծելով, մէկան ալ շղթայի զարկած հետը տարաւ, և քանի մը տարի ալ ապրելէն ետքը մեռաւ՝ քսանուերեք տարի աղջը կառավարելէն ետքը (1122):

6. Որովհետեւ Թորոս որդի չունէր, տեղը անցաւ Աւոն Ա. Կարիք ու առաքինի եղբայրը. ասիկայ, ինպէս որ պատմեցինք, արդէն եղբօրը տաենն ալ մեծ քաջութիւններ ըրած էր Սկիթացւոց գէմ, ու ազգին կառավարութիւնը ձեռք տանելով՝ քաջութիւնն ու խնամքը աւելցուց. Մամեսահաքաղաքը տառաւ, և ուրիշ շատ:

5. Թորոս ինչուէս վարպետութեամբ Մանտալեայ որդիքը բռնեց ու բերդերնուն ալ տիրեց:

6. Աւոն Ա. Ի՞նչ քաջութիւնները ըրաւ Յունաց գէմ ու ինչպէս Անտիկայ կոմին ձեռքէն ազատեցաւ:

Քաղաքներ, որոնք Յոյները Թորոսի ձեռքէն յափառակեր էին, այնչափ անունը մեծաւ որ ամենքը կը դողացին իրմէ, և նոր Աժդահակ կ'ըսէին: Անախորայ կոմը նախանձելով վրան, ու միանդամայն գիտակալ որ չկրնար բանութեամբ յաղթել Լուսնին՝ սկսաւ բարեկամութիւն ձեւ և աւացընել, օր մը զի՞նքը կոչւմնիք հրաւերեց ու վերը բռնեց բանա դրաւ. Լուսն նեղը մտած՝ շատ դրամ, երկու քաղաք, իր որդիքներէն մէկն ալ պատանդ տալով ազատեցաւ. ու բանան ելլելուն պէս նորմէն դոքը ժողվեց ու տուած քաջաքներուն վրայ վաղելով բռնը ալ ես առաւ, այնչափ ինքը ծգեց Լատինացւոց Եշիանները, ու մասնաւոր կերպով Անախորայ կոմը, որ միաբաննեցան ու շատ պատանփեր և ընծաներ տուին, ես գարզնելով իրէն պատանդ առաւած որդին:

7. Աւոնին քաջութեան համբաւը համանելով կոստանդին Պերփեռութէն կայսեր ականջը, ուղեց որ ինքը անձամբ ելլէ ու Աւոնը ընկճէ: Աւոն երար իմացաւ Յունաց մեծամեծ պատրաստութիւնները, ազգին կառավարութիւնը ձգեց ու պէտաց ամուր և գժուարամասաց լեռները պահութացաւ իր ընտանիքովն: Կայսրը Աւոնին ետևէն մարդ զրկեց որ երթան զի՞նքը պահանջանեցին ինքը այլապահ քաջաքներու տիրեց, ասոնց մէջ Անարզաբան առնելու համար շատ նեղութիւն քաշեց ու անբաւ մարդ կորոնցուց, վասն զի՞ քաջաքացիքն, որ ըստ մեծի մասին Հայ էին, պատերազմեցան պաշարողաց հետաւ Յունաց բանակը ցրուեցին: Կայս-

7. Աւոն ինչու Հայաստանն վախաւ, ու Անարզաբայի բնակիչը ի՞նչ քաջութիւնները ըրին Յունաց զօրաց գէմ:

ըը աւելի մեծ պատրաստութեմբ նորէն պատրեց, բայց քաղաքացին ներսէն ամենայն հնարք կ'ընէն անոնց մեքենաները այրելու ու զերենք վնասելու: Երեսուներեօթը օր պաշարելէն ետքը վերջուագէս պարսովն մէկ կազմը փլուցին, ու Յոյնք կատաղաբար սկսան ներս վազել, բայց քաղաքացիք աւելի կատկելով սոսկալի արագութեամբ ու քաղաքացին կը պատերազմէն, որով բիւրառու մարդիկ մեռուցին Յոյնէրէն. մինչև նաև կանայք ալ ամեն տեսակ կարասի և այրելունիւթեր կը նետէն պատուհաններէն, որով շալա մարդ սպաննեցին: Ասսնք ընելէն վերը՝ Յունաց բարձութիւնը ճշգրեցին, ու քաղաքը կայսեր թուղով իրէնիք ելան դնացին: Եթէ Արշակունեաց տէրութեան ինկնալէն մինչև վերը տէմնուած ըլլար մեր ազգին մէջ աս մարդանակն հոգին, աս ամենահարկաւոր առաքինութիւնը, ասարակից չիայ որ միշտ կանգուն ու դրաւոր կը մնար:

8. Պէրփեռութէն Յնարզաբան առնելէն ետեղ դնաց Վահկայ ամրոցին վրայ որ ան ատենը Խութինեանց մայրաքալազն էր. տոր քաղաքապեան էր Ուռութինեանց ցելէն Կոստանդին անունով կորիչ մը, որ նայնպէս շատ մարդ չարեց ու նեղը ճէկց Յշները. բայց վերը էր որ ամրոցը առնուեցաւ, զինքն ալ բանց կայսը ու շութայի զարկած Կոստանդինուազօլիս վոկեց: Ճաման նաւով էրթալու ատեն՝ գիշեր մը շութաները կոտրեց, բոլոր պահապանները ջարդեց, ինքն ալ ցամաքը ելաւ. բայց ետքը քանի մը մարդկանց մասնութեամբ նորէն բռնուեցաւ: Կայսրը բոլոր կիլկիոյ ախրե-

8. Պէրփեռութէն Վահկայ ամրոցը ի՞նչպէս առաւ. ու զիւնի ի՞նչպէս բռնեց.

լէն ետքը՝ Կեսնի ալ իր ընտանիքովն բռնեց ու շղթայի զարկած Կոստանդինուազօլիս տարաւ ու բանաւը գրաւ. ուր տարի մը ձգելէն ետքը՝ ուրիշներու աղաւանիքովն բանաէն հանեց ու հանգիստ կը պահէր:

9. Աւեն անցնելէն ետքը օր մը թագաւորը բաղնիք գնացեր էր. Ուրաբէն Կեսնի որդին հնա տէղի քարէ աւազունը ջրով լեցուն՝ թէթև բանի մը պէս բանած մէկ շնով թագաւորին առվելը բերաւ. ամենը զարմացան աս բանիս վրայ ու սկսան գովել Ուռութինիս ու ժը, բայց վերը ոմանք վրան նախանձելով թագաւորը յորդորեցին որ ինչովն աշքերը կուրցընէ, որ ցաւին շդիմանալով քիչ ասւենէն մեսաւ: Կայսրը նորէն բանա դրաւ Կեսնի որգաւոյն հետ. հնա Թորոս երազ մը տէսաւ, ու քիչ մը միմիթարուեցան ելլիուցն ալ, և երազը ալ էր. փառաւոր մարդ մը տէսաւ որ եկեր իրէն հաց մը կուտար վրան ձուե դրած. Թորոս առաւ ան հացը հօրը հորը տուաւ, բայց անիկայ չի կերաւ: Երբոր առաւօս եղաւ սպատեց հօրը տէսած երազը, ան ալ ըստաւ. « Հացը կամ նկանակը կը նշանակի թէ նորէն պիտի տիրես գուն բուջը մեր կորանցուցած էր կիրներուն, իսկ ձուկը կը նշանակի թէ ծավուալ պիտի տիրես, ասոնք պիտի ըլլան: բայց ես պիտի չունեմ»: Երկրորդ անգամ բանա գրուելէն ետքը՝ Կեսն ատրի մը չափ ապրեցաւ ու մեսաւ. ետքը կայսրն ալ Թորոսը բանաէն աղաւաց ու լաւ աչքով կը նայեր վրան: Կեսնին առջի քաղաքութեան գործերը որչափ որ գովելի ու զարմանալի են, մեղադրութենէ աղաւէ վերը

9. Կոստանդինուազօլիս ի՞նչ գէպէեր անցաւ Կեսնի գլւէն, ի՞նչ է Թորոսին տէսած երազը ու Կեսն ի՞նչպէս մեսաւ.

գործը՝ որ հարկաւոր ժամանակ՝ կառաւարութիւնը ու ազգը ձեռք բաշխեցաւ. որ էթէ ինքը բոլոր ուժով գէմդնելու ըլլար թշնամւն՝ չէր կրնար թշնամին այնչափ վաս հասցընել աշխարհքին. պարտական էր նաև իբրև հայր հասարակաց իր կեանքը զոհէլով՝ ժաղովորեան փրկութիւնը հոգալ և տէրութեան վիճակը ապահովընել (1442):

ԴԱՍ 1.

1. Թորոսի կ. Պօլսէն փախչին և Հայոց տէրութեան ձևանան. — 2. Իր յաղթաթիւնն Անդրօնիկոսի գէմ. — 3. Ստեփանէ եղորը մահուան վուժինդորթիւնն և իր մահը. — 4. Ալէս Է իր մահը. — 5. Ռոբէն Բնիթթում Լամբրոնի իշխանը: Ռուբէնի գերութիւնն, աղատիլ և մահը:

1. Յովշաննէս Պերփեռուժէն կայսէր ատենը ամենուն սիրելի ըլլալով Թորոս իր զարմանալի կատարելութիւններով, երբար կիր Մանուէլ Յովշաննիսին աւելը յաջորդեց, Թորոս միաբը դրաւ որ Կոստանդնուպոլիսէն փախչի ու գայ ազգը գերութեննէն աղատէ. ուստի ծածուկ իբրև լաճառական ելաւ Պօլսէն Անտիոք Երթալու համար ու անկէ փախաւ կիլիկիա. հոն ինքզինքը քահանայի մը յայտնեց՝ թէ Ակոնի որդին է. քահանան երբոր ուրիշներէ ալ սառադեց աս բան՝ ուրախութեամի ասաւ զինքը իր տունը տարաւ, ու հոն ամենայն պատուով կը նայէր, միանդամայն իմացուց Հայոց մեծամեծ-

1. Թորոս ինչպէս կ. Պօլսէն փախաւ ու ինչպէս սկսաւնորէն Հայոց աէրութիւն մը ձեւացնել

նէրուն, որ Յունաց թանութիւններէն ձանձրացած՝ կուգէին առջի աղասութիւննին ձեռք ձգել: Կամաց կամաց Թորոսին գալը ամեն տեղ իմացուելով առաջ հազարի չափ մարդիկ քովը ժողովուեցան, ու իրեն առաջնորդութեամբն վաղեցին Անարդաբա, Աստանա ու Վաշկայ բերդին վրայ, և ամենուն ալ տիրեցին՝ Յշները հալածելով. ասանկ Թորոս կիլիկիոյ Հայոց հաւանութեամբն իշխեց ազգին վրայ, ու գրեթէ բոլոր Յշները հաւածեց հայոց իր տէրութեամնէն:

2. Կիր Մանուէլ կայսրը Թորոսին ըրածներուն վրայ նեղացած՝ մէկէն հրաման տուաւ Անդրօնիկոս զօրավարին որ շատ զօրքով կիլեկիս երթայ, Թորոսը բանէ ու երկրին բոլոր բնակչները թրէ անցընէ: Խակ Թորոս իր բնական լաւութեամբը ու գիտալով միանդամայն պատերազմին գէշ հետեւանքները, գեսայն զրկեց Անդրօնիկոսին իմացընելով թէ ինքը կայսեր հրամաննին և կամացը յօժարութեամբ կը հնազնդին եթէ կայսրն արգարութեամբ կառավորէ երկիրը: Անդրօնիկոս գուղովութեամբ պատասխան արուաւ. « Կայսեր հրամաննը և արդարութիւնը ան է որ զքեզ ան զըթայով կապէն ու կ. Պօլս տանին՝ որով քու հայրդ Լանի կապուեցաւ »: Թորոս հնարագէտ ու բարակամիա ըլլալով ձայն չհանեց, ունեցած հետեւակ զօրքը տարաւ կիրճերուն մէջ գարանի դրաւ, ուսկից որ Յշները ստիպուած էին անցնելու, և ինքը ձիաւոր զօրքով ուրիշ համբով մը Յունաց եւան անցաւ: Երբոր Հայք Յշները ամեն կողմանէ պաշարեցին՝ մեծ ջարդ մը տալէն ետքը

2. Թորոս ինչպէս կը հնարագէտիսութեամբն Անդրօնիկոսին յաղթեց ու ինչ կերպով Յունացմէ բանած գերի էշխանները ետ դարձուց.

Յունաց իշխաններէն շատ մարդ գերի բռնէցին։ Կայսրը սաստիկ տրտմեցաւ այնչափ իշխանաց գերի բռնութելուն վրայ։ Հրաման զրկեց Անդրոնիկոսին որ դրամով գնէ գերի իշխանները։ Երբ որ գեսպանները իմացուցին Թորոսին կայսեր կամքը, պատասխան տուաւ, «Կը զարմանամ որ այսչափ յարգի են եղեր կայսեր գիմացը իմ գերիներս, որ ես առանց արեան ու սակաւ աշխատութեամբ բռնէցի։ Իմ առջիս գրամ մ'ալ չեն արժեր, բայց երբոր կայսեր պիտանի են՝ թող ինչ որ կ'ուզէ վճարէ ու առնէ»։ Դեսպանները գերիներուն համատինք ընելու համար անհամար գրամ տուին ու ետ առին, բայց Թորոս վեհանձնութեամբ ան առած ստակը զօրքերուն բաժնեց գեսպանաց առջև։ Երբոր անոնք զարմացան՝ ըստ Թորոս։ «Կամաւ զրի որ նորէն ձեր իշխանները քաջութեամբ բռնէլով իմ առջևս բերեն»։ Եւ յերաւի, քանի մը տարի եաքը նորէն պատերազմ բացուելով Թորոսի և Յունաց մէջ, առջնին սկս Յշնէրէն շատ իշխաններ գերի ինքան, և Թորոս առջնին պէս ծախեց զիբենք, որով առժամանակ մի հաշտութիւն եղաւ Հայոց և Յունաց մէջ։

3. Քիչ մ'ատենէն նորէն թշնամութիւն ծագացաւ՝ Թորոսին Ստեփանէ եղբօրը պատառաւաւ, վասն զի ասիկայ ապստամբելով Թորոսէն ինքնագլուխ սկսաւ իշխել, և շատ մը սրիկաններ գլուխը ժողվելով Յունաց մեծամեծ վնասներ հասուց, անոնք հէտք թշնամանալով դարանի մտան, բռնէցին զինքն ու եռացեալ ջրի մէջ սպաննեցին։ Սաստիկ տրտմեցաւ Թորոս, ու

սուգ մտաւ Եղբօրը մահուանը համար. բայց վերջը ուղելով Յոյնէրէն վրէժը առնել շատ չառիք հասուց անոնց, և ձեռքը ինկածներուն քիթը ու ականչնին կարելով Կոստանդնուպոլիս կը զրկէր, ինչպէս որ ան ատենները սովորական անդթութիւն էր շատ տեղ աս պատիժս տալ գերիներու ու չարագործ մարդկանց։ Կիո Մանուել կայսրը անձամբ և աշեղ պատրաստութեամբ Թորոսին վրայ ելաւ, Թորոս տեմնելով որ գէմ պիտի չկարենայ զնել անոր զօրաց բազմութեանը, հաշտութիւն իսուեցաւ կայսեր հետ ու բարեկամութեամբ քովը գնաց, ու շատ սիրով իրարու հետ տեմնուեցան։ Այսպէս Թորոս իշխան իսելքով քաջութեամբ և հայրաբար քահնը ըորս տարի ազգը կառավարելէն ետքը մեռաւ (1167)։

4. Թորոսին մեռնեկն անմիջապէս եսքը տղաքին մէջ խորվութիւն ինկաւ՝ անոր Մլէհ եղբօրը պատճառաւու. վասն զի Թորոս պատի որդի մը ունէր՝ որուն իննամակալ դրէր եր մեռնելու ատենք Թովմսոն Պապ անունավ իր անելը. աս բանս իմանալով Մլէհ, որ արդէն ապըստամբած էր, Բերիոյ ամիրայէն շատ զօրք առած եկաւ Կիլիկիոյ վրայ, առջի անդամուն Կիլիկիոյ մէջ ամեն տեղ խորվութիւն ձգեկն ետքը՝ գործողութիւն մը չկրցաւ ընել. ուստի գնաց Բերիոյ ամիրայէն նորէն շատ մը զօրք առած ու եկաւ Թովմաս Պայլին վրայ։ Իշխանները տեսնելով որ աս գործողութեան ծայրը գէշի պիտի Երթայ, միաբանեցան և կանչեցին Մլէհը իրենց իշխան դրին Թորոսին տեղը. բայց անիկայ մէկէն ինքընիքը զեղսութեան ու ան-

4. Մլէհ ինչպէս իշխան եղաւ Կիլիկիոյ ու ինչ դիտեկիք կայ Խորեն Ստեփանէին որդւոյն վրայ.

կարգութեան տուաւ, որով զօրին ալ ձանձրացան ու սպաննեցին զննքը՝ հինգ տարի իշխելէն ետև։ Որովհետեւ Սլեհ որդի չուներ, անոր համար Ռուբենը կանչեցին, որ Ստեփաննեն որդին էր։ Ասիկայ իր քաղցր բնաւորութեամբը ամենուն սիրելի եղաւ ու բոլոր մերձակայ և օտար աղքաց առջև ալ մեծ անուն հանեց (1173)։

5. Անոսի պատճառի մը համար մեծ թշնամութիւն ծագեցաւ Ռուբեն երկրորդին ու Լամբարդին Հեթումիշխանին հետ։ վասն զի Մանուկը կայսեր մասնէլէն ետք նորէն թշնամացան Յոյները Հայոց հետ։ Ռուբեն ալ Տարսոնի վրայ յարձակելով, որ Յունաց ձեռքն էր, առաւ։ Հեթում աս բանս իրեն մեծ նախատինք համարեցաւ, որովհետեւ Յունաց բարեկամցէր, կոյսրն ալ իրեն յանձնած էր Տարսոն գաւառուն պահպանութիւնը։ Երբար երկու կողմէն ալ պատէրազմ բացուեցաւ, Հեթում նեղը մասնելով օդուութեան կանչեց Անտիոքայ Պետունդ կոնսը. բայց որովհետեւ ան ալ կը վախնար Ռուբենէն, խարդախուութեամբ բարեկամաբար կոչունքի հրաւիրեց զիստբէնը, և բանեց բանտ դրաւ։ Ռուբենին եղայրը Լուսն մէկէն զօրք ժողվեց ու Լամբարդ բերգին վրայ երթալով սաստիկ նեղը ձգեց Հեթուումը, որ Ճարը հատած հաշտութիւն խօսեցաւ. Վերջը Լուսն շատ ընծաներ տալով Պետունդին Ռուբենն ալ ազատեց ու բերաւ նորէն աթուը նսաւեցուց։ Աս գեղեցիկ և նախանձելի առաքինութիւնները Լուսնին վրայ տեսնուելով, ան ատենէն յոյս մը տուին որ ատենով ազդին ուրիշ մեծամեծ բարիք ալ պիտի ընէր։ Ռուբեն

5. Ի՞նչէն թշնամութիւն ծագեցաւ Ռուբենին ու Լամբարդի Հեթումիշխանին մէջ ու ի՞նչ վերջ ունեցաւ.

Բ գովելի կերպով տամնըմէկ տարի աղդը կառավարելէն ետքը՝ Դիազարկ վանքը քաջուեցաւ, ու հոն քիչ մը ատենէն որբութեամբ մեռաւ, իրեն յաջորդ թողով Լուսն եղբայրը (1184)։

ԴԱՄ ԼԱ.

1. Լուսն Բ. — 2. Փրեդերիկոս կայսեր օդնելը. — 3. Թագաւոր օծուիլ. — 4. Լուսնի բարեկալուութիւնն, Քայքառուզի հետ ըրած պատերազմն. — 5. Եթրիոյ ամբային յաղթուին. — 6. Հայոց Լատինաց հետ թշնամանան. — 7. Զայէլ Թագուցի. — 8. Հեթում Ա. — 9. Կատանդնի և Հեթում պատերազմումն. — 10. Մանգոյ Խանին հանութիւնն Փնտուխար Եդիկատոսի ամբային պատերազմն, Թորոսի մահն և Լուսնի գերութիւնն. — 11. Լուսնի գերութենէ ազամին։ Հեթում մահը։

1. Լուսն Բ աղդին կառավարութիւնը ձեռք տոնելով սկսաւ ցուցընել իր քաջութեան ոտին ու բարեկալուութիւնը։ Իրեն առվէ յաղթութիւնը եղաւ իկնիոյ Ռոստոմ ամբային դէմ, որ Լուսնին քաջութեանը նախանձելով՝ վրան պատերազմի եւեր էր. բայց գեռ պատերազմը չուկած՝ յանկարծակի մեռաւ Ռոստոմ, որով զօրքն ալ շփութած սկսան փախչել Լուսն բոլորին հալածեց զիրենք իր երկրէն, ու շատ հարստութիւն ժողվեց անոնց բանակէն։

Ետքը վազեց ուրիշ տեղերու վրայ, եօթանասունուերկու բերգի տիրեց։ Ամս քաջաբը գրեթէ բոլորովին նորոգեց, հիւանդանոցներ ուրիշ

1. Լուսն Բ. Ի՞նչ քաջութիւններ ու բարեկար դութիւններ ըրաւ Հայաստանի մէ։

շատ շենքեր շինեց կարօս մարդկանց համար։ Կրօնական պաշտամանց ալշատ չերմեռանդ էր, մանաւանդ տուրք Աստուածածնոց, որով Աստուած ալ իր ամեն բանը կը յաջողէք։

2. Լւսնին իշխանութեան երկրորդ տարին Եռուսութ Սալահատին սասափիկ զօրանալով Երուսաղէմը առաւ Լատինացւոց ձեռքէն՝ երկայն ու արիւնահեղ պատերազմեր ընելէն ետքը։ Երբոր աս բանս իմացուեցաւ Եւրոպա, Փրեգերիկոս Գերմանացւոց կայսը և ուրիշատ տէրութիւններ միացած՝ անհամար զօրքով նորէն վաղեցին Երուսաղէմայ վրայ, և Բերիոյ տիրեցին։ Բայց պաշարնին ըմացած ըլլալով Փրեգերիկոս թուղթ գրեց Լւսնին ու հնդրեց որ իրենց օդնէ։ Լւսն ոչ միայն առաստ պաշար զբէց իրենց, այլ նաև շատ աղնիւ ընծաներ, ու առանձին թղթով մ'ալ կ'իմացնէր իր պատրաստականութիւնը ամեն տեսակ օդնութիւն ընելու, նաև զիրէնք ընդունելու յօժարութիւնը։ Փրեգերիկոս շատ հաճեցաւ Հայոց ասաստիճանի հիւրասիրութեանը վրայ և խոստացաւ որ Լւսնը թագաւորեցընէ Երբոր ինքը Եւրոպա դառնայ։ Բայց գժբաղդաբար Երբոր Սելեկիոյ գետէն կ'անցնէր, խղդուեցաւ. մատցած Եւրոպայիք ալ առանց զօրագլխի մատրվ չկրցան յալթել Սալահատինին, ու սրտերնին կոտրած գարձան Եւրոպա։

3. Լւսն տէմսելով իրեն գործոց յաջողութիւնը՝ գետպան զբէց Հռովլը կեղեստինոս պապին և Հենրիկոս Զ. Գերմանացւոց կայսը,

2. Լւսն ի՞նչ օդնութիւն ըրաւ Փրեգերիկոսի։

3. Լւսն ի՞նչ պարգև ընդունեցաւ կեղեստինոս պապին ու Հենրիկոս Զ. ու իրեն թագրութեանը ի՞նչ հանդէս եղաւ.

յիշեցընելով Փրեգերիկոսի խոստմունքը։ Կայսը և պապը սիրով ընդունեցան գետպանները ու Փրեգերիկոսին խոստմունքը կատարեցին։ պապը փառաւոր թագ մը զբէց Մոդոնաից Կանքառաս արքեպիսկոպոսին ձեռքով, Հենրիկոս ալ փառաւոր գրօշ մը զբէց՝ վրան առիւծ նկարած։ Երբոր հասաւ եպիսկոպոսը Կիլիկիա, թագաւորն ու կաթողիկոսը հրաման հանեցին ամեն աեղ որ գան ազգին մեծերը Սիս ժողվունին, եպիսկոպոսներ, վանահայրներ, իշխաններ, զօրավարներ և ուրիշ շատ երևելք մարդիկ, և փառաւոր հանդիսավ կատարուեցաւ թագադրութիւնը Գրիգոր Ապէրատ ըսուած կաթոլիկոսին ձեռքով։ Սայ սուրբ Սոփիա եկեղեցւոյն մէջ (1198)։

4. Հագարացւոց ամիրապետը և Յունաց Ալէքս կայսը լեւով Լւսնին թագաւորելը ուրախացան, և իրենց ուրախութեան նշան, ամիրապետը շատ ընծաներով գեսպան զբէց։ Ալէքս ալ մեծագին թագ մը։ Լւսն աս ամեն յաջողութիւններս տեսնելով ամեններն իրեն քրիստոնէական ու թագաւորական պարտքերէն չժուղցաւ, այլ մանաւանդ շատ բարեպաշտական գործեր ալ ըրաւ, զամենքը արդարութեամբ, քաղցրութեամբ ու ողորմածութեամբ կը խնամէր, իսկ օտարը թշնամիները օրէ օր նախանձնին կ'աւելցընէին և կ'ուզէին իրեն վաս հասցընէլ։ Ասնց գլխաւորներէն մէկն եղաւ իկոնից Քայքաւոր ամիրան, որ լսելով թէ Լւսնից Քայքաւոր ամիրան, որ լսելով թէ Լւսնից Լատինացւոց հետ բարեկամութիւն ըրերէն, ու ամենէն պատիւ գտէր է, չտա զօրքով

4. Լւսն ուրիշ ի՞նչ յաջողութիւններ ունեցաւ ու Քայքաւոր հետ ըրած պատերազմը ո՞րն է.

Լւսնին վրայ վազեց : Լւսնի զօրսաց մէկ մասը իրենց յանդգնութեանը համար յաղթուեցան . բայց Լւսն փոխանակ շփոթեաւ մէկէն մատցած զօրքով վազեցամիրային երկիները ու սկսաւ տակն ու վրայ ընել . Քայքաւուզ իսկոյն ձգեց Կիլիկիան ու Իկոնիա դարձաւ , և եղածին վրայ սաստիկ յաւելով՝ հաշուեթիւն խօսեցաւ Լւսնին հետ , և առած երկիներն ու դերիները ետ տուաւ , ինչպէս նաև Լւսն իր առածները :

Յ. Լւսնին երկրորդ նախանձով եղաւ Քերից ամիրան , որ անհամար զօրքով Կիլիկիոյ սահման ները գալով Զատկի միջոցները , սպասնալով գեսապն զրկեց որ գայ իրեն հնազանդի , ապա թէ ոչ արիւնով կը լուամ , ըստաւ , երկիրդ և ուրախութեան աօներդ տրամութեան կը դարձ ձբնեմ : Լւսն առաջնուց իմանալով գեսապններուն գալը , քանի մը իշխան զրկեց որ այլև այլ ձամբաներէ առաջնորդելով ուշացընեն անոնց գալը , և ինքը շատ զօրքով յանհարծակի ամիրային զօրացը վրայ յարձըկեցաւ . անոնք ալ անպատճաստ ըլլալով չարաշար յաղթուեցան ու բոլոր բանակնին ձգեցին փաման : Լւսն դարձաւ Կիլիկիա Հարուստ աւարներով , շատ վրան ներ ու գրաշներ ձեռք ձգած , ամենն ալ կարգով բանակի ձեռով շարեց և իւրաքանչիւր վրանին գիմացը գրօշները անկեց : Երբոր ամեն բան պատճաստեցաւ , գեսապններն ալ հասան , ու ան բաները տեսնելով Լւսնին ոսքը ինկան որ գէմ կեանքերնուն խնայէ . Լւսն շատ պատուով վարուեցաւ հետերին ու ետ ձամբեց զիրենք , ըսելով որ հիմա ես կը պահանջեմ

Յ. Լւսն ի՞նչ յաղթութիւն ըրաւ նաև Քերից ամիրային գէմ ու անոր գեսապններուն հետ ինչպէս վարուեցաւ .

ամիրայէն ան հարկը որ ամիրան ինձմէ կը պահանջէր :

Յ. Լւսնին թագաւորութեան վերջի տարի ները մեծ թշնամութիւն ինկաւ Հայոց և Լատինացւոց մէջ Անտիոքայ իշխանին պատճառաւ : Վասն զի Սնատիոքայ Պէմունդ կոմսը մեռնելէն շատ առաջ իրեն յաջորդ որոշէր էր Պալտին իր որդին , որ Լւսնին Ռուբէն եղքօրը աղջկան հետ կարգուած էր . բայց Պալտին կանուխ մեռնելով՝ հայրը իրեն ժառանգ որոշէց Պալտինին Ռուբէն անունով պատի որդին , և աս բանիս համար երդում առաւ Սնատիոքայ եպիսկոպոս ներէն ու իշխաններէն : Երբոր Պէմունդ մեռաւ , Ռուբէն իր թոռը յաջորդեց անոր աս բանիս վրայ նախանձելով ձեւան Տրավոլսայ իշխանը՝ շատ զօրքով Սնատիոքայ վրայ եկաւ , Ռուբէնը հալածեց ու Լատին իշխան մը դրաւ քաղաքապետ , որուն ձեռնոտու եղան իշխաններն ու եպիսկոպոսները : Լւսն աս բանիս սաստիկ նեղացաւ , բայց չուզեց պատերազմով առաջ տանիւ իր կամքը , այլ Խնովկենախոս պատին թուլթ գրեց որ աս բանս արդարութեամբ որոշէ . պատին ալ գատաւոր և իրաւարար դրաւ աս բանիս Պէտրոս անունով կարդինալ մը որ տրդէն ուրիշ անբամ Կիլիկիոյ կողմէրը եկած ըլլալով գտնէր ան տեղի բաները . բայց կարգինալը Լատինացւոց կողմը բռնեց , որով անոնք ալ Հայոց գէմ դարձան . աս բանիս նեղանալով Լւսն՝ բոլով Կիլիկիոյ մէջ եղած Լատին իշխանները իրենց քահանաներով հալածեց հանեց կիլիկիայէն , մէկ քանին ալ բանելով բանադրաւ : Անտիոքայ եպիսկոպոսները ստիպեցին իշխան-

Յ. Հայերը լատինացւոց հետ ինչո՞ւ թշնամացան . ու Լւսն ի՞նչպէս մեռաւ .

իերը որ նորէն Ուուբէնը ընդունին, անով հաշտութիւն եղաւ Լևոնի ու Տրապօլսոյ Ճիւան Եշխանին հետ: Իսկ Լևոն երեսունուերեկը տարի թագաւորելէն ետքը՝ դովիելի մահուամբ մեռաւ, երեն յաջորդ թողարկ իր Զապէլ աղջիկը, որով հետեւ արու զաւակ չունէր (1218):

7. Զապէլ թագուհին տասնըլից տարեկան ըլլալով ինամակալ դրուեցաւ իրեն Կոստանդինի իշխանը: Ուուբէն, որ նորէն Անափոքէն հաւածուեր էր, շատ մը մարդիկ գլուխը ժողվելով գնաց Զապէլին բանի մը քաղաքներուն աիրեց: Կոստանդին գէմ եւսաւ, բռնեց զինքը իրեն կուսակիցներով մէկաել եւնտ դրաւ, և զոն մեռան: Իսկ Զապէլը կարգեցին Անափոք Կոստին Փիլիպոս անունով որդւցն հետ, և զինքը թագաւոր օծեցին Հայոց, երգում աններով առաջուց որ ազգային ծէսերու և սովորութեանց չխառնուի: Բայց Փիլիպոս Երկու տարիէն սկսաւ երգմանը գէմ ընել, անով ալ գոհ չըլլալով սկսաւ պալատին ապնիւ զարգերը Անափոք կրէլ: Իշխանները աս բանիս նեղանալով բռնեցին բանտ դրին զինքը և ստիպեցին որ զըկած բաները ետ գարձնէն. ինքն ալ տարիի մը բանտը կենալէն ետքը՝ սրտին ցաւէն մեռաւ: Ետքը Զապէլ ուրիշներուն յորդորելով Կոստանդինին Հեթում որդւոյն հետ կարգուեցաւ, և անիկայ օծուեցաւ թագաւոր, որ Արշակունիաց ցեղէն կարիք մ'էր, և Ուուբէննանց հետ աղքակցութիւն ընելով թագաւորական ցեղէ կը համարուեր:

7. Զապէլին թագուհի եղած միջոցը թնչ պատերազմ հանդիպեցաւ. Փիլիպոս թնչ պէս ըրաւ իր թագաւորութիւնը ու ովլ է Հեթում:

8. Հեթում Ա. ցեղին ազնուականութեանը հէտ նաև անարատ բարձր և շատ գեղեցիկ յատկութիւններ ալ ունէր, որով Ուուբէննանց երկելի թագաւորներուն մէկն եղաւ, օտար աղքաց աւշատ սիրելի: Հեթմոյ թագաւորութեան առջի տարինները շատ խաղաղ էր Կիլիկիա, և Կոստանդինին իր հայրը շատ բարեկարգութիւններ ըրաւ, թէպէտ և Հայաստան այլ և այլ օտար թշնամիններէ կը չարչարուեր: Նշանաւոր եղան Ճէլալէտափին բանաւորը, ու Թաթարաց Զարմազան զօրավարը, որ Անին առնելով մէծ չարդ ըրաւ անոր բնակչացը: Զարմազան իրոր մէտաւ, իրեն յաջորդեց զօրավարութեան մէջ բնազու, որ նոյնական շատ վնաս հասուց Հայոց: Հեթումտեսնելով որ Բաշու շատ Կոտորածներ ընելով գէպ՝ ի Կիլիկիայ վայ կուգայ, շատ ընծաններով մարդ, զիկեց ու անոր հպատակեցաւ. Բացու երգմանիքով գաշինք դրաւ Հեթմոյ հետ որ վնաս մը չհասցընէ իրեն. այնակս երաւ գնաց: Երբոր Թաթարաց Ուշաթա խանը մէտաւ, Հեթում անոր յաջորդին Գիուդ խանին հետ ալ նոյն դաշնիքը նորոգելով հաստատեց, անով Կիլիկիա նեղութիւն մը չի կրեց Թաթարներէն:

9. Երբոր Հեթում աս բաներուս զբազած էր, իր քենին Կոստանդին Լամբրոնի իշխանը ապասամբեցաւ իրմէ, ու գնաց իկանից ամիրային հետ մասցաւ, որ Հեթումին գէմ թշնամացած էր. Հեթում զօրք ժողվեց ու գնաց

8. Հեթում Ա. թնչպէս ըրաւ իր թագաւորութիւնը, ու Բաշուին կատաղութիւնը թնչպէս իշեցաց.

9. Կոստանդին Հեթմոյ քեռին թնչպէս պալատամբեցաւ ու թնչպէս մէտաւ.

Կոստանդնին Երկիրներուն տիրեց, Կոստանդնին նեղը մանելով Երեք չորս անդամ գեսապան զբաց Հեթումին հաջանդութիւն խոստանալով, բայց Հեթում յանձն չուռաւ գիտանալով Կոստանդնին խարդախութիւնը: Կոստանդնին նորէն Խիաթախինին քովը փախչելով շատ զօրք օդնութիւն առած յանկարծակի Հեթումին վրայ փացեց ու շատ կոտրած ըրաւ, բայց Հեթում իրէն ցրուած զօրբերը ժողվելէն զատ՝ ուրիշ զօրբեր ալ բերել տալով նորէն Կոստանդնինը կամբըն փախուց, ուր որ մեռաւ քիչ առենէն եւպը:

10. Նոյն առենները Գիուգ խանը մեռաւ ու տեղը անցաւ Մանգոյ, որ սկսաւ զԼայերը նեղէն իր հարկաստահանջներուն ձև պայման. Հեթում չդիմանալով ապդին խեղձութեանը, ելաւ անձամբ Մանգոյ խանին գնաց, ու շատ ընծանելով անոր սիրով վաստրկեցաւ, շատ պատիւ գտաւ անկէ և խօսի առաւ Մանգոյէն որ արդիւ Հայերը նեղէն ինքուն որ աւ ըրաւ: Հեթումինը փառաւորուելուն այսոյ Եղիպատրի Փնտուխտար ամբային ականջն համելով նաև խանձը գրգռեց որ Հեթումին չարիք մը հասցնէ, և խաննալով որ Հայերը ափրած Ենքանի մը քաղաքներու որ առենավ Եղիպատրեց ձեռքն էին, գեսապան զրկեց որ ետ տայ ան քաղաքները: Հեթում օրինաւոր պատճառներով ցըցուց թէ անոնք արդէն Հայոցն էին ու Եղիպատրիք անիրաւութեամբ յափշտակեր էին: Ամիրան կատղեցաւ առ բանիս, և առանց ձայն հանելու զօրք զրկեց Ակլիկից վրայ, որ անպատճառ

10. Հեթում ինչպէս հաշտեցուց զՄանգոյ խանը ու ինչ պատճաղմունեցաւ Փնտուխտար Եղիպատրի ամբային հետ.

դանելով Հայերը շատ աւերմանք ու արին հեղութիւններ ըրին: Հեթում մէկէն ժողվեց զօրքը Երկու գունդ բաժնեց, մէկը Լւսոն մէկաւը Թորոս որդւոցը տուաւ, և ինը Մանգոյ խաննէն օգնութիւն առնելու գնաց: Ան միջոցին Լւսոն և Թորոս քաջութեամբ քանի մը պատերազմներ ըրին, ու թշնամիններէն շատ մարդ ջարդեցին. բայց անդամ մ'ալ Թորոս քաջութեամբ պատերազմէլու առեն զարնուեցաւ մեռաւ, Լւսոն ալ գերի ինկաւ, ասով Եղիպատրիք բոլոր Ակլիկից տիրեցին բաց 'ի բերդերէն: Վերջը Լւսոնն ալ Փնտուխտարին առջւը տարին, որ շատ ախորժելով Լւսոնն աղջիւ պրտին ու կերպին չնեղց զինքը, ըստ հակառակն խօսք տուաւ որ Ակլիկիս գարձնէն. բայց Եղիպանները թողտուն:

11. Հեթում Երբոր Թաթար վարձուոր զօրքով գարձած՝ տեսաւ եղած ձախորդութիւնները շատ վշտացաւ, ու շատ անդամ առանձն քառուած կողքար իր որդիքը: Որ մը բոլոր Եղիպանները քայլ ժողվուեր էին, ուղելով Հեթում ամենուն սիրտը շարժել իր խեղճ վիճակին վսայ, հարցուց իշխաններուն: « Հո՞ն են ամենքը ո՞ւ երբոր անոնք պատասխան առեն միաբերան թէ՝ Այս պատասխանէց թագաւորը ցաւած սրտով ու արցումքով: » Հապա ուր է Թորոս. ուր է Լւսոն, որոնցիք մէկը գերեզմանը անյիշտակ թաղուած, մէկաւը գերութեան տառապանց մէջ է »: Իշխանները շարժեցան թագաւորին առ խօսքերէն, միաբանեցան մէջերնին շատ ստակ ժողվելով ամբային զրկեցին.

11. Լւսոն Հեթումին որդին ինչպէս գերութեանէ ազատեցաւ ու Հեթում ինչ մահ ունեցաւ:

ան ալ Հեթումէն խնդրեց որ իր Սղուըր անուշնով աղքականը՝ որ Սկիւթացւոց ձեռքը գերի ընկած էր՝ ալատէ. Երբոր յաջողէցաւ աս բանս Հեթումին ձեռքովն, ինքն ալ-իր խոսամուհիքը կատարելով աղոստեց Լևոնը, որ աղքին մեծ ուրախութեան պատճառ եղաւ: Հեթում մեռնէլն քիչ մը առաջ իր տեղը թագաւոր դրաւ Լևոնը, և ինքը Դրազգարկ վանքը քաշուելով կրօնաւոր Եղաւ, ուր քանի մը ամիս ալ ասրեցաւ ու մեռաւ, քառասաւնը հնդ տարի թագաւորէլէն Ետքը: Իրեն մեծ ու յաւերժական պարծանը է աղքին սիրոյն համար քաշած անհամար նեղութիւններն ու վիշտերը (1268):

ԴԱՍ ԼԲ.

1. Լևոն Գ. — 2. Փնտուխտար Եղիպառոսի ամբային յաղթուին. — 3. Լևոնի խաղաղութիւնն. — 4. Իր վիշտերն և մահը. — 5. Հեթումը և Թթառոս. — 6. Սմբատ թագաւոր Կօծուի. — 7. Իր թագաւորութիւնն խնան: Կոստանդին: Հեթմայ Երբորդ անդամ թագաւորելը. — 8. Իր յաղթութիւնն. — 9. Հեթումը իշխան Կորիկոսի. — 10. Լևոն Գ. և Սայ ժողվը. — 11. Լևոնի և Հեթմայ մահը:

1. Լևոն Երբորդ սասափիկ տրտմելով հօրը մահուանը վրայ, Երեք չորս ամիսի չափ սուցի մէջ էր, այնչափ որ սրամին ցաւեկն ծանր հիւանդացաւ: Եղիպառոսի և ուրիշ տեղերու ամբարաններն լսելու աս բաններս գեսպաններ զրկեցին զինքը միիթարելու համար, և յորդորեցին որ հօրը

1. Լևոն Գ ի՞նչպէս թագաւորեց ու ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ.

տեղը աղքին կառավարութիւնը ձեռք առնէ: Աս բաններէս յորդորուած: Լևոն թագաւոր օծուեցաւ, ու սկսաւ իսկոյն բարեկարգութիւններ ընել, ողորմածութեան գործերը աւելցը-նել ու շնութիւններ ընել ուսման ետևէ ըւլալով՝ գպրոյներ հասատեց, խանդարած հին գիրքերը նորոգել տալով վանքերուն մէջը պահել տուաւ ու ետևէ եղաւ որ պիտանի գիրքեր դրուին:

2. Երբոր Լևոն աս կերպերովս աղքին բարիք ընելու կ'աշխատէր, իր աղքականներէն ոմանք նախանձելով վրան, գնացին Փնառուխտար Եղիպառոսի ամիրան Լևոնի դէմ դրբուեցին. ան ալ Արաբացւոց ու Թիւքբէմներուն հետ միացած՝ Կիլիկիոյ վրայ վաղեց, իրեն երգմունքը տաքի առնելով: Լևոն յանկարծակիի եկաւ, և տեմիերով իշխանաց անվաբանութիւնն ու պազութիւնը, ամուլր տեղուանիք պահութեցաւ. ան պատճառաւ ամիրային զօրքն ալ առանց արգելքի Կիլիկիա մտան ու շատ վնաս հասուցին ամեն աել, մանաւանդ Տարսոն, ուր թագաւոր բական գանձն և ուրիշ շատ հարստութիւններ ալ կային: Ասոնք ընելէն վերջը Փնառուխտար անբան հարստութեամբ և շատ գերիներով Եղիպառոս դարձաւ. բայց քիչ ատենէն առջնէն աւելի զօրք ժողվելով սկսաւ նորէն Կիլիկիոյ վրայ գալ: Լևոն տեսաւ որ պահութելով օգուս մը ըըլւար, որչափ որ կրցաւ զօրք ժողվեց՝ ամենքն ալ յորդորեց քաջալերեց, և վեց գունդ բաժնելով այլ և այլ տեղեր զրկեց. մէկ գունդը տուաւ իր հօրելքորը Աբատսովարակետին ձեռ-

2. Փնառուխտար Եղիպառոսի ամիրան ի՞նչպէս տիրեց Կիլիկիոյ ու ի՞նչ մասնէր հասուց ու տքը ի՞նչպէս յաղթուեցաւ Հայոցմէ.

Քը ու զրկեց Եգիպտացւոց գէմ. Երկրորդը ինքը
առաւ և ուրիշ ճամբաղլ մը Եգիպտացւոց ետևն
անցաւ: Երբոր Եգիպտացլեք Սմբատին բանակը
տեսան, անոնց քիչուորութեանը նայելովան հոգ
եղան. բայց Սմբատ յանկարծակի վրանին վաղեց
ու մէջերնին շփոթութիւն ձեւց. ան միջոցին
կւոն ալ ետևնէն յարձեկելով մէծ ջարդ տուին
Երկուքը մէկէն ու բայց Եգիպտացւոց բանա
կը ցրուեցին: Ան հարուածին վայ Փնտուիտար
հաշտութիւն ըրաւ կւոնին հետ:

3. կւոն հաշտութենէն վերջը Թաթարաց
Ապազա խանին գնաց, ու շատ սէր և պատիւ
դատա անկէ իր հաւատարնութեանը համար.
ուրիշ ամիրաններն ալ բարեկամութեամբ ու սի-
րով սկսան վարուել կւոնին հետ՝ ակնածելով իր
քաջութիւններէն:

4. Ուրափի որ արտաքին գործողութիւնները
կարգի գրուեցան ու կւոնին երկիրը խաղաղա-
ցաւ, այնչափ ալ ընտանեկան ձախորդ դի-
պուածներով գրուեցաւ իր առաքինութիւ-
նը. քիչ ատենի մէջ մասն իր սիրելի Ներսէս
որդին, աղջիկն ու կնիկն. ինքն ալ ծանր հիւան-
դացաւ, կիլիկիս ալ փօխադրական հիւանդու-
թիւն մը ինկնալով շատ ջարդ ըրաւ. բայց կւոն
տմեննւն ալ սիրով համբեկելով երկու աարին
երջանիկ մահուամբ մեռաւ քսան աարի թագա-
սորելէն ետքը:

5. կւոն երբորդին որդին Հեթում ի հօրը
յաջորդեց, բայց խոնարհութեան համար ըու-

3. կւոն հաշտութենէն վերջը ինչ ըրաւ.

4. կւոն ինչ ձախորդութիւններ ունեցաւ ու
ինչպէս մեռաւ.

5. Հեթում ի ինչպէս ըրաւ իր թագաւո-
րութիւնը ու ովէ թորոս.

դէյ թագաւոր օծուելի չէր ուղեր նաև կառա-
վագութեան հոգը իր վրան առնել. աւելի կը
սիրէր կրօնաւորաց հետ կենացելով հոգեւորա-
պէս զբանուց, ան պատճառաւ քիչ մ' առեն
ակտուայ կամք իշխելէն ետքը հրաժարեցաւ
իրաւունքէն, ու իր Թորոս եղբայրը իր տեղը
թագաւոր օծել տուաւ: Թորոս՝ եղբօրը խոր-
հրդոց կ'անսար, իշխաններն ալ կը յարդեին
զշեթում. բայց Թորոսքիչ մը ատենէն եղբօրը
վիճակին նախանձելով թագաւորութիւնը նո-
րէն Հեթումին յանձնեց, ու ինքը վանք մը քա-
շուելով կրօնաւոր եղաւ: Հեթում՝ երկրորդ
անգամ թագաւորելով Թաթարաց Պազան
խանին գնաց աղաջէլու որ քրիստոնէից գէմ
եղած հալածմունքը գագրեցնէ. Պազան սիրով
ընդունեցաւ թէ աղաջողը և թէ աղաջանին, ու
խնդիրքը կատարեց (1295):

6. Երբոր Սիս գարձաւ, քիչ ատենէն Թորոս
եղբօրը հետ Կոստանդնուպոլիս գնաց. իր Սա-
րկամը բրուժէն հրաւերութիւնը որ կյուներ կինն
էր: Ան միջոցին որ երենք կ. Պայտ էին՝ Սմբատ
եղբայրնին, որուն յանձնած էին տէրութեան
հոգը, իշխանները ու կաթուղիկոսը համոզելով
թագաւոր օծուեցնւ. վերջը Թաթարստան
Պազան խանին ալ գնաց ու իր թագաւորու-
թեանը հաստատութիւն առաւ. նյոնպէս նաև
սըսազնապատին հպատակութեան թուղթ գրեց
ու անկէ օրէնութեան գիր առաւ. այսպէս ամեն
կողմանէ թագաւորութիւնը ապահովուց, և
օրէ օր եղբայրներուն գալստեանը կ'սպառէր:
Երբոր Թորոս և Հեթում կիլիկիս կը գառ-

6. Սմբատ ինչպէս թագաւոր օծուեցաւ ու
ինչ անիրաւութիւն ըրաւ Թորոսին ու Հեթ-
ում գէմ.

նային, Սմբատ իր զօրբովը գիմացնին երաւ ու զիբեհք հալածնեց. անսնք ալ սկսան Ղաղան խանին երթաւ որ անկէ օգնութիւն ուղեն Սմբատին դէմ. բայց Սմբատ եւաւնէն համեշը երկուքն ալ բանեց, իշխաններէն ոմանց խորհրդակին Թօրոսն ապանեց ու Հեթումն ալ կորչոց:

7. Աս անողորմ գործին վրայ Կոստանդին մէկալ եղբայրն զօրք ժողլեց, ու եղբօրը գէմ պատերազմի ելաւ, երկու կողմէն ալ շատ մէջ ջարդ եղաւ, բայց վերջը Կոստանդին զօրանալով յաղթեց Սմբատին ու բանեց զինքը բանադրաւ, երբը Հեթումը հանեց բանտէն ու ազէկ նայելով վիշտերէն աղասեց. իսկ ինքը եղբօրը տեղը թագաւոր նստաւ: Երկու ապահի չափ թագաւորելէն ետքը երբոր հրաշքով մը Հեթմայ աչքերն բացուեցան, ժողլովուրդը ուղեց որ ինքը թագաւորէ երրորդ անդամ. ինքը յանձն չառաւ, վանք մը փախաւ ու պահութանցաւ, բայց զօրքը զինքը բանութեամբ վանքէն հանելով եւրին թագաւորեցուցին: Կոստանդինին ծանր գալով աս բանս սկսաւ ետևէ ըլլաւ որ Հեթումն աեղը ինքը թագաւորէ. աս պատճառաւ ետևէ եղաւ որ Սմբատը բանտէն հանէ ու անոր հետ մէկտեղ Հեթումը հալածէ. բայց Հեթում ջանալով որ խուժութիւն ըռլայ՝ երկուքն ալ հնարիով մը բանեց ու կ. Պօլիս կայսեր զրկեց, ուր մինչեւ իրենց մահը մատցն (1300):

8. Հեթում երրորդ անդամոր թագաւորեց, չորս հինգ հեղպատերազմ ըրաւ Եգիպտացւոց

7. Սմբատ ինչպէս թագաւորութենէն ինկաւ ու Հեթում ինչպէս նորէն թագաւորեց.

8. Հեթում ինչ պաներազմներ ունեցաւ ու ինչո՞ւ թագաւորութենէն հրաժարեցաւ.

ու կեկայոնացւոց հետ և միշտ յաղթող գըտնուեցաւ. վերջը ուղելով բոլորմին հրաժարել աշխարհէք, որովհեաւ ինքը կուսակրօն էր՝ իր եղբօրորդին կանը որդեկրեց իրեն ու եղբը զանիկայ թագաւոր օծել տուա. իսկ ինքը թէպէտ և թագաւորահայր կ'ըսուէր՝ բայց վանք մը քաշուած կը կհնար (1304):

9. Ենոյ միջոցներուն կուիկոս ըստած թէրդին Հեթումը իշխանն ալ հրաժարեցաւ իր իշխանութենէն ու կիսորոս Լատինացւոց վանք մը քաշուեցաւ. վերջը Հռովմ երթալով Թագաւոր պատմութիւն մը գրեց գաղղիարէն, որուն հայերէն նոր թարգմանութիւնն ալ ունին:

10. Կան Դ Հեթումին խրաներովու խորհրդագովն, իրեն ալ բնական ընափիր բարուքը և խոհեմութեամբն շատ լաւ սկսաւ կառավարել ազդը. բայց հաւատաց ինդիբներու համար եկեղեցականաց տիփուութենէն մեծամեծ խոռովածին երաներ ծագեցան կիլիկից մէշ. վասն զի Գրիգոր Անաւարդէցի կաթուղիկոսը ուղելով քանի մը բարեկարգութիւններ ու ազգային մէկ քանի ծիսից փոփոխութիւններ ընել, աս պատճառաւ համար ուղեց որ ազգային ժողով մը գումարուի. բայց երբոր տեսաւ որ առաջնորդաց ու եկեղեցականաց մէջ աս բաներու համար խոռովածիւններ ու ատրածայնութիւններ կ'սկսին, Հեթում թագաւորահօր թուղթ մը գումար կ'ական գիտաւորութիւններ ու գիտաւորութիւններ ու իր գիտաւորութիւններ առաջ յորդորելով որ կը գիտաւորութիւններ առաջ երթալուն փոյթ ունենայ, գիտաւորութիւններ ու սկսենքն ալ զինքը կը սիրեն և ըստած անյա-

9. Ի՞նչ գիտելիք կայ Հեթում իշխանին վրա.

10. Կան Դ ինչպէս սկսաւ իր թագաւորութիւնը՝ ու Սոյց ժողովքը ինչպէս եղաւ.

պաղ կը կատարեն. դաւանութեան ձեն ալ չարագրեց ու Աւոնին զրկեց, բայց ինքը ան միջոցին հիւանդանալով մեռաւ: Աւոն ու Հեթուում մէշերին միաբանած՝ հրաման հանեցին որ Սոյ մէջ ժողով մը ըլլութ, ուր եկան Կիլիկիոյ ամեն եպիսկոպոսներն ու վանահայրները. հոն Գրիգոր Անաւարզեցին թուղթը կարդալով ինը գլխաւոր ու էական բան որոշեցին ու Կոստանդնու Կեսարացին կաթողիկոս դրին, որ ան որոշմանց Ճ՛շդ պահպանութեանը ջանք ընէ. բայց ընդ հակառակն շատ խոռոշութիւններ ու սպանութիւններ ալ եղան ան պատճառաւ:

11. Խնդ տարիին նորին Ատանայի մէջ ժողով գումարուեցաւ ու անցած ժողովին վճռուները նորին հաստատուեցան. բայց հակառակամէր մարդիկ եւքը դէմ կեցան, և իշխաններուն մէծ մասը եկեղեցականներին դրդուելով Աւոն թագաւորին, ու Հեթուում թագաւորահօր հետ թշնամացան. և որովհետեւ ձեռքբնին բան չէր դար՝ գնացին թագաւորաց Պիլարզու զօրավարը Աւոնին և անոր կուսակիցներուն դէմ դրդուեցին որ հազար հոգւով Անարդարա կը նստէր Կիլիկիոյ պաշտպանութեան համար: Պիլարզու տեսնելով իրեն զօրաց քիչուրութիւնը չհամարձակեցաւ պատերազմի ելլելու, խաբէութեամբ իրեն կանչէց Աւոնը, Հեթուում և իրենց կուսակից իշխանները. Երբոր եկան՝ զամենն ալ թրէ անցրնել տուաւ, ու սկսաւ Կիլիկիոյ զոյց գալով տիրել ան տեղերուն (1308):

11. Աւոն ու Հեթուում թագաւորահայրը ինչպէս ատելի եղան եկեղեցւոյ ու իշխաններուն ու Պիլարզու ինչպէս զիրենք սպաննեց.

ԴԱՍԱԿԱՐԱ

1. Օշն. — 2. Իր յաղթութիւնն նասր Սուլդանին դէմ.
- 3. Հայոց ցրամիլլ. — 4. Աւոն և. — 5. Հայոց յաղթութիւնն նասրի դէմ.
- 6. Կիլիկիոյ աւերածն. — 7. Կիլիկիոյ հանգստութիւնն. — 8. Աւոնի թշնամութիւնն Օշն և Կոստանդնու հետ. — 9. Նասրի Կիլիկիա արշաւելն և հաշոտութիւնն. — 10. Ազգային խռովութիւնն Աւոնի մահը:

1. Հեթուումն պղտիկ եղբայրը Օշն լսելով Պիլարզուին ըրած անիրտաւ սպանութիւնները, շատ ցաւեցաւ ու մէկէն գնաց Սիս քաղաքը, մնացած իշխաններն ու զօրբերը ժողովեց, Պիլարզուն Կիլիկիոյ էն հալածեց, ու երկիրը անոր բռնութիւններէն ազատեց: Իշխանները միաբան զինքը թագաւոր օծեցին, և սկսաւ բարեկարգութիւնները ընկլ. ետևէ եղաւ որ Սոյ մէջ որոշուած կանոնները պահուի. բայց ան պատճառաւ նորին խռովութիւն ինկաւ տգէտառուանորդներուն ու ժողովրդէան մէջ, թէպէտ և մէծ չարիք մը չէտեմեցաւ: Օշն Լատինացւոց հետ խնամութիւն ըրաւ, ու Սիկիլիացւոց թագաւորներուն ցեղէն իրեն կին առաւ. սաով բարեկամացաւ Եւրոպացւոց հետ ու անոնցմէ օդուութիւն ուղեց:

2. Ան միջոցներուն Եգիպտոսի նասր սուլդանն
1. Օշն ովկ է ու Պիլարզուն ինչպէս Կիլիկիոյ էն վանեց.
 2. Օշն ինչն անաւոր յաղթութիւն մը ըրաւ նասր սուլդանին դէմ ու ինչպէս մեռաւ.

շատ զօրք դրեւ Կիլիկիոյ վրայ: Օշն յանկարծակիի գալով չեմ կը գողիւլ, ու հետո ունեցած էրկու հարիւր հոգւովը դիմացն ելաւ, բոլորովին Աստուծոյ ապաւինած: Էրբոր անոնք անհոգութեամբ ու առանց պատրաստութեան կեցեր էին վրանին վաղեց, ու բանակին կարգը շփոթելով վեց հազար հոգիի չափ ջարդեց, մնացածները փախուց, ու շատ մ'ալ գերի բանեց: Օշն ան յաղթութենէն եաբը տարի մ'ալ ապրելով մեռաւ, իր տառւերկու տարեկան կը որդին իշխաններուն յանձնելով, և թագաւորահայր դրաւ անոր Օշն պայլ իշխանը (1319):

3. Օշնին մեռնելէն եաբը սաստիկ շարժ մը եղաւ Հայաստան որ շատ տեղեր աւերակ դարձուց, ինչպէս Անին և ուրիշ քաղաքներու. ան աւերակ դարձած քաղաքներուն բնակիչները Հայաստանէն եւան թաթարստան գնացին. բայց հոն աւ հանգիստ բնակութիւն չքտնելով անոնց մէ կէսը Պրիմ անցաւ, կէս մը Լեհաստան, կէս մը Ուլցահի Երկիրը, մնացածներն ալ այլ և այլ տեղեր ցրուեցան:

4. Լեռն տասուերկու տարեկան էր Երբոր թագաւոր օծուեցաւ Հայոց վրայ, ու քսանը մէկ տարի թագաւորեց: ափսո՞ս որ ախտամոլ ու անդութ բնաւորութեամբն իր անունը նուռաստացուց, տէրութեան թշուառութիւնը աւելցուց և ցաւալի թագաւորութիւն ու մահ ունեցաւ: Վասնդի Օշն պայլ՝ իր աղջիկը Լեռնին տուաւ, ու անոր Յովհաննա լատախն խորթ մայ-

3. Օշնին մեռնելէն եաբը ինչ հանդիսացաւ ու Հայերը ինչու ցրուեցան.

4. Լեռն ինչպէս աղջիկնիս աւելի թշուառացուց.

ըը իրեն կին առաւ. Լատինացիք աս բանիս ներզանալով Հայ իշխաններէն մէկ քանին Լեռնին ու Օշնին գէմ գրդուեցին, ու երկաւակութիւն ձեռն գէմ գրդուեցին մէջ: Լեռն շատ զօրով վազեց Տիւրոսի վրայ ու յաղթեց Տիւրացւոց որ աս խոռվաւթեանց պատճառ եղեր էին:

5. Ան գիտուածները և Օշն թագաւորին մահը լսելով Նասր Եգիպտոսի սուլդանն՝ ուղեց առջի յաղթուելուն վրէժը առնել, զօրք զրկեց որ Երթան Կիլիկիան աւարի առնուն. բայց այլ և այլ տեղեր Հայերը յանկարծակի վրանին վաղելով Կիլիկիոյէն հալածեցին զանոնք, հինգ հազար հոգին չափուեցած էն կամաց առջին: Ան կոտրածէն փախած Եգիպտացիները օգնութիւն առնել այլ բաններէցին: Են կոտրածէն փախած Եգիպտացիները օգնութիւն առնել այլ և այլ բարբարոսն աղջիկը, Եկան նորէն Կիլիկիոյ վրայ ու սկսան տակն ու վրայ ընել աշխարհքը, աս բանս սկելով սրբազն պապը՝ յորդորեց Լեռն որ Եւրոպացներէն օգնութիւն ուղի, բայց անոնք տեղերնէն չափաժեցան:

6. Լեռնին Եւրոպացւոցմէ օգնութիւն ուղելը իմանալով Նասր՝ աւելի կատարեցաւ, ու անթիւ զօրք ժողովելով միտքը դրաւ որ Հայոց ալգը ջնջէ. իրէն հետ միացաւ Թիմուրդաշ Թաթարաց զօրականն, որ Հայոց օգնութեան էկեր էր. ուստի իրեւ բարեկամ մտաւ Կիլիկիա ու սկսաւ աւրուցը կել Երկիրը: Հազիւ թէ առջի կոտրածին մեռները գէրեզմաններու մէջ

3. Հայերը ինչպէս յաղթեցին Նասր սուլդանին զրբերուն ու Լեռն ինչու Եւրոպացւոցմէ օգնութիւն ուղեց.

4. Նասր ու Թիմուրդաշ ինչպէս Կիլիկիա մտան, Թուրքիրէն ինչ վասներ կրեց աղջիկնիս.

ամփոփուեր էին, վազեցին թուրքերը Կիլիկիոյ վրայ ու Թաթարաց պէս ամեն չարիք հասուցին. Երբոր ասոնք ալ աւարիներով ու գերութեամբ կը դառնային՝ վազեցին Եղիստացիք, ու առ ջններուն չըրած չարիքները ՚ի գործ գրին: Աս խեղճութեան միջնուները իշխաններն փոխանակ մէնքնին մարաններով թշնամւ ցն գէմ ելլելու, երարու գէմ ունեցած ամելութեւննին կը մուռցանէին:

7. Առն աւեմնելով որ բոլըր Կիլիկիա սյապէս աւերակ պիտի դառնայ, սրբազն պատին թուղթ գրեց և օգնութիւն ուղեց. պապը շատ դրամ վրկեց աւերակաց շնութեանն համար, իսրասական թուղթ ալ գրեց՝ յորդորելով որ միաբան սիրով վարուին իրարու հետ: Առն նոյն պէս մարդ զրկեց Թաթարաց Պուսոյիտ իմանին որ օգնէ իրեն, ան ալ քսան հաղար զօրք հաս ցուց Կիլիկիոյ պատասխանութեանը համար, Եղիստասի ամիրային ալ հրաման ըրաւ որ Հայերը չնեղէ, ու հետերնին սիրով վարուի. ասովք ի՞ւ հանդստացաւ Կիլիկիա:

8. Երբոր արտաքին թշնամիները գագրեցան, սկսան ներքին խոսկութիւններ, որ ուրիշ ան գամիներու պէս աւելի վասակար եղան Հայաստանի քան թէ արտաքին թշնամիները: Առն Օշն պայմին հետ սաստիկ թշնամութիւն ունեցաւ. զօրք զրկեց Ատանայի վրայ ուր էր Օշն, բռնեց զինքը կոստանդին եղօրը հետ ու սպան նէլ առուաւ: Վէրջը իր կին ալ սպաննել տուաւ որ Օշն պայմին աղջիկն էր, ու անոր աւելը լո-

7. Աս հարուածներէն եպքը Առն որո՞ւն գիմեց ու Կիլիկիա ի՞նչպէս քիչ մը հանդստացաւ.

8. Առն Օշն պայմին հետ ի՞նչ թշնամութիւն ունեցաւ ու ի՞նչպէս զինքը ուր իր կինը սպաննեց.

աինացի մը առաւ. Օշնին գլուխը նասրին զգէց, Կոստանդինին ալ Պաւսացիան:

9. Նասր ու Բէրիոյ ամիրան նորէն Կիլիկիոյ վրայ սկսան վազել. վամն զի լաւուվ որ Լատենացիք խաչակիլ զօրք պիտի հանեն սուրբ երկիր ազատելու համար՝ կարծեցին թէ Հայերուն գրգութեամբն է աս բանս, ուստի մը աքերինին գրին որ Հայերը բողոքվին ջնիւն. Էրկուբը մէկն վազեցին Կիլիկիա, քաղաքներն ու գեղեցր աւերակ գարձուցին լինակի ջները թրեանցուցին ու հարսառութիւնները ժողվելով էլան գնացին: Առն վախցաւ գիմացին ելլեւսւ. վախաւ գնաց Կիլիկիայէն, ինչպէս ըրին նաև իշխաններէն շատն. բայց Եղիստացիք նորէն եկան ու ասլինէն շատ աւելի չարիք հասուցին Հայոց: Առն աղաչանաց թուղթ գրեց Նասրին որ Հայերը ջնեղէ ու հաշտութիւն ընեն մէջերնին, սուրբանը յանձն առաւ՝ երդմնանք ուղելով Առնէն որ մէկ մալ Եղիստացւոց հետ թղթակցութիւն չընէ. Ինքն ալ գեսպանաց առջև աւետարանին վրայ երդմնանք ըրաւ. այսպէս երկեք տարի Կիլիկիա խապաղացաւ: Վէրջը Առն նորէն ծածուկ սկսաւ թղթակցութիւն ընել սպամին ու արեմնեան իշխանաց հետ. բայց իմացուելով աս բանն Նասր նորէն շատ զօրք զրկեց, որ եկան ամեն սեսակ չարիք ըրին ու հարուած աւարով ելան գնացին:

10. Աս խեղճութիւններս աւեմնելով ընդ հա-

9. Նասր ու Բէրիոյ ամիրան ինչո՞ւ նորէն Կիլիկիոյ վրայ վազեցին ու Նասր ի՞նչ պայմանաւ հաշտութիւն ըրաւ.

10. Ի՞նչպէս խոսկութիւն ծագեցաւ Առնին ու Յակոբ կաթուղիկոսին մէջ ու Առն Երր մեռաւ.

նուր ազգք՝ շատ ետևէ եղաւ որ ալ բարեկամութիւն չընեն Եւրոպացի եխանաց հետ, մասնաւանդ որ օգնութիւն մը չէին տեսած. բայց ոմանք ալ թագաւորին հետ միացած՝ կ'ուղէին անոնցմէ օգնութիւն ինդրել ու անոնց հետ բարեկամութիւն ընել. ասով մեծ խոտութիւն ծագեցաւ թագաւորին ու կաթուղիկովն մէջ, և աս պատճառաւ Յակար կաթուղիկովն պաշտօնէն ձգուեցաւ: Աւոն երկու տարի ալ թագաւորելէն ետքը մեռաւ՝ առանց քաջութեան յիշատակ մը ձգելու (1341):

ԴԱՍ ԼԴ.

1. Կոստանդին Գ. և իր մահը. — 2. Գուիտոն Եպիպացուցոց արշաւանքն. — 3. Գուիտոնի մահը. — 4. Կոստանդին Գ. և իր յաղթութիւնն Եպիպացուց վրայ: Իր մահը. — 5. Աւոն Զ լուսնեան. — 6. Իր քաջութիւնն Եպիպացուց դէմ. — 7. Կիլիկոյ խեղճութիւնները. — 8. Աւոնի գերութիւնն. — 9. Աւոնի գերութենէ աղատին և մահը. — 10. Իր դամբանն ի բարիզ:

1. Որովհետև Աւոն որդի կամ Եղայրը ըունէր, իշխաններն Կիպրոսի թագաւորին եղբօրորդին ընտրեցին որ Յովհաննէս Պայլ կամ Ճիւան կ'ըստւէր և թագաւորելով Կաստանդին Գ. ըսուեցաւ. ասիկայ մօր կողմանէ միայն Հայ եր, ան պատճառաւ ալ Հայու ազգը կ'ատէր ու բնութեամբ ալ խոլարար մարդ էր սկսաւ ազգին բարի սովորութիւններն ալ արհամար-

1. Ո՞վէ Կոստանդին Գ. ու ի՞նչպէս Հայոց ամելի ըլլուզ սպաննուեցաւ.

հետ ու փոխել, մանաւանդ արքունեաց բաները, որով ամենուն ատելի եղաւ. վերջը սկսաւ սահմել Հայերը որ ազգացին ծէսը փոխեն ու լատինացուցը ընդունին, աս բանիս չըմիմնալով ոչ իշխաններն, ոչ ժողովուրդն և ոչ զօրքն, վրան վաղեցին սպաննեցին զինքը տարիի մը թագաւորելէն վերջը. և միաբան խորհրդով Յովհաննէսին Գուիտոն եղբայրը կանչեցին ու իրենց թագաւորութեցին:

2. Գուիտոնին ատենը անթիւ բազմութեամբ Կիլիկիյ Վրայ վաղեցին Եպիպացիք. որոնց գէմելելու վախնալով Գուիտոն, փախաւ բերդի մը մէջ պահութեացաւ, որով Եպիպացիք առանց արդելքի մտան Կիլիկիյ առանակովն ըրին: Կը տեսնէին աս ամեն չարիքս իշխաններն ու անհոգ կը կենացին, վասն զի ազգին սէրը մարած էր սրտերնուն մէջ, իրենց վիճակին պարագերը մոռցած էին, սդիտութեան խաւարին մէջ թաղուած էին, մէկ խօսքով ամենքը իրաւերենց ազգին թշնամի միայն իրենց առանձնական օգուատը կը մտածէին, որ ինչպէս յայտնի է, Հասարակաց կործանումն է:

3. Երբոր Թշնամիները Ելան գնացին Կիլիկիյէն՝ Գուիտոն գուերս ելաւ պահութեամբ տեղին, ու սկսաւ Եղբօրը պէս անմտութեամբ ետևէ ըլլուզ որ ազգին ծէսը ու արտաքին սովորութիւնները փոխէ. իշխանները յորդորեցին զինքը որ անսնկ մնուած բաներու ետևէ ըլլոյց. բայց Երբոր անիկայ արհամարհէց անոնց խրատը, իրենք ալ զինքը սպաննեցին Երկու տարի թագաւորելէն եաբը (1344):

2. Խնչպէս նորէն Եպիպացիք տիրեցին Կիլիկիյ, և ազգին աս նեղութիւններուն ու հարուածներուն պատճառը ինչէ՞ն էր:

3. Գուիտոն ինչո՞ւ սպաննուեցաւ.

4. Կոռիւտանին տեղը կոսանագին չորրորդը թագաւոր դրին, որ թէպէս և հօր կոզմանէ լսանին էր, բայց խելացի ու զբուշաւոր ըլլալով խաղաղութեամբ կառավարեց աղջը: Երբոր ասիկայ սկսաւ լսանինացւոց հետ թղթակցութին ընել, Եգիպտասի սուլդանն շատ զօրք զրկեց կիլիկիոյ վրայ: Կոսանագին առաջնոց իմանալով անսնց գալը՝ ինքն ալ իր զօրքերը ժողվեց ու պատերազմի պատրաստուեցաւ. օգնութեան եկան իրեն Կիլիկիա Հուգոն թագաւորը և Հուգացւոց Աստուածատուր զօրապեալ. ասոնք ամենքը միացած՝ վազեցին թշնամաց վրայ, սոսկալի ջարդառուին իրենց ու բոլորն ալ կիլիկիային հալածեցին, թէպէս և իրենցմէ ալ շատ մորդ մեռաւ: Կոսանագին խաղաղութեամբ քանի մը տարի ալ ապրելով մեռաւ, առանցութը տարի թագաւորելէն ետքը (1364):

5. Կոսանագինին մեռնելէն ետքը իշխանները չկրնալով մէջընին միաբանիլ, քանի մը տարի առանց թագաւորի մնացին: Ուրբանոս ն. պապը իշխաններուն յորդորանաց թուղթ մը դրեց որ թագաւոր գնեն Լւսոն Լուսինեան ըսուած իշխանը՝ որ մօր կողմանէ միայն հայ էր որ Գուրետնիկ և Ճիւռանին աղջական, իշխանները միաբանցան ու հրաւիրեցին Լւսոնը որ թագաւոր օծեն: ինքն ալ յանձն առաւ՝ պապին յորդորանքներէն սախուած: Բնութեամբ լսւ և թագաւորավայել կատարելութիւններով զարդարուած էր Լւսոն, բայց աղջին խելզնութիւնը

4. Կոսանագին Դ ինչպէս Աստուածատուր զօրապեալին օգնութեամբ յավթեց Եգիպտացւոց ու քանի ատրի թագաւորեց.

5. Լւսոն Լուսինեան ինչպէս թագաւորեց.

և ժամանակին պարագաները Ուուրինեան թագաւորներուն ամենէն ցաւալին ու գժբաղջը ըրին զինքը:

6. Լւսոն թագաւորելուն պէս՝ Եգիպտացիք անթիւ զօրքով կիլիկիա տարածուելով սկսան այրել ու տւրութիւն բավարաբները. Լւսոն քիչ զօրքով թշնամեաց գէմ ելաւ ու մէծ փասհատուց անոնց, բայց ինքն ալ պատերազմի ատեն վիրատուրելով փախաւ գնաց անմատչելի լւսոնունու մէջ պահուըլուեցաւ, որով և ձայն ելաւ թէ մեռած է պատերազմի ատեն: Իշխանները երկու տարիէն ետքը ուղեցին Ութոն անունով գուելով թագաւոր գնել իրենց՝ պապէլով Լւսոնին Մարիամ թագուհին հւետ: Երբոր պապին օրեքը մօտեցան՝ իմացուեցաւ որ Լւսոն ողջ է եղեր, ու քիչ մը ատենէն ինքն առ գալով թագաւորութիւնը նորէն ձեռք առաւ, որով ազգին մէծ ուրախութիւն եղաւ. բայց ափսոն որ երկոր չակեց:

7. Երկու տարիէն Եշրէֆ Շապան անունով մէկը Եգիպտացւոց Պապէդան ըլլալով. և քրիստոնէութեան սասահի թշնամի, շատ զօրք զրկեց կիլիկիոյ վրայ, որ երթան հիմնայտակ ընէն քաղաքները ու թագաւորութիւնը վերցնէն. ասոնք զայրացնեալ գէտի մը պէս կիլիկիա տարածուելով արիւնով օղողեցին դաշտերը, որով շատ մորդ փախաւ այլ և այլ օտար թագաւորութեանց ապաւինեցաւ, շուան աւլեռներն ու բերդերը պահուըլուցան, մնացածները թրի

6. Լւսոն ինչ քաջութիւններ ըրաւ Եգիպտացւոց գէմ ու ինչպէս թագաւորութիւնընորէն ձեռք առաւ.

7. Եշրէֆ Շապան ինչպէս տիրեց կիլիկիոյ ու ինչ խելզնութեան հասուց աղջերնիս,

բերան գնացին։ Եդիստացիք ամեն տեղելու տիրելէն ու աւերակ գարձընելէն ետքը, երկու ամփսի չափ Սիս քաղաքը պաշարելով առին ու աւերակ գարձուցին թագաւորաց և իշխանաց գերեզմանները բացին, ու ան պատուական ու կորները այրեցին։ և բոլոր Կիլիկիան, որ մեր վերջին թագաւորաց խանձարուրք էր, այնպիսի ողորմէլի և աւերակ վիճակի մը հասուցին որ սոսկաց թագաւորական գաւազանը ան աւերակաց վրայ տիրելու։

8. Լւսն տեմնելով որ անկարելի է թշնամեաց անհամար և կատաղի բազմութեան առաջն առնուլ իր քիչուոր զօրբովն՝ իրեն ընտանիքովը կապան ամուր բերդին մէջ պահչուըտեցաւ։ Թշնամիները եկան ու սկսան հետո պատերազմիլ, բայց չկրնալով վնաս մը հասցնել ելան գնացին ու փոքրիկ գունդ մը թշուցին բերդը սպասարելու համար։ Լւսն ինը ամիս բերդը կենալէն ետքը յաւսահատելով գեսպան զրկեց Եդիստացւոց դորավարին՝ խոստանալով որ անձնատուր կ'ըլլայ, միայն թէ երդնու ինքն ալ վնաս մը չհասցնելու իրենց կենացը։ Երբոր երդում ըրաւ զօրավարը բերդին գոները բացին, թշնամիք մէջը մասն, գտած բաներին յափշտակեցին ու թագաւորը և իրեն ընտանիքը շղթայի զարկած Եդիստաց տարին։ աս Եղաւ 137ին։

9. Հշրէֆ Շապան Եօթը տարիի խիստ բանակ մէջ պահէց թագաւորական ընտանիքը հաւատքնին ըուրանալնուն համար, վերջը Հռովմայ.

8. Լւսն ինչպէս Եդիստացւոց ձեռքը գերի ինկաւ։

9. Լւսն ինչպէս իր բանտարկելութենէն աղատեցաւ ու ինչպէս մեռաւ։

քահանայապետին և Սպահնիացւոց Յովհաննէս թագաւորին աղազանբովն աղատեցան ամենքն ալ բանտէն, ու Յովհաննէս թագաւորին երաշխաւորելովն հրաման ալ եղաւ որ ուր կ'ուղեն երթան։ Լւսն մէկէն իր ընտանիքովը Երուսաղէմ Քրիստոսի սուրբ Գերեզմանին ուխափ գնաց։ Հնան թողուց իր կինն ու ալջիկը իրենց ուղելովն, և ինքը Եւրոպա անցնելով նախ Հռովմ գնաց, ուր շատ պատիւ գտաւ սրբազն պատէն անկէ անցաւ Սպահնիա, ուր Յովհաննէս թագաւորին շատ սերով ընդունեցաւ զինքը և բնակութեան տեղ տուաւ։ Լւսն երկար ատեն կենալէն ետքը Ճամբորդութեան համար Պաղցիսու Ոնդղիս գնաց, ու վերջը Բարիք հասնելով հնան հեւանագացւ և մեռաւ 1393ին Նոյեմբերի 22ին վաժտուն տարեկան։ Մէծ հանդիսով թաղուէցաւ Կեղեսատինեանց վանքին եկեղեցւոյն մէջ, ուր որ փառաւոր գամբան շնորած է վրան Պաղցիս թագաւորաց ու անհաւանի զօրավարներուն շարքին մեջ։

10. Սիակատուր սև մարմարիննէ է դամբանը, որուն վայ տարածուած կը կենայ Լւսն թագաւորին արձանը ձերմակ մարմարիննէ, թագաւորական վերաբրկուով ծածկուած։ Գլուխը թագ, աջ ձեռքը թագաւորական գաւազան ու ձախ ձեռքն ալ թաթպան։ Խսկ ոսքին կողմը Երկու առիւծ իրարու կոթընած կը կենան։ Տապանագրին արձանագիրն է ասիկայ։ Այս է տապան քաջատոհմիկ և ամենապահ տիւ իշխանին Լւսնի Լուսինեան հինգերորդին

10. Լւսնի գամբանը լինչպէս է ու ի՞նչ արձանագիր գրուած է վրան։

1. Աս տապանագրին մէջ Լւսն վեցերորդն հնագերորդ ըստեր է, Լւսն երկուորդը լիուրինեանց առաջն թագաւորը լլալուն համար Լւսն Ա համարելով։

» Ըստին ալբայի թագաւորութեան Հայոց, որ
» աւանդեաց զհոգին՝ ի ձեռս Աստուծոյ՝ ի Փու-
» րիկ՝ ի 22 Նյեմքերի յամի փրկութեան մե-
» րս Հազարեւորդի երեքհարիւրերորդի ինչ
» նըսներորդի երրորդի » :

Գ.Ս. Լ.Ե.

Ժամանակ ամիշխանուրեան:

1. Լանկթամուր: Կարսի առումն. — 2. Սեբաստիոյ կո-
տորածն. — 3. Պեղպենի Սիւնեաց իշխանն. — 4. Հայոց
կ. Պոլս գաղթին: Յովակիմ պատրիարք. — 5. Հա-
չարասի աւերտունն: Հայոց կ. Պատրիարք գաղթին. —
6. Դափիթ Սիւնի. — 7. Իր յալթութիւնն: Տեր
Աւելիկը ու Միթմար. — 8. Հայոց հառլութիւնն. —
9. Միթմարայ մահը. 10. Յովհաննես իշխան:

1. Որութիւնեանց թագաւորութեան վերջա-
նալու ատենները Ասիոյ մէջ շատ զօրացած եր
Լանկթամուր կամ Թիմուրլէնի իօզգէք Թա-
թարներուն թագաւորը, որ Սմրզանտ կը նստէր:
Ասիկայ իր թագաւորութեան երկոտասաններորդ-
տարին անհամար զօրքով վաղեց Պարսկաս-
տան ու Ասորեստան, և բոլոր ան աեղերը նուա-
ճէլով անցաւ Հայաստան, և հասած աեղերը
սոսկալի անդժութիւններ ըրաւ: Օրինակի հա-
մար, կը պատմն թէ Լանկթամուր կարս քա-
ղաքը անմելու ատեն այսպիսի գործողութիւն
մ'ըրաւ. շատ մարդ ջարդել տալէն ետքը, թէ
տաճիկ և թէ հայ, հրաման տուաւ որ երեք

1. Լանկթամուր ովէ ու ի՞նչ նահաւոր գոր-
ծողութիւն մը ըրաւ. Կարս քաղաքին մէջ.

Հարիւրտկան հոգւով երկու խումբ կաղմեն,
մէկ խումբը տաճիկ՝ մէկալը հայ. Երբոր զատնկը
գիմացը հանեցնեն՝ կանկթամուրը սաւա. Ասերկու
խումբէն մէկը կուզէե ջարդել տալ, որուեցի
որ քրիստոնեայք թրէ անցընեմ: Հայերը սիրով
յանձն առին մեանիլքան տաճիլալով ազատիլ.
Բայց մէջէլնէն երկու հոգի Տաճիկներուն կողմը
անցնելով՝ հաւատքնին ուրացան. ան ատեն
թագաւորը հրամայեց որ Հայոց տեղ Տաճիկնե-
րը սպաննեն, առ որ տեսն ան երկու ուրա-
ցեաները՝ նորէն քրիստոնեայ կողմն անցնելով
սկսան կանչել. Մէնք քրիստոնեայ ենք ու Քրիս-
տոսի ծառայ. ան ատեն Լանկթամուր յանդի-
մաներով ան երկուքին անհաւատութիւնն ու-
շարութիւննը՝ միայն զանոնք սպաննել առւա-
ռու մէկանելով ազատ թողուց:

2. Կարսէն գնաց Փոքր Ասիա Աւբաստից վր-
այ. Երբոր քաղաքացիք ընդգիմացան իրէն՝
գեսպան զրկեց Խաբէութեամբ երդում ընելով
որ եթէ խաղաղութեամբ քաղաքը տան՝ բնա-
կիները թրէ չանցներ: Խոստանէքը պահէլով
թրով չի ջարդեց զերէնք, բայց սոսկալի տան-
չանքներով սպաննեց. ամեն տեսակ հասակի և
վիճակի մարդկանց զատ տանջանքներ ու մահէր
հնարելէն ետքը՝ բոլոր տղաքը ժողվեց, ու կա-
սպած ձեռքով և ոտքով ձգեց գաշտի մը մէջ
ու կատղած ձիերու կոխկրուաել տուաւ, ասով
ան գաշտին անունը Սև Հողեր կը կոչուի, որ
մինչև հիմայ Հայոց գերեզմաննոցն է. Ետքը
զօրքերը բռնեց ու ողջ ողջ թաղեց, ըսելով թէ՝
Երդութենքը եմ թրով չսպաննելու: Խակ քաղ-
քին մէջ գտնուած բորսաներն և ուրիշ պակա-

2. Աւբաստիա ի՞նչ անդժուռութիւններ ըրաւ
Լանկթամուր.

սաւոր մարդիկը խլդել տուաւ ըսելով. Ես ոլցիրուն չինայեցի, դուք ի՞նչ ըանի հարկաւոր էք: Աս անգթութիւններս ընելէն վերջը շատ մարդ ալ գերելով խորասան աարօւ:

3. Լանկթամուրին թագաւորութեան վերջի տարիները Սիւնեաց կողմերը կը զօրանար Պէտքէն Ուռապէլեան անունով կարիք իշխան մը որ Սիւնեաց աշխարհքին ու կապանի մէկ մասին կը տիրերս իր իշխանութեան տակը վաթառուն հազարի չափ Հայ ունէր, ու հայրաբար զիրենք կը խնամէր, և փախչովներուն պատըսպարան կը ըլլար: Տեսնելով Պէտքէնի յառաջադիմութիւնն ու մեծնալը Վրաց թագաւորին, սկսաւ վրան նախանձիւ ու ետեւ ըլլալ որ սպաննէ զիրել. աս բանիս համար Ամագին անունով անցդամ՝ ու արծաթամսէր Հայ մը գրտոնելով անոր ճեւքովը թշն խցուց Պէտքէնի. մէկէն կարեւոր դարմանները ըրին, բայց օգուտ մը ըրլաւով մեռու Պէտքէն ու մեծ սուփի մէջ թուուց իր ժողովուրդը. իսկ Ամագին իրեն արժանաւոր պատիքը գտնելով չարաչսր սպաննուեցաւ Հայերէն:

4. Այս առեններու շատ զօրացած էր Սուլդան Մէհմէտ Ֆաթիհ Օսմանցւոց թագաւորը, որ կոստանդնուպօլիսը Յունաց ճեւքէն առաւ, և ուզելով որ հօն ալ գտնուեն Հայեր՝ վաճառականութիւն և ուրիշ արուեստները ծաղկեցընելու համար, Պրուսայէն և այլ և այլ տեղերէ շատ Հայեր թերել տուաւ ու կ. Պօլսայ զանազան կողմերը բնակեցուց. ասոնց վրայ Յովակիմ անունով պատրիարք մ'ալ դրաւ իշխանութիւն

3. Պէտքէնի վրայ ի՞նչ դիտելիք կայ.

4. Սուլդան Մէհմէտ Ֆաթիհ ի՞նչ բան ըրաւ ազգերինուս.

աւլով տիրել Փոքր Հայոց և Յունաստանի մէջ բոնուած բոլոր Հայերուն:

5. 1453էն մինչև 1603 մամնաւոր բան մը չուատմուրի Հայոց վրայ: Իսկ աս միջոցներուն Կահաբաս Պարսից թագաւորը Օսմանցւոց Ճեւքէն առնելով Հայաստանը՝ անհամար աւերմունք ու կոտորած ըրաւ հօն, որով և Աստուծոյ բարեկութեան վերջի և սաստիկ պատիքը եղաւ մեղի: Երբոր Օսմանցիք իմաստուն որ Պարսիկ Հայաստանի տիրեր էն, Ճզլէզատէ Սիւնան փաշային ճեռքը անհամար զօրք տուին ու Հայաստան զլկեցին Պարսից գէմ: Շահաբաս բոլոր Հայերը արտօրանօք իրենց քաղաքներէն ու բնակութիւններէն հանել տաւով Այրարաայ գաշտին մէջ ժողվել տուաւ, որպէս զի անկէ Պարսկաստան անցընէ քաղաքներն ու քուլոր արտերը այրել տուաւ, չէնքերը հիմայատակ կործաննեց, որպէս զի Օսմանցիք գալով ոչ պաշար գտնեն և ոչ բնակութիւն: Երբոր Օսմանցիք Կարս հասան, Շահաբաս հրաման տուաւ որ բոլոր ժողված Հայերը Պարսկաստան քընեն տանին, և որովհետեւ Երասմի գետէն կ'անցընէն, բաւական նաւակ ու լսատ քըլլավ սկսան ժողովուրդը գետը ճգել որ կը ուղար լողալով անցնի. ասով հիւանդուու ծեր մարդիկ, կանայք, տղաք և ուրիշ լողալ քիւտացող անթիւ մարդիկ նողուցեցան: Շահաբաս գետին հովին հոդանակ կը տեսնէր ան խեղճութիւնները, առանց հոդ ընելու, աւելի կը փութացընէր ժողովարդ գետան գետէն անցնիլը, հասան եղիւլինները ու ընթիւ անբաւ գուռարութեամբ ու վանդակով Պարսկաստան, և ըստ մէծի մասին Շահաբաս վիրենք Ասպահան քաղաքը բնակեցուց ամենքը

5. Շահաբաս ի՞նչ աւերմունք ու կոտորած հասուց ազգերնուս:

մէկէն տասոււերկու հազար տուն-էլի՛ այնչափ
կորսուածնէրէն զատ։ Յահաբաս որպէս զի
Հայոց սիրառը վաստըկի որ սիրով կենան, սկսա-
գթութեատիք վարուիլ հետերնին ու հարկերը
շատ թէթեցուց. ետքը ուրիշ շատ գաղթական-
նէր ալ բէրաւ Յահաբաս որընցմէշ շատը օդին
գէշութենէն մեռան, մէկալնոնք ալ Պարսից մէջ
ըրուեցան. իսկ մինչեւ հիմա մնացածնէրն են
նոր Զուզայի բնակիչները, որ իրենք շնուցին
ան քաղաքը Հնին Զուզային իշխատակ;

6. *Geometrische Winkelklassen kann folgendermaßen*

7. Պատրիք Օրբելյան վրայ է ինչ գիտելիք կայ .
7. Դաւթիթ իրեն կարիք ընկերներով լի ի՞նչ
ջարդ առաւա Տաճիկներուն ու ի՞նչ կը պատմուի
Տէր Աւետիք ու Միիթեար քաջերուն վրայ .

ալ պատրաստուելու, ուստի ամենքն ալ խոս-
տովանեցան հաջորդեցան, ու քաջութեամբ
պատերազմի պատրաստուեցան: Թշնամիները
եօթանատուն հաջարի չափ էին, մեծ մասը Հայ,
և ուրիշ շատ հասարակ ժողովութք: Իսկ Դաւ-
թիթ երեք հարիւր հոգի մեջն ունէր հետր
բերդին մէջ: Պատերազմը վեց օր միակերպ
տևեց: Թշնամիներէն գրեթէ ամեն օր 300 հո-
գին չափ կը մեռնէին, իսկ Դաւթի կողմէն օրը
հաջու մէկ հոգի: Վասն զի բերդականները դրան
եղածները կը տեսնէին ու գրանիները զիրենք
չէին տեսնէր: Տաճիկները յուսանհատեցան ան
հերսով բերդը տանելէն, ու սկսան ամեն կող-
մանէ մեծ ամեծ ու բարձր գործիքներ զնելով
պարապէն վեր ելլեւ բերդականները երրորտե-
սան առ բանի, քահանայք, կանայք ու տղաք
ժամ վաղեցին ու կալոթէին որ աս վասնդէն
տղատէ զիրենքը Աստուած: Իսկ Դաւթիթ ու իր
քաջ զօրքերն ու զօրավարները այնպիսի արա-
գութեամբ ու զարմանալի յաջողութեամբ կը
պատերազմէին որ մէկու մ'ալ չթողուցին որ
բերդէն ներս մանէ, ու վեր լածները թրուլ
կամ հրացանալ վար կը գլորէին: Ան միջոցին
Տէր Աւետիք և Միթթար երկու հարիւր հոգի
առած հետերնին ուրիշ համառ մը բերդէն
դուրս ելան ու թշնամոց եակէն սկսան պա-
տերազմի, ասով տասներեք հաջար մարդ
ասրդեցին ան օրը, և մասցաները քախուցին,
հարիւր քատաստուն և ութ գրօս ու շատ աւար
առած յաղթութեամբ գարձան էկան: Վերջը
իմաստով բուն եակէն գնացին Աւետիք և Միթ-
թար վաճառուն հօգութ, մեծ ջարդ մ'ալ տուին
սննոց Մեղրի քաշը մէջ, ու գարձան Դաւթին
բովի եկան: Դաւթիթ իր հնարագիտութեամբը,
քաջութեամբը ուրիշ շատ յաղթութիւններ

առ ըրաւ, որով թշնամեաց սիրտը վասի ձգեց ու
հալածեց վլրենք: Վեց ատրի իշխեց իր պատիկ
տէրութեանը վրայ գովելի և զարմանալի ինեւ-
քով ու կառավարութեամբ, և մեռաւ խաղա-
ղութեամբ յիսունը որու տարեկան:

8. Դաւթի մեռնելէն ետքը իր մարդիկը միա-
բան հաւամութեամբ մէկէն ընտրեցին Միիթա-
րը իրենց առաջնորդ, բայց ետքէն մէջերնին
խողութիւն ինինալով սմանիք Տէր Աւետիքին
կողմը եղան, ոմանիք ալ ուրիշներու այսպէս
իրենց միութիւնը, որով և զրութիւնը, պակ-
սեցաւ: Իմացան Տաճիկները բերդականներուն
անմիաբանութիւնը, եկան պաշարեցին, ու սկը-
սան նելը ձգել մէջնիները. բերդին Հայերը
Միիթարէն ծածուկ միաբանեցան որ բերդը
մատնեն ու իրենիք աղասին երթան, աս բանիս
համար պատգամանոր զրկեցին տէր Աւետիքը:
Տաճիկները երդամամբ յանձն առին, բայց բերդը
մատնելէն ետքը մեծ մասը թրէ անցուցին, որ
իրենց անմիաբանութեանը արժանաւոր պատիկ
եղան. իսկ Տէր Աւետիքը աղաս թօղուցին՝ որ
ուր կ'ողի երթայ:

9. Միիթար իրեններուն մատնութիւնը ա-
ռաջուց իմանալով փախաւ գնաց, ու քիչ մը
տաեն պահուցաւելէն ետքը ելաւնորէն շատ մը
մարդ ժողվեց գլուխը, ու շատ քաջութիւններ
ընելով քանի մը քաղաքներու ու բերդերու
տիրեց: Երբոր խնծորէաք ըսուած բերդը պա-
շարէր էր, որ մը քնանալու ատենը քովի մար-
դիկը սպաննեցին զինքը, ու գլուխը Դավիկէ՛
նսոող բդեշնին տարին. բդեշնը արդարու-

8. Դաւթիթ Սիւնիին մեռնելէն ետքը ի՞նչ խռո-
վութիւն ինկաւ Հայոց մեջ.

9. Միիթար ի՞նչպէս սպաննուեցաւ.

Թեամբ մտածելով պատեհեց անոնց անլցամու-
թիւնն ու անհաւատարմութիւնը և զամնեն
ալ սպաննել տուաւ, ըսկելով որ «Դուք աշ-
խարհէքս այդպիսիք քաջ մարդէ մը զրկեցիք, և
թէ որ անոր կեամբքը անպիտան ու վնասակար-
համարեցաք աշխարհէի, ուրեմն ձերը ի՞նչ բանի
պիտանի պիտի ըլլայ, ո՞լ անդութ և դաւաճան
մարդիկ» :

10. Միիթարին քովի մարդիկը բոլոր ցրուե-
ցան, շատն ալ Յովհաննէս իշխանին քովիք գնա-
ցին, որ շատ քաջալութիւններ ըրած էր Ուտէա-
ցոց աշխարհէքը Յամկաց գէմ: բայց վերջին
կասկածելով իր մարդիկներու դաւաճանութե-
նէն, ինքիրմէ Տաճկաց յանձնեց իր քաղաքը ին-
քը ելաւ Աքտէրիսան գնաց ու հոն շտո պատիւ-
դասաւ:

ԴԱՍ ԼԶ.

1. Նատար Շահ: Ազգերնու վլածակը. — 2. Հայաստանի
կառավարութիւնն. — 3. Վեչէմինա Գումի. — 4. իր
յաղթուիին. — 5. Հայուար Դուլի խան. — 6. իր
վուժիմորութիւնն. — 7. Հաճկերոցի Հայոց քաջու-
թիւն: Յովհաննէս ինդամիրեան կորիճը և իր մահը:

1. Նատար Շահ որ Թահմաշ Ղուլի անուանե-
ցաւ, Պարսից Թահմաշ թագաւորին ծառայու-
թեան մէջ ըլլալուն համար, Աֆղաններու և
Օսմանցոց գէմ ըրած յաղթութեամբն՝ կաս-

10. Ի՞նչ գիտելիք կայ Յովհաննէս իշխանին
քրայ.

1. Ո՞վ է Նատար Շահ, և ազգերնիս ի՞նչ վի-
ճակ ունեցաւ այս ատենս.

Համեծէլի եղաւ իր թագաւորին. համարձակ գըրգուց իշխանները և զօրքերը և բանտեց զթահմաշ. յետոյ զսպարտութեամբ պահնելով դանիկայ և անոր գեռաահասակ որդին, զդու առաջ հօրը տեղ թագաւորիցուցեր էր, անսնց աել անցաւ, 1737ին. և նորէն Օսմանեանց գէմ իրթալով և յաղթելով կարս քաղաքին քով. Հայաստանի մէկ մասն ալ առաւ անոնցմէ և Պարսից տէրութեան միացուց: Յետոյ Մուզանայ անապատին մէջ ժողվեց բանակը և Պարսից ու Հայատակաց մեծամեծները. և անսնց միաբան հաւառութեամբը ընարուեցաւ Պարսից թագաւորի: Հոն էր մեր Ալբահամէ կաթուզիկոննալ, զըր ժողվեցն մէջ կանչելով օրհնել տուաւ իր սուրբ, և անոր ճեռուին մէջքը կապեց, իրեն իմացընելու համար որ Հայոց ալ թագաւոր է:

2. Այս ատենուան սովորութեան համեմատ եօմն վերակայուներ կը կառավարէին Հայաստանի ամէն մէկ գառառները, կամ նահանդները, և կը կուզուին Այս: Ասոնցմէ իրեքն Պարսիկ էին, մէկն խան (Աթիստար), մէկան Զատկի (գառառար), երրորդն Գալանդար (վերակացու ժողովրդեան). իսկ մասցած ըորսն Հայոց աղդէն էին, իրեն խորհրդական և գործակալ: Կարը Շահ ամեն տարի կը կանչեր զասներ և իրենց կառավարութեանը վայ համար կը պահանջէր. և շատ հեղ մնոտի պատճառներով բարկանալովնը կը սպաննէր, ո՞րը կը կուրցընէր, ո՞րն ալ ծանր տուգանքով կը պատժէր: Անոր համար Հայոց մեծամեծներն կը զգուշանային իշխանութեան ետեւէ ըլլալու մինչև որ չըստիպուէին:

2. Հայաստան ինչպէս կը կառավարուէր Կառը Շահի առան.

3. Կառը Շահ՝ Կամիջւեանի նախարարը և իր գործականները անիրաւութեամբ պահնելով ետքը, Շահ Մէհմէտ Գուլի անունով գատան և խորամանկ իշխան մը զգիեց ի Հայաստան, որ իմանայ թէ Հայոց քաղաքապէտներն և իշխաններն ի՞նչ կը մտածէն իր վրայ: Մէհմէտա Դուլի եկաւ Նախիջևան, և գրսուանց շառ պատիւցուց Հայոց և Պարսից, որ մ' ալ գաւառին բոլոր մեծամեծները իրեն կանչեց և կեղծաւուրութեամբ գէշ խօսեցաւ Նախը Շահին վրայ, անոնք ալ խաբուելով յայսնեցին որ իրենք ալ ձանձրացէր են անոր բանութիւններէն և կը փափագին ազատեւու: Մէհմէտ Գուլի գրել տուաւ տմենուն անունը սրբէս զի, ըստու, զիւրար Ճանշանիք և մէկերնիս օտար մարդ չիսանէ: Այս իշխաններէն ուսնոնք Նախիջևանին էին, ումանք ալ Այգուէցի, Ասասպատի, Շոռութեցի, և այլն: Քանի մը օրէն ծածուկ մարդ զգիեց, մէկիկ մէկիկ բոնել տուաւ զանոնք և բանտեց երեսուն և երեք Հայ, ամենքն ալ աղնուական և պատուալոր անձնիք: Յետոյ իմացուց նախը Շահին, որ բոլոր կանկածաւոր իշխանները բանած էր. Նախը Շահ ալ հրաման զգիեց որ զամենն ալ կուրցընէ, և ստացուածքնին իրեն վզէկ: Ասոլ ինչով իշխանները գտասպարտուեցան երես աչքէրնին կորսրնցընէլ. միայն որոնք որ շատ սասակ տուէն Մէհմէտ Գուլի անոնք մէկ աչքը կուրացընէլ տուաւ, մէկալը քիչ մը աւրեւով թողուց, որպէս զի Շահին հրամանը կառարած ըլլայ:

4. Երբ Նախը Շահի մահուան ձայնը հասաւ

3. Ո՞վ է Մէհմէտ Գուլի և ի՞նչ չարիք ըրած և Հայոց.

4. Նախը Շահի մեռնելին ետքը Մէհմէտ Գուլի ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ.

Նախիջևանայ կողմը, շատերը ակսան ապստամբէլ Մէհէմմէտ Գուլի իանէն, ան ալ կրցածին չոփ զօրք ժողվելով ջանաց զանդի նուռաճնելու։ Նախ վազեց Աստապատի վրայ, որուն բնակիչքն գրեթէ ամենն ալ Հայ էին, բայց չկրցաւ ինաս մը հասցընել, ու ամօթով ետք դարձաւ։ Այս ատեն Եատի Մուհամմէտ Սուլթան անունով անզգամ Պարսիկ մը՝ որ Աստապատ ապաւիներ էր իբրև ամուստ տեղ մը, և Հայոց թշնամի էր, Մէհէմմէտ Գուլին ծածուկ իմացուց Աստապատի գաղտնի ճամբաները, ու գրգռեց որ գործեալ գայ։ Հայերն իմանալով սկսան մասնէց վինառել, ան ալ գիշերանց ձի հեծած փախաւ, բայց քաղաքին իշխանը որ կըսուեր Կարապետ Աստուածատրեան Ետեն հասաւ ու սպաննեց։ Մէհէմմէտ Գուլի ալ օրէ օր աւելի ակարանալով փախաւ անծանօթ աեցուանք։

5. Նատրի մեռնելէն ետքը իր Եահ Ռուհ թուը թագաւորեց Մէհէմմէտ մէջ, իր եղբօրորդին ալ Աստրպատականի վրայ թագաւորեց և Հայտար Գուլի անուամբ խան մը Նախիջևանի նախարար գրաւ։ Ասիկայ առաջ հանգիստ թողուց Հայերը և շատ սէր ցուցուց իրենց. բայց քիչ ատենէն հետերնին թշնամանալով շատնեցութիւն տուաւ Հայոց մէծամեծներուն Նախիջևան և Գողթն գտաւաներուն մէջ ու ուրիշ տեղեր։ Ասոր համար տեղւոյն բնակիչներէն մէծ մասը այլ և այլ գեղեր փախան, ոմանք ալ Երևան գնացին, ուր կընային աւելի հանգիստ անցրնել։ Այս ատենները Ասպահանի մարզպանն Միրզէ Իսրահիմ՝ որ Աստրպատականի թագաւորին եղբայրն էր, ապստամբէլով անկէ պատերազմի ելաւ, բանեց և կուրցուց զանիկայ, և ինքը թա-

գաւորեց Գրավէժ քաղաքին մէջ։ Նախիջևանի, Եահկայ և Գողթեան Հայերն զայս լսելով մէջեր նէն մեծամեծները անոր զիկեցին Հայտար Գուլին խանը ամբատանելու. Իսրահիմ Եահ ալ իբաւունք տալով իրենց Հայտարը ձգեց լշխանութենէ ու անոր տեղ գրաւ իբրև փոխանորդ անոր եղ բօրորդին Ոլի Գուլի Պէյը։

6. Իսրահիմ Եահ բոլոր Պարսից թագաւոր ըութեանը տիբելու համարպատերազմի ելլելով, իր աւելութեան ամեն գաւառները և մանաւանդ Հայաստան՝ ժանա հարկանհաններ զրկեց, որ պատերազմի ծախուց համար տուրք ժողվեն։ Երբոր հարկահաններն Պավլէժէն ճամբայ ելլելու վայ էին Հայաստան երթարու, Հայտար խորհուրդ տուաւ որ Պավլիթու. Հայոց գիշաւորները մէկ տեղ տանին և անոնց ձեռքով գրամը ժողվեն։ Այս որ իմացան Հայոց իշխանները, ուր վախաւ, որը պահուելուց հաս իսկ շատերն հարկահաններուն ձեռքը ինկնալով լսիպուեցան մէկան Նախիջևան երթալ, ուր թէ իրենք և թէ ուրիշ շատ Հայոց սաստիկ ներսւեցան։ Վասն զի չկարենալով վճարել անողարմ հարկահաններուն պահանջած չափազանց գումարները, ոմանք ձեծի տակ մեռան, ոմանք ձեռքէ կամ ոտքէ կորուեցան, ոմանք ալ ցաւերնէն մեռան։

7. Քիչ ատենէն Հայտար խորամանկութեամբ նորէն զինքը Նախիջևանի կուսակալ անուանել տուաւ, և առջի կուսակալը՝ որ Արայի մէր Պէհնամ Խան անուամբ մերժելով, անոր հա-

8. Հայտար ինչպէս վրէժն առաւ Հայոց մեծամեծներէն։

9. Ի՞նչքաջութիւն ցուցին Եահկերացի Հայք, և ինչ նեղութիւն կրեցին ՚ի Հայտարայ։

ժանհաւ Որդուատիք քաղցին ապստամբաց վրայ
գորաց զօրաց վրայ գնաց և ցրուեց գլխա-
ւորներէն մեկ քանին ալ սպանեց: Այս զինուու-
րեալ Հայերը մեծ մասամբ նախիջևանի սահ-
մաննին մեջ Շահկերտ աւանին բնակիչներէն էին,
որոց իշխան էր Յովհաննէս Խնդամբեան կորիք
մը. որ եղածները լուրզվ տկար բնակիչները
աւանինքով լերան վրայ բերդը զրկեց և չօրս
կողմն ամրացուց. զրաւորներն ալ 500 հոգի
զինեց ընդդէմ Հայտարայ. որը երկար ատեն
գէմ զրին Խանին բարձմաթիւ զօրաց, և չատ
մարդ ջարդեցին: Հայտար տեսնելով որ կամ
սիտի չիսրանայ առնել բերդը, կամ անթիւ
մարդ ախտի Կորսոնցընէն, սկսաւ հաշտութեան
հրաւելք վրայ: Յովհաննէս կասկածելով անոր
խարէութենէն յանձն չառաւ, և երբ տեսաւ
որ իր ընկերներն կը դաստիարին այս բանիս, և
կուղեն խաղաղութեամբ վերջացընէլ գործը,
հաւանեցաւ կախւը գագրեցնելու, բայց այս
պայմանաւ որ աղատ ըլլոյ ինքն երևալու Հայ-
տարայ, այլ միայն իր ընտանիքն եղթան՝ ի Խան-
իջւան: Սակայն յետոյ Հայտարայ ստէտ հրա-
փրանքէն և ընտանեաց կարօտէն շարժած՝ էկաւ
քաղաքը. Հայտար պատուով ընդունեցաւ զին-
քը, և օր մ ալ մեծամեծաց հետ սեղանի հրա-
փրելով զին կերպարին մէջ թոյն խառնելով
վատաքար մեռուց կարիճը: Ասկէ կասկածելով
ուրիշ կարիճներն քիչ քիչ հեռացան և Պափա-
նու կողմերը դաշին, որ է հին Սիւնեաց աշ-
խարչն: Հոս ուրիշ բնիկ Հայ իշխաններ ալ
կային, որք մինչև այս (ժթ) դարուս սկիզբներն
ալ իրենց նախնեաց աղատութեան և քաջու-
թեան ոգին պահելով իրեմ ալ ցուցին, ընդ-
դէմ Պարսից անուամբ եկած Խաներուն. այս
իշխաններս արտաքի բառով Մէկտ կ'ըսուէին,

— 553 —

և դեռ հիմոյ ալ գանուելն նոյն պատուանուամբ
իշխանազունք Ուուսաց կայսերութեան մէջ.
վասն զի այս գարուս ասնէք առին այն կողմերը
Պարսից ձեռքէն. և մեր Հայաստան աշխարհն
երեք ակրութեան մէջ բաժնուեցաւ, որ են
Օսմաննեանք, Պարսից և Ուուսաք:

ԴԱՅԱ ԼԵ.

- Հայաստանի բաժանում. — 2. Հայոց գաղթին յօ-
տար աշխարհս. — 3. Ուուսաց Հայաստանի տիրելը. —
4. Ուուսի մասին ընդարձակուիլ. — 5. Ուուսի Հայա-
ստանի նշանն. — 6. Հայոց ի Ուուսատան պաղթիլն.
- 7. Արքարիսանի Հայերն. — 8. Պըմու հայերն. —
9. Հայ իշխանազունք ի Ուուսախա. — 10. Լապարեան
ազգաստիչն:

1. Հայաստան Փօ գարէն 'ի վէր բաժնուած
էր Օսմաննեանց և Պարսից մէջ, որոնք մեր Հայ-
րենեաց արդէն արփանաներկ հողը կրկին կրկին
պատերազմերով իրարու ձեռքէ յափշտակե-
լէն վերը, հուսկ ուրեմն գաշնագրեցին որ
Արքաստական գաւառն ու Կուր և Երասին
գեաերուն մէջ եղած գաւառները մինչև Երևան՝
Պարսից ձեռքը մնայ. իսկ միւս աեղուանքն Օս-
մաննեանց: Այս եղաւ 1746ին: Այնուհետև
Հայոց քաղաքական ինքնօրէնութեւնն և ազ-
գային անհատութիւնն իրաք ընծուեցաւ:

2. Հայոց թագաւորութեան վերջին գաւա-

1. Ե՞րբ բաժնուեցաւ Հայաստան Պարսից և
Տաճկաց մէջ.

2. Ե՞րբ սկսան Հայք ցրուիւ և գաղթիւ օտար
աշխարհաց մէջ.

շանին խորտակելուն մԴ դարձուն վերջերը, և
անկէ ալ առաջ խուչակրաց ՚ի կիլեկիա երթևե-
կութեան ժամանակ՝ Հայք որ արդէն Հագարա-
ցոց, Յունաց և Պարսից բանութեամբ դուրս
ինկած էին իրենց բնաշնարհէն, և փոքր Ասիոյ
ու կիլեկից զանազան կողմերը բաներ էին,
սկսան անցնել նաև Եւրոպայի թագաւորանիստ
քաղաքները, ոչ առանձնականք միայն, այլ և
ամբողջ ընտանիքօք: Այս կամաւոր աբսորմանս
մեծապէս նպաստաւոր եղաւ Հայոց վաճառա-
կանութեան յաջողակութիւնն և շահու սէրն,
զոր կը ջանային գրգռու Եւրոպաի տէրութիւնը
այլ և այլ արտօնութեանց հրայիւարտակներով: Այսպէս Հայաստան թշնամիներէ ասնակոխ, և
իր զաւկըներէն լքեալ՝ բնակարան եղաւ Պար-
սից, Քրդաց, Թիւրքմենից և Տաճկաց: Սակայն
պատմութիւնը կրնայ վկայել, որ մեր փոքրիկ
ազգն իր երկար գիւցավնական գիմակալու-
թեամբն ընդգէմ Ասիոյ խորերէն Եւրոպայից քա-
ղաքակրթութիւնը ողողելու սպաննացոյ ժո-
ղովրդոց, ոչ սակաւ ժամանակ հզօր թուրմ
եղաւ բարբարոսութեան հկեղեղ արդիւլու, և
արեմտեան Ասիոյ կողմանէ ուշացուց քաղա-
քականութեան անկումը:

3. 1826ին վերջերը Պարսից Ֆէթհ-Ալի Շահն
յանիարծօրեն Ուուսաց Երկիրը յարձեկեցաւ.
Նիկողայոս կայսրն ալ իր կովկասեան բանակին
հրաման զրկեց որ Պարսից գէմ ելլէ. Մատո-
թեան Հայագիրք քաջ իշխանն որ Ուուսաց զրա-
պետ էր, ոչ միայն Պարսիկները ետ մղեց, այլ
նաև պարսկական Հայաստանն ալ մանալով գէպ
՚ի Երասի գեալը առաջ անցաւ, և արիրեց Էջմիած-

3. Ե՞րբ տիրեցին Ուուսի Հայաստանի մէկ
մասին.

նի: Բասկեթէ Ուուս զօրսավարն ալառաւ Երևան,
Մարանդ և Պաւրէծ քաղաքները: Հայք շատ
դիւրացուցին Ուուսաց յալթութիւնները. վասն
զի Պարսից ձեռքէն շարաչար նեցուած ըլլալով,
Ուուսաց՝ ձեռուլնէն եկած օգնութիւնը կ'ընէին:
Վերջապէս 1828ին, փետրուար 22, Ուուսը
հաշութիւն խոնեցան Պարսից հետ, պայման
դնելով որ Երասի և Կուր գետին միջոց եղած
գաւառները Ուուսաց մասն, և Պարսից երկրէն
Ուուսաստան անցնել ուղղողներուն ամենեւին ար-
գելք ըրլաւի:

4. 1828 նիկողայոս կայսրը Օմաննեանց դէմ
ալ պատերազմ հրատարակելով Ուուսի հասան
մինչեւ Կարին քաղաքը. Կարնեցիք քաղաքին
դաները փակեցն և կ'ուզելն դէմ դնել. բայց
Ուուսաց խոստմունքներէն յորդուուած անձնա-
տուր եղան: Յաջորդ տարին Ադրբայն լսովածոյ
դաշնադրութեամբ խաղաղութիւն հաստատուե-
ցաւ Ուուսաց և Տաճկաց մէջ. Օմաննեան Հայա-
ստանի մէկ մասն ալ Ուուսաց անցաւ: Պարձեալ
մէկ մաս մ'ալ 1877-78 ին պատերազմով առին
Ուուսը: Աչա այսպէս երեք աէրութեանց մէջ
բաժնուած է այսօր Հայաստան. մեծագոյն
մասն, որուն մէջ կը բավանդակին փոքր Հայք և
մեծ Հայոց արեմտեան և հարաւային կողմերը,
Տաճկաց ձեռքն է. Հեւսիսային մասը Ուուսաց,
իսկ արեւելան հարաւայինը Պարսից ձեռք, որ
ամենէն փոքրացն մասն է:

5. Ուուսաստանի ամեն կուսակալութիւններն
կամնահանգներն մէկ մէկ սեփական նշան ունե-
նալուն համար, 1833ին Ուուսաց աէրութիւնը

4. Ի՞նչպէս ընդարձակեցաւ Ուուսի Հայա-
ստանն:

5. Ի՞նչ է Ուուսի Հայաստանի նշանը.

Հայկական հահանգին համար ալ հետեւ ալ նշանը սրոցք է: Առաջնաւ վահանի մը գլխաւոր բաժանմանը մէջ մէկ կազմն կապցաւ Ենթակայով Մասիս լերան ձիւնապատ արծաթափափայլ գլուխը մէր մէրմակ ամպերու մէջ: Լերան ծայրն ալ Նյոյ տապանն՝ սոկեթոյն Հայաստանի պատմական հնութեան աղնուութիւնը հասկցընելու համար: Բ. Վահանին վարի կողմը երկու բաժնուած ըլլալով աջ կողմը կարմիր Ենթակայի վայ Հայոց Արշակունի թագաւորներուն թագը բարձր ու երկայն ձևով, բոլոր ոսկի, թագին ձակատը աստղ մը ու չորս կողմն մարդարաւեայ կապը, ու Ենթակայի հապոյա: Գ. Զախ կողմը կանաչ Ենթակայի վայ Եղմիածնի կաթուղիկէն համակ արծաթի, միայն գմբէթիւնը ու խաչերն սոկեդոյն: Ասով կ'իմացուի Հայաստանի կրօնը և մամնաւոր կերպով Հայկական նահանգին դիրքը: Դ. Վերին բաժանման մէջ ոսկի Ենթակայի վայ Ռուսական արծուին, որ բանած է թէ՛ վահանը և թէ անոր տակի բաժանմունքները: և բոլոր նշանին վայ ալ կեցած է կայսերական թագն:

6. Հայոց Ռուսաց հետ ունեցած ծանօթութիւնն 1626 թուականէն կը սկսի: Երբ վաճառականութեամբ կը յաճախէին Ռուսաստանի ծովեղերեայ քաղաքները մենց ՚ի 1723, որ է ըսել գրեթէ Հարիւր տարուան չափ: մեծամեծ արտօնութիւններ ստացան Ռուսաց կայսերներէն համարձակ երթեւեկելու Պարսկաստանէն ՚ի Ռուսաստան, և աղատ վաճառականութիւնը ընելու: Բայց երբ 1720ին Մեծն Պետրոս Ռուսաստանի մէջ արուեստ և վաճառականութիւն ծաղկեցնելու ետեւէ եղաւ: գիտանալով Հայոց

